

# ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

Բ



Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

# ՎԱՐՔ ՍՐԲՈՑ

Բ

ԴԵՍԵՏՐԻՈՍ - ԹԵՈՓԻՂՈՍ



ՀՐԱՄԱՆԱԲ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ  
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2009

Armenian Church Library <http://hygradaran.weebly.com>

ՀՏԴ 23/28  
ԳՄԴ 86.37  
Վ – 345

Թարգմանությունը գրաբարից՝ Արշակ Մադոյանի

Վ – 345 Վարք սրբոց: Հատոր Բ (Դեմետրիոս – Թեոփիլոս): – Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009.– 256 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ՝

«Մարգիս Գարրիելյան» հիմնադրամի

ISBN 978-9939-59-025-7 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009 թ.

## ՍՈՒՐԲ ԴԵՄԵՏՐԻՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Մ**ըդ, այն չար ժամանակ, երբ Թեսաղոնիկե քաղաքի աստվածամարտ Մաքսիմիանոս թագավորը բազում և պես-պես կտտանքներով [տանջում էր] բարեպաշտության սպասավորներին, որովհետև նա շատ ընկղմված էր կռապաշտության խորքերում, միշտ հետապնդում էր նրանց, որ աստվածապաշտության կրոնի հետևորդ էին, մատնում էր բանտի ու տանջանքի: Իսկ քրիստոնյաները, որ կային քաղաքում, ոմանք հետևելով իմաստուն Պողոսին, տեղի էին տալիս ժամանակի բարկությանը, թաքցնում իրենց [համոզմունքները] որոշ ժամանակով, իսկ ուրիշները քաջաբար բազմամբոխ քաղաքի մեջ հայտնապես խոստովանում էին: Սրանցից մեկը, որի անունն էր Դեմետրիոս, առաքինի ու քաջ այր, բնավ չվախեցավ մահից, [որ դրված է բնությամբ,] և անտեսելով թագավորի ահագին սպառնալիքները՝ բացահայտորեն խոստովանում էր իր քրիստոնյա լինելը և փրկչական անունը, որ ուներ իր հոգում՝ բազում համարձակությամբ պատեհ և անպատեհ ժամանակ ըստ առաքելական խրատին ավանդում էր բոլոր իրեն մոտեցողներին: Այս երանելին լինելով քաջատեղյակ աստվածային Գրքին, նրա պարունակած կենդանարար խորհուրդներին, բոլորի առջև քարոզում էր, նաև ուսուցանում էր, թե առաջին մարդը ճշմարտությունից մոլորվելով անհնազանդություն արեց, ուստի մահկանացու եղանք, և կռապաշտությունը մտավ աշխարհս: Դրա համար ամենիմաստ Բանն Աստված՝ անճառաբար ծնված Աստված Հորից, մարմին հագած աշխարհ եկավ և ինքը աշխարհին Լույս ծագեց, կանգնեցրեց ընկածին և բարձրացրեց գլորվածին, գտավ կորսվածին և սրբեց մեղքի բոլոր կեղտերից: Միայն ա՛յս չբարեգործեց, այլև իր խոսքը բոլոր ընդունողներին սովորեցրեց սրբության արդարություն, հեզություն

և հնազանդություն, սեր և խաղաղություն, արհամարհելով ժամանակավորը, և՛ հանդերձյալ կյանքի հույսով ընդունել մշտնջենական և անժամանակ կյանքի առհավատչյան: Եվ այսպիսի խոսքերով երանելին մխիթարում էր բոլոր նրանց, որ մոտենում էին իրեն: Նրա համբավը տարածվել էր բազում վայրերում, և շատերը այնուհետև գալիս էին նրա մոտ:

Այնժամ թագավորի նշանակած մարդիկ շրջում էին քրիստոնյաներին փնտրելու: Բռնեցին երանելի Դեմետրիոսին, տարան աստվածամարտ Մաքսիմիանոսի առջև՝ իբրև մեծ որս բռնած: Իսկ թագավորը այն ժամին նստել էր քաղաքի ասպարեզում դիտելու մենամարտիկներին, որոնք մարտնչելու էին ամբողջ ժողովրդի առաջ: Այնտեղ տախտակամած էր կազմած և քարակոփ տեղ էր պատրաստված նրանց համար, որ գալիս էին նստելու: Այնտեղ կար Լեոս անունով մի մարդ՝ հաղթանդամ և հսկայազոր, որ մենամարտելիս զարհուրանքով դողացնում էր բոլորին, այլև բիրտ և սպանող մարդու համբավ ունեւր, շատ սիրելի էր Մաքսիմիլիանոսի աչքին, առաջնակարգ պատերազմող էր համարվում, որովհետև այն աշխարհում նրան նման չկար: Երբ թագավորը մոտեցավ ասպարեզին՝ դահիճները նրա առաջ բերին Դեմետրիոսին: Իսկ նա հարցրեց, թե քրիստոնյա է, հրամայեց նրան տանել բաղնիքի կամարի մոտ, ուր կրակ էին վառել, որովհետև բաղնիքն ատյանի մոտ էր: Հրամայեց Լեոսին բերել իր մոտ, հայտարարեց հրապարակավ, թե ով կամենա մենամարտել նրա հետ, բազում պարզեւներ կստանա: Այնժամ ատյանի մեջ հայտնվեց մի մանուկ, որի անունը Նեստորիոս էր, քրիստոնյա, որև նախապես գնացել էր երանելի Դեմետրիոսի մոտ, որպեսզի աղոթք անի իր համար: Օրհնելով նրան՝ [Դեմետրիոսը] մարգարեացավ՝ «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով կհաղթես Լեոսին և կմարտիրոսանաս»: Սա հանեց իր հանդերձները և իրեն ամփոփելով մի պատմուճանով, վազելով գնաց հանդեսի տափարակը Մաքսիմիանոսի հանդիման, կանչեց Լեոսին մենամարտելու իր հետ: Թագավորը տեսավ նրա մանկական հասակը, զարմացավ, իր մոտ կանչեց Նեստորիոսին և այս-

պես ասաց նրան. «Գիտե՞մ, որդյա՛կ, որ շատ ստանալու համար կամ քո աղքատության պատճառով այդպես ցանկանում ես կյանքից զրկվել զորավոր և հաղթանդամ Լեոսի ձեռքով: Այժմ ես ափսոսում եմ քո մանկական հասակի վայելչությունը, զարդարված ամենայն գեղեցկությամբ, քեզ տալիս եմ բազում գանձ, միայն թե գերծ մնա հսկայազոր և հաղթող այրի հետ մարտնչելուց, գնա՛, խնդա և ուրախ եղիր քո գեղեցկությամբ»:

Այնժամ Նեստորիոս մանուկը չխաբվեց թագավորի խոստումից և նրա խրատը չընդունեց և չզարհուրեց Լեոսի գովքից, այլ միայն վստահ Դեմետրիոսի մարգարեությանը և ուժ առնելով Քրիստոսի զորությունից՝ այսպես պատասխանեց թագավորին. «Ես, ո՛վ թագավոր, ունեցվածքի և կամ այս անցավոր կյանքի համար չեմ եկել այստեղ, այլ որպեսզի ինձ ավելի ընտիր ցույց տամ քան Լեոսը և հասնեմ լավագույն կյանքին»: Երբ այս լսեցին թագավորը և նրա շուրջը եղած բոլոր մեծամեծները զայրույթով լցվեցին, Նեստորիոսի ասածները հպարտություն էին համարում և գրգռում էին Լեոսին մենամարտել նրա հետ և կարեւոր խոցել, որպեսզի [Նեստորիոսը] իսկույն մահանա: Այնժամ դիմակայեցին միմյանց. մանուկ Նեստորիոսը հոգով զորացած՝ թափ տվեց, տապալեց Լեոսին, որ իսկույն մահացավ: Թագավորն այդ տեսնելով շատ բարկացավ, մանավանդ երբ տեղեկացավ նաև, որ Նեստորիոսը քրիստոնյա է, և փոխանակ խոստումներին, որ նախապես մոլեռներին միջոցով Լեոսի հետ մենամարտողներին պարզեւել էր խոստանում՝ հրամայեց իբրև քրիստոնյայի գլխատել մանկանը:

Երբ այս բաները այսպես եղան՝ թագավորը հույս տրտմեց, քանի որ երկուսի մահը ցավ էր իրեն, ու ելնելով աթոռից տխուր դեմքով կամեցավ արքունիք գնալ: Այն ժամանակ, որոշ բանասարկուներ չարախոսեցին նրա մոտ, թե Դեմետրիոսն է եղել պատճառն այս ամենի: Իսկ նա, վայրի գազանի նման զայրագնած, այնտեղ, ատյանում հրամայեց գեղարդով հարվածել [Դեմետրիոսին]: Եվ այսպես մահացավ

սուրբը բարի խոստովանությամբ ի Քրիստոս, որ հոկտեմբեր ամսի քսանվեցն էր: Իսկ նրա սուրբ մարմինը աստվածամարտ Մաքսիմիանոսը հրամայեց դուրս գցել՝ գազանների և թռչունների կեր: Այնժամ երկյուղած վկայասեր մի քանի եղբայրներ զիջերով եկան, գողացան նրան և տարան-թաղեցին քաղաքի մի տան մեջ, որոշ ժամանակ մնալու, մինչև Տերն այցելի և հայտնաբերի սրբերի նշխարները:

Կարճ ժամանակ անց սկսեցին մեծամեծ նշաններ և գործություններ լինել նրանց, ովքեր սուրբ վկային օգնություն էին կանչում: Այսպես հուշակվեցին բժշկությունները, որ կատարվեցին սրբի անունով: Այն ժամանակ ոմն Ղևոնդիոս՝ այր աստվածասեր, որ Լյուբրիկեցոց աշխարհից էր, եկել էր Թեսաղոնիկե քաղաքը իբրև եպարքոս: Եվ առավ այն տունը, որտեղ սրբի նշխարներն էին՝ նեղ ու անձուկ: Քանզիով այն՝ սրբեց և ընդարձակեց տեղը և կառուցեց մեծապայծառ տաճար հանուն սրբի, ուր մեծամեծ բժշկություններ էին կատարվում ի փառս և ի գովություն ամենասուրբ Երրորդության և համագոյ բնություն՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

**Պապմություն սրանչելիքների, որ եղան սուրբ  
Դեմետրիոսի միջոցով. թե ինչպես գտնվեցին նրա  
նշխարները բազում ժամանակ անց,  
Տունաց Տուստիանոս և Մավրիկիոս թագավորների  
ժամանակ**

Եկեք, ո՛վ սիրելիներ, թե կուզեք շատ բան զանց առնելով պատմենք սքանչելիքը, որ եղավ աստվածագլխաց Դեմետրիոս վկայի միջոցով, որպեսզի քչով ձեր միտքը ուղղելով շատերը իմանաք, որ կատարում է իր սրբերի միջոցով անձառելի բաներ Քրիստոսի ամենագոր ուժը: Արդ, քանի որ ամեն ժամանակ երբ նահատակվում էին սրբերը, հաստատված կային վկայասեր քրիստոնյաներ, որ առնում-ամփոփում էին նրանց մարմինները ծածուկ տեղերում, որ նրանց չմոտենա-

յին հեթանոսների պիղծ ու գարշելի ճենճերն ու զոհերը, այդ պատճառով ինչ-որ տեղեր հայտնապես երևում են նրանց գերեզմանները և այլ տեղեր՝ ոչ, թեպետ որոշ աստվածասերներից գեղեցկապես կազմված՝ երևում են նրանց վկայության տաճարները: Այսպես Թեսաղոնիկե քաղաքում, թեպետ բազում վկաներ թաղված կան, ու նրանց վկայարանները հայտնի են, այդ թվում և մեծ, ահանավոր սքանչելիքներով երանելի Դեմետրիոսինը, բայց նրանցից ոչ բոլորի տեղերն ու գերեզմաններն են երևում: Այլ՝ միայն սուրբ կույս Մարինոսինը: Իսկ Մավրիկիոս թագավորը բարեպաշտ և աստվածասեր կամքով որոնեց բազում սրբերի, որ Թեսաղոնիկե քաղաքում էին զոհվել, առավել ևս երանելի Դեմետրիոսին, նրա սքանչելիքների առավել համբավի համար, նամակ գրեց երանելի Եվսեբիոսին, որ այն ժամանակ Թեսաղոնիկե քաղաքի եպիսկոպոսություն լիովին էր, որպեսզի իրեն առաքի սուրբ Դեմետրիոսի նշխարներից մի մաս:

Այնժամ Եվսեբիոսը պատասխան գրեց թագավորին այսպես. «Մենք ևս գիտենք, ո՛վ թագավոր, որ քո խնդիրքը ճշմարիտ հավատքի մասին է, որ ունես Քրիստոսի սուրբ վկաների նկատմամբ: Բայց քո բարեպաշտությունը ինչպես պատմենք Թեսաղոնիկեցիների հավատքի, եղած սքանչելիքների մասին, և այդպիսի խնդրի կապակցությամբ, քանի որ այս քաղաքը չունի այդպիսի հավատ, եթե զգալի բաներով է ուղում պաշտել Աստծուն և պատվել Նրա սրբերին, Դրան հակառակ իմանալի աչքով հաստատված են ի սերն Աստծու, և Նրա սրբերի հավատն ընդունելով Տիրոջ սրբերի վկայություններից՝ թե հոգի է Աստված, Նրա երկրպագուները պարտավոր են հոգով և ճշմարտությամբ երկրպագել: Դրա համար այս քաղաքում թաղված են սրբերի մարմինները՝ մարդկանց բոլորովին անհայտ, որև ձեր աստվածասեր Հուստիանոսը, որ ձեր բարեպաշտ նախանձախնդրություն էր լցված, այդպես փորձելով գտավ, որովհետև նա վկայասեր կամքով նամակ գրեց նրան, որ մեզնից առաջ այս քաղաքի եպիսկոպոսն էր: Այդպես քո բարեպաշտությունը՝ մեզ, ինչ-որ մաս հայցե-

լով փառավորյալ վկա Դեմետրիոսի նշխարներից: Եվ ցանկանալով կատարել թագավորի սիրո աստվածահաճո տենչանքը, մտնելով սրբի վկայարանը փորեցին եկեղեցու հատակը, ուր կարծում էին դրված կլինի սուրբ վկայի նշխարքը: Երկյուղած քահանաներին այս գործը հրամայել էր եպիսկոպոսը, հաստատապես գիտենալով նրանց արժանավորությունը: Իսկ երբ խորը փորեցին, սաղմոսներով և օրհնություններով, վառած մոմերով և անուշահոտ խունկերով՝ ուղղում էին դարձյալ փորել: Այնժամ հանկարծակի հուր ելավ ներքևից, լցրեց ամբողջ փորված փոսը, նրանց շրջապատեց, [բայց] չէր այրում նրանց: Լսեցին ձայն, որ ասում էր. «Այսուհետև դադարեցեք փորձել Քրիստոսի գորությունը, որ միացած է սրբերի ոսկորներին»: Իսկ նրանք ահուգողով լցված առան փորված հողից, ուղարկեցին թագավորին՝ նամակով տեղեկացրին նրան եղած սքանչելիքը: Սրանք, ո՛վ թագավոր, քո բարեպաշտոն հայր Հուստիանոսի ժամանակ եղան, և մենք նույն կերպ առաքեցինք քո աստվածասիրությունը նույն օրհնություն հողից, որ դրված է այս եկեղեցու մեջ, ի բժշկություն ախտաժեղերի: Եվ դու այն ընդունելով առավել կլցվես մեծ ուրախությամբ, առանց երկմտություն, ասես ունենալով քեզ մոտ ամբողջ վկային, ինչպես վայել է քո հավատքին, այլև փորձով կճանաչես սքանչելիքները և մեզ ձեր աստվածասեր թագավորության անհնազանդ չես համարի: Քրիստոսին փառք, հավիտյանս. ամեն»:

### **Մարիանոս եպարքոսի մասին, թե ինչպես Դեմետրիոս վկայի սքանչելիքով բուժվեց անդամալուծությունից**

Պատմեմ այլ սքանչելիք, որ եղավ սուրբ վկա Դեմետրիոսի միջոցով: Ազատ տոհմից մի այր, ազնվական և շատ հարուստ, որի անունն էր Մարիանոս, առաջինների կարգն էր դասված և՛ սենեկապետ թագավորի պալատում: Սա թագավորից հրաման ստացավ վարելու լյուրիկեցիների իշխանություն կարգողությունը և երբ հասավ Թեսաղոնիկե աստ-

վածապահ քաղաքը, բարեպաշտ և արդար կամքով ուղղեց իշխանություն դեկր, և ամբողջ ժողովուրդը ոչ քիչ գոհություն էր հայտնում թագավորին: Այնժամ նախանձեց նրան բանասարկուն, որ սովոր է միշտ նախանձել բարի մարդկանց և վարկաբեկել նրան, որ բարձր դիրք էր ստացել, նրա դեմ ցանց իր չարություն որոմը՝ որովայնամուղությունը և հեշտասիրությունը, ամեն չարիքի արմատ արծաթասիրությունն ու ազահությունը և սրանից նախախնամողական տեսչություններ նա Աստծու պատվիրաններից շեղվելու պատճառով վարակվեց անդամալուծություն անտանելի ախտով, այնպես որ հնար չկար առողջություն գտնել մեկից, որ ըստ մարդկային գիտություն հմուտ լինի բժշկության: Մինչ այս հիվանդությունն էր ստացել բազում տարիներ կասկածելով մարդկային բժշկությանը, մի օր վերջապես մտածում է Քրիստոսի սքանչելագործ վկա սուրբ Դեմետրիոսի մասին ու մինչդեռ այս մտքին էր, նիրհեց, և հանկարծ նրան երևաց սուրբ վկան բարեկամի կերպարանքով, հարցրեց, թե ինչու այդքան ժամանակ բռնված է այդ հիվանդությամբ: Իսկ նա պատասխանեց, հեծեծալով ասաց այսպես. «Տե՛ր իմ, չեմ կարող պատմել տանջանքները, որ կրում եմ իմ մարմնի անդամները: Որովհետև երբ տաքություն եմ մոտենում՝ մարմնիս սառն է թվում, իսկ սառնությունը՝ կարծում եմ, թե տաք է: Իսկ թիկունքս, արմունկներս և ձեռքերս լոկ կախված եմ առանց գորություն: Երբ ուղում եմ շարժվել, չեմ տարուբերվում՝ ինչպես ուղում եմ, կամ ինչպես պետք է ինձ, չեն ենթարկվում իմ կամքին: Նույն բանն է լինում և փափուկ տեղերիս, ծնկներիս, սրունքներիս, որովհետև թվում է՝ պարզապես անդամներ են, ուժից բոլորովին զրկված: Եվ դու ինչ կարող ես ինձ ասել, ո՛վ սիրելի բարեկամ, որ այդքան գթություն բարցնում ես, և կամ ինչ թեղադրություն կանես իմ վշտագնած անձին»:

Սուրբ Դեմետրիոսը պատասխանեց նրան ասելով. «Լսի՛ր ինձ եղբայր, ասեմ՝ ինչ պետք է, ինչպես կարող ես հասնել թողություն և մարմնիդ բժշկության: Նախ խորհուրդ եմ տալիս՝ բարեմիտ եղիր և անտրտունջ և գոհացողությամբ ըն-

դուռնիր մարմնիդ ցավերը և անհուսովյամբ մի՛ ընկղմվիր հոգու տրտմության խորքերը և հիշիր, որ ամեն ինչ նախախնամությամբ է կատարվում մարդկանց վրա՝ բոլորի հրաշագործող Աստծուց, ըստ այդմ և օգուտը: Որովհետև թեպետ [մարդ] ըստ արժանիքների ինչ-որ բան կրում է, բայց դա Աստծու մարդասիրությունը մեղքի թողություն կհամարի, քանի որ այստեղ մեղքին վերքեր տալով՝ հանդերձյալ դատաստանին մարդասիրություն կգտնի ըստ Նավում մարգարեի, թե՛ «Աստված կրկին վրեժ չի առնում» (Նաւում. Ա. 2): Միայն թե, գոհուցյամբ ցավերը հօգուտ իրեն չահի, և ոչ տրտմությամբ ու տրտունջով կրկնակի տանջանք ստանա: Եթե արդար է՝ ով ցավեր է ստանում, բազում զգուշությամբ կգոհանա արդարությունը պահելու համար, այստեղ կստանա, իսկ հանդերձյալ կյանքում մեծապայծառ մաքրվելով, ինչպես ոսկին հրի մեջ կպսակվի փառքով՝ երանելի Հորի նման»: Իսկ վտանգված եպարքոսը այն տեսիլքի մեջ սկսեց հարցնել նրան և ասաց. «Ո՞վ ես դու, տեր, և որտե՞ղ է քո բնակության վայրը, որ այդքան գեղեցիկ մխիթարություն ես մատուցում ինձ»: Սուրբն ասաց. «Իմ բնակության վայրը թագավորական քաղաքն է, այնտեղ գալով կգտնես ինձ և կիմանաս իմ անունը»: Եվ Մարիանոսը արթնանալով տեսիլը պատմեց իր մերձավորներին: Ու դարձյալ սկսեց ողբալ իր թշվառությունը, որովհետև սրբից լսեց՝ «Իմ քաղաքը թագավորական քաղաքն է»,– կարծեց, թե Կոստանդնուպոլսի մասին է և ասաց. «Վա՛յ ինձ, թշվառականիս, ինչքան ուրախությամբ սփոփեց ինձ տեսիլը և ինչ տրտմության մեջ եմ, և տարակույսը պատեց ինձ, որովհետև ես այստեղ՝ Թեսաղոնիկե քաղաքում, ընկած եմ անդամալույծ, քեզ ինչպես կարող եմ գտնել Կոստանդնուպոլսում, ո՞վ տեր իմ և մերձավոր բարեկամ»:

Այնժամ մեկը նրանցից, որ նրա մոտ էին, ազդվելով Աստծու շնորհով ասաց տարակուսած Մարիանոսին. «Մի՛ վհատիր, տեր իմ եպարքոս, ես կառնեմ քեզ, կտանեմ քո բարեկամի մոտ, և ի՛նչպես չիմացար, որ նա ինքը Քրիստոսի գովելի

վկա Դեմետրիոսն է, որ ոչ թե երկրային թագավորական քաղաքում է բնակվում, այլ վերին Երուսաղեմում, որ անմահ Թագավորի քաղաքն է: Նա այժմ մեր քաղաքում է գտնվում, որովհետև այստեղ նահատակվեց, այլև երկնավոր քաղաքում՝ անմահ Թագավորի առջև լինելուց չի նվազում: Ովքեր խաչակից եղան իրենց Տիրոջը՝ լինում են նաև հաղորդակից փառքին. աննյութ հոգով միացած են և նախախնամությամբ իրենց հոտերից հեռու չեն, քանի որ Քրիստոս կենդանի է նրանց ոսկորների մեջ: Արդ, արի՛ քեզ տանեմ սրբի տաճարը, և այնտեղ կվայելես սրբի շնորհները և կգտնես քո անդամների առողջությունը»: Այս ասաց շնորհալի երիտասարդը, բարձրացրին նրան մահճով և տարան դրին եկեղեցու հատակին, որ գեղեցկապես կառուցված է սրբի անունով: Հիվանդը նկատեց ու տեսավ տաճարում երանելիի պատկերը, աչքերը հառեց նրա վրա, քանի որ բնավ չէր կարող գլուխը բարձրացնել, սկսեց աղոթել այսպես. «Ո՞վ սուրբ և ամենասուրբ ճգնազգայաց նահատակ և Քրիստոսի հարազատ ծառա, դու շատերին անուշահոտ պատարագ ես մատուցել Աստծուն և ամենքի հետ ինքդ քեզ բոլորանվեր ընծայեցիր Նրան: Դու քո անձը դրիր փոխանակ Նրա, որ բոլորի համար տվեց իր անձը: Դու բազում չարչարվածների համար խոցվեցիր, փոխանակ Նրա, որ ամբողջ աշխարհի փրկության համար իր կողը տվեց գեղարգին: Դու շատերին քո կենդանության ժամանակ պարկեշտության բերիր, և առավել՝ երբ ճամարիտ կենդանությունդ ստացար Քրիստոսից: Եվ մենք, թեպետև սքանչելիքով չենք նկատում քո փառքը, և կրթում ես քո այս գավառը քո սքանչելիքներով և բժշկությանդ հոգևոր ցողով շատերին մթերում ես աստվածային շտեմարանում: Աղաչում եմ քեզ, Քրիստոսի կենդանի վկա, ինձ՝ տառապյալիս վրա հեղիր քո բժշկության շնորհները, ամրացրու քայքայված անդամներս: Ահավասիկ անդամալույծս դրված եմ քո ավազանի մոտ, սպասելով քեզ՝ փառավորված հրեշտակիդ ողորմության շարժվելուն, որ իջնի բժշկության կենարար ջուրդ ինձ վրա: Դու ևս ինձ ասա, ինչպես և քո Տեր Հիսուս

Քրիստոսը՝ բազմամյա անդամալուծին. «Ե՛լ, առ քո մահիճը և գնա՛» (Մատթ. Թ. 6, Մարկ. Բ. 9, Ղուկ. Ե. 24, Հովհ. Ե. 8, 11): Որ թեպետև երեսուներեք տարեկան չկամ, բայց երեսուեն անգամ երեսուներեք մեղքով ընկած եմ այստեղ: Արդ, դու որ նման եղար քո Վարդապետի հեղուկյանը՝ նմանակից եղիր և նրա գթությանը: Եվ քաջ գիտեմ, որ կարող ես օգնել ինձ, որովհետև դու այդ կարողությունն ստացար Քրիստոսից՝ քո ճշմարիտ հավատի համար: Նա իբրև Աստված ասաց. «Ե՛լ, առ քո մահիճը և գնա՛»: Դու ևս ասա՛ իբրև Նրա հարազատ ծառայող. բազմամյա անդամալուծը նույնպես հավատաց և փութով շտապեց հրեաների ազգին տեղեկացնելու նրա աստվածային գորուծյան մասին, ես ևս հավատում և քարոզում եմ ամբողջ աշխարհին գորուծյունը Նրա, որ արժանավորապես պսակեց քեզ: Ելնում եմ և ես ոչ միայն մահիճս վերցնելով, այլև պատարագներ ու նվերներ կբերեմ քո սուրբ վկայարանը, և այսպես քո միջոցով, ո՛վ մարդասեր վկա, կփառավորվի իմ մեջ ամենասուրբ Երրորդությունը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն»:

Այս ասելով Մարիանոսը հոգնությունից նիրհեց: Եվ ահա նրան երևաց Քրիստոսի փառավորյալ վկա Դեմետրիոսը առաջին տեսիլքի նման և ասաց նրան. «Բարուկյամբ լսեցիր ինձ և եկար այստեղ, տեր եպարքոս, և ես իսկույն Աստուծով կկատարեմ ինչ որ քեզ խոստացա: Բայց քեզ կավանդեմ իմ Տիրոջ այս պատվիրանը. ահա ողջացար, դարձյալ չմեղանչես, որ նորից քեզ չար բան չպատահի: Որովհետև հիվանդոտ մարդկանց սովորությունն է, երբ դժվարին վիճակում են, խոստանում են հեռու մնալ մեղքերից, իսկ հեշտության մեջ թուլանում են բարությունից, ըստ այն խոսքի՝ «Երբ սպանում էր նրանց, խնդրում էին, դառնում էին առավոտից դիմում Աստված» (Սաղմ. ՀԷ. 34): Ու դարձյալ՝ «Հակոբը կերավ և հագեցավ, հարվածեց սիրելիին, գիրացավ, հաստացավ, լայնացավ, թողեց իր Տեր Արարիչ Աստուծուն և հրաժարվեց իր փրկիչ Աստուծուց» (Բ. Օր. ԼԲ. 15): Արդ եթե ստուգապես հաստատվես ճշմարտության մեջ՝ Քրիստոսի ողորմությունը իմ

բարեխոսությունը կբուժի քեզ»: Մարիանոսը պատասխանեց ասելով. «Հավատում եմ, տեր, որ չեմ անցնի քո պատվիրաններից, միայն թե քեզնով ողորմի, և ստանամ իմ անդամների բժշկությունը»:

Եվ սուրբ վկան մեկնեց իր ձեռքը, շոշափեց նրա բոլոր քայքայված անդամները և ասաց. «Քրիստոս Աստվածը՝ հոգիների և մարմինների ճշմարիտ բժիշկը կբուժի քեզ և քո ախտահար անդամները, Նա, որ բարձրացնում է ընկածներին և կանգնեցնում գլորվածներին» (Սաղմ. ՃԽԴ. 14):

Մարիանոսն այն տեսիլից արթնացավ, կանգնեց իր բոլոր ողջացած անդամներով, ինչպես առաջ էր, քանի էջր հիվանդացել, և սկսեց փառավորել Աստուծուն և գոհանալ սուրբ վկայից, որի միջոցով բժշկություն գտավ և արտասովորով ասաց այսպես. «Օ՛, որքան խնդություն էր քո քաղցր բարբառը իմ հոգուն, վկա՛ Քրիստոսի, մինչև [հիմա] դեռ հնչում է իմ լսելիքին և ցնծությունը պարարում իմ բոլոր ոսկորները»:

Արդ, այսպիսի սքանչելիք եղավ, Մարիանոսն այնուհետև սկսեց կրթել ինքնիրեն առաքինության բոլոր հրահանգներով և ժողովուրդայամբ ու համբերությամբ, ավելի քան թե մարմնականով զարդարում էր իր իշխանությունը: Իսկ նախանձոտ բանսարկուն, երբ տեսավ նրան այդպես առաքինությունը պայծառացած, այնուհետև սկսեց նրա դեմ սերմանել իր չար հնարքները, որ նա վար ընկնի առաքինությունից: Ու երբ ամեն ինչով պարտվեց չարությունը, օձը չկարողացավ ազդել նրան իր զանազան հնարքներով և ուզում էր սերմանել իր չար սերմերը: Որովհետև [Մարիանոսը] խիստ ամրացել էր հավատով և իր մեջ ուներ բարեպաշտության ամրացած սերմը:

Տե՛ս, թե ինչ էր անում այն ժամանակ չարանախանձը, որ չկարողացավ խորամանկությամբ հաղթել, չըջվեց մյուս կողմը և ուզեց նրան չարչարել՝ ինչպես երանելի Հոբին, [նա], որ անգամ խոզերի վրա իշխանություն չունի առանց Աստուծո թողտվության: Իսկ քանի որ Աստված կամեցավ նրան առավել պայծառացնել և ամոթի մատնել նրա չարախոսին, թույլ

տվեց չարչարել նրա մարմինը և ոչ տիրանալ հոգուն, և նրա մարմինը չարաչար կեղեքվեց, մինչև որ գրեթե բոլոր անդամները անջատվեցին միմյանցից, որպեսզի ուրիշները նրա բերանը կերակուր տան, որովհետև այրը բոլորի աչքին պատվական էր: Բազում անգամ քաղաքից և գավառից բժիշկներ եկան այնտեղ, բայց չկարողացան ոչնչով օգնել նրան, ու երբ ամեն ինչից հուսահատվում էին, նա առավել ևս գոհությունը կրում էր չարչարանքները:

Այնժամ նրա ծառաներից մեկը, բանասրկուհի թելադրված, ինչպես ավելի առաջ Հոբի կինը, մոտեցավ այն մարդու ականջին, սկսեց մեղմություններ նրան թելադրել այսպես. «Պետք է դու, ասում է, ո՛վ տեր իմ, լսես մեզ և փրկելով մեզ բոլորիս, ստանաս քո մարմնի առողջությունը: Ահա այստեղ կա մի մարդ, որ գիտե բժշկության հմայությունները, գրված եբրայական լեզվով մագաղաթի վրա հրեշտակների անունները, նաև արեգակները և այլ բազմախուռն անուններ, որ ոչ մեկին հայտնի չեն: Եվ մագաղաթը, որի մեջ այս ամենն է, վերարկուի գրպանում է, գրված լինելով դրսից և ներսից, և ասում է՝ «Ով որ հագնի սա, կբուժվի բոլոր ախտերից»: Արդ, դու վերցրու այն, հագիր և ազատիր շատերին և մեզ քեզ հասած վերքերի տրտմությունից. քո պատճառով ասես դժոխքի խորքերը թաղված լինենք»: Պատասխանեց համբերատար այրը և ասաց. «Օ՛, մոլեգնած թելադրիչ, որ այդքան հանդգնելով մեզ սովորեցնում ես ապստամբել Աստծու դեմ և մարմինս առողջացնելու համար դյուրեթերի, կախարհների ու դևերի մոտ ես [քաշում], փութալով սպանելու հոգիս: Այդպես չէ, ավելի լավ է ես մեռնեմ այսպես, քան թե հեռանամ ճշմարիտ Աստծուց»: Այսպիսով նա իրենից վանեց անզգամ խոսող մարդկանցից մեկին: Ապա մի փոքր մեղմացավ բազում չարչարանքը, և նա նիրհեց: Եվ ահա նրան երևաց Քրիստոսի սուրբ վկա Դեմետրիոսը առաջին տեսիլքի օրինակով, նրան հարցրեց կարեկցաբար, թե ինչպես է: Իսկ նա խիստ հեծեծալով ասաց նրան. «Այդպես, ինչպես տեսնում ես, տեր»: Եվ սուրբ վկան խանդաղատանքով ասաց. «Մի՛ երկնչիր, սիրելի՛ս, քեզ կբուժի Տեր Հիսուս Քրիստոսը, իմ Աստվածը»:

Մարիանոսը զարթնեց քնից, ելավ, կանգնեց իր ոտքերի վրա, ահով ու խնդունությամբ լցված ազատվեց հիվանդության հանդերձից և առավ, նորը հագավ և մեջքին գոտի կապեց և ոտքերին՝ կոշիկ, ելավ-գնաց սրբի վկայարանը: Գալով այն տեղը, ուր ծածկված էին սրբի նշխարները, ընկավ արծաթապատ տուփի վրա, որ հորինված էր տապանաձև, վկայի պատկերի առաջ, և սկսեց արտասուքով գոհանալ առաջին մաղթանքների նման: Եվ աղոթքի վերջում հայցեց Աստծու շնորհը՝ սրբի բարեխոսությունը, որպեսզի անարատությամբ պահպանվի նրա առաքինությունը, բանասրկուհի բոլոր հնարանքներից: Եվ գնաց իր տունը, իր ամբողջ ունեցվածքը տվեց աղքատներին, իսկ թանկագին հագուստները և ոսկու ու արծաթի բազում գանձերը տարավ ի սպաս սրբի տաճարի պաշտամունքի: Այսպես սատանան ամոթի մատնվեց, իսկ Աստված փառավորվում էր Դեմետրիոսի միջոցով, Մարիանոսի համար: Որովհետև նրան վայել է փառք, իշխանություն և պատիվ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

**Պապմուտյուն [այն մասին], թե ինչպես սքանչելագործ վկա Դեմետրիոսի շնորհիվ Թեսաղոնիկե քաղաքը փրկվեց բարբարոսների պաշարումից և սովի վրանգից**

Պատմեմ և այլ սքանչելիք, որ Աստված կատարեց ճգնազգայց վկա Դեմետրիոսի միջոցով, ավելի հրաշափառ, քան առաջինը, որ ծածկել իսկ պետք չէ, որպեսզի զլացող չլինենք նախախնամող փրկագործությունները Աստծու, որ բոլոր դարերում անում է մարդկանց իր սրբերի միջոցով և սա՛ ոչ միայն մարմիններին, այլև հոգիներին, որովհետև մենք որտեղից ենք գտնելու մեղքերի թողություն, որով համարձակությամբ կարողանանք կանգնել Քրիստոսի ահավոր բեմի առաջ, եթե ոչ նրանց սուրբ աղոթքներով, որ այստեղ միայն կարող ենք շահել:

Հունաց կայսր Մավրիկիոսի ժամանակ արաբացոց իշխանը իր շուրջը հավաքեց բոլոր բարբարոս ազգերին՝ պատե-

րագմելու Հունաց թագավորի դեմ: Նախ դիմեց Թրակացոց և Յուդիկացոց աշխարհը՝ ավարի առնելու նրանց, և եկավ-հասավ աստվածապահ Թեսաղոնիկե քաղաքը, որ բոլորից ավելի բարգավաճած էր բազմահարմար փարթամությամբ: Բարբարոսն իր մտքում այսպես էր մտածում. «Կառնեմ [քաղաքը] և այնուհետև ձեռք կգցեմ Հունաց թագավորին»:

Արդ, երբ եկավ, հասավ անհուն բազմությամբ, որին թիվ չկար, հանկարծակի հարձակվեց քաղաքի վրա [նա], որին ոմանք երկրորդ Սենեքերիմ էին անվանում, այն որ եկել էր Հրեաստանի վրա, որովհետև գետերը և աղբյուրները ցամաքեցնում էին և բույսերը ամբողջովին սպառում: Սա եղավ կիրակի օրը, առավոտյան ժամին, սեպտեմբեր ամսի քսաներկուսին: Իսկ երբ գիշերով գաղտնի շրջապատելով պաշարեցին քաղաքը և սողալով, մեղմագնաց քայլերով մոտեցան պարսպին, յուրաքանչյուրը ուսին սանդուղք բարձած, և քանի որ պահապաններ չկային մինչև այգաբաց, և երբ բազում քաջամարտիկներ նրանցից ելան, սուսերները մերկացնելով կամենում էին հարձակվել քաղաքի վրա, այնժամ հանկարծակի սուրբ վկա Դեմետրիոսը նրանց ընդառաջ ելավ գինվորի կերպարանքով, գեղարդով հարվածեց նրանցից մեկին խորապես խոցելով գցեց պարսպից այնկողմ: Ուրիշներն, այն տեսնելով, նրա տեսքից զարհուրած ներքև հոսելով, դուրս էին ընկնում: Նախ սա հրաշագործվեց սուրբ մարտիրոսի ձեռքով: Իսկ մյուս օրը, երբ բարբարոսներն իմացան, որ քաղաքում գործ չկա՝ պարսպի արևելյան կողմից մինչև արևմտյան դուռը, որ ցամաքային մասն էր, ծովից մինչև ծովը ասպարնեքով փակեցին, լցրին պարսպի արտաքին խանդակները, մինչ գրեթե անհուն բազմությունը իրար վրա կուտակված ներս էր հոսում, որպեսզի քաղաքի մեջ բոլորը անհույս լինեին, և բոլորը արտասուք էին թափում ջրի վտակների պես: Իսկ Քրիստոսի սուրբ վկան գինվելով բարբարոսների դեմ՝ չէր թողնում նրանց ներս մտնել: Այսպիսի նախախնամական գործը տեսնում էին միայն հավատացյալներից արժանավոր ոմանք: Քաղաքը այսպիսի պաշարման մեջ մնաց սեպտեմբեր ամսի

քսաներկուսից մինչև հուլիս ամիսը, ու քանի որ, ինչպես վերևում ասացինք, հանկարծակի եկան և պաշարեցին ամբողջ քաղաքը թուզի հասունացման ժամանակ, և բարբարոսների գործը ցրվեց բոլոր գավառներում, և սպառեցին ամբողջ ցորենը, գինին, բոլոր մրգերը: Պաշարման մեջ լինելով այնքան ժամանակ շատերը, որ ներսում էին, սովից մեռան:

Արդ, մինչդեռ այսպիսի վտանգի մեջ էին, Աստված կամեցավ բոլորին ցույց տալ, որ միայն իր բարերարությամբ (սուրբ վկայի բարեխոսությամբ) այդ քաղաքը փրկություն գտավ, ապա թե ոչ, բոլորը կորչելու էին: Որովհետև քաղաքում պատվական տոհմից մի այր՝ հույժ երկյուղած Տիրոջից և զարդարված ամեն բարի գործերով, մի օր, երբ ննջում էր իր տանը, տեսնում է մի սքանչելի տեսիլք: Իբր թե երկու լուսազգեստ այրեր եկան-մտան սրբի վկայարանը, ասես Աստծու պատգամավորը լինեին, և սրբին ասացին այսպես. «Մեզ ուղարկեց Տեր Հիսուս Քրիստոսը, որ թողնես այս քաղաքը և գաս նրա մոտ, որովհետև սա հանձնելու է բարբարոսների ձեռքը»: Իսկ նա երկար ժամանակ տխուր դեմքով ներքև նայելով չէր պատասխանում նրանց: Դրանից հետո ասաց. «Ո՛չ այդպես, տերեր իմ և ծառայակիցներ, չեմ գնա այստեղից և չեմ թողնի իմ հայրենի բնակությունը, որովհետև այստեղ եմ նահատակվել, այստեղ կհոգնեմ իմ հոտը: Բայց այսպես ասացեք իմ Փրկչին և Աստծուն. «Ո՛վ Տեր, ինչո՞ւ ես կորցնում այսքան ժողովրդին, որ գնեցիր Քո պատվական արյունով. այո՛, Տեր, մի՛ կատարիր ըստ այս մարդկանց մեղքերի, այլ ըստ Քո բազում ողորմության, որովհետև Քո ցասումը ոչ թե կորուստ է փնտրում, այլ դարձ և ապաշխարություն: Ու թեպետ խրատում ես, Տեր, քաղցրությամբ և ոչ բարկությամբ»: Երբ այս ասաց մարդասեր վկան, պատգամավոր այրերը հրաժեշտ տվին նրան և գնացին այնտեղ, որտեղից եկել էին:

Իսկ երկյուղած այրը քնից արթնացավ, իսկույն բարձրացավ պարսպի վրա, շրջում, քաջալերում էր մարդկանց. «Մի՛ երկնչեք, - ասում էր, - եղբայրներ, որովհետև Քրիստոսի սուրբ վկա Դեմետրիոսը մեզ հետ է, և նա կխոնարհեցնի բազ-

մագուլթ Աստծուն ողորմութեան՝ չկորցնել այս քաղաքը՝ մեր անօրինութիւնները պատճառով, միայն [պետք է] խոստովանել և ապաշխարել մեր հանցանքները, և Աստծու քաղցրութեամբ [սուրբը] իսկույն կհասնի մեզ մոտ»։ Որ և կատարվեց իսկ, երբ վերջացավ սրբի աղոթքը. բարբարոսները չվեցին՝ գնացին իրենց աշխարհը, իսկ քաղաքն ու ամբողջ գավառը դարձյալ առաջվան ազնվականութեամբ պայծառացան։

Արդ, որ [սա] այսպես եղավ, կասեմ և Քրիստոսի մյուս ողորմութիւնը, որ եղավ սրբի տեսչութեամբ։ Վերևում ասացինք, որ գավառի բոլոր գյուղերն ու ագարակները բարբարոսներն ավերել էին, և քաղաքի պաշարման համբավը տարածվել էր ամբողջ աշխարհում։ Եվ այդ պատճառով այնտեղ [այլ վայրերից] չէին գալիս հացի և այլ կերակուրների վաճառական նավեր նախկին սովորութեան համաձայն։ Այնժամ քաղաքն ու գավառն սկսեցին նեղվել սովից։ Եվ ահա բազում նավեր, ելնելով Իտալացոց աշխարհից, նավում էին Բյուզանդիոն, դարձյալ իրենց հետ ունենալով մեծաքանակ ցորեն։ Այնժամ նրանց երևաց սուրբ Դեմետրիոսը Քրիստոսի կղզու սահմանին և ասում է նավերի նավապետին, որի անունն էր Ստեփանոս, նաև նրա ընկերոջը. «Ո՞ւր եք նավում դուք, եղբայրներ»։ Եվ նրանք ասում էին՝ «Բյուզանդիոն»։ Ասում է նրանց. «Ո՛չ այդպես, այլ իմ ետևից եկեք Թեսաղոնիկե և այնտեղ բազում շահ կստանաք»։ Նավապետն ասում է. «Մենք լսել ենք, թե այն քաղաքը ավերել են բարբարոսները, ինչո՞ւ գնանք այնտեղ»։

Տեսիլը պատասխանեց և ասաց. «Ես Քրիստոսի վկա Դեմետրիոսն եմ, որ այնտեղ նահատակվեցի, և այն քաղաքի պետն եմ, մի՛ երկնչիք, եկեք իմ հետևից, որովհետև Աստծուց եմ առաքվել ձեզ մոտ»։ Եվ վկան առագաստը ուղղեց հաջողակ հողմով, հաջողութեամբ արագ հասան Թեսաղոնիկե։ Սրանից բացի բազում այլ նավեր կային այնտեղ, և ամբողջ քաղաքն ու ամբողջ գավառը հացով լցված՝ փառավորում էին Աստծուն, որ այսպես հրաշագործեց նրանց համար իր վկա Դեմետրիոսի միջոցով։

Արդ այս հիշատակարանը հարմարեցրինք, եղբայրներ, սրբի վկայաբանութեանը, որպեսզի բոլոր հավատացյալները ընթերցելով այս՝ հոժարամտութեամբ կատարեն սրբի հիշատակը։ Որովհետև նրանց միջոցով կարող ենք գտնել Աստծու ողորմութիւնը այս աշխարհում և հանդերձյալում, նաև՝ մեղքերի թողութիւն, փրկութիւն պատուհասներից, որ ամենուրեք գալիս են մեզ, միայն նրանց սուրբ աղոթքով։ Որովհետև ամեն ինչով Աստծու հեղութիւնն ու մարդասիրութիւնը կրեցին իրենց մեջ, քանի դեռ այստեղ էին, և երբ գնացին այնտեղ։ Այլև այստեղ խաչակցելով Քրիստոսին և այնտեղ թագավորելով Նրա հետ բազում համարձակութեամբ՝ ամեն ինչ՝ որ կհայցեն մեզ համար՝ ընդունեն նրանից։ Ուստի և մենք բազում փութով կկատարենք նրանց հիշատակները, որպեսզի նրանց փառքին արժանի լինենք և նրանց հետ հարավարձ բերկրանքով փառավորենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն։



## ՍՈՒՐԲ ԴԻՈՄԻԴԵՍ ԲԺՇԿԱՊԵՏԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի ժամանակ Աստծու եկեղեցու մեծ հալածանք եղավ, քանի որ Հռոմայեցոց ենթակա աշխարհով մեկ տարածվեց հրաման՝ երկրպագել կուռքերի՝ ոսկուց, արծաթից և պղնձից կերպարանած անշունչ արձաններին: Այնուհետև հավատացյալների ժողովներին ամենուրեք նրանց տերության մեջ բազում դեպքեր տեղի ունեցան: Որովհետև ամենուր, որտեղ բռնեին քրիստոնյաներին՝ թագավորի նշանակած դատավորներն ստիպում էին զոհ մատուցել գարշելի դևերին ու նրանց ձուլածո պատկերներին: Շատերին չարչարում էին մեծամեծ տանջանքներով, ոմանց սպանում էին, մի մասի ինչքը հափշտակում: Այսպես դառն նեղության մեջ էին բարեպաշտները այդ օրերին: Այդ ժամանակ մի այր երևաց Կիլիկիայի Տարսոնում, կրոնով քրիստոնյա, տոհմով ազնվական, շատ հարուստ, բարեպաշտ և Աստծու երկյուղած՝ զարգարված ամեն առաքինությամբ: Նրա անունը Դիոմիդես էր: Սա պատվական էր երևում բոլորի աչքին, քանի որ երիտասարդ էր տարիքով, գեղեցիկ կերպարանքով, այնքան որ գրեթե բոլոր տեսողներին զարմացնում էր նրա պատկերի գեղեցկությունը: Տեղյակ և հմուտ էր բժշկական արվեստին՝ մանկությունից ի վեր, ավելի քան բոլոր հելլենացի իմաստասերների մանուկները: Այնպես որ բժշկական բոլոր արվեստները, որ նրանք պատմում էին՝ գիտեր լիակատար՝ Ասկղեպիոսինն ու Հիպոկրատինը, Դիոմիդատեսինն ու մեծ Գաղիանոսինը:

Սա շրջում էր ամենուրեք և ձրի բժշկում բոլորին առհասարակ: Բայց նա բժշկությունը կատարում էր ոչ այնքան մարդկային գիտություն, որքան իր մեծ հավատքով, յուրաքանչյուրի վրա կարգալով մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունը: Որովհետև ստուգապես աշակերտել էր ճշմարիտ բժիշկ

Քրիստոսին և այնպես ոչ միայն մարմիններն էր բուժում, այլև հոգիները՝ բոլորին ուսուցանելով հաստատուն և անշարժ մնալ ճշմարիտ Աստծու հավատքին և ոչինչ համարելով անմուռնչ կուռքերը, չվախենալ առժամանակյա մահից, արհամարհել անցավոր փառքը և սպասել միայն հավիտենականին, հայտնապես խոստովանել բոլորի առջև Քրիստոսին: Այսպիսի քաջալերությամբ և վարդապետական մխիթարությամբ այս Դիոմիդեսը լցրեց ամբողջ Կիլիկիա աշխարհը: Ապա մտադրվեց զնալ հասնել Բուժանիա աշխարհը, որպեսզի և այնտեղ կալանավոր եղբայրներին բժշկական ծառայություն մատուցի ու քաջալերի: Գալով Նիկիա քաղաքը՝ ուզեց բնակվել այնտեղ, որովհետև նրա աչքին ցանկալի թվաց քաղաքի դիրքը՝ նման հոյական Տարսոսին, ուր սնվել էր: Բնակվելով այնտեղ՝ իր արվեստն էր բանեցնում, շրջում քաղաքի հրապարակներում և աներկյուղ համարձակությամբ քարոզում Քրիստոսին, բուժում բոլորին: Եվ սա անում էր ոչ միայն քաղաքում, այլև Բուժանիայի ամբողջ գավառում: Նաև այն քրիստոնյաները, որ արգելափակված էին բանտում, բազում հարստություն էին տալիս բանտապահներին: Եվ նա համարձակ ամեն ժամ մտնում էր նրանց մոտ, բուժում նրանց վերքերի խոցերը: Շրջում էր ամենուրեք, հավաքում բազում հարստություն և դրանով դարմանում նրանց, և քաջասիրտներին համոզում էր, աղաչում աղոթել իր և ամբողջ աշխարհի համար, որպեսզի անցնի կուսապաշտության խռովությունը և բարեպաշտության հավատքը համարձակորեն քարոզվի ամբողջ աշխարհում: Իսկ վհատածներին զորացնում էր ասելով. «Ժամանակավոր են այդ տանջանքները, իսկ պսակները հավիտենական: Հիշեցեք սուրբ վկաներին, որ ձեզնից առաջ բազում չարչարանքով նահատակվեցին Քրիստոսի համար և այս աշխարհում բարի հիշատակ թողին բոլորին, իսկ հանդերձյալ կյանքում՝ երկնքի արքայությունը իրենց Տիրոջ հետ ժառանգելու համար»: Հիշեցնում էր նրանց և Տերունական սպառնալիքը, որ պատմվում է ավետարանում, ասում է. «Ամեն մեկը, որ ուրանա Ինձ մարդկանց առջև, կու-

րանամ և ես նրան Իմ Հոր առջև, որ երկնքում է» (Մատթ. Ժ. 33, Ղուկ. ԺԲ. 9): Եվ դարձյալ հորդորական խոսքերից. «Մի՛ վախեցեք նրանցից, որ սպանում են մարմինը և չեն կարող սպանել հոգին» (Մատթ. Ժ. 28): Եվ դարձյալ առաքելական խոսքն էր հիշեցնում. «Ժամանակիս չարչարանքները արժանի չեն գալիք ժամանակներին, որ լինելու են» (Հռոմ. Ը. 18): Նաև այլ բազում այսպիսի քաջալերական խոսքեր էր առաջ բերում սուրբ Գրքից նրանց մխիթարելու համար:

Ապա երբ հեթանոսներից ոմանք տեսան, որ այսպես սրտապնդում էր բոլորին, գնացին Նիկոմիդիա քաղաքը, պատմեցին Մաքսիմիանոս թագավորին և ասացին. «Մի քրիստոնյա մարդ, անունը Դիոմիդես, զբաղմունքով բժիշկ, ապրում է Նիկիա քաղաքում և բժշկություն պատրվակով շրջում է ամբողջ Բուժանիա աշխարհը և կախարդական հավանություններ հրաժարեցնում է աստվածներից, ասելով թե աստվածներ չեն, այլ անմուռնչ կուռքեր, և մի ուրիշ ոմն խաչվածի Աստված է անվանում ու բոլորին նրան աշակերտեցնում: Եթե արագ չգաս և չբռնես նրան, տեր իմ արքա, այս աշխարհը ապստամբեցնելով քո ինքնակալությունից՝ կհանի քո դեմ»: Երբ թագավորն այս լսեց, լցվեց զայրույթով և նախանձի կրակով բորբոքվեց ինչպես հրով, որովհետև դրանից առաջ նույնպես նրա ականջին հասել էր սրբի համբավը: Այնժամ բազում զորքով դահիճներ ուղարկեց, որպեսզի իսկույն կապեն նրան երկաթե կապանքներով և բերեն իր առջև:

Եկան դահիճները Նիկիա քաղաքը, բռնեցին երանելիին՝ երբ քարոզում էր հրապարակում, արագ կապկպեցին ձեռքերն ու ոտքերը, ինչպես հրամայված էր թագավորից, և դնելով զբրաստի վրա ճանապարհ ընկան դեպի Նիկոմիդիա քաղաքը: Իսկ Աստծու սուրբ այրը, թեպետ մեծ ցանկություն ուներ հանուն Քրիստոսի տանջանքներ ընդունելու, բայց հոգ էր տանում նրանց համար, ում հաջողությամբ տնօրինում էր. գուցե թուլասիրտներից մեկը չհամբերելով՝ ուրանա Քրիստոսին և գայթակղվելով ընկնի կուսապաշտության վրհը, կերակուր դառնա վիշապի չար հոգուն:

Մինչդեռ նա այսպես տխրում էր և մտահոգվում սրբերի համար, որ տանջվում էին հանուն Քրիստոսի, դահիճներն շտապում էին շուտ հասնելու թագավորական ատյան, իսկ երբ հասան մի տեղ, որ հեռու էր քաղաքից, սուրբը աղաչեց դահիճներին, որպեսզի իրեն իջեցնեն գրաստից, թույլ տան մի փոքր աղոթել: Նրանք լսելով նրա աղաչանքը, թույլատրեցին՝ ինչպես կամեցավ: Հեռացավ նրանցից մոտ մի քարընկեց, ծունր դրեց և սկսեց աղոթել այսպես. «Իմ Տեր Հիսուս Քրիստոս, բարձրյալ Հոր Որդի, անվանված Աստված հրեշտակների և բոլորի, օրհնում եմ Քեզ, որ արժանի դարձրիր ինձ ընդունելու խոստովանական վկայություն Քեզ համար: Աղաչում եմ Քեզ, թագավոր իմ և Աստված, ընդունիր պաղատանքս և կատարիր բարի խնդրանքս, որ հայցում եմ քեզնից՝ կյանքիս ավարտին հասած. մի՛ թող ինձ Քո ձեռքից, որպեսզի բանսարկուի մեքենայությունների թակարդում բռնվելով չընկնեմ նրա խաբեություն պատրանքի մեջ: Մի՛ թող խոցոտել ինձ այս աշխարհի իշխանի հրաշեկ նետերից. ինձ չծածկեն այս կյանքի հորձակոս մրրկյալ ալիքները: Օգնիր ինձ, երկնային նավապետ, Տեր իմ Հիսուս, որ անդնդասույց լինելով չընկղմվեմ այս հավիտենական [մեղքի] խորքերը: Փրկիր ինձ վիշապի որովայնից, ինձ կորզիր արյունախանձ գազանի ժանիքներից, որ պտտվում է շուրջս, գոչում և ուզում է կլանել ինձ: Որովհետև Դու ստեղծեցիր ինձ՝ իմ մոր որովայնից և իմ պատկերը Դու հորինեցիր, իսկ ես Քեզ՝ իմ գեղեցկահարմար ստեղծողին և Տիրոջը, խոստացա պահել սա անարատ: Արդ, անփոփոխ պահիր սա բոլոր անդամներով՝ հավատի վեմի հանդեպ, որի մեջ սկզբից ևեթ հիմնվելով հաստատվեցի, որի համար և Քո անապական արյունը հեղեցիր: Եվ ինչպես Քո նախախնամող կամքը ուզի օգուտն իմ, այնպես վերջացրու իմ ընթացքը: Ես ոչ թե այս առժամանակյա մահից եմ վախենում, այլ Քեզ՝ ամենագետիզ եմ հանձնում իմ հոգու պահպանությունը, որպեսզի անապական ընդունեմ սա միավորված անեղծ մարմին՝ Քո երկրորդ գալստյանը. և հարազվարձ բերկրանքով Քո բոլոր սրբերի հետ փառավորեմ

Քեզ Քո Հոր և Սուրբ Հոգու հետ հավիտյանս հավիտենից. ամեն»: Երբ երանելին ավարտեց այս աղոթքը, ասաց ամբողջը, կնքեց ինքնիրեն սուրբ Խաչի նշանով, ավանդեց հոգին ի Քրիստոս:

Իսկ զինվորներն սպասում էին այնտեղ, ուր իջեցրել էին նրան գրաստից. երկար ժամանակ սպասեցին նրա գալուստ, և երբ ուշացավ և չեկավ նրանց մոտ, կարծեցին թե փախել է և եկան այնտեղ՝ նրան գտան վախճանված: Նախ կարծեցին, թե քնած է, մոտեցան արթնացնելու նրան, բայց երբ իմացան, որ վախճանվել է՝ զարմացան սքանչելիքից և մտածելով թե ինչ անեն, որովհետև վախենում էին թագավորի գայրույթից, կտրեցին սրբի գլուխը, տարան թագավորին և նրան պատմեցին ինչ որ եղել է:

Երբ թագավորը տեսավ, շատ տրտմեց պատկերի այնքան վայելչություն համար, որ նա կենդանի չէր եկել իր մոտ: Նույն պահին հրամայեց նույն զինվորներին, որպեսզի վերցնեն, տանեն այնտեղ, ուր մարմինն է և գլուխը միացնելով մարմնին այնտեղ շիրմի մեջ դնեն ու թաղեն: Եվ նրանք վերցրին սուրբ գլուխը, թագավորի հրամանի համաձայն վերադարձան, տարան միացրին մարմնին: Եվ երբ այդ արեցին, Աստուծո շնորհք իջավ նրանց վրա, և տեսան Քրիստոսի ճշմարիտ լույսը: Մի կողմ թողնելով զինվորական պատիվը՝ աշակերտ դարձան ճշմարիտ հավատքին և սուրբ նշխարների սպասավոր եղան: Բնավ չվախենալով թագավորի ահաբեկին սպառնալիքներից, անվեհեր քարոզում էին Քրիստոսին և իրենց զինակիցներից շատերին հորդորում էին մտնել Նրա ամենահաճելի լծի տակ՝ ինչպես իրենք: Արդ, այսչափ զինվորների մասին, որոնք հավատացին: Իսկ մենք վերադառնանք այնտեղ:

Որովհետև երբ զինվորները կտրեցին գլուխը մեռած մարմնից, ճանապարհի այն տեղը, որ հեռու էր Նիկիա քաղաքից, մարմինը հանձնեցին քաղաքի իշխանին, իսկ իրենք գլուխը վերցրած գնացին թագավորի մոտ: Այն ժամին սքանչելիք եղավ. մի ագուավ թռավ, կանգնեց սուրբ մարմնի դի-

մաց և այլ թռչունների չէր թողնում մերձենալ նրան: Եվ այսպես մոտը մնաց երեք օր: Ապա երեք օր անց Սեբաստիա գավառից մի մեծահարուստ կին, որի անունը Պատրոնիա էր և բազում ժամանակներից ի վեր տառապում էր իր որովայնի ցավով, բժիշկների վրա մեծ ծախսեր էր արել, և՛ անօգուտ: Սա մոտեցավ քաղաքի իշխանին, խնդրեց Դիոմիդես սուրբ վկայի մարմինը՝ նրան տալով բազում գանձ, վերցրեց, օծեց անուշ յուղերով, սուրբ կտավով պատեց և դրեց պատշաճ մի տեղ, և իսկույն բուժվեց նրա արգանդի ցավը: Նաև շատ ուրիշ բժշկություններ եղան սուրբ վկայի միջոցով:

Այսպես վախճանվեց սուրբ վկա Դիոմիդեսը՝ ճանապարհին, Բյուզանդիայի մայրաքաղաք Նիկիայի մոտ՝ նախ քան օգոստոս ամսի երեք կաղանդները, Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի թագավորության ժամանակ, իսկ մեզանում՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Աստծու Միածին Որդու թագավորությանը: Ապա քիչ ժամանակ անց ծագեց լույսի աստղը՝ քրիստոսապսակյալ կայսր Կոստանդիանոսը, և ամբարիշտ թագավորների զավակներին վերացրեց, կործանեց նրանց պաշտամունքի բոլոր դիվաբնակ կուռքերը, և բարեպաշտությունը ծագեց, ծավալվեց ամբողջ տիեզերքում: [Նա] Հալածեց կռապաշտության խավարը, և թագավորական հրամանով ամբողջ տիեզերքում բազմացան եկեղեցիները և մեծապատիվ վայելչությունը կառուցվեցին սրբերի վկայարաններ: Այնժամ թագավորը հրամայեց երեք եկեղեցի կառուցել սուրբ և մեծափառ Դիոմիդես վկայի անունով. մեկը մայրաքաղաք Նիկիայում, մեկը հռչակավոր Նիկոմիդիայում, ևս մեկը իր նոր ձեռակերտ մեծ Կոստանդնուպոլսում՝ Նոր Հռոմում: Երեք եկեղեցիներին բաժին հանեց սրբի նշխարներից և հրաման տվեց տարեցտարի տոնախմբել նրա հիշատակի օրը՝ օգոստոսի երեք կաղանդներից առաջ: Մինչև այժմ այդ օրը բժշկություններ են լինում սուրբ վկայի միջոցով: Որով միշտ և հանապազ փառավորվում է սուրբ Երրորդությունը՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին. հավիտյանս հավիտենից. ամեն:

## ՍՈՒՐԲ ԵՐԵՆԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երբ բարի բարքերով և աստվածաշատությամբ կրթվելով լավագույնին են ցանկանում՝ լցված Աստծու երկյուղով, այն ժամանակ միանգամից այն ամենը ինչ այս աշխարհում արհամարհված է, շտապում է դեպի խոստացված բարիքների վայելչությունը, որովհետև այն ինչ լավել է և հավատքով հաստատվել իբրև առընթերակից, ցանկացել է նրան՝ իսկույն ականատես լինելով և ընկալելով կփառավորի Տիրոջը:

Երանելի Երենիոս եպիսկոպոսին Սերմեաց քաղաքում պատահածը. նրա սովորական հեզություն և աստվածային երկյուղածությունը բերումով, քանի դեռ շատ փոքր էր, արժանի եղավ եպիսկոպոսության աթոռի, և երբ Դիոկղետիանոս թագավորի ժամանակ սկսվեցին հալածանքները, ուրիշների նման դա պատիվ չհամարելով՝ մաշվեց, քայքայվեց երկրային իրական տրտմությունը արհամարհեց առաջիկա ուրախությունը, բայց անհաղթելի և անվեհեր հոժարությունը ընթանալով, առաջիկան մտածելով և վերջինը մոռանալով՝ ձգտում էր վերին կոչման նպատակին, որ իշխանի խիստ մեքենայությունները չխախտեցին նրա հաստատուն միտքը: Ո՛չ տեսակ-տեսակ հալածանքները, որ չարչարում էին, ո՛չ գետերի հոսանք, ո՛չ զանազան տանջանքների սպառնալիքը, այլև ուղքեր ամեն ինչից ավելի սովոր են ցավի, մարդկանց նեղսրտություն, մանուկների արտասուք, կանանց կականալի խոսքեր և տխուր դեմքեր, ծանոթների սուգ մատաղահաս որդիների վրա, հարազատների հեծություն և բարեկամների աղեխարչումն այնպիսի հասակի համար, որ հորդորում է լալ և ողբալ: Այլ, ինչպեսև ասացինք, բռնված լավագույնների ցանկությունը և դատաստանի երկյուղը աչքի առաջ ունենալով, հույժ զարհուրեց Տիրոջ ձայնից, որ ասում էր. «Եթե

մեկը ուրանա ինձ մարդկանց առջև, կուրանամ և ես նրան իմ Հոր առջև, որ երկնքում է» (Մատթ. Ժ. 33, Ղուկ. ԺԲ. 9): Եվ ամեն ինչ արհամարհում էր և ուրախությամբ շտապում առաջիկա հույսին:

Այնուհետև տարան դատավոր Պորոբոսի մոտ, որ այն ժամանակ իշխանություն ունեւր Պանոնեայում: Հարցրեց, թե կամենո՞ւմ է զոհ մատուցել: Երանելի Երենիոսը պատասխանեց. «Այլևս չեմ ուզում ձեզ հետ լինել»: Այնժամ նրան բանտ նետեցին: Այնտեղ բազում օրեր կապանքների մեջ տանջելուց հետո, դատավորը գիշերով նստում է ատյանում, նորից իր մոտ է բերել տալիս երանելի վկա Երենիոսին: Բազում տանջանքների ենթակելով՝ «Ինչո՞ւ չես ուզում զոհ մատուցել»,– հարցին, սուրբը պատասխանեց. «Որովհետև Աստված ունեմ, որ մատաղ հասակից սովորեցի պաշտել և չեմ կարող երկրպագել ձեր աստված կոչվածներին»: Պորոբոս դատավորն ասաց. «Մահ ստացիր, բավ են չարչարանքները, որոնց համբերեցիր»: Երենիոսն ասաց. «Կստանամ մահ՝ փոքր ժամանակ հետո, երբ քո պատճառած մահից կընդունեմ հավիտենական կյանքը, որ Աստծուց է»: Պորոբոսն ասաց. «Կին կամ որդիներ ունե՞ս»: Սուրբն ասաց՝ Ոչ: Պորոբոսն ասաց. «Ունե՞ս ծնողներ»: Եվ նա ասաց՝ Ո՛չ: Երանելի Երենիոսը այս ասում էր՝ մտքում ունենալով Տիրոջ պատվիրանները. թե՛ «Ով սիրում է հորն ու մորը, կամ եղբայրներին ու որդիներին՝ առավել քան ինձ՝ ինձ արժանի չէ» (Մատթ. Ժ. 37): Ապա նայեց երկինք, մտովի աղոթելով և թողնելով մարդկային բոլոր իրերը ոչ մեկին ավելի քան Տիրոջը գիտենալ և ունենալ չէր խոստովանում: Դարձյալ դատավորն ասաց նրան. «Ես գիտեմ, որ որդիներ ունես, գոնե հանուն նրանց զոհ մատուցիր»: Սուրբը պատասխանեց. «Իմ որդիները, ինչպես ես, իրենց օգնական ունեն Աստծուն, որ կարող է նրանց ազրեցնել, իսկ դու արա՛ քեզ հրամայվածը»: Պորոբոսն ասաց. «Քեզ խորհուրդ եմ տալիս, երիտասա՛րդ, զոհ մատուցիր, որ քեզ տեսակ-տեսակ տանջանքներով չսպանեմ»: Երենիոսն ասաց. «Ձե՛մ մատուցի, ինչ ուզում ես՝ արա՛, և գիտցիր, որ Քրիստոսի գորությունը քաջաբար կհամբերեմ ամեն ինչի»:

Պորոբոս դատավորը մահվան վճիռ կայացրեց և ասաց. «Քանի որ չես ուզում հավանել թագավորների հրամանին, ուստի ինքնակալների հրամանով կզցվես գետը: Երենիոսն ասաց. «Ես հույս ունեի տեսակ-տեսակ տանջանքների, որ սպառնացիր, և ավելի մեծ ի՛նչ կարող է լինել ինձ, եթե ուզես ինձ սրով սպանել, որի համար աղաչում եմ քեզ: Այդ ևս հրամայիր, որ իմանաս, թե քրիստոնյաները արհամարհում են մահը՝ հանուն Աստծու հավատի, որ սովորեցինք»: Եվ դատավորը բարկացավ սուրբ Երենիոսի համարձակությունը, հրամայեց սրով սպանել նրան: Իսկ սուրբը երկրորդ հաղթություն նահատակ եղավ, ասելով. «Շնորհակալ եմ Աստծուց, որ մահվան բազում համբերություն պայծառագույն պսակ շնորհեց ինձ»: Եվ երբ եկան կամրջի մոտ, որ կոչվում է Արտեմիս, հանեց շորերը, ձեռքը երկինք պարզեց, աղոթեց այսպես. «Տեր, թող բացվի երկինքը և ընդունվի Քո ծառայի հոգին, որ Քո ժողովրդի համար է և Քո կաթողիկե եկեղեցու և բոլորի, որ հավատացել են Քեզ, Տեր իմ Հիսուս Քրիստոս, սրա համար եմ չարչարվում»: Եվ սուսերով հատեցին նրա գլուխը, որ ընկավ Սամոն կոչվող գետը:

Սա կատարվեց ահեկան ամսի վեցին, մեր Տեր Հիսուս Քրիստոսի թագավորության ժամանակ, որի հետ Հորը և Սուրբ Հոգուն փառք, պատիվ և գորություն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:



**ՍՈՒՐԲ ԵՐՄՈՆԻՈՍ ԿՈՒՅՍԻ  
ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Ա**յս սուրբ Երմոնիոսը, որի մարտիրոսական նահատակությունն սկսում ենք պատմել, ըստ մարմնի առաքելական տոհմից էր, որ հոգով նույնպես առաքելական շնորհով վայելչանում էր գեղեցկությունը: Սա դուստրն էր սուրբ Փիլիպոսի, որ Բան Աստծու աշակերտ և սպասավոր էր, որև երանելի ավետարանիչ Ղուկասն է պատմում. «Կուսությունը և մարգարեությունը պատմում է Աստվածաշունչ Գործք առաքելոց գրքում»: «Եկանք,- ասում է,- Կեսարիա, և մտանք Փիլիպոս ավետարանչի տունը, որ այն յոթից մեկն էր: Նրա մոտ մնացինք: Նա չորս կույս աղջիկ ուներ, որ մարգարեություն էին անում» (Գործք. ԻԱ. 8-9):

Հոր մարտիրոսական վախճանից հետո այս երանելի Երմոնիոսը, որ մյուս քույրերի համար փառքի պսակ էր, իր քույրերից մեկին առավ, որի անունը Եվտիֆիա էր, գնաց Եփեսոս՝ տեսնելու Հովհաննես ավետարանչին՝ առավել փափագ ունենալով սրբի նկատմամբ: Եվ քանի որ նախ քան Երմոնիոսի գնալը սուրբ ավետարանիչը վերադարձվել էր իր սիրելի Քրիստոսի մոտ, [նա] տրամեց, որ չտեսավ մարմնով՝ որին ցանկացել էր հոգով: Բայց հետո այլ տեղից աստվածային շնորհը նրան պարգևեց տրամություն սփոփանք և մխիթարություն: Քանի որ Պետրոսիոս անունով մի այլ ձեռնադրություն ստանալով երանելի Պողոս առաքյալից, հովվում էր Եփեսոսի եկեղեցում. այլ՝ լի իմաստություն և առաքինի գործերով, որ ուսուցանում էր ոչ միայն խոսքերով, այլ ևս առավել առաքինի վարքով՝ վարդապետության խոսքը ավելի պայծառ էր ցուցադրում: Սա պատվական և իմաստուն կույսերին իր մոտ ընդունեց, և միասին պատմում էին կյանքի Բանը: Եվ Երմոնիոսը, ըստ մարմնի հմուտ ու ճարտար էր բժշկության, բայց հիվանդների բժշկությունը մանավանդ կա-

տարվում էր Աստծու շնորհով՝ Քրիստոսին դիմելով, քան թե բժշկագիտությունը: Որովհետև զանազան ակտերը, որ անհնարին էր թվում բուժել մարմնական արվեստով, այն արագ բժշկություն էր պարզեցնում աստվածային շնորհքով և կույսի աղոթքով: Նաև պակաս չէր հոգիների բուժումը քան մարմնի, որ կատարում էր, կուռքերի մոլորությունը հեռացնելով և մոտեցնելով Քրիստոսի հավատի բարեպաշտությունը:

Այն ժամանակ Հռոմայեցոց Տրայանոս թագավորը Պարսից դեմ պատերազմի պատրաստվելով եկել էր Ասիա և մեծ խռովություններ հուզել ամբողջ աշխարհը, քանի որ կուռքապաշտություններ մոլեգնած՝ հալածում էր բարեպաշտ ազգերին: Այնժամ լսելով սուրբ կույսի համբավը, քանի որ ամբողջ Ասիայում տարածված էր նրա վարդապետությունը, շտապ [Տրայանոսը] հրաման տվեց տասը երիտասարդի, որ փութով իր մոտ տանեն հուսկավոր Երմոնիոսին: Իսկ ովքեր ճանաչում էին նրան և հարգում քրիստոնեական բարվոք կարգի համար՝ հայտնում էին նրան՝ զգուշանալու չար որոնողներից: Երբ զինվորները մի քիչ շրջեցին Ասիայում և չգտան, հուսահատված՝ անօգուտ համարեցին իրենց ճանապարհը: Գնացին մի գյուղ, որ մոտ էր Եփեսոս քաղաքին, ուր էին երանելիներ Երմոնիոսն ու Եվտիքիոսը: Եկել սուրբ Պետրոսի մոտ քննում էին Աստվածաշունչ գրքի խոսքերը: Զինվորները տեսան Երմոնիոսին՝ չճանաչեցին, քանի որ հագուստը հուսկավոր անվանը համապատասխան չէր, այլ պարզորեն պարզեցնում էր անշուք զգեստով՝ քրիստոնեական կարգի համաձայն: Հարցրին նրան, թե ով է այստեղ Քրիստոսի ավետարանի պատմողը, որի անունը Երմոնիոս է, որև ճարտարորեն բուժում է հիվանդների ակտերը: Իսկ նա նախ չհայտնեց, որ ինքն է, այլ հարգանքով խոսում էր նրանց հետ: «Եկեք, ասում է, մի փոքր հանգստացեք, ձեր առաջ սեղան կդնեմ, կերեք, ապա ցույց կտամ՝ ում որ փնտրում եք»: Եվ երբ կատարեց օտարասիրություն պատվիրանը՝ ազնիվ խորտիկներ հրամցրեց նրանց, այնուհետև հայտնապես ասաց, խոստովանեց, թե ինքն է, որին փնտրում են: Իսկ

նրանք տրամելով՝ չգիտեին ինչ անել, որովհետև պատկառում էին նրա սիրուց, նաև վախենում թագավորի հրամանի դժնդակ կամքից: Եվ սուրբը, քանի որ ջերմացած էր Քրիստոսի սիրով և ցանկանում էր մեռնել նրա անվան համար, ազաչում էր զինվորներին, որ կատարեն հրամանը և իրեն տանեն թագավորի մոտ: Եվ ինքնակամ հոժարությունը հետևելով զինվորներին՝ թագավորի մոտ եկավ:

Իսկ Տրայանոսը, երբ տեսավ նրան, նախ խորամանկորեն մարդասիրական խոսքեր ասաց, նրա առաջ դնելով շատ բաներ՝ պատիվ, մեծամեծ փառք էր խոստանում, միայն թե հավանի թագավորի կամքին և հրաժարվի Քրիստոսից: Իսկ Քրիստոսի գեղեցիկ հարսը թագավորի խոստումը ոչինչ համարեց, այլ միայն բարձր ձայնով ի լուր ամբողջ ժողովրդի գոչեց՝ ասելով. «Քրիստոնյա եմ և պաշտում եմ Քրիստոսին և ուզում եմ նրա համար մեռնել: Այդ պատճառով երազ և սովեր եմ համարում քո բոլոր փառքերն ու պատիվները, որ խոստանում ես ինձ»:

Այնժամ, երբ այս լսեց բռնավորը, գայրացավ գազանի նման, հրամայեց չարաչար ծեծել նրան: Իսկ երանելի կույսը չարչարանքներին չէր պատասխանում, այլ միայն լուռությամբ օրհնում էր Փրկչին, որ նրա անվան համար արժանի եղավ չարչարանքի: Ու մինչդեռ տանջանքի մեջ էր, տեսավ Քրիստոսին, ինչպես երանելի Թեկղը արժանացավ տեսնելու Պողոսի կերպարանքը, երբ նրան գցում էին կրակի մեջ: Այսպեսև սա տեսավ Տիրոջը Պետրոսի քահանայապետի կերպարանքով, որ քաջակերում էր իրեն, և ինչ որ լինելու էր՝ այսինքն նրա ազատվելը տանջանքից և Տրայանոսի հաղթանակը, որ գործելու էր պարսիկների դեմ՝ նախապես պատմեց: Եվ երբ Տրայանոսը տեսավ, որ երանելի կույսը չխաբվեց խոստումներից և արհամարհեց տանջանքը սքանչացավ նրա անզրդվելի մտքի վրա և հրամայեց այնուհետև չհալածել քրիստոնյաներին՝ «Բացի մեր տերությունը հայտնապես ընդդիմացողներից»: Ապա սկսեց սուրբ Երմոնիոսին ազաչել, որ համաձայնի իր հետ գնալ Պարսկաստան, խոստանում էր

մայրապետ դարձնել նրան, եթե համոզի այն ազգերին, որոնց դեմ զինված էր: Իսկ Քրիստոսի սուրբ վկան պատասխանեց նրան. «Ո՛վ թագավոր, քեզ օգուտ չէ իմ ուղեկից լինելը, եթե չես ընդունում իմ բարեպաշտության խոսքերը, որ հավատքի ճանապարհինն են: Բայց քեզ այս եմ ասում, եթե ճշմարիտն Աստված, բոլոր արարածների արարիչը, որին ես պաշտում եմ իր անոխակալ մարդասիրությամբ կպատերազմի քո թշնամիների դեմ, կխորտակի և կցրի նրանց քո առջևից, արդ և դու շատ ապերախտ չերևաս փոխարենը չար հատուցելով նրան՝ քեզ ապրեցնողին»:

Իսկ Տրայանոս թագավորը այս բոլոր խոսքերը, որ ասվեցին սուրբ կոնյսի՝ իբրև արդար մարգարեի բերանից՝ ամփոփելով պահեց իր սրտում, թեպետև բարեպաշտության հավատը չէր ընդունելու: Այնժամ հրամայեց թանկագին հանդերձներ պարգևել նրան՝ հաղթության դիմաց, որ մարգարեացավ երանելի վկան: Բայց նա չվերցրեց: «Ինձ բավական է՝ ասաց, որ ունեմ մեծագույնով հանդերձ, քանի որ Քրիստոս եմ հագած, դրա համար կարոտ չեմ ապականացու հանդերձանքի»:

Եվ թագավորը, ըստ սրբի մարգարեության, գնաց պատերազմ, հաղթեց Պարսից, Մարաց և Գդաց [գորքերին] և ուրախությամբ ու մեծ հաղթությամբ վերադարձավ իր աշխարհը և քրիստոնյաների նկատմամբ ավելի մարդասիրաբար էր վարվում:

Երբ հալածանքները դադարեցին, Քրիստոսի երանելի վկան շրջում էր Ասիայում և առաքելական շնորհով բոլորին կոչում էր Քրիստոսի բարեպաշտ հավատին և ամեն օր ավելացնում Քրիստոսի հավատացյալների թիվը:

Արդ, այսպես էր լինում, [երբ] Հռոմայեցոց թագավորութունը վերցրեց ժանտ Ադրիանոսը, այն պատճառով, որ Տրայանոսի կինը ավելի առաջ շնության տարփանքով խառնակվել էր նրա հետ, և նրա Պարսկաստան գնալու ժամանակ համոզել էր նրան՝ իրեն փոխանորդ թողնել դավաճանող Ադրիանոսին, որև արեց: Եվ երբ Տրայանոսը մահացավ,

Ադրիանոսը վերցրեց թագավորական իշխանությունը, հալածանք սկսեց Քրիստոսի եկեղեցու դեմ: Ամենուրեք քրիստոնյաներին հրամայեց՝ զոհ մատուցել, կամ՝ մեռնել: Եվ գալով Եփեսոս լսում է սուրբ Երմոնիոսի մասին: Ջինվորներ է ուղարկում և հրամայում, որ եթե չհնազանդվի, բերեն իր մոտ: Իսկ զինվորները բազում ջանքերով փնտրեցին և չգտան: Ապա ժամանեցին մի գյուղ, որ Եփեսոս քաղաքին մոտ էր տասն ասպարեզի չափ, և տեսան երանելիին, որ մտնում էր այնտեղ՝ քարոզելու կյանքի Բանը: Եվ քանի որ չճանաչեցին նրան, ողջունելով հարցրին, թե այնտեղ կա՞ Երմոնիոս անունով աղջիկ, հավատով քրիստոնյա, որև պես-պես հիվանդութուններ է բուժում: Իսկ նա, առաջին անգամվա նման, նրանց տարավ իր մոտ, լվաց նրանց ոտքերը, սեղան բացեց և ուրախացրեց զանազան խորտիկներով: Իսկ առավոտյան հայտնեց, որ ինքը [նա] է, որին փնտրում են: Այդ լսելով զինվորները շատ տրտմեցին և չէին ուզում կատարել թագավորի հրամանը, որովհետև պատկառում էին Հյուրասիրութունից, որ ցույց տվեց իրենց: Իսկ երանելին պնդում էր նրանց, որ գնա նրանց հետ, վախենալով, որ գուցե նրանց մի չար բան պատահի, մանավանդ որ ցանկանում էր, որ հանուն Քրիստոսի ըմպի մարտիրոսական արյան բաժակը:

Եվ երբ համոզեց նրանց, վերցրին-տարան և նրան կանգնեցրին թագավորի առաջ: Եվ թագավորը տեսավ, ասաց նրան. «Նախ ասա, աղջիկ, քո անունը և բախտը և տարիքը և ազգը քո և թե ինչ գորությամբ ես հպարտացած և նզովելով աղարտում ես աստվածներին և թշնամանում, անարգում ես իմ բարեպաշտությունը, և ովքեր մտնում ու ելնում են այդ քաղաքից՝ հյուրընկալում ես ու հնազանդեցնում, որ անհաղթելի աստվածներից հրաժարվեն, բոլորին հորդորում ես պաշտելու խաչվածին»:

Իսկ Քրիստոսի երանելի վկան պատասխանեց նրան. «Թե իմ անունն ես հարցնում, ո՛վ թագավոր, կոչվում եմ Երմոնիոս և սնված եմ քրիստոնեական կրոնով, Քրիստոսի շնորհներով բուժում եմ ախտեր և հիվանդութուններ: Իմ տարիների թիվն սպառված է: Զորությամբ

Քրիստոսի, որ ճշմարիտ Աստված է և ստեղծել է երկինքն ու երկիրը և դրանց մեջ եղած արարածներին, զորացած էմ և ոչ թե նգովում էմ աստվածներին, այլ Հանդիմանում էմ դեւերի տկարութիւնը, քանի որ աստվածներ չեն, այլ մարդկանց ձեռքով ստեղծված և դեւեր, և մարդկանց, որոնք խաբված են նրանց մոլորութիւնից, ազատում էմ և մոտեցնում ճշմարիտ Աստծուն, իմ ազգը, Հայրենիքը, փառքն ու մեծութիւնը Քրիստոս է, որին նվիրվեցի իմ մանկութիւնից»:

Երբ բռնավորը լսեց այս ամենը երանելիից՝ լցվեց բարկութեամբ և հրամայեց ձեռքը նրա աստվածաբան բերանը, որովհետև խոցվեց նրա կտրուկ պատասխանից, իսկ նա արհամարհելով ծնոտը ձեռքը և բերանի ջախջախումը, առավել ևս պատրաստ էր փառաբանելու Աստծուն: Երբ թագավորը տեսավ, որ աղջիկը տանջանքները ոչինչ համարեց, խորամանկութեամբ շրջվեց մյուս կողմը, բազում գանձեր ու մեծագին զգեստներ առաջարկելով: Դրանցով հանդերձ խոստացավ Հռոմայեցոց տերութեան տիկին դարձնել նրան՝ միայն թե երկրպագի աստվածներին: Իսկ սուրբը այսպանեց թագավորի բոլոր առաջարկութիւնները և այսպես պատասխանեց. «Քեզ հայտնի լինի, ո՛վ թագավոր, որ ոչ տիեզերքի բոլոր թագավորութիւնները և ոչ տեսակ-տեսակ տանջանքները չեն կարող ինձ հեռացնել Քրիստոսի սիրուց: Իսկ եթե ուզում ես փոխել իմ միտքը, ինձ քեզ խորհրդակից ընդունիր, որ ոչ միայն այս թագավորութիւնը հաստատուն դարձնեմ քեզ համար, այլ և երկնային մեծութիւնը ավանդեմ քեզ. միայն ճանաչիր ճշմարիտ Աստծուն, որ քեզ տվեց թագավորութիւնդ, և հեռու մնա սնոտի կուռքերից»:

Այնժամ երբ բռնավորն իմացավ, որ իր խորամանկութիւնները չեն ազդում նրա վրա, հրամայեց հանել կոշիկները և սաստիկ հարվածել նրա ոտքերի ներբաններին: Եվ այնքան հարվածեցին, մինչև այնտեղից արյան առուներ բխեցին: Ապա հրաման տվեց պղնձե ավազան բերել և լցնել հալած կապարով և նավթ ու ծծումբ լցնել մեջը, որ առավել ևս բորբոքվի, և դահիճներին հրամայեց այնտեղ գցել Քրիստոսի երանելի վկային: Եվ սուրբ կույսը իրեն կնքեց սուրբ Խաչի նշանով, մեծ ուրախութեամբ օրհնելով Աստծուն՝ մտավ հրով բորբոքված ավազանը, և մի սքանչելիք եղավ, որովհետև ոչ իբրև հրի մեջ, այլ որպես առագաստ պարում էր և օրհնում Աստծուն: Իսկ երբ բռնավորը տեսավ, որ հուրը չայրեց երանելիին, հրամայեց առավել ևս բորբոքել, կարծելով, թե ավազանը զովացել է: Այնժամ սուրբը տեսավ նրա հոգու կուրութիւնը և մտքի խելագարութիւնը ամենազոր Աստծու սքանչելիքի առաջ և գոչեց նրան ասելով. «Ո՛վ գոռոզ և ամբարտավան թագավոր, որ արբած ես այնքան դիվական մոլորութեամբ և չես զգում ամենազոր Աստծու ուժը, որովհետև այս հուրը, որ տեսնում ես, ցող է դարձնում ինձ համար»:

Իսկ թագավորը չէր հավատում տեսածին, ուզեց և ձեռքով իմանալ ճշմարտութիւնը, մոտեցավ ավազանին և ուզում էր աջ ձեռքն ընկղմել, երբ շատ մոտեցավ՝ իսկույն քայքայվեց նրա ձեռքը այն կրակից, և սկսեց աղաչել երանելիին, որ դուրս ելնելով բժշկի իրեն: Իսկ սուրբը, թեպետ գիտեր նրա անդառնալի միտքը, նայելով Քրիստոսի մարդասիրութեանը՝ կատարեց նրա խնդրանքը:

Բռնավորը նույն ամբարշտութեանը մնաց, քիչ օրեր անց, հրամայեց բերել երանելիին և ստիպում էր կուռքերին զոհ մատուցել: Ծաղրելով նրա բազմաստվածութիւնը՝ երանելին ասաց. «Քանի՞ աստված ունես և ո՞րին ես հրամայում զոհ մատուցել»:

Իսկ նա կարծում էր, թե իսկապես զոհ մատուցելու համար հարցնում է աստվածների առավելութիւնը և սկսեց թվել բոլոր դիվաբնակ կուռքերի անունները. «Արամագը, ասում է, Կոռնոս, Աթինաս և Արես, Մինաս և Ապոդոն, Պիսիգոն և Արտեմիս և Ափրոդիտես»:

Նաև այլ բազում դեւերի անուններ էր թվարկում ցնդաբանելով: Իսկ աստվածային իմաստութեամբ լցվածն ասաց. «Օ՛ր, որքան շփոթութիւն լցրեց ձեր սիրտը սատանան, թողած ճշմարիտ Աստծուն, մեկին և միակ հզորին՝ երկրպագում եք դեւերի բազմութեանը: Արդ, ասա՛, քո բազում աստվածներին երկրպագելով ո՞ր խնդրանքիդ ես հասել: Գիտեմ, որ ասելիք չունես, որովհետև

[ղրանք] անշունչ են: Իսկ ես պաշտում եմ մի Աստծու՝ երեք անձնավորությամբ բաժանված, մի բնությամբ և աստվածությամբ և գորությամբ միավորված: Եվ ինչ որ խնդրում եմ՝ իսկույն կատարում է, ինչպես որ դու ինքդ փորձով լավ իմացար ամենագոր Տիրոջ ուժը»: Այնժամ առավել ևս բորբոքվեց թագավորի կատաղությունը, հրամայեց տապակ շիկացնել և այնտեղ դնել երանելիին: Սուրբը, երբ տեսավ շիկացած տապակը, աչքերը երկինք բարձրացրեց, օգնության կանչեց ամենակարող գորությունը, որ իր սքանչելիքները ցույց տա, ինչպեսև առաջին անգամ: Եվ խաչակնքելով բոլոր զգայաբանները մեկնվեց հրաշեկ տապակի վրա, և իսկույն տապակը զովացավ, և կրակի բոցը, որ նրա մեջ էր, այսուայնկողմ ցույց և ամբարիշտների բազմությունը, որ շուրջն էր, կիզելով ոչնչացրեց: Եվ բռնավորը, սքանչելիքից զարհուրած, մի փոքր նահանջեց հպարտությունից և հրամայեց սրբին հանել տապակի միջից: Բայց, որովհետև չուզեց աստվածգիտության լույսն ընդունել, փոքր ժամանակ անց, հրամայեց իր առջև՝ ապարանք բերել երանելիին, որտեղ հաստատված էին դիվական արձանները, և սրբին ասաց. «Ահա մարդասեր աստվածները, որ ես պաշտում եմ: Ինչքան բարեմտություն են հանդես բերում քո նկատմամբ, որոնց հանդեպ դու ապերախտ ես և զոհ չես մատուցում»: Երանելին ասաց. «Ինչո՞ւ զոհ մատուցեմ անշունչ արձաններին, որոնք չեն պատասխանում իրենց առջև աղոթողներին»: Եվ երանելի վկան կանգնելով արձանների կողքին դիմեց աստծուն, ասելով այսպես. «Զորությունների Տեր Աստված, որ բոլոր դարերում սքանչելիքներդ ես ցույց տալիս, Դու Քաղանեում մարդկային ամբարտավանությունը խափանեցիր լեզուների բաժանմամբ, և աշտարակի կապակցությամբ նրանց խորհուրդները ցրեցիր: Դու ամբարտավան Փարավոնին, որ չճանաչեց Քո սքանչելիքների գորությունը, ընկղմեցիր և Քո ժողովրդին ազատեցիր նրանից: Քո ընտրյալ Հեսուրի ձեռքով Երիքովի պարսպը թափեցիր ջրի պես՝ հոբելենական փողի ձայնով: Քո ժողովրդին առանց զինական պատերազմի ներս տարար: Նույնը,

Տեր, և այժմ ցույց տուր Քո աստվածային գորությամբ՝ այս կուռքերի կործանումով, որ ճանաչեն բոլորը, որ միայն Դու ես Աստված և չկա ուրիշը»: Ու մինչդեռ աղոթքը շրթունքին էր, հանկարծակի թափվելով կործանվեցին բոլոր կուռքերը և եղան փոշու նման, և սուրբ վկան գոհանում էր Աստծուց, որ այնպես սքանչելիք է գործում իր ծառաներին: Եվ դարձավ բռնավորին. «Ձեռք պարզիր քո աստվածներին և կանգնեցրու դրանց, քանզի ահավասիկ անմռունչ են և թափվելով մանրացան քո աչքի առաջ»:

Թագավորի ոգին մթազնեց աստվածային լույսի սքանչելիքից, չմտածեց Աստծու մեծագործության մասին, վճիռ կայացրեց սպանել նրան սրով, ասաց՝ «Կարո՞ղ է և սրից կախարդությամբ փրկվել»: Եվ նրան տվեց երկու զինվորի ձեռքը, որ քաղաքից դուրս տանեն և այնտեղ կտրեն գլուխը: Իսկ զինվորներից մեկը, որի անունն էր Թեոդուլոս, բարձրացրեց սուրը՝ ցանկանում էր հարվածել երանելիին. իսկույն չորացավ նրա ձեռքը: Մյուս զինվորը, որի անունն էր Թեստրիմոս, ծաղրեց ընկերոջը, պատահական համարեց նրա վրիպելը, շտապեց իսկույն և հանելով սուրը հարձակվեց կույսի վրա: Նույն պահին չորացավ և նրա ձեռքը՝ ընկերոջը հավասար: Եվ երկու զինվորներն ընկան երեսն ի վար, աղաչեցին սուրբ վկային և նրանից թողություն էին խնդրում և բժշկություն իրենց անդամներին, խոստանալով հավատալ ճշմարիտ Աստծուն, որովհետև միայն Նա է ճշմարիտ արարիչը երկնքի և երկրի:

Իսկ սուրբը, երբ նրանց բերանից ստուգեց նրանց հավատի ճշմարտությունը միանգամայն և Սուրբ Հոգով ճանաչեց նրանց սրտի խորքը, որ ճշմարիտ է, սկսեց աղոթել առ Աստված և սուրբ Խաչի նշանով կնքեց, անմիջապես կենդանացան գոսացած ձեռքերը: Արդ, Աստված այսպես սքանչելագործեց, որպեսզի իր սրբերին հանդերձյալ փառքից առաջ այստեղ փառավորե և սատանայի մեքենայություններին անմատչելի դարձնի: [Աստված] կամեցավ ցույց տալ՝ ովքեր արհամարհում են նրան, ով իր խաբեությունների միջոցով

մարդուն մահկանացու դարձրեց և մեղքի ընդունակ, այստեղ իսկ անմահանում են և լինում հրեշտակներին հավասար: Եվ դարձյալ, որպեսզի հպարտացած թագավորին, որը Աստծու սքանչելիքը (այսինքն կույսի փրկվելը հալած կապարից և հրաշեկ տապակից) կախարդութունն էր համարում, պարզ դարձնի, որ սուրը չի կարող ենթարկվել իրեն, եթե չլինի Արարչի հրամանը, միաժամանակ որպեսզի սքանչելիքով փրկութուն լինի շատերին, այն որ ցույց է տալիս իր սրբերին: Եվ քանի որ երանելի կույսը Աստծու սքանչելիքների շտեմարան եղավ և շատերի հավատքի պատճառ, սակայն միշտ ըղձում էր գնալ երկնավոր Փեսայի մոտ, սկսեց աղոթել Աստծուն ասելով այսպես. «Ո՛վ Տեր իմ, Տե՛ր, Դու գիտես իմ հոգու գաղտնիքները, որ միշտ փափագում եմ տեսնել Քեզ՝ իմ և բոլոր սրբերի ճշմարիտ բաղձալիին. արդ, առաքիր քո հրեշտակներին և իմ հոգին ընդունիր խաղաղությամբ»: Եվ նա այս ասաց՝ երևաց Աստծու հրեշտակը՝ լույսի կերպարանքով, հոգին ավանդեց Աստծո ձեռքը՝ ինչպես գրված է՝ «Արդարների հոգիները Աստծու ձեռքին են» (Իմաստ. Գ. 1): Իսկ երկյուղած այրերը, որ բնակվում էին Եփեսոսում, վերցրին կույս Երմոնիա վկայի մարմինը և նրա սրբությանը արժանի տապանակ պատրաստեցին, տարան քաղաք, դրին արժանավոր մի տեղ, նրա մոտ կանգնեցրին երկու զինվոր, որոնք հավատացին սրբի վախճանին, քանզի և նրանք վախճանվեցին պսակավորվելով ի Քրիստոս՝ ճշմարիտ հավատքի միջոցով: Եվ բոլոր քրիստոնյաները, որ Եփեսոսում էին, հավաքվեցին տոնելու նրա հիշատակի օրը, որ սեպտեմբեր ամսի վեցն էր, ի փառս և ի գովութունն Հոր, Որդու և Սուրբ Հոգու, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:



## ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՆԻԱ ԿՈՒՅՄԻ, ՆՐԱ ՆԱՅՐ ՓԻԼԻՊՈՍԻ, ՆՐԱ ՄՈՐ ԵՎ ԵՂԱՅՐՆԵՐԻ, ՈՐ ԻՐ ՆԵՏ ԷԻՆ

«Ում մեծ քաղաքում Կոմիդեոս ինքնակալի թագավորության ժամանակ, իր հյուպատոսության յոթերորդ [տարում], մեծ և վայելուչ Փիլիպոսին ուղարկեց Աղեքսանդրիա քաղաքը՝ Եգիպտացոց աշխարհը, իր իշխանությանը հպատակ դարձնելու համար, որպեսզի բոլորը միասին հնազանդվեն նրա հրամաններին: Այս Փիլիպոսը իր կին Կոմիդեայի և երկու որդիների՝ Ապիտոնիոսի ու Սերգեսոսի և զուստր Եվգինիայի հետ Հռոմից եկավ Աղեքսանդրիա՝ բոլոր եգիպտացիներին հռոմեացիների բարքին հարմարեցնելու: Իսկ նրա զուստր Եվգինիան տասնվեցամյա էր և պայծառանում էր ընտիր իմաստներով, հունական և հռոմեական դպրությամբ էր զբաղվում, այնպես, որ փիլիսոփաներին սքանչելի էր երևում: Ու մի օր նրա հայրը հարցրեց, թե կուզենա՞ մոռանանալ Ակյուլիոսնոս հյուպատոսի հետ: Եվգինիան պատասխանեց իր հորը և ասաց, որ պատիվն ու սրբությունը ավելի է գերադասում, քան տղամարդու բնությունը: Իսկ նրանք պես-պես խոստումներով ու հնարներով աշխատեցին խափանել սուրբ անձը:

Պատահամբ նրա ձեռքն անցան սուրբ առաքյալ Պողոսի և երանելի կույս Թեկղի պատմությունները: Եվ գաղտնի կարդալով օրըստօրե՝ արտասվում էր, մանավանդ որ հեթանոս ծնողներ ուներ: Իսկ երբ օրըստօրե կարդում էր սուրբ Թեկղիի պատմությունը, մտքով անցավ նմանվել նրա գործերին, հոգով որոշեց ուսումնասիրել քրիստոնեից վարդապետությունը: Թույլտվութուն խնդրեց իր ծնողներից, որ հրամայեն իրեն գնալ մի ազարակ, և հանդիպեց ընթացող մի դեսպակի, մտովի խորհրդածելով երանելի Թեկղիի վարքի մասին՝ ասում է իր ներքիններին՝ Պրոտեսոսին և Հիա-

կինթոսին. «Դուք անտեղյակ չլինեք այնքան չաստված կոչվածներին մասին քերթողների ստեղծաբանությունը, և որչափ իմաստասերները ստույգ են ճշմարիտ Աստծու մասին: Մի՞թե նրանց մեջ իսկապես այնպիսի ճշմարտություն կգտնենք, ինչպես այս աստվածային Գիրքը ասում է Աստծու մասին: Բայց խիստ տառապած և ստեղծական միտքը հավատում է կոփածո քարերին կամ ձեռագործ փայտից օգնություն խնդրում»: Մինչդեռ այս մտքին էին, սկսեցին խորհել և քննել ճշմարիտ Աստծու և պես-պես պաշտամունքների մասին: Եվ իրենց համար որոշեցին, թե ավելի լավ բան չկա, քան այս զորությունը:

Քանի դեռ այս և այսպիսի մտորումների մեջ էին, որոշ քրիստոնյաներից լսեցին, որոնք ասում էին. «Հեթանոսների բոլոր չաստվածները դե էն, իսկ երկինքը Տերն է ստեղծել»: Եվգիսիան լսեց, հրամայեց կանգնեցնել դեսպակը և երկար զարհուրած իր սրտում ասաց. «Ճանապարհին մեր մտածածի նման ճիշտ ժամանակին պատահեցինք սուրբ Գրքի վկայությունը և ճանաչեցինք անպիտան ու մալորական սնոտի պաշտամունքի կորուստը, ուրեմն գործենք, որ մեր մտածածի նման հանդիպեց, որպեսզի երկյուղածություն այս օրինակով կարողանանք հասնել անչափ մեծություն խորհրդին, տեսնենք, թե մինչև երբ այս անհաստատ մտքով [տարվենք] և ճշմարիտ Աստծու մասին այլ խոսքեր փնտրենք, և հավատքի միաբանություն մասին, և կարգը, որով կարողանանք այս երանելի փախուստին հանդիպել, և բանսարկուի գազանությունը մերժենք, ընկալենք Քրիստոսի հավատքը»:

Այնժամ Եվգիսիան իր ներքիններին՝ Պրոտեոսին և Հիակինթոսին ասաց այսպես. «Մարդկային պատիվը ձեզ տիկին արեց, իսկ իմաստությունը քույր: Արդ, եղբայրներ, միասին և կատարյալ միաբանությամբ մարդկային պատվի փառքը մերժելով, շտապենք ճշմարիտ Աստծու ծառայության, որ ամենևին չբաժանվենք ընդդիմացողի հակառակություն, բայց եկեք դուք ինձնից ծամիս հյուսքը հեռացրեք և դուք ևս շուտով պատրաստվեցեք. միգուցե այս գիշեր մեզ ճանապարհի ելք գտնվի, որպեսզի մեզ ճանապարհ հաջողվի Աստ-

ծու մարդկանց մոտ: Եվ դուք երկուսդ՝ մեկդ աջից, մեկդ ձախից գնալով ինձ ծածկաբար դեսպակից վայր իջեցրեք, և թող դեսպակս դատարկ գնա, իսկ մենք երեքով շտապենք Աստծու մարդկանց մոտ»: Գաղափարը հաճո թվաց նրանց, և մյուս օրը եղավ այնպես՝ ինչպես որոշեց:

Իսկ երբ նրանք հավատացին՝ Քրիստոս շնորհներ տվեց: Բայց երբ նա իջավ դեսպակից՝ սուրբ Հեղինոս եպիսկոպոսը՝ բազմությունը հանդերձ ուղեկից եղավ ճանապարհին: Նրանք սաղմոսում էին միաբան, միաձայն ասելով. «Արդարների ճանապարհն ուղիղ է, սրբերի ճանապարհը պատրաստված է» (Սաղմ. ՂԵ. 5): Այնժամ Եվգիսիան ասաց Պրոտեոսին և Հիակինթոսին. «Տեսնո՞ւմ եք սաղմոսելու զորությունը և մտածեցեք՝ գուցե մեզ նշան ցույց տա, ինչ որ լսեցինք քրիստոնյաներից, որոնք սաղմոսում էին իրենց Աստծուն: Որովհետև երբ ճշմարիտ Աստծու մասին էինք մտածում, լսեցինք, որ մարդիկ Աստծուն պաշտում էին. «Հեթանոսների բոլոր աստվածները դե էր են, բայց երկինքը Տերն է ստեղծել» (Սաղմ. ՂԵ. 5): Ահավասիկ կուռքերի երկրպագությունից մեր հրաժարվելու պահին հանդիպեցին հազարները միաբան ասելով. «Արդարների ճանապարհն ուղիղ է, սրբերի ճանապարհը պատրաստված է»: Մենք ևս եկեք խառնվենք օրհնիչների բազմությանը և դասվենք նրանց շարքը և լինենք նրանց ճշմարտություն հաղորդակից, թեպետև իրիկնանում է»:

Եվ այսպես սրանք լծակից եղան պաշտողներին և հարցրին, թե ո՞վ է ձերունին, որ մենակ շուքով նստել էր ժողովրդի մեջ: Այնժամ մեկից լսեցին, թե՝ «Սա Հեղինոս եպիսկոպոսն է, որ մանկությունը քրիստոնյաների հետ շրջել է վանքերում, որ շրջակա գազաններին ապականելով կործանել է: Եվ ինչ ասեմ կամ ինչ պատմեմ բազում ժամանակներում եղած նրա առաքինություններից: Բայց քիչ ժամանակ առաջ իրաս անունով մի կախարդ աշխատում էր ժողովրդին հեռացնել սուրբ Գրքից, համարձակվեց իր ցնդաբանությունը հակառակվել սուրբ եպիսկոպոս Հեղինոսին: Սուրբ եպիսկոպոսը տեսավ նրա մտքի թերությունը, խոսքով չկարողացավ քանդել՝ ամբողջ բազմության առջև ասաց. «Ի՞նչ կարիք

կա, որ մենք խոսքով մրցենք կորստյան որդուդ և անհավատիդ հետ, որ մեզնից առաջադրվածը չի հավանում, ոչ միայն գլորվածներին չի կանգնեցնում, այլև կանգնածներին իր ունայն վարդապետությամբ կործանում ու բռնադատում է: Բայց նախ ապրեցնել փորձենք, եթե է Աստված, որ ճշմարիտ է ստեղծում ամեն ինչ, մեր՝ Իր հետին ծառաների միջոցով ցույց է տալիս իր անճառ գորության ներգործությունը»: Եվ ասում է. «Այսուհետև այս քաղաքի մեջ, թող բոլորք հուր վառվի և ձեր աչքի առաջ առանց դողալու երկուսով մտնենք, և ով չայրվի՝ նրա պաշտամունքի ճշմարիտ լինելուն հավատանք»: Այս միտքը հաճո թվաց ամբողջ բազմությանը, քանի որ բազմության մեծ մասը հավատում էր կախարդի կողմին, իսկ նույն ժամին վառվեց-բորբոքվեց կրակը, և սուրբ եպիսկոպոս Հեղինոսը առաջարկեց երկու հոգով աներկյուղ մեջը մտնել: Բայց Իրաս կախարդն ասաց. «Ոչ այդպես, այլ ամեն մեկս առանձին մտնենք: Բայց առաջ դու մտնես, որ առաջարկեցիր այսպես անել»: Սուրբ Հեղինոսը ձեռքերը երկինք պարզեց՝ արտասուքով լի և ասաց. «Դո՛ւ գիտես, Տեր Հիսուս Քրիստոս, կենդանի Աստծու Որդի, որ հնոցում երից մանկանց չորրորդը եղար: Ես մարդկային փառքից ոչինչ չցանկացա, այլ միայն Քո ժողովրդի փրկությունը, որի գովությունն արժանացրիր ինձ, իսկ մատնիչը իր արբանյակի միջոցով ձգտում է արդար ճանապարհից ինձ քարավեժ անել: Որի փրկություն համար հոժարակամ մտնում եմ այս կրակի մեջ հաստատելով, թե Քեզ այնտեղ կգտնեմ ինձ վրա ցողելիս, որ կրակից ինձ բան չմոտենա»: Այս ասելով խաչակնքեց և մտավ ներս և բազում ժամեր մնաց բոցի մեջ՝ բնավ չվնասվելով հրից: Այնժամ բազմությունը տեսավ չքնաղ սքանչելիքն ու երևույթը: Թեպետ [Իրասը] ընդդիմանում էր, նրանք վերցրին և զցեցին կրակի մեջ. նա սկսեց այրվել: Երանելի Հեղինոսն շտապեց, թեև հիրավի այնպիսի հարվածներով [Իրասը] տանջվում էր, սակայն նրան կենդանի հափշտակեց սուրբ Հեղինոսը, բայց նրան բոլորը նախատեցին, և թողեցին տեղում: Դա, որ տեսնում եք՝ հանապազ փառավորում է Աստծուն:

Այնժամ Եվգինիան իր ներքինիների՝ Պրոտինիոսի և Հիակինթոսի հետ ծուռնկի եկավ, աղաչելով սուրբ Հեղինոսին, որպեսզի իրենց առավել ևս հաստատի հավատքի մեջ: Աղաչեցին նրան, որ նրա միջոցով ճանաչեն Տիրոջը: Իսկ նա ասաց նրանց. «Սովորություն պետք է դարձնել առավոտյան օրհնությունը, որպեսզի ձեզ շնորհվի զվարթ երևույթ»: Բայց նրան աղաչեց Եվգինիոսը, որ աղոթի իրենց համար. «Մենք երեքս հոռմայեցի ենք ծնունդով, և թողած կուռքերի պաշտամունքը եկանք քո հետևից, հասանք այստեղ»: Ու մինչ նրանք պատմում էին, ծերունին լուռ էր, որովհետև այն ամենը, որ պատմելու էին նրան, նա տեսնում էր երազով: Երբ նա վերջացրեց, նրանք հասան տեղ և գտան մի երկյուղած մարդու, որ եղել էր նրա հետ, որի անունը Եվտրոպիոս էր: Նրան ասաց. «Կուսպաշտությունը ուրացած երեք երիտասարդ միասին հասել են և [ուզում են] փրկիչ Քրիստոսին ծառայել: Աղաչում են հավատացյալ ժողովրդին՝ այս է նրանց ցանկությունը, որ արժանի լինեն քո սրբություն միջոցով ուղղվելու և անարատ հավատքի ընդունող լինեն»: Սուրբ Հեղինոսն այնժամ ասաց. «Գոհանում եմ Քեզնից, Տեր Հիսուս Քրիստոս, որ սրան հասնելու ինձ արժանացրիր. տեսնել այն, ինչ քո սուրբ կամքի շնորհներով նախապես ցույց էիր տվել»: Նրանք մտնելով նրա մոտ աղոթք մատուցեցին, և նա, ավարտելով աղոթքը, բռնեց Եվգինիայի և մյուսների ձեռքերը և ասաց. «Ի՞նչպես է որ հատկապես ցույց տալով ձեր անձերը ցանկացաք տեսնել Աստծու տառապյալ ծառայիս, բայց ի՞նչ տեսաք իմ մեջ, որ եկաք մոտս, հայտնեցեք ինձ, քանի որ ուզում եմ ձեզնից լսել և որպեսզի կարողանամ ձեր առաջադրած մտքից ինչ-որ օգուտ ստանալ»: Նրան պատասխանեց բարեխոհ Եվգինիան ու ասաց. «Երբ քարի ու փայտի մեջ հնարավոր չէ, որ բնակվի Աստծու գորությունը, մենք մեր մեջ առանձին որոնում էինք թե որն է ճշմարիտ պաշտամունքը, որի մեջ հանգչում է երկրպագելի և երկնային Աստվածը: Այստեղից հնչումնք լսեցինք, որ միաբան օրհնելով ասում էիք. «Հեթանոսների բոլոր չաստվածները դեներ են,

իսկ երկինքը ստեղծել է Տերը» (Սաղմ. 26. 5): Ուստի այս բարեխորհուրդ ձայնով հրավիրվելով՝ թողինք կուռքերի պաշտամունքը և ժողովրդով հանդերձ շտապ հասանք այստեղ, քո աստվածաբանություն հետևից, գալիս ենք հավատալով Աստծուն, սրանց հետ լինելու քո աստվածասեր հավատքի և ճշմարիտ հրամանների միաբան: Բայց երեքիս եղբայրությունը մեկ է. մեզնից մեկի անունը Պրոտեոս է, մյուսինը՝ Հիակինթոս, իսկ ես կոչվում եմ Եվգինիոս»: Երանելի Հեղինոսն ասաց. «Բարվոք է կոչումդ, Եվգինիո՛ս, քաջապես ավարտելով ճգնությունը, քեզ անցկացրիր Տիրոջ մոտ: Բայց դու սա գիտեցիր, որ նախ ինձ Աստված հայտնեց քո մասին, Եվգինիո՛ս, թե որտեղից և ո՞ւմ դուստրն ես, և ովքեր են քեզ հետ եկողները: Տերն ինձ ցույց տվեց, որ սրանք դեպի Աստված քաջալերվեցին քեզնով»: Եվ սուրբ Հեղինոսը նրանց հրամայեց, որ երեք ամիս եկեղեցիներն ու վանքերը շրջեն, նրանց ուղիղ հավատով արժանացրեց սուրբ մկրտություն: Դրանից հետո նրանց տարավ վանք, հանձնեց գլխավորին, բայց ոչ մեկին չասաց եղելությունը:

Արդ, կրկնենք այն տեղից, նույն ժամանակ, երբ Պրոտեոսն ու Հիակինթոսը, Եվգինիային առած դեպակը ճանապարհից դատարկ ուղարկեցին նրա մոր մոտ: Իսկ նրա ընտանիքը կարծեց, թե եկել է Եվգինիան: Բոլորը խնդունությամբ ընդառաջ գնացին, և երբ նրան դիպակի մեջ չգտան, բոլորը միասին կոծելով լալիս էին, և քաղաքում եղավ խռովություն ու ամբոխում, և ողբում էին անհնարին ու կոծում սաստիկ, և բոլորը հույժ տրտմություն մեջ էին. ծնողները դատերն էին ողբում, եղբայրները քրոջը, ծառաները տիրուհուն, և քաղաքացիներից յուրաքանչյուրը՝ ծնողների սգի և ընտանիքի տառապանքի ու տրտմության համար: Եվ անչափ պատահարներ եղան, և շրջում էին ամբողջ իշխանությունով մեկ՝ փնտրելով Եվգինիային, հարցնում էին վհուկներին, խնդրում էին կախարհներին, կուռքերին զոհ էին մատուցում և ասում էին, թե Եվգինիային անմահ աստվածներն են վեր տարել: Իսկ հայրը հավատաց սրան, ելավ սգից, կարծելով, թե ար-

դարև աստվածների թիվն է դասվել, և նրան մաքուր ոսկուց արձան կանգնեցրեց, բայց նրա մայր Կոդոլիան և եղբայրները՝ Ապիտոնը և Սարգիսը, չէին դադարում տրտմելուց, սաստիկ սգի մեջ էին:

Իսկ Եվգինիան հոգու տղամարդկային միաբանությամբ Պրոտեոսի և Հիակինթոսի հետ հասել էր վանք: Եվ այնքան աստվածային ուսմամբ առաջադիմեցին ի Քրիստոս, որ երկու տարվա ընթացքում ամբողջ Գիրքը սերտեցին: Իսկ երրորդ տարին, մինչգեռ այդպիսի վարքի ու ընթացքի մեջ էին, վանքի երեցը վախճանվելով փոխվեց իր Տիրոջ մոտ: Նրա մահից հետո բոլոր եղբայրներին թվաց երանելի Եվգինիան կկարգվի գլխավոր, իսկ նա հրաժարվում էր, որովհետև արգելված էր խղճի մտք, որ էզը Աստծու մարդկանց չպետք է գլխավորի: Բայց երկնչում էր, որ ընդդիմությամբ և աղտեղություններ չլինի՝ ովքեր նրան հրավիրում են այս [պաշտոնին]: Այնժամ բոլորը միաբան կամքով հարձակվեցին նրա վրա, և նա այս բանը քանիցս ասաց նրանց. «Քրիստոսյանների ժողովներում ասացեք, թե Քրիստոս ինչպես կսահմանի լինելիքը, որի համար, եթե հրամայեք առաջ բերել ավետարանները և բանալով կարգաք և ինչ որ հրամայված լինի այդ գլխում՝ լսենք»: Նրանք բերին սուրբ Ավետարանը, երանելի Եվգինիան առավ, երկրպագեց, և բոլորը լուելով աղոթք մատուցեցին, բացեց և գտավ տեղը, ուր գրված է. «Ասաց Հիսուս իր աշակերտներին. «Գիտեք, որ իշխանները տիրում են հեթանոսներին, և մեծամեծները վտանգում են նրանց. բայց այդպես չլինի և ձեր մեջ, այլ ով կամենա ձեզնից առաջին լինել՝ լինի ձեր վերջինը և բոլորի ծառան» (Մատթ. 23-27): Իսկ կարդալուց հետո Եվգինիան ասաց. «Եթե սրա օրինակով վարեք ձեր մտքերը, քանի որ այսպես է, կմնաք Աստծու հրամանով: Ծառան և նրա ծառայակիցները պարտավոր են նրա կամքի համաձայն իրենց անձը Աստծու առաջ կատարյալ ցույց տալ, որ ընդունելի լինի նրանից»: Եվ բոլոր եղբայրները հավանակից եղան. հանձն առավ գլխավորել, որ նրանց չտրտմեցնի, որովհետև բոլորը խնդրեցին նրան վերացնել վանքի հոգսերը, համաձայնեց դրան:

Բայց իր մեջ ցույց էր տալիս ողջ խոնարհությունը և սպասավորությունը, որ պարտավոր էին կրտսերները մատուցել նրան, դա ինքն էր անում ավելի լավ. Չուր բերել ջրհորից, փայտ կտորել, հատակը մաքրել, եղբայրների պետքերը սպասարկել: Բայց առանձնացրեց իրեն մի փոքր սենյակ՝ վանքի դռան մոտ, որպեսզի դրանով ևս որևէ առավելություն չերևա այլ ընկերների նկատմամբ: Եվ երբ գալիս էին գիշերային հսկման, նրան գտնում էին առաջինը եկած, և չկար բոլոր եղբայրներից մեկը, որ նրանից ավելի խոնարհ լիներ, ամեն ժամի պատրաստ էր եղբայրների համար, և խրատում էր ստեպ-ստեպ՝ որևէ մեկին երդումով բան չասել, համեստորեն խոսել, և ասում էր, թե՝ Ինչքան պարտավոր ենք Աստծու ծառաներս երկյուղածություն ցուցաբերել, սովորել Նրա հրամաններից, բայց մտածենք այսուհետ թեև այնչափ փուլթ, մտքի հոժարություն ունենանք մեր սրտում, որ մեզնից ոչ ոք չհանդգնի Աստծուն արհամարհել, որովհետև այսպիսի օրինակով ուրանում է Տիրոջը, որ սովորեցնում է անել այն, որ Նա չհրամայեց»: Իսկ այս ամենը սովորելով նրանից՝ հաստատվում էին հավատքի մեջ և ո՛չ ցերեկը ո՛չ գիշերը աստվածային Գրքից անպարապ չէին: Բայց այսքանը Աստծու համար պատվական էր, մինչև դեռ չէին հալածում էր, և Աստված նրա միջոցով առողջություն էր շնորհում հիվանդներին:

Մի կին կար ծերակուտականներից՝ հարուստ ու հուշակավոր, որի անունը Մելանի էր: Չորսօրյա սարսուռով բազում ժամանակ ծախսելով եկավ նրա մոտ: Նրա լանջի վրա Եվգինիան Քրիստոսի նշանը նկարեց, նրա հիվանդության բոլոր ախտաժեղանքները հեռացրեց և ողջացնելով ոտքի կանգնեցրեց նրան: Դրանից հետո երանելի Եվգինիան շտապեց վանք: Մելանին դարձյալ ստեպ-ստեպ կանչում էր Եվգինիային, իսկ Եվգինիան երկյուղածությամբ գնում էր նրա մոտ: Մելանին չգիտեր, որ նա կին է և ուղիղ մտքով չէր ցանկանում տեսնել Եվգինիային, և ոչ այն բանի համար, որ նրա բարեխոսությունը առողջացավ, այլ կարծում էր, թե նա այր է: Եվ անարժան մտքով մարդ էր ուղարկում նրա մոտ

ասելով. «Ինչու դատարկ աշխատությունը հարվածում ու մաշում ես անձը և կորցնում ես ծաղիկ երիտասարդությունդ: Մի՞թե Աստված սիրում է տրտումներին: Արդյո՞ք ամեն մարդու և յսպես է հրամայում, որ առանց խնդրության և առանց սփոփանքի իրենց կյանքի ամբողջ ժամանակը անցկացնեն: Այդպես չէ, այլ դու արի, և կվայելենք Աստծու պարգևները, որ իբր անշնորհք լինելով մեզ անարժան չհամարենք Աստծու պարգևներին: Ուստիև քո երախտիքի համար, հավատա ինձ, հնազանդ եմ քեզ, որ ինձ մոտ լինելով այդպիսի դժվարությունդ վերջ տաս, և պայծառ ու բարի ժամանակներ վայելենք, և լինես իմ ամբողջ ունեցվածքի տերը, այլև տեր լինես իմ անձին, որ զարդարված եմ պատվով, իսկ ազգով՝ երևելի, և իմ հարստությունը մեծ է, և չեմ կարծում թե անիրավացի եմ Աստծու առջև: Եթե կամենում ես իմ ամուսինը լինել և մերժել սգավորությունդ՝ վայելիր բարի ժամանակները»:

Այս և սրանց նման բաներ ասաց Մելանին, սուրբ Եվգինիան ելավ մահաբեր և կորստական խոսքերից, կամենալով նրա անձը ազատել մահվան խեղդուկից, բացատրելով նրան, որ շատ գծով է աշխարհի ցանկությունը, քանի որ մեկը կարծում է ձեռքում բռնել ժամանակավոր ցանկությունը, յուր անձը զրկում է անանց փափկությունից: Եվ ամենևին պետք չէ հանձն առնել մարմնավոր ցանկությունները, որովհետև բանսարկուն դրա միջոցով է փաղաքշում, խաթարելու և կորցնելու մարդկանց հոգիները: Իսկ երանելի Եվգինիայի այս խոսքերին Մելանին խցում էր ականջները՝ չընդունելու համար ասածը, քանի որ դառն անամոթության գաղտնիքով ըմբռնել էր, ինչպես և գրված է. «Չարարվեստ անձի մեջ իմաստություն չի մտանի» (Իմաստ. Ա. 4):

Իսկ Եվգինիան ջանում էր բոլոր օրինակներով ազատել նրան կորստական մահից: Մեկնեց նրա մոտից, իսկ Մելանին մարմնի հիվանդությունն էր պատճառ բռնում և աղաչում էր երանելի Եվգինիային գալ հիվանդատես: Իսկ սուրբը մտավ և նստեց սենյակում՝ նրա մոտ: Գաղտնի գրկախառնությունը Մելանին անամոթաբար հանդգնում էր մոտենալ նրան և

անարժան խոսքերով հրապուրում էր ամբարշտուկայան: Այն-  
ժամ երանելի Եվգինիան իմացավ չար դևի նենգությունն ու  
բանասարկուի չարությունը, որ նրա մեջ էր, աջ ձեռքը մեկ-  
նեց իր ճակատին և խաչակնքեց և բարձրաձայն ու սաստիկ  
արտասուքով, նաև հառաչելով սկսեց ասել. «Պատշաճու-  
թյամբ դու կոչվեցիր Մելանի, քանի որ քեզնից գիճուկայան  
սևություն և չարության ապականություն է փչում, որով-  
հետև մի՞թե մեղքերի դուստր ես դու և կորստյան առաջնորդ,  
սատանային սիրելի, ցանկություն բորբոքում և անիրավ ու  
անվախճան մահվան քույր, մշտնջենական գեհենի դուստր,  
միացյալ անամոթի ցանկություն, Աստծու թշնամի, բանսար-  
կուի ընդունելի. հեռո՛ւ վանիր մոլորությունդ Քրիստոսի  
ծառաներից»:

Երբ նա այս լսեց՝ գայրույթը բորբոքվեց, և չկարողացավ  
տանել ամոթը, վախենալով, թե հասնելով բազում ականջ-  
ների, այս լուրը շատերի աչքին նախատինք կլինի: Գնում  
է Աղեքսանդրիա և հրապարակի մեջ, եպարքոս Փիլիպոսի  
առջև ամբաստանելով ասում է. «Հանդիպեցի մի անհավատ  
երիտասարդի, որ իրեն քրիստոնյա էր անվանում, որին ես  
կանչել էի առողջության համար, քանի որ հոչակվել էր, թե  
կարող է օգնել հիվանդներին: Իսկ երբ որ նա մոտեցավ ինձ՝  
դժնի և անամոթ խոսքերով դիմեց ինձ և ինձ գրգռում էր  
թշնամանքի: Ինչ հարկ կա շատ խոսելու: Քանի որ վերևից  
նայելով հանդգնեց դիմել ինձ իբրև գերու, ու եթե սենյա-  
կում չլինեք իմ աղախի՞ններից մեկը, որի շնորհիվ չենթարկ-  
վեցի նրա բռնությունը, թերևս ինձ վրա կատարեր իր չար  
ցանկությունը»:

Այս լսելով եպարքոսը խիստ բարկացավ, գինվորների  
բազմություն ուղարկեց և հրամայեց նրան և նրա հետ եղող-  
ներին երկաթով կապել և քիչ օրերի ընթացքում հասցնել  
հրապարակ՝ թատրոնի առաջ, որպեսզի նրանց լսելով հրա-  
մայի նրանց զցել գազանների առաջ: Իսկ երբ ժամանակը  
հասավ, երանելի Եվգինիային ու բոլորին, որ նրա հետ էին,  
երկաթե կապանքներով բերեին հրապարակը՝ ի տես ամենքի:

Բազմությունը, չգիտենալով արդարությունը, աղաղակում  
էր նրանց դեմ, մանավանդ նրանք, որ Մելանիի կողմից էին:  
Որովհետև բազմությունը պես-պես ցանկություններ ուներ.  
Ոմանք աղաղակում էին հրով ոչնչացնել նրանց, ուրիշները՝  
գազանակուր անել և այլք, աղաղակում էին, որ տեսակ-տե-  
սակ տանջանքներ տան նրանց:

Այնժամ եպարքոսը լուեցրեց բազմությանը, Եվգինիային  
կանգնեցրեց բոլորի առջև և հարցրեց. «Ինչպիսի համարձա-  
կությունամբ այդքան հանդգնությունը հասցրեց քեզ մինչև  
ազգային սինկղիստոսներից Մելանիին կիսամահ տարադեմ  
տեսնելով՝ քրիստոնյայի կերպարանքով մտար նրա մոտ,  
իբր թե հմուտ ես բժշկական արվեստին և ազատածին կնոջը  
թշնամանքի ու անարգության կոչեցիր: Մի՞թե այսպիսի բան  
է հրամայում գործել ձեր Քրիստոսը, կամ դա՞ է ձեր պաշ-  
տամունքի խոստովանությունը, որ ապականության գործեր  
կատարեք»:

Այնժամ Եվգինիան պատասխանեց եպարքոսին ասելով.  
«Աղոթքով խնդրում էի, որ [պարզվի] այս զրպարտությունը,  
որ եկել է մեզ վրա, ես կամենում էի խղճով հաղթել և այս  
հնարովի համբավը հանդերձյալ դատաստանին պահել, որով-  
հետև հնարավոր չէ վախեցնել ճշմարիտ սրբությունը՝ չա-  
րարվեստությամբ նրա վրա բարդելով, և ոչ իսկ պարկեշտու-  
թյունը, սրբությունը կարող են գնալով թաքնվել: Որովհետև  
իմաստունների պարկեշտությունը պահվում է հստակորեն,  
ովքեր այն ստացել են հաստատությամբ, և ի սեր Աստծու  
քաջաբար է վարվում քրիստոնյան: Այժմ իմ խղճմտանքը  
հայտնվել է այս վիճակում: Քանի որ բնությունամբ ես էգ եմ  
և չէի կարող նրբագեղությունամբ իմ ցանկալի Աստծուն ուղա-  
ծիս պես օգտակար լինել, այդ պատճառով տղամարդ ձեռա-  
ցա. արժանավոր և իրական գեղեցկությունս այլափոխելով  
ըստ նմանության իմ վարդապետ Թեկղի, ապականացուից  
և ժամանակավորից փախչելով կամեցա երկնային բարիքի  
հասնել: Սա եղավ ի գովություն և ցանկալով աստվածային  
առաքինությունների՝ տղամարդու կերպարանք առա: Այդ

պատճառով ես աստվածային պաշտամունքի ցանկությամբ տարված տղամարդու կերպարանք առա, որպեսզի այդպիսով քաջաբար պահեմ կուսությունս»:

Երբ այս ասաց, պատուեց գլխի շորը, և իսկույն կույսի անծանոթ դեմքը և գեղեցիկ լանջը բացվեցին և նորից փութով ծածկեց պատառոտված հանդերձով և շարունակեց խոսել, ասաց եպարքոսին. «Դու իսկ իմ մարմնավոր հայրն ես և իմ երկու եղբայրները՝ Ապիտոնն ու Սերգիոսը, իսկ ես քո դուստր Եվգինիան եմ, որ Քրիստոսի ցանկության համար արհամարհեցի այս երկրայինը իմ երկու պատանիների հետ, որ ահավասիկ Պրոտեոսն ու Հիակինթոսն են, իմ ներքինիները, որոնք ինձ հետ Քրիստոսի դասը կարգվեցին: Բայց Քրիստոս այնչափ բավականությամբ կմոտեցնի քեզ, որ վարդապետելովս բոլորի առջև ցանկությունների հաղթող կլինես Քրիստոսով, ինչպես և ես եմ հավատում, եթե մինչև վերջ անվթար մնանք»:

Սրանից հետո հայրը ճանաչեց դստերը, իսկ եղբայրներն՝ իրենց քրոջը, և մոտեցան բոլորի աչքի առաջ շրջապատեցին նրան և արտասովելով փարվում էին միմյանց: Եվ անմիջապես մեկը գնաց և պատմեց նրա մայր Կողոդիային: Նա լսելով հափշտապ ընթացքով և ձգտումով հասնում է թատրոն:

Եվ արագ-արագ հանելով ոսկեթել հանդերձ՝ նրա կամքին հակառակ հագցնում են նրան, որ բոլորն իմանան, որ սա Եվգինիան է, և վերև են բարձրացնում նրան, և ամբողջ բազմությունն աղաղակում է ասելով. «Մեկ է Քրիստոսը, մեկ է Տերը, մեկ է քրիստոնյաների ճշմարիտ Աստվածը»: Բայց եպարքոսը և երեցները բազում քրիստոնյա ժողովրդով թատրոնում էին և սպասում էին, թե երբ են սպանելու՝ վերցնեն սրբերի նշխարները և ամփոփելով թաղեն: Նրանք ևս մտնում են թատրոն, փառավորելով Աստծուն, և միաբարբառ աղաղակում, ասելով. «Քո աջը, Տե՛ր, փառավորված է իր ուժով, Քո աջը, Տե՛ր, փշրեց իր թշնամիներին»:

Երբ նրան բարձրացնում էին ի տես բոլորի, որ նրա անչափ պարկեշտությանն անտեղյակ էին, և բոլորը նայում էին,

հանկարծակի հուր իջավ երկնքից և մաշեց Մելանիին, և նրա ամբողջ տունը: Երբ դա ևս տեսան, բազմությանը մեծ խնդություն եղավ երկյուղով հանդերձ, և ութ տարի փակված եկեղեցին բացին, և բոլորը հավատալով քրիստոնյա դարձան: Մկրտվեց նաև Փիլիպոս եպարքոսը իր՝ Ապիտոն և Սերգիոս որդիների հետ, մկրտվեց Եվգինիայի մայրը՝ իր աղախիններով, և հեթանոսների անթիվ բազմությունը քրիստոնեություն ընդունեց: Եվ ամբողջ Աղեքսանդրիան եղավ իբրև մի եկեղեցի: Եվ քանի որ բոլոր երեցներն էին առաջնորդում և կարգավորում եկեղեցին, որովհետև առ Տեր էր գնացել նա, որ ավելի առաջ աստվածային օրենքների առաջնորդն էր: Իսկ նա [Փիլիպոսը] եպիսկոպոս լինելով՝ մեծապես պատվում էր եկեղեցին, այնպես որ արժանի էր իր պատվին: Այլև արքունիքն էր կարգավորում նա, որովհետև ուներ եպարքոսական իշխանություն, քանի որ փոխարինող չէր եկել, իսկ բոլոր եգիպտացիները այս պատճառով հեռացան կուռքերի մոլորությունից, դարձան դեպի Քրիստոս և բոլոր քաղաքներում եկեղեցիներ էին հիմնում, և ծաղկում էր քրիստոնեությունը՝ բարգավաճելով օրեցօր:

Եվ այս բաները այսպես եղան Աստծու շնորհով, իսկ բարու նախանձորդ բանասարկուն և չարի վարդապետն ու գործակիցը բարձրացնում էր հեթանոսներից ոմանց, որ քաղաքի գլխավորներն էին, և ուղարկում այն ժամանակվա թագավորների առջև, ու սուրբ եկեղեցուն և աստվածապաշտ Փիլիպոս եպիսկոպոսին նախանձելով ասացին. «Փիլիպոսի փոխարեն եպարքոս ուղարկվի Պերինոս կոչվածին», – որ թագավորներից հրաման ուներ, թե այդպես պիտի սպանել Փիլիպոսին: Իսկ Պերինոսը եկավ, չկարողացավ այդ անել, որովհետև Փիլիպոսը սիրելի էր ամբողջ քաղաքի բազմությանը: Նրա մոտ է ուղարկում քրիստոնյայի կերպարանք առած մարդկանց, որ մոտենալով եկեղեցուն և գտնելով նրան Աստծուն պաշտելիս, մոտեցան նրան իբրև թե նրանից օրհնություն ստանալու, սպանեցին նրան, ինչպես Ջաքարիային՝ տաճարի մեջ, սեղանի մոտ: Նա եպիսկոպոս եղավ մի տարի և երեք ամիս և վկայի խոստովանությամբ գնաց Տիրոջ մոտ:

Իսկ Եվգենիան առավ իր մարտիրոս հոր մարմինը, տվեց օտարանոցին, որ իր մայր Կղոզիան էր հիմնել Տիրանաս կոչված տեղի մոտ, որը իր եղբայրների աղոթատունն էր ի փառաբանություն Տեր Քրիստոսի, որ թագավորական պատվով կառուցեցին վերոհիշյալ տեղում:

Երբ այս այսպես եղավ, բոլորը, որ Եվգենիայի մոտ էին, և՛ մայրը նրա, և՛ եղբայրները, միաբան լծակցելով շարժվեցին դեպի Հռոմ, և նրանց առաջնորդում էր Աստծու շնորհը: Որի համար Ապիտոսն ու Սերգիոսը ծերակուտականների կողմից խնդուկությամբ ընդունվեցին, նույնիսկ նրանցից մեկը հյուսիսային կողմից Կարթագենում, իսկ մյուսը Կոնստանդնուպոլիսում: Բայց Կղոզիան և Եվգենիան շարժվում էին աստվածային խորհրդով և օրըստօրե ջերմանում առաքինության վարքով և բազում անձինք էին մատուցում աստծուն: Եվ սքանչացած էին բոլոր սինկղիստոսներն ու կույսերը և առաջադիմում էին քրիստոնեական նախանձախնդրությամբ, իսկ Բասիլիա անունով մի կույս, որ Գալիոս թագավորի ազգակիցն էր, զարգացած մտքով և հուշակված իմաստությամբ, գաղտնի եկավ Եվգենիայի մոտ, նրանից լսեց ճշմարտության Բանը, այնպես հավատաց, որ ոչ մի հնար չկար նրան հեռացնելու հավատքից: Բայց քանի որ չէր կարող շուտ-շուտ տեսնել երանելի Եվգենիային, Պրոտեոս և Հիակինթոս ներքինիներին Եվգենիան պարզեց նրան: Եվ ընդունեց, նրանց հետ գիշեր-ցերեկ աստվածային օրհնությամբ ու աղոթքով էր պարապում և զբաղվում լիանում էր:

Այն ժամանակ մի եպիսկոպոս սուրբ այր և աստվածային խրատներով շատ կատարյալ, եկավ Բասիլիայի մոտ, սուրբ մկրտությամբ լուսավորեց նրան և բոլորին, որ նրա հետ էին, և հաճախակի խրատում էր աստվածային Գրքով հաստատելով նրանց Քրիստոսի հավատքի մեջ: Եվ նրանք բոլորը միաբան առաքինի վարքով այնքան առաջադիմեցին, որ պատրաստ էին վկայության: Բայց ինչքան ժամանակ եպիսկոպոսը առաջնորդն էր եկեղեցու, քրիստոնյաները խաղաղության մեջ էին, և նրանց մեջ թշնամիներն ոչ մի հուզում

չկար, բայց Կիպրիանոս եպիսկոպոսը բազում վշտերի համբերեց հավատքի համար, ուստիև Մաքսիմոս անունով մի հյուսիսային թագավորական հրամանագրով սպանեց նրան, իսկ Նեստոր եպիսկոպոսը այս լսելիս ծածուկ վարքով առանձին էր, որովհետև հոռմայեցի մեծամեծներից շատերին ծածուկ քրիստոնյա էր դարձրել:

Բայց մի օր Բասիլիան եկավ Եվգենիայի մոտ, և սա մեծ խնդությամբ ընդունեց նրան. «Այսօր Տերն ինձ հայտնեց, որ քո արյունը վարդատեսիլ ծաղկի պատկերով կհեղվի. այսինքն՝ ճգնելով Քրիստոսի խոստովանության համար՝ հաղթության պսակն ու նշանը կընդունես»: Իսկ երանելի Բասիլիան այս լսելով և ձեռքերը երկինք բարձրացնելով մեծ խնդությամբ գոհացավ Աստծուց: Եվ երբ սկսեցին աղոթել և վերջացրին ու նստեցին, Բասիլիան ասաց Եվգենիային. «Յուրաքանչյուրիս, ինչպես տեսնում ենք, Փրկիչը հայտնեց մեր փառքի պսակը, քանի որ ինչպես դու ինձ համար, նույնպես ես քեզ համար կելնեմ երկրից՝ Քրիստոսը հայտնեց ինձ: Քանի որ տեսա, որ երկնքից կրկնակի հաղթության նշան առար. մեկ՝ կուսական ճգնությամբ հաղթեցիր Աղեքսանդրիայում, երկրորդ՝ արյանդ հեղման համար, որ բռնվելու ես»: Իսկ երանելի Եվգենիան լսելով շատ ուրախացավ և՛ կանչելով բոլոր կույսերին, ովքեր նրա միջոցով անապական սրբությամբ պարկեշտություն ցանկացան, հրավիրեց իր հետ հաղթելու: Եվ աղոթքներն ավարտելուց հետո այսպիսի խոսքերով դիմեց նրանց. «Ահա այգեկուլի ժամանակն է, երբ գաղափարների պտուղը հասած է երևում, քանի որ իմ սրտի սերն էք, իմ ողկույզները, նախ ինձ ուղարկեցեք, իսկ դուք պատրաստ եղեք արթնությամբ, քանի որ կուսության գլխավոր նշանները սրանք են՝ նմանվել հրեշտակներին և մոտենալ Աստծուն: Քանի որ այս առաքինությունը սիրելի է հանդերձյալ կյանքին և՛ պարկեշտության մայր, սրբության ուսուցիչ, անհոգության տիկին և խնդության առաջնորդ, առաքինության նախանձ և հավատքի պսակ, հույսի օգնություն և պատվի պահպանություն, անձի փառք և հավիտե-

նական հանգիստ, բարության հրավիրակ և երկնային արքայուհիյան առաջնորդող: Այսուհետև մենք պետք է ընտրենք չարչարանք, քանի որ կուսության և սրբության մեջ ենք մնալու. չէ որ փաղաքշանքը աշխարհական է, խնդությունը՝ ժամանակավոր, որի համար այնտեղ ողբով է ըմբռնվում և արտասուքով: Որովհետև սկզբում զվարթացնում են մարդուն, իսկ վախճանին հասնելիս՝ գցում տանջանքի մեջ: Այս ժամանակ անհոգություն են դնում մտքում, որ պարտավոր դարձնեն մշտական տանջանքի: Որի համար, ի՛մ պատվական կույսեր, որ քաջապես ինձ հետ կուսությամբ ընթացաք, հաստատուն մնացեք Աստծու սիրուն, որի մեջ կաք և առավել աճեցրեք այն, քանի որ սա ողբալու ժամանակն է, այն ժամանակը, որի մեջ մոլորված էիք, որպեսզի ամենակալ Աստծուց լցվեք անապական խնդությամբ: Բայց ես ձեզ կհանձնեմ Սուրբ Հոգուն և հավատում եմ, որ իր արքայուհիյան մեջ ձեզ կատարյալ և անարատ ցույց կտա: Եվ ամեն ինչի օրինակ ինձ ունեցեք ձեր աչքի առաջ, մտքում պահելով վարդապետությունը, իմ՝ տառապածիս վարդապետությունը և նրան փարեցեք բոլոր օրերին»:

Այս և այսպիսի խրատներով դիմեց նրանց, արտասովելով համբուրեց բոլորին և համբուրելուց հետո ասաց. «Ո՛ղջ եղեք, քույրե՛ր իմ, քանզի Բասիլիան, Եվգինիան հեռանում են ձեզնից մարմնով»: Նույն պահին Բասիլիայի աղախիններից մեկը գնաց Պոմպեոսի մոտ, որին խոսք էր տվել, և ասաց նրան. «Գիտեցի՛ր, որ իմ տիկին Բասիլիան, որ քեզ հետ խոսքկապ էր արել, հրապուրվեց Եվգինիայով և ամենևին հրաժարվել է քեզ հետ ամուսնանալուց»:

Երբ Պոմպեոսն այս լսեց, բարկությամբ բորբոքվեց և գնալով նրա մոտ, ուզում էր մտնել այն սենյակը, ուր Բասիլիան Պրոտեոսի և Հիակինթոսի հետ զբաղված էր աղոթքով ու օրհնությամբ: Այնժամ Բունեցին Պրոտեոսին և Հիակինթոսին, ստիպում էին զոհ մատուցել, իսկ եթե ընդդիմանան՝ սրի կմատնեն: Նրանք ամենևին չենթարկվեցին, և պես-պես տանջանքներ տվին նրանց: Համբերեցին բազում տանջանք-

ների, վերջում սրի պատուհաս ընդունեցին և խոստովանության սրբությամբ վախճանվեցին:

Ապա բունեցին և Եվգինիային և տանջեցին քաղաքի եպարքոս Անիկտիոսի առջև և հրամայեցին գնալ, զոհ մատուցել Արտեմիսին: Իսկ երանելին տեղ հասավ, մտավ տաճար, կանգնեց արձանի դեմ-հանդիման, ձեռքերը երկինք պարզեց և երկար ժամանակ աղոթեց: Երբ վերջացրեց աղոթքը, անմիջապես Արտեմիսի արձանն ընկավ, փշրվեց և այնքան մանր եղավ, որ նույնիսկ նրա փոշին չէր երևում: Իսկ նրանք չիմանալով Աստծու զորությունը՝ այդ եղածը համարում էին կախարդական արվեստի գործ. հրամայեցին մի մեծ վեմ կապել նրա պարանոցին և գցել Տիբերիոս գետը: Եվ երբ տարան նրան, գցեցին՝ անմիջապես քանդվեցին կապանքները, և վեմը նրանից ընկնելով սուզվեց: Եվ սուրբ Եվգինիան գալիս էր Ջերի վրայով, և բոլոր քրիստոնյաները տեսնելով սքանչելիքը՝ լցվեցին մեծ խնդությամբ, օրհնում էին և ասում. «Այս է Աստված, որ Եվգինիայի հետ է, նրան չկորցնելու համար է, որ [Քրիստոս] Պետրոսի հետ ծովում էր, որպեսզի նա չընկղմվեր»:

Ու մինչդեռ Չուրը բարձրացրած բերում էր նրան, հասավ ափին և ցամաք դուրս եկավ: Նրան բունեցին, դարձյալ բանտ նետեցին և հրամայեցին տաքացնել արքունի բաղնիքը, որի անունն էր Տիբերիանոս, և այնպես բորբոքեցին, որ կայծեր էր արձակում երկաթի նման: Եվ հրամայեցին նրան գցել այնտեղ, որ բոցով մաշվի: Երբ մտավ մեջը, իսկույն կրակը մարեց, այնպես որ արքունական բաղնիքը այնուհետև տաքացնել չէին կարող՝ նրա հրամանով եղած սառնամանիքից: Իսկ երբ որ այս հնարը ևս հաղթահարեց շնորհով, որ գործակից էր իր աղախին Եվգինիային, հրամայեցին դարձյալ բանտ նետել, և նրան գցեցին խավարի տունը, առանց հաց ու ջրի, և ամբողջ տունը լուսավորվեց: Եվ երանելին մնաց բանտում քսան օր: Եվ ամեն օր այնտեղ լույս էր ծագում: Նրան երևաց Աստծու հրեշտակը և զորացնելով նրան ասաց. «Քաջալերվիր Քրիստոսի աղախին Եվգինիա, քանզի

Տեր Հիսուս Քրիստոսը, որին ամբողջ մտքով ծառայեցիր, ինձ առաքեց քեզ մոտ, ասելով. «Քաջալերվի՛ր և զորացի՛ր, որովհետև այսօր քեզ երկինք եմ տանելու՝ ավարտելով քո հաղթության ընթացքը»: Նույն օրն իսկ, երբ Քրիստոսի ծնունդն էր, մի սպանիչ ուղարկեցին, որ գնաց-սպանեց նրան: Այնժամ քրիստոնյաները լսեցին, հավաքվեցին, վերցրին Եվգինիայի մարմինը և ամփոփելով փութով դրին մի նշանավոր տեղ՝ քաղաքից հեռու, ճանապարհի հանդեպ, որ կոչվում էր Զատինա: Իսկ նրա մայր Կողոզիան գերեզմանի վրա նստած լալիս էր, և նրան հայտնվեց երանելի Եվգինիան, ասաց. «Մայր իմ, խնդա ուրախությամբ, որ Տեր Քրիստոսը ինձ տարավ իր սրբերի ուրախության և հանգստի մեջ, իսկ իմ հորը կարգեց սուրբ հայրապետների դասը: Եվ քեզ խաղաղությամբ կընդունի այս եկող կիրակի: Եվ դու պատվիրիր քո որդիներին՝ իմ եղբայրներին, որ պահեն Քրիստոսի նշանը, որով արժանի կլինեն ընդունակ և ժառանգորդ լինելու Նրա սրբերին»:

Եվ երբ Կողոզիան վերադարձավ տուն, ուսուցանում էր որդիներին՝ ինչպես պատվիրեց երանելի Եվգինիան: Եվ կիրակի օրը, խորհուրդը կատարելու ժամին, մինչդեռ եկեղեցում էր և աղոթք էր մատուցում, իր հոգին տվեց Քրիստոսին՝ բոլոր հոգիների Տիրոջը: Այսպես վախճանվեց նա: Նրան վերցրին իր որդիներ Ապիտոսն ու Սերգիսը և դրին իրենց քրոջ մոտ: Եվ նրանք հառաջադիմում էին Տիրոջ նախանձախնդրությամբ բոլոր առաքիչություններով, մինչև որ բազում հեթանոսների փրկելով անարժան զոհաբերություններից՝ դարձնում էին Քրիստոսի հավատին: Նրանց սրբելով սուրբ մկրտությամբ՝ իրենք ևս արժանի եղան հետևորդ լինելու իրենց ծնողների և երանելի քրոջ վարքին և խառնվեցին սրբերի դասին: Նրանց հետ և մենք արժանի լինենք վայելել երկնի արքայության մեջ. օրհնել մեր Տեր Հիսուս Քրիստոսին, որովհետև ամեն շունչ պարտավոր է Նրա փառքին, և ամեն ծունկ օրհնի երկնավորներին, երկրավորներին և սպանդարամետականներին, և ամեն լեզու խոստովանի Նրան, որ ամեն ինչի վրա է, և Նրան վայել է փառք, հավիտյանս հավիտենից. ամեն:

## ՍՈՒՐԲ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐ ԵՎ ՓԱՌԱՎՈՐ ՎԿԱՆԵՐ ԵՎԳԻՆԵՍԻ, ՎԱՂԵՐԻՆՈՍԻ, ԿԱՆՏԻՏՈՍԻ, ԱԿՅՈՒՂԱՍԻ, ՄԱԿԱՐԻՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մյն ժամանակ Հռոմ մեծ քաղաքում թագավոր էին Դիոկղետիանոսը և Մաքսիմիանոսը, և չար խորհուրդ հղացան՝ աստված կոչվածների քուրմերի և քաղաքի սինկղիտոսների և մեծամեծների հետ քարոզիչներ ուղարկել Հռոմի բոլոր գավառների իշխանություններին՝ ողջակեզ և զոհեր մատուցեն աստվածներին, և բոլորը ճաշակեն զոհերի [մսից]: Բոլորին հաճո թվաց այս գաղափարը և մեծ ցնծություն մեծ ուրախացան և ասացին. «Մենք բոլորս հավանում ենք ինքնակալներից հրամանը՝ մեր բարերար աստվածներին հստակամտությամբ զոհ մատուցել, իսկ ովքեր չհնազանդվեն՝ մահով մեռնեն»: Եվ շուտով թագավորներից հրաման ելավ՝ քաղաքի բոլոր գլխավորներին հավաքել Հռոմի Կապիտոլիոնում, նամակ գրելով այս բովանդակությամբ.

«Միշտ հաղթող թագավորներ, ինքնակալ սեբաստոսներ Դիոկղետիանոսը և Մաքսիմիանոսը, մեծամեծներով և փոքրերով միաբան, իմացանք առատապարգև բարիքները, որ շնորհեցին աստվածները, մանավանդ հաղթությունը, որ ընձեռվեց մեզ, և հակառակորդների տկարությունը և նկուն լինելը նրանց զորությունից: Նաև երկրի առատ պտղաբերությունը և օդի բարեխառնությունը, որ շնորհվեց մեզ, և բոլոր բարիքները: Որի համար հրամայում ենք ձեզ՝ բոլոր գավառներին ու քաղաքներին, որ մեր իշխանության տակ եք, չզաղարել աստվածներին զոհ մատուցելուց, այլ ընծայատուր լինել նրանց բազիլիկներին, թե՛ մեկը՝ ազատ է և թե՛ ծառա, թե՛ գինվոր, թե՛ ռամիկ՝ ողջակեզների նվիրական զոհերը մի՛ ծուլանաք մատուցել: Իսկ եթե մեկը հակառակ կենա մեր հրամաններին, այնպիսին մատնվի դատավորների ձեռքը

և արգելափակվի խավարչուտ տեղերում, դառն ու չարաչար տանջանքով և բազում հարվածներից հետո սրով մահու վճիռ ստանա: Իսկ ովքեր հնազանդ լինեն մեր հրամաններին, նաև աստվածների բարերարությունից կզոհանան և ողջակիզված զոհերից կճաշակեն, փառքի ու պատվի կարժանանան»:

Լսելով այսպիսի ուրացության հրամանը Հռոմայեցոց ամբողջ աշխարհը ահուգողով խռովվեց, և մեծ դողով զարհուրեցին, և իբրև խավարի մեզ և տազնապի խուճապ տարածվեց հավատացյալների վրա, քանի որ արևելյան քաղաքների դատավորներից մի լուր եկավ-հասավ թագավորների լսելիքին, գրված ամբաստանության նամակ, թե Կապադովկիան և Մեծ Հայքի բոլոր կողմերը հակառակվեցին ձեր հրամաններին՝ չկատարելով աստվածների խորհրդավոր տոները և չճաշակելով նրանց նվիրական զոհերի [մսից]:

Երբ այս լսեցին թագավորները, շտապ փոխեցին այն գավառների իշխաններին՝ մեծ ցասումով զայրացած նրանց վրա, նրանց համարելով օրինազանց և անպիտան: Եվ նրանց փոխարեն երկու մարդ ուղարկեցին՝ ազգով և կրոնով հելլենացի, մեկի անունը Լուսիաս և երկրորդինը Ագրիկոդայոս. վայրենամիտներ և գազանաբարոներ՝ խորագետ և հանճարեղ:

Եվ երբ նրանք եկան հասան արևելից երկիրը, այն արյունարբու գազանների հրամանով բոլոր քրիստոնյաները բռնվեցին նրանց անաստված դահիճների ձեռքով և անողորմ տանջանքների ենթարկվեցին, իսկ նրանց, որ թաքնված քրիստոնյաներին մատնում էին, պարգևներ էին տալիս: Նաև հեթանոսները տեսան այն, թե ովքեր մատնում են քրիստոնյաներին, պարգև են ստանում, այնուհետև շահագրգռված էին լինում հավատացյալներից մեկին գտնել, որ մատնեն այն գիշակեր գազանների ձեռքը:

Եվ երբ քիչ ժամանակ անցավ, հեթանոսներից ոմանք Տրապիզոն քաղաքում լսեցին և փախած քրիստոնյաներին մատնում էին դատավորների ձեռքը՝ ինչք շահելու նպատակով: Այնուհետև եկան Սաղաղա քաղաքը, որտեղ նստում

էր Լուսիաս դուքսը, և պատմեցին երանելի Վաղերիանոսի, Կանտիտոսի, Ակյուղասի և Եվգենիոսի մասին, որ Տրապիզոն քաղաքից էին: Նաև քրիստոնյաներից շատերը արծաթսիրության ախտով նմանվելով Հուդային՝ գնացին Սաղաղա քաղաքը, հանդիպեցին Կոմենտարիոսին, որ զինվորների դասի զորագլուխն էր, հայտնեցին նրան ասելով. «Ահա Տրապիզոն երկրի և մերձակա Իտիսկոնիա գավառի վարդապետները թաքնված են ամբողջում: Նրանք թագավորներին ուսուցանում են քրիստոնյաների հավատքը և ասում. «Թագավոր չեն նրանք, ովքեր բռնությամբ պահում են երկիրը, այլ մեկ ուրիշն է՝ Հիսուս Քրիստոսը, երկնավոր Աստված: Նրան հրեաները Խաչյալ են ասում, և հեռացրին ողջակեզներից և աստվածների զոհերից: Եվ ոչ միայն նրանց, այլև այն կողմերի բոլոր գեղջուկ ու ուսմիկ մարդկանց խաբելով դարձրին իրենց կրոնին: Մեկ ուրիշը ևս հայտնվեց մեր քաղաքում, որ գրեթե նրանց աղանդի գլուխն է և չի դադարում ուսուցանել ու քաջալերել բոլոր քաղաքացիներին ու զորականներին՝ խրատելով ու ասելով. «Մի՛ երկրպագեք աստվածներին, այլ՝ Հիսուս Քրիստոսին, որին երկնավոր և հավիտենական Թագավոր են կոչում»: Եվ նրանք թաքնված են այն կողմերի անտառախիտ մայրիների մեջ:

Չորագլուխն ասաց նրանց. «Եթե կարողանաք նրանց ցույց տալ ինձ, բազում պարգևների և պատվո կարժանացնեմ ձեզ՝ ըստ մեր իշխանի հրամանի»: Այնժամ զորագլուխը գնաց և ծածուկ հայտնեց Լուսիաս իշխանին այն մարդկանց ասածները, և դուքսը հրամայեց իր մոտ կանչել այն քրիստոնյաներին, Քրիստոսի երանելի վկաներին: Եվ երբ սրանք [մատնիչները] եկան, դուքսը ելավ և նրանց մեկուսացրեց ամբոխից, հարցնում էր նրանց, թե ո՞րտեղ են սրբերը և ո՞ր քաղաքներից են նրանք: Նրան պատասխանեցին. «Տրապիզոն քաղաքի սահմաններում կբռնենք նրանց: Արդ, հրամայիր որսորդներին, շներով գալ մեզ հետ, և զորականներից մեր հետևից գան և շրջապատեն անտառը, որտեղ բնակվում են, և կբռնենք նրանց»: Այս խոսքը հաճո թվաց Լուսիաս

իշխանին, և տվեց ամեն մեկին երեք դահեկան և առաքեց նրանց, պատվիրելով, որ ոչ ոք չիմանա ու չփախչի բարբառոսները երկիրը:

Իշխանը կանչեց Կոմենտարիոսին, որ զորագլուխն էր, և բոլորի ներկայությամբ հրամայեց զորականներին՝ պատրաստել որսորդներին ու զինվորներին և մատնիչներին նրանց հետ փութով հասնել Տրապիզոնի երկիրը, հետամտել և շրջել, որ միգուցե գտնեն նրանց, և զգուշանալ, որ խռովություն չընկնի երկրում: Եվ երբ մոտեցան տեղին, որ մատնիչները ցույց էին տալիս նրանց, շրջապատեցին անտառը և աղաղակ բարձրացրին. և թնդում էր երկիրը, ժայռերն ու լեռները ահավոր արձագանքով գոչման ձայներ էին արձակում: Եվ գազանները հոտոտելով շրջում էին, որս էին կարծում և փնտրում մարդկանց, իսկ որսորդները արագորեն գտնելով նրանց, շատ ուրախանում էին:

Եվ տեսան երանելի Կանտիտոսին, բռնեցին և հարցրին նրան. «Ո՞վ կամ ո՞րտեղացի ես դու և ինչ գործ ունես այս անտառում»: Պատասխանեց սուրբն ու ասաց նրանց. «Ես քրիստոնյա եմ»: Մատնիչներն ասացին. «Դո՞ւ ես քրիստոնյաների վարդապետը»: Երանելին դարձյալ ասում է նրանց. «Ես քրիստոնյա եմ»: Հարցրի նրան. «Ո՞ր քաղաքի քաղաքացի ես դու, և կամ ի՞նչ է քո անունը»: Պատասխանեց նրանց և ասաց. «Ես Մակեդոնացոց աշխարհից եմ, Թեսաղոնիկե քաղաքից»: Եվ մատնիչներն ասացին. «Կապեցեք դրան երկաթե կապանքով և տարեք իշխանի մոտ, և այնտեղ կհարցաքննեն դրան և կիմանան, թե ո՞վ կամ ո՞րտեղից է: Եվ իրար գլխի մի՛ հավաքվեք, որ քրիստոնյաները չգան և չաղատեն դրան, որովհետև ինչպես տեսնում ենք՝ դա է որոնվածը»: Եվ կապեցին նրան, տվին զորականներից մեկին, և ճամփա ընկան գնալու Տիսկանա կոչված ճանապարհով:

Եվ իրենք գնալով թանձրախիտ անտառով խուզարկում էին, գտնելու սրբերի մյուս ընկերոջը: Եվ տեսան մի մարդու, որ լծած եզներ էր քշում: Եվ բռնելով հարցրին նրան. «Ո՞ւր են փախել քրիստոնյաները, և կամ գուցե հենց դու ես»: Պա-

տասխանեց և ասաց. «Ես մեղավոր մարդ եմ և ում մասին հարցնում եք՝ չգիտեմ»: Եվ սրբերին մատնողները ասացին զորականներին. «Բռնեցեք դրան և տարեք իշխանի մոտ, և նա տանջելով կհարցնի դրան, և կխոստովանի»: Ստրատելատներն ասացի նրան. «Միայն տեղը ցույց տուր, և քեզ կարձակենք»: Նա պատասխանեց. «Եվ ինչո՞ւ պիտի ես արդարև անարատ մարդուն իզուր կորստյան և մահվան որոգայթի մատնեմ»: Իսկ նրանք փաղաքշանքով աղաչում էին նրան, որ չվախենա զարհուրելով և բոլորին լսելի հայտարարի: Դարձյալ ստիպում էին և ասում. «Մեզ տեղը ցույց տուր միայն հեռվից»: Եվ այրը հավանեց նրանց [խոսքին], և տարան նրան այնտեղ, և ցույց տվեց: Այնժամ զորականներով հանդերձ թակարդներ պատրաստեցին այն տեղի շուրջը, ինչպես երեսների որսի ժամանակ, բարձր ձայնով ու աղաղակով բռնեցին սրբին: Նա ուզում էր փախչել նրանցից, բռնեցին և հարցրին. «Ո՞վ ես կամ ո՞րտեղից ես»: Պատասխանեց և ասաց նրանց. «Ես քրիստոնյա եմ: Բավական էր ինձ նախասացյալ անունը, որ վայելուչ էր ասել ձեզ»: Այնժամ մատնիչներն ու ստրատելատները իմացան, թե սա է, որին փնտրում են: Եվ կապեցին սրբին, հանձնեցին զինվորներին, ուղեցին արձակել այն մարդուն, որ ցույց տվեց նրանց: Իսկ նա ասաց. «Թե այսպես հաճո թվաց մեր Աստծուն, որ մեր առաջնորդները մատնվեն ձեր ձեռքը, ես ևս չեմ հեռանա նրանցից, որովհետև ճշմարիտ քրիստոնյա եմ»: Եվ սուրբ վկա Վաղերիանոսը ասում է հավատացյալ մարդուն. «Ե՛կ մեզ հետ, որդյա՛կ, և մի՛ հեռանա մեզնից, որովհետև այսպիսի ուղեկիցներ երբեք չես գտնի և ոչ հրավիրող՝ Տեր Հիսուս Քրիստոսի նման»: Զորականները լսեցին, որ այրը քրիստոնյա է, կապեցին և շարունակեցին իրենց ճանապարհը:

Երեք օր հետո սրբին տարան Տրապեզոն քաղաքը: Զորականները քաղաքացիներին կապվածների մասին հարցրին. «Ո՞րտեղ բանտ գցենք»: Եվ որոշեցին ընդհանուր բանտում պահել նրանց մինչև Լուսիաս բղեչխի գալը: Եվ զինվորները անընդհատ շրջում էին քաղաքում, որ թերևս գտնեն սրբերի

երրորդ ընկերոջը: Իսկ սուրբը ապահով թաքստոցում էր: Եվ իշխանին հայտնեցին, թե նրանց վարդապետներից երկուսին բռնել են, իսկ երրորդին չեն գտել: Մատնիչները ևս չգտան սուրբ Եվգենիոսին, գնացին ամեն տեղ, և [մարդիկ] չուզեցին ցույց տալ զորականներին: Երբ այս լսեց Լուսիաս իշխանը՝ առավոտյան հավաքեց զորքերը և իր զորականների դասը և ճանապարհ ընկավ: Եվ հինգ օր հետո եկավ Տրապեզոն քաղաքը և իմացավ զորականներից, որ գտել են սրբերին:

Իսկ ամենագով սրբերը այն բանտում գիշեր-ցերեկ աղոթում էին մեր Տեր Հիսուս Քրիստոսին և ասում. «Քեզ հուսացողների անձերը մի՛ մատնիր գազաններին և մի՛ մոռանար աղքատությունը մեր, մեր Տեր Աստված, այլ փրկիր մեզ մեր ատելիների ձեռքից և մեզ ամրացրու Քո ամենահաղթ աշով և մեր վկայություն ընթացքը վերջացրու ըստ Քո անսուտ խոստումների»: Եվ երբ առավոտ եղավ՝ Լուսիաս դուքսը եկավ և հարցրեց զորքին. «Ո՞րտեղ է ժողովարանը, որ այնտեղ նստելով հարցաքննեմ դատապարտյալներին»: Քաղաքացիները պատասխանեցին. «Պալատը, որ կոչվում է Վավուսին, մոտ է ծովին: Դա է դատաստանի վայրը»: Եվ քաղաքի բազմությունը հավաքվեց՝ տեսնելու Քրիստոսի վկաների հանդեսը:

Լուսիաս իշխանը գնաց և նստեց ատյանում և Կոմենտարիոսին հրամայեց բերել բոլորին, որ բանտում էին և հարցաքննել: Զորագլուխը գնաց բանտ, սրբերին կապանքներով առավ և բերեց [նրա] առջև: Իսկ սուրբ վկաները միաբան աղոթում էին Աստծուն և ասում. «Տեր Հիսուս Քրիստոս, ամենակալ և գթած Աստված, դու սուրբ մարգարե Դավթի բերանով ասացիր. «Նախապես մի՛ հոգացեք, թե ինչ խոսեք, որովհետև ձեր Հոր Հոգին կխոսի ինչ որ պետք է դուք խոսեք» (Ղուկ. Ա. 14-15): Այժմ Տեր և Աստված մեր, խոստացված ժամը հասել է. ուղարկիր Քո հրեշտակին և մեզ տուր մեր բերանը բանալու խոսքը, երբ մտնենք իշխանի առաջ՝ հանդիմանելու նրա անօրինությունը, որ ամբարշտել է Քո դեմ: Բայց չարանքի նրա հարվածներից մենք չենք վախենում, քանի որ հանապազ քեզ ունենք մեր աչքերի առաջ»: Եվ երբ սրբերն

ավարտեցին աղոթքը, անօրեն դահիճները բռնեցին նրանց, պատռեցին նրանց հագուստները և տարան իշխանի առաջ:

Երբ Լուսիասը տեսավ նրանց, հարցրեց. «Ասացեք ինձ ձեր անունը, թե ինչ եք կոչվում, ապա ձեր պաշտամունքը և՛ զոհերի ողջակեզները և երկրպագությունը ո՞ւմ եք մատուցում»: Սրբերը պատասխանեցին. «Եթե ուզում ես հարցնել մեր ճշմարիտ և արդար անունները՝ քրիստոնյա ենք, այլ բախտ ու ճակատագիր մենք չգիտենք, իսկ հայրերից և ծնողներից անվանվեցինք Վաղերիանոս և Կանտիտոս»: Իշխանն ասաց. «Եվ ձեր մյուս ընկերը, որ իրեն քրիստոնյա անվանեց, ի՞նչ է կոչվում»: Ինքը պատասխան տվեց և ասաց. «Կոչվում եմ Ակյուղաս»: Դուքսն ասաց. «Ո՞ւր է և երրորդ վարդապետը ձեր, որ հատկապես փնտրում ենք»: Սրբերն ասացին. «Լսեցինք նրա մասին, որ այս քաղաքում է: Եթե Աստված սիրում է նրան, հայտնի կդարձնի նրան քո ատյանին, քանի որ կա նաև Գրքում. «Տերը խրատում, տանջում է ամեն որդու, որին ընդունում է» (Առակ. ԺԱ. 9): Իշխանն ասաց. «Դո՞ւք եք, որ սովորեցնում եք զոհ չմատուցել աստվածներին և արհամարհել ինքնակալների հրամանները»: Սրբերն ասացին. «Այո՛, մենք մեզ մոտ եկողներին ուսուցանում էինք ճշմարտության ճանապարհը, որ տանում է հավիտենական կյանք, և՛ անարյուն ողջակեզներ մատուցել համազոյ և միասնական երրորդությանը: Աստծու կամ թագավորի այլ անուն մենք չգիտենք, միայն Հիսուս հավիտենից Թագավորին, որ ունի մահվան և կյանքի վրա իշխանություն»: Դուքսն ասաց. «Եվ ումից է ստացել Նա իշխանություն»: Սրբերն ասացին. «Ամենակալ Հորից, որ ստեղծեց երկինքն ու երկիրը և ստեղծեց իր ամեն ինչով»: Իշխանը հարցրեց. «Այն, որ հրեաները խաչեցին՝ Նա՞ կդատի կենդանիներին ու մեռյալներին»: Սրբերն ասացին. «Այո՛, Նա է Իր զորությունը տիեզերքը դատում և հարուցում տալիս մեռելներին, իսկ ամբարիշտներին անչեղ հուրն է ընձեռում և անվախճան որդերը»: Իշխանն ասաց. «Եվ երբ որ մեռնենք, նորի՞ց կհառնենք»: Սրբերն ասացին. «Ինչու է դատում Աստված տիեզերքին ար-

դարությամբ, կամ արդարներին փառք է շնորհում, մեղավորներին անվախճան տանջանք: Բայց ձեր՝ ամբարիշտների դմասին գրված է. «Ամբարիշտները դատաստանին չեն հառնի և ոչ մեղավորները՝ արդարների խորհրդին» (Սաղմ. Ա. 5): Բայց ձեզ հայտնի լինի սա, որ ձեզնից նրա՛նց հոգիները, ուրքեր տանջվեցին և դատվեցին ձեր անիրավությամբ ու ամբարշտությամբ, պահանջելու է Աստված անաչառությամբ և ձեզ կզցի արտաքին խավարը, որ պատրաստված է ձեր հորը՝ սատանային և նրա հրեշտակներին, բոլոր ամբարիշտներին և Նրան ուրացողներին»: Իսկ դուքսը մոմուաց սրբերի վրա՝ իբրև արյունարբու գազան, հրամայեց սրբերի ոտքերն ու ձեռքերը կապել շղթաներով բացի չորս զինվորներից, և արջառաջողով ձեծել նրանց՝ մինչև արյունը ոռոգի երկիրը: Եվ սրբերն ասացին. «Տերն է մեր օգնականը, և մենք չենք երկնչում՝ մարդն ինչ կանի մեզ»: Իշխանն ասաց. «Եթե չեք համաձայնում զոհ մատուցել աստվածներին, իսկույն կյանքից կզրկեմ ձեզ»: Սրբերն ասացին. «Մեր մարմնի վրա իշխանություն ունես, ինչ ուզում ես արա՛, իսկ մեր հոգիներին իշխանություն ունի Նա, ով տվել է և կարող է մեզ շնորհել հավիտենական կյանքի առհավատչյա»:

Այնժամ դուքսը հրամայեց հանել նրանց և կապել փայտից և նրանց ոտքերը պնդել կոճղով և երկաթե շեղբերով քերել ու մածել նրանց անդամները: Եվ անողորմ դահիճները կանթեղներ մոտեցրին վկաների մարմիններին, այրեցին ու խորովեցին նրանց: Իսկ սուրբ վկաներն սկսեցին բարձր ձայնով աղոթել և ասել. «Մեր Տեր Աստված, որ Քո մեծ զորությամբ ստեղծեցիր երկինքն ու երկիրը և նրանց մեջ եղած արարածներին, որ ամենակարող ես, ուղարկիր Քո հրեշտակին և շիջեցրու այս հուրը, որ նեղում է մեզ և ցրիր Հնոցի բոցը, ինչպես բաբելոնյան հրից փրկեցիր երեք մանուկներին և այրեցիր քաղաքացիներին: Նայիր մեզ և անկեզ պահիր մեզ, որպեսզի հավիտյանս փառավորվի Քո անունը»: Երբ սրբերը այս աղոթեցին, իսկույն չար իշխան Լուսիասի սպասավորները մեռելի պես ընկան և չէին կարող ելնել: Իշխանը

տեսավ, խիստ տրտմեց, և հավաքվածների ամբողջ առյուծը ամոթահար եղավ: Եվ հրամայեց իջեցնել փայտից և տանել բանտ: Եվ գնալիս սրբերն աղոթում էին ասելով. «Դու, որ նստում ես երկնքի բարձունքին, Հոր աջ կողմը, ճշմարտության Աստված և ողորմության Տեր, օգնիր մեզ, որպեսզի երբ մեզ մոտենա նեղությունը՝ հաջողվի մեզ Քո վկայությունների ճանապարհը»: Եվ գիշերը այսպես ավարտեցին աղոթքն առ Աստված:

Իսկ երանելի վկա Եվգենիոսը քաղաքից դուրս թաքնված էր մի տեղ, քարանձավում, որ կոչվում էր Փշաբեր: Գիշերվա երազում Տերը երևաց նրան ցերեկի նման և ասաց. «Եվգենետոս»: Եվ նա ասաց. «Ահավասիկ եմ, Տեր»: Եվ Տերն ասաց նրան. «Տեսար երկնի արքայությունը քեզնից առաջ [գնացողներին], որ (կանխեցին) քեզ: Չլսեցիր ավետարանական ձայնը, որ ասում է. «Ով խոստովանի Ինձ մարդկանց առաջ, կխոստովանեմ ես մարդկանց Իմ Հոր առաջ, որ երկնքում է» (Մատթ. Ժ. 33, Ղուկ. ԺԲ. 9): Դարձյալ նրան ասաց Տերը. «Քո անձը հայտնի դարձրու քեզ փնտրողներին և մի՛ ընդդիմանա իմ հրամանին՝ ինչպես Հովնանը եղավ: Քարոզիր կյանքի Բանը և սովորեցրու և մի՛ երկնչիր և մի՛ պատկառիր, որովհետև քեզ հետ եմ»: Այս ասելով Տերը հրեշտակներով հանդերձ բարձրացավ երկինք: Սուրբ Եվգենիոսը այս ամենը լսում էր ինչպես ցերեկը, և ելավ, կանգնեց աղոթքի և գոհացավ Տիրոջից և փառավորում էր Աստծուն գիշեր ու ցերեկ:

Անօրեն իշխանի զինվորները փնտրում էին նրան և չէին գտնում: Եղավ, որ մի կին խոտ քաղելիս անցնում էր այն վայրով, որ կոչվում է Վարանխայ, քարայրին մոտիկ, որ կոչվում է Փշաբեր: Նա լսեց սաղմոսերգության ձայն. սուրբ Եվգենիոսը աղոթում էր: Եվ կինն ասաց. «Օտարոտի ինչ-որ ձայն լսեցի Ականտիսի [փշաբեր] քարանձավից և մարդու ձայն, թե դա ինչ է՝ չգիտեմ»: Երբ քաղաքացիները լսեցին, ասացին նրան. «Ուրեմն դե է խփել քեզ, և մոլեգնել ես: Ինչպես ես ասում՝ «Չայն լսեցի և չտեսա ոչ մեկին»: Եվ կինը պնդում էր, որ իր ասածը ճշմարիտ է: Իսկ նրանք, որ փողոցի

մեջ հավաքվել էին՝ մարդիկ և դատավորի սպասավորները, երբ լսեցին, կնոջ հետ միասին գնացին Ականտիս կոչված քարանձավը՝ իրենց հետ վերցնելով սպառազինված մարդկանց: Նրանց հետ քաղաքից իջան այրեր և կանայք, և կինը նրանց ցույց տվեց անձավը: Եվ ձայն էր լսվում բազմության ականջին, երբ երանելի Եվգինեսոսը սաղմոսում էր: Զարհուրած վախենում էին մտնել ներս, որովհետև կարծում էին, թե այնտեղ չար դևեր կան: Իսկ ովքեր զինված էին, համարձակվեցին մտնել անձավը: Եվ տեսան սրբին, որ տարածել էր իր ձեռքերը դեպի երկինք և աղոթում էր բարձրաձայն, գոհանում ու փառավորում էր Աստծուն: Շրջապատեցին սրբին, իսկ նա չդադարեց աղոթելուց և ասաց այսպես. «Ինձ շրջապատեցին բազում շներ, և չարերի ժողով պաշարեց ինձ» (Սաղմ. ԻԱ. 17): Հարցրին նրան ասելով. «Ինչո՞ւ ես այստեղ միայնակ բնակվում, կամ ի՞նչ ես փնտրում այստեղ: Գուցե դու ես, ում որ փնտրում է մեր իշխանը, որ կոչվում ես քրիստոնյաների վարդապետ և ուսուցիչ»: Պատասխանեց. «Ես քրիստոնյա եմ»: Իսկ Լուսիաս բղջիխի զինվորներից ուրիշներ հարցրին. «Դու ա՞յս քաղաքից ես, թե՛ այլ»: Իսկ երանելին չպատասխանեց, միայն ասում էր՝ «Քրիստոնյա եմ»:

Այնժամ զինվորները բռնելով նրան քարչ տվին մինչև քաղաքը՝ կամենալով նրան տանել դուքսի առաջ: Իսկ Քրիստոսի երանելի վկան աղաղակում և ասում էր. «Քո վկայության ճանապարհին կզվարճանան որպես ամեն մեծության մեջ» (Սաղմ. ՃԺԸ. 14): Ու դարձյալ. «Զի ինչպես քաղցր է իմ քիմքին քո կամքը» (Սաղմ. ՃԺԸ. 103), և հետո. «Զեմ երկնչի չարից, զի դու Տեր, ինձ հետ ես» (Սաղմ. ԻԲ. 4): Մատնիչները լսեցին, որ սուրբ Եվգինեսոսը բռնվել է և կամեցան հայտնել իշխանին: Եվ զինվորները երանելիին բերին դուքսի մոտ, վկայելով, որ դա է քրիստոնյաների իսկական վարդապետը, որ գտան քարանձավում թաքնված: Երբ իշխանը տեսավ նրան և շուրջը եղած բազմությունը, և օրը տարածամել էր, հրամայեց պարզև տալ մատնողներին և ամբոխն արձակեց, որ առավոտյան հրապարակավ դատի սրբին: Եվ տարան

երանելիին բանտ նետեցին: Եվ [դատավորը] ամբողջ գիշեր մտածմունքի մեջ էր, թե ինչ ճանապարհով դատի սուրբ վկային: Իսկ նա գիշերը լուսացրեց Աստծուն աղոթելով: Առանձնացված լինելով մյուս քրիստոնյաներից՝ աղոթելիս ասում էր այսպես. «Տեր Աստված ամենակալ Հայր, մեր հայրերի՝ Աբրահամի, Սահակի և Հակոբի Հայր, որ Քո Միածին Որդուն՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին առաքեցիր աշխարհս, որով ճանաչեցինք Քո աստվածությունը, որ եկավ և մարմնացավ անարատ կույս Մարիամից, որ երկրի վրա երևաց և շրջեց մարդկանց հետ, որ Պոնտացի Պիղատոսի առջև վկայեց բարի դավանությունը, որ համբերեց խաչի և մահվան և երեք օր անց հարյավ և փրկեց մեզ գրավորական օրենքի ծառայությունից, վկաների գլխավոր եղավ և ննջեցյալների առաջին պտուղ, և համբերություն տվող, և սուրբ հրեշտակների հրամանատար, սուրբ առաքյալներին լցրեց գիտությունմբ և պատվիրեց չմեկնել Երուսաղեմից և սպասել Հոր ավետումին բարձունքից, և այժմ, մեր Տեր Հիսուս Քրիստոս, Քո սրբությունից ինձ զորություն տուր և շնորհիր բանալ իմ բերանը հանդիմանելու ամբարիշտներին, որ գալիս են մեզ վրա»:

Սրանից հետո Լուսիաս դուքսը եկավ, նստեց ատյանում՝ մի բարձրադիր տեղ, և նախ հրամայեց Կոմենտարիոսին, որ զինվորների զորագլուխն էր, գնալ սրբի մոտ և համոզվեր խոսքերով դիմել սրբին, որ թերևս համաձայնի զոհ մատուցել աստվածներին: Իսկ երբ սուրբ Եվգենիոսը իմացավ, որ դուքսը ուզում է կանչել իրեն՝ շտապեց գնալ նրա առաջ: Եվ մյուս իշխանը, որ Կոմենտարիոսն էր, իմացավ, որ անօգուտ են համոզման խոսքերը, զինվորներին ասաց. «Առեք-տարեք և շուտով հասցրեք բղջիխի առաջ, թերևս նրան կասի, թե ով կամ ո՞րտեղից է, կամ ի՞նչ էր անում քարանձավում»: Իսկ սուրբ Եվգենիոսը ինքնիրեն կնքեց սուրբ խաչի նշանով, ասաց. «Ես քրիստոնյա եմ և ոգևորված եմ մեր փրկիչ Աստծու վարդապետությունմբ և արժանի չեմ ուսուցիչ կոչվելու, որովհետև մեր ուսուցիչը Քրիստոսն է: Իսկ ինձ հետևող քրիստոնյաներին ուսուցանում եմ ճշմարտության

ճանապարհը՝ հավատալ և երկրպագել մի Աստվածուծայանը, Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, երևելիների և աներևույթների արարչին, և անարգել ու արհամարհել մարդկանց ձեռքի գործերը, որ ոչինչ են, ինչպես Դավիթ Մարգարեն է ասում. «Հեթանոսների կուռքերը ոսկի ու արծաթ են և նման կլինեն նրանց, ովքեր իրենց ստեղծել են» (Սաղմ. ՃԺԳ. 4): Եվ ինչպես առաքյալ և աստվածընկալ Պողոսն է ասում. «Պաշտեցին արարածին և ոչ Արարչին» (Հռոմ. Ա. 25):

Դուքսն ասաց նրանց. «Դուք՝ քրիստոնյաներդ, երեք Աստուծու եք երկրպագում և ոչ Արարչին»: Երանելին պատասխանեց նրան ասելով. «Մենք, ո՛վ դուքս, երկրպագում ենք ոչ բաժան երեք հոգու, այլ միասնական և անբաժանելի Երրորդուծայան, մի բնուծյան՝ ամենակալ Հոր, Միածին Որդու և ճշմարիտ Սուրբ Հոգու: Իսկ դուք երկրպագում եք մեռելուտի արձաններին և բանասարկուին: Քրիստոսը, որ ճշմարիտ Աստվածն է, Հորից իշխանուծյունն ստացավ դատելու կենդանիների ու մեռյալների, իսկ ամբարիշտները հարուծյունն չեն առնի դատաստանի ժամանակ, այլ կուղարկվեն արտաքին խավարը, որ պատրաստված է սատանայի ու նրա հրեշտակների համար»:

Իշխան Լուսիասը նորից սկսեց ողորձական բաներ խոսել նրա հետ, կարծելով դրանով խաբել և հեռացնել հավատքի բարձրուծյունից: Եվ ասաց նրան. «Այս քաղաքի՞ց ես, թե այլ գավառից»: Սուրբն ասաց նրան. «Այս քաղաքից եմ»:

Իշխանն ասում է. «Անունդ ի՞նչ է»: Սուրբը պատասխանում է. «Ես նախապես ասացի քեզ և կրկնում եմ, որ քրիստոնյա եմ և չեմ երկրպագում պիղծ դեերին: Ի՞նչ անելու ես՝ արա իսկույն»: Իշխանն ասում է. «Իսկ անուն չունե՞ս»: Սուրբն ասում է. «Օտար աստվածներ ես չեմ ճանաչում, և իմ ծնողներն այդպիսի ճանապարհ ինձ ցույց չեն տվել, այլ սովորեցրել են հավատալ Հոր, Որդու և Սուրբ Հոգու միաստվածուծայանը»: Իշխանն ասում է. «Թո՛ղ համառուծյունդ և զոհ մատուցիր աստվածներին»: Իսկ երանելին քմծիծաղով ասում է. «Եվ ո՞ւր են ձեր աստվածները, տեսնեմ նրանց»:

Լյուսիաս իշխանը կարծում էր՝ զոհ է մատուցելու նրանց,

սպասավորներին ու քաղաքացիներին հրամայում է շտապ սրբին տանել այնտեղ, ուր իրենց աստվածներն էին, քաղաքում, Նեմեսիոն կոչված վայրում: Եվ իշխանն ասում է երանելի Եվգինիոսին. «Եվգինիոս, եթե ինձ լսես և զոհ մատուցես աստվածներին՝ քեզ ինքնակալների հրամանով դատավորական պատվի կարժանացնեմ քո հնազանդուծյան համար»: Նաև այլ բազում առաջարկուծյուններով խոսում էին նրա հետ: Եվ իշխանն իսկույն գնում է Նեմեսիոն, ուր կանգնած էին իրենց աստվածները: Նրա հետ գնում է նաև քաղաքի ամբողջ բազմուծյունը, իրենց հետ տանելով և Քրիստոսի սուրբ վկային. ոչ բռնուծյամբ, այլ իր կամքով գնում է նրանց հետ:

Եվ երբ երանելին մոտեցավ կուռքերին՝ աղոթքի կանգնեց ու ասաց. «Քրիստոս, Փրկիչ աշխարհի, որ Քո անարատ բազուկները տարածեցիր կենսաբեր խաչի վրա և անապական արյունդ հեղեցիր մեզ համար, խաղաղուծյունն հաստատեցիր երկնքում ու երկրի վրա, որ Դանիել մարգարեի օրերին կործանեցիր բաբելոնյան Բելին, հերձեցիր վիշապին և չարի պաշտոնյաներին ամոթի մատնեցիր, որ Նաբուզոդոնոսոր արքային հրամայեցիր յոթ օր վայրի գազանների ու անասունների հետ խոտ ճաշակել, և արարիչ ու ստեղծիչ լինելով՝ ցուցադրեցիր աստվածային զորուծյունդ»:

Երբ աղոթքն ավարտեց՝ նույն պահին աստվածների երեք արձանները կործանվեցին ու ընկան, դարձան մանր փոշի: Եվ չարուծյան ոգին, որ բույն էր դրել նրանց մեջ, բարձրաձայն գոչեց, ելավ նրանցից ու ասաց. «Եվգինիոս, ինչո՞ւ ես հալածում մեզ մեր բնակատեղից. մենք աստվածներ չենք, այլ թշնամացած դեեր, և տեսնելով սրանց գեղեցիկ պատկերները՝ ցանկացանք բնակվել նրանց մեջ: Այժմ աղաչում ենք քեզ, սուրբ Աստուծու, մեզ այստեղից մի՛ հեռացնի»: Իսկ Քրիստոսի սուրբ վկան հրամայեց նրանց համոզվել և գնալ Կովկասի անբնակ լեռը: Եվ ամբողջ խառնիճաղանջ ամբոխն ու քաղաքացիք տեսան աստվածների արձանների կործանումը: Իսկ սուրբը խոսում էր մոլոր ոգու հետ, և բազմուծյունը

հավատաց մեր Տեր Հիսուս Քրիստոսին, և բարձրաձայն գոչելով ասում էին. «Մե՞ծ է քրիստոնյաների Աստվածը, քանի որ Դիալին, Ապոլոնին ու Արտեմիսին կործանված տեսանք և մանրացած՝ փոշու նման»: Եվ երանելին ասում է բոլորին. «Ճանաչեցի՞ք զորությունը ձեր կուռքերի, որ երկրպագում էիք: Կարողացա՞ն օգնել իրենց, և ինչո՞ւ պիտի օգնեն ձեզ, կամ՝ վանեն ձեր դեմ պատերազմող բարբարոսների հարձակումը: Արդ, հեռո՞ւ մնացեք նրանցից և եկեք իմ Աստծու ետևից, որ ձեզ թողություն տա»: Սուրբը կամենում էր այլ բաներ ևս ասել նրանց: Իսկ Լյուսիաս իշխանը բարկացավ, թույլ չտվեց, որ սուրբը շարունակի քարոզել, և ասաց նրան. «Քեզ բամբասողները ճիշտ ասացին, որ այդպիսի խոսքերով ինքնակալների զորքը հեռացրել ես աստվածների երկրպագությունից, և ասում են Հիսուս Քրիստոսը Աստված է, որ խաչվեց հրեաների ձեռքով»: Սուրբն ասաց. «Ձե՞ս ամաչում աստված կոչել նրանց, որ կործանվեցին փոշու նման մանր»: Իշխանն ասաց. «Արդ ինչո՞ւ կախարդների գլխավոր չես դու, որովհետև ես ոչինչ չեմ տեսնում, իսկ դու խոսում ես իբրև տեսնող, ուրիշներից մեկը նույնպես ոչինչ չտեսավ ու չլսեց»: Եվ գայրացած իշխանը հրամայեց իջեցնել ատյան:

Այնժամ դուքսը եկավ, նստեց ատյանում և զինվորներին հրամայեց մերկացնել սրբին և նրան բերել մարմինը ծածկելու կտավ: Եվ դահիճները իսկույն կատարեցին հրամանը և բերին դատավորի առաջ: Իշխանն ասաց. «Համաձայնի՞ր և զոհ մատուցիր աստվածներին՝ քո չարչարանքից առաջ»: Երանելին ասաց. «Բազում անգամ լսեցիր ինձնից, քեզ ասացի, որ քրիստոնյա եմ և զոհ չեմ մատուցի պիղծ դևերին»: Դուքսն ասաց. «Հրաժարվիր համառությունից, թեպետև չես երկրպագում ընկած աստվածներին, մոտեցիր և զոհ մատուցիր Ասկղեպիոսին և մյուս աստվածներին, ապա թե ոչ՝ հոգիդ կանջատես մարմնիցդ»: Սուրբն ասաց. «Ո՞վ կարող է մեզ հեռացնել Քրիստոսի սիրուց՝ նեղությունը, թե՞ անձկությունը, սո՞վը, թե՞ մերկությունը, թե՞ հալածանքը կամ տանջանքի երկյուղը, կամ հանդերձյալները, կամ այլ որևէ

արարած: Նախ բժիշկներ ուղարկիր, որ ողջացնեն քո մանրված աստվածներին, որ փշրվեցին»:

Այնուհետև իշխանը բարկացավ և հրամայեց պնդել նրա ոտքերն ու ձեռքերը և փռել գետնի վրա և հաստ մահակներով տանջել՝ աստվածներին արհամարհելու համար: Այնժամ դատավորը երանելիին ասաց. «Մի՛ հայհոյիր աստվածներին»: Իսկ բազում հարվածներից հետո խփողներին ասաց. «Դրան մոտեցրեք փայտին և ոտքերն ու ձեռքերը կապեցեք փայտին, քեռեցեք դրա մարմինը՝ մինչև որ զղջա և խելքի գա և հնազանդվի մեր արդար օրենքներին, զոհ մատուցի աստվածներին»: Եվ կատարեցին դատավորի հրամանները, և սրբի արյունը ջրի պես հոսում էր վկայի մարմնից: Իշխանն ասաց. «Ես իսկույն կվերացնեմ քո կախարդությունը և կհանեմ քո գլխից, թող գա քո Քրիստոսը և քեզ փրկե իմ ձեռքից»: Երանելի Եվգինեոսը պատասխանեց. «Իմ փրկիչ Քրիստոսը կփրկի ինձ քո ձեռքից, անօրեն ամբարիշտ, որովհետև բնավ չիմացա տանջանքները, որ դու պատճառեցիր ինձ, որովհետև իմ փրկիչը կակղացրեց քո չարչարանքի գործիքները»:

Եվ դատավորը սրբի խոսքերից և տանջանքը արհամարհելուց՝ առավել ամրացավ չարության մեջ և խորհեց այնուհետև խստացնել տանջանքի գործիքները սրբի վրա: Դահիճներին հրամայեց ջահեր մոտեցնել նրա կողերին և աղաջուր լցնել անդամների վրա: Եվ երանելին քաջությամբ համբերում էր տանջանքներին և չէր տրտնջում, այլ հոգոց հանելով ազդեցում էր Աստծուն և ասում. «Տեր իմ Հիսուս Քրիստոս, որ բազում վշտերից ու նեղություններից փրկեցիր Քո սուրբ առաքյալներին և տիեզերքի քարոզիչ դարձրիր, որ ավերեցիր դժոխքը և ջնջեցիր մահը և Քո կամքից տարամերժվածներին տարար քո արքայությունը, մեղավորներին ազատեցիր մեղքերից, մարի՛ր հրի բորբոքումը և աշխարհից վերացրու սրանց աստվածների պղծության զոհերը, և ողորմիր նրանց, ովքեր երկրպագում են Քեզ հոգով և ճշմարտությամբ»:

Իսկ երբ դատավորը տեսավ, որ սրբին պատճառած բոլոր տանջանքներից ոչ մեկը չօգնեց, դրանից հետո դահիճներին

հրամայեց քաղաքից մի ասպարեզ հեռու կրակ վառել և բորբոք կրակի մեջ լցնել բոլոր վկաներին միասին, որոնց անուններն են Մակարիոս, Վաղերիանոս և Ակյուղաս, նրանց հետ և Եվգինեոսը: Այնժամ եկավ դահճապետն ու ասաց դատավորին. «Ձերդ քաջության հրամանը կատարեցինք, և կրակը առավել ևս բորբոքվում է: Արդ, ինչ որ հրամայես դատապարտվածների մասին՝ կանենք»: Երբ իշխանը այս լսեց, անմիջապես քաղաքի բազմության հետ գնաց տեսնելու հնոցը և Աստծու վկաների վախճանը: Եվ Լուսիաս իշխանը տեսավ, զարմացավ հնոցի բորբոքման սաստկությունից, այնժամ հրամայեց նրանց գցել հնոցը: Իսկ երանելի Եվգինեոսը քաջալերում էր ընկերներին և ասում. «Մի՛ երկնչեք այս շիջանուտ հրից, որովհետև ինչպես բարձրանա՝ նույնպես կկորչի: Միայն աչքը ունի երկյուղ: Իսկ մենք այս ապականացու հրով անապական գանձն ենք ժառանգելու, որ պատրաստված է Նրա սրբերին, և՛ հավիտենական կյանքը»: Եվ միաբանությունամբ իրենց ձեռքերը բարձրացնելով երկինք՝ աղոթում էին Աստծուն ասելով. «Տեր Աստված, որ Քո Միածին Որդուն առաքեցիր Բաբելոն և երեք մանկանց հնոցի հուրը մարեցիր, Քո քաղցրություն ցողը առաքիր և այս հնոցը և փրկիր մեզ այս հրից, որ անկեզ մնանք այս բոցից, որ չմերձենա մեզ»:

Մինչդեռ սրբերը աղոթում էին, դուքսը նրանց մոտ [մարդ] ուղարկեց՝ աղաչելով նրանց, որ իրենց անձերը չգցեն հնոցի մեջ: Սրբերը պատասխանեցին ասելով. «Մենք պատրաստ ենք ամեն տանջանքի ու նեղության, որ պատճառելու ես մեզ հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որ մեզ համար չարչարվեց, հարուժյուն առավ և փրկեց մեզ, և չենք վախենում քո սպառնալիքներից»: Երբ բռնավորը այս լսեց, արյունարբու գազանի նման մոմռաց, հրամայեց նրանց գցել բորբոք հնոցը: Իսկ սրբերը իրենց կնքեցին Նաչի նշանով, միասին ընկան կրակի մեջ: Երեք երանելիներից առաջ կրակի մեջ մտավ երանելի Եվգինեոսը, և մյուսները՝ նրանից հետո: Եվ [ներկաները] տեսան, որ Աստծու հրեշտակները մտան նրանց հետ, և [սրբերը] հրեշտակների հետ գնում էին կայ-

ծակների վրայով, փառավորում Աստծուն և ասում. «Ամենակալ Աստված, որ Բանդ առաքեցիր մեզ փրկելու, որ վերացրեց մահվան երկունքը և կապվածներին քաջաբար կորզեց, լսիր մեզ՝ մեղուցյալներիս և բարուժյամբ ավարտիր մեր ընթացքը ի փառս Քո, խաղաղություն շնորհիր Քո աշխարհին, և հայտնվիր մեզ՝ Քո հավատացյալներին»:

Երկու օր անց շիջավ հուրը, և հայտնվեցին սրբերը, և հրեշտակները վերացան երկինք, և սրբերի մարմինների վրա հրի ոչ մի նշան չէր երևում, և հուրը նրանց հանդերձից մազ անգամ չպակասեցրեց:

Իշխանը դարձյալ զինվորներ ուղարկեց տեսնելու երանելի վկաներին. թե հուրը մոտեցե՞լ է նրանց, թե անկեզ են մնացել: Ովքեր ուղարկվեցին՝ չվերադարձան և պատասխան չբերին, որովհետև, երբ տեսան՝ երկրպագեցին սրբերին և հավատացին Տիրոջը: Այնժամ դահիճները եկան և հայտնեցին Լուսիասին, թե՛ «Սրբերը կենդանի են և փառավորում են իրենց Աստծուն, իսկ հուրը բնավ չմոտեցավ նրանց, և քո ուղարկած զինվորները երկրպագեցին նրանց ու հավատացին Քրիստոսին»:

Երբ այս լսեց դատավորը, հրի պես բորբոքվեց և կրճտացրեց ատամները նրանց վրա, որովհետև իրեն տեսավ պարտված, իսկ շատերը հավատացին Աստծուն: Հրամայեց սրով կտրել նրանց գլուխները՝ գրելով այսպիսի վճիռ. «Վաղերիանոսին, Կանտիտոսին, Ակյուղասին և Մակարիոսին, որոնք չենթարկվեցին ինքնակալների հրամանին և զոհ չմատուցեցին մեր բարերար աստվածներին, այլ խոստովանեցին, որ քրիստոնյա են, հավատալով ոմն Հիսուսի, որին հրեաները խաչեցին Երուսաղեմում, նրանք, թագավորների զինվորներին կախարդության հրապուրանքով հեռացրին աստվածների երկրպագությունից: Նրանց բազմիցս աղաչեցինք, և չհնազանդվեցին մեր արդար օրենքներին. բազում տանջանքներից հետո մահվան վճիռ թող ընդունեն, և նրանց մարմինները երկնքի թոշոնների և երկրի գազանների կերակուր դառնան»:

Եվ անողորմ զինվորները սուրբ վկաներին դուրս քաշեցին հնոցից, որպեսզի կատարեն բռնավորի հրամանը: Իսկ Քրիստոսի բոլոր արժանավորությունների արժանավոր վկաները աղաչեցին զինվորներին՝ մի քիչ հապաղել, որպեսզի աղոթեն: Եվ թույլ տվին նրանց, և սրբերը բարձրացրին իրենց ձեռքերը և դառնալով դեպի արևելք, սկսեցին աղոթել այսպես. «Տեր Աստված մեր Հիսուս Քրիստոս, Քո ամենասուրբ բերանով հենց Դու ասացիր. «Երկու ձագ մի դանդով են վաճառվում, և նրանցից մեկը երկիր չի ընկնի առանց ձեր Հոր, որ երկնքում է» (Մատթ. Ժ. 29, հմտ. Ղուկ. ԺԲ. 6): Դու, Տեր, որ Աբրահամին փրկեցիր և ընդունեցիր նրա պատարագը, Դու ես, որ շնորհ արեցիր Հովսեփին եգիպտացոց արքա Փարավոնի առջև: Դու ես, որ Մովսես մարգարեին ընտրեցիր Քո Իսրայելի ժողովրդին առաջնորդ, նրա միջոցով հերձեցիր Կարմիր ծովը և ժողովրդին անցկացրիր Սինայի անապատը և համբերել տվիր խստապարանոց ժողովրդին: Դու Հեսուլի ձեռքով Հորդանանը բաժանեցիր և Երիքովի աղամանդյա պարիսպը ջրի պես հեղեցիր, որ Քո հրամանով կապկպեց արեգակն ու լուսինը: Դու ես, որ գորացրիր Իսրայելի դատավորներին այլազգիների վրա և Քո ժողովրդին փրկեցիր ամբարիշտ քանանացիների ձեռքից: Դու Դավթին հաղթություն տվիր այլազգի հսկա Գողիաթի վրա և փրկեցիր անօրեն Սավուղի ձեռքից: Դու պահպանեցիր Դանիելին առյուծների գուբի մեջ և Շուշանին փրկեցիր և ազատեցիր դառն ծերերից, և հաղթություն տվիր Թեկղիին ոտնակոխ անելու հուրը և գազանների գորությունը, անարատ պահեցիր սուրբ առաքյալներին իրենց բոլոր նեղիչներից: Նաև մեր՝ Քո անարժան ծառաների պաղատանքի աղերսը ընդունիր և մեր ընթացքը ավարտիր Քո շնորհներով»:

Երբ ավարտեցին աղոթքը և իրենց տյառնագրեցին Խաչի նշանով, խոնարհեցրին իրենց պարանոցները, հատվեցին երանելիների գլուխները, և սրբերը նահատակվեցին ի փառս Աստծու: Եվ, ինչպես հրամայեց դատավորը, նրանց մարմինները գցեցին, և պահպանները նստեցին պահելու սրբերին,

որ գիտենան վկաներին փնտրողներին և նրանց մատնեն դատավորի ձեռքը: Իսկ հավատացյալները, իմանալով սրանց միտքը, սպասում էին գիշերվա իջնելուն: Եվ երբ մթնեց, և պահպանները քնեցին, [նրանք] եկան և սուրբ վկաների նշխարները ամփոփեցին Աստծու ազդեցությամբ: Նրանց գլուխները մարմինների մոտ չգտան, բայց նշխարները վերցրին, տարան ամեն մեկին իր տեղը: Երբ առավոտ եղավ, մտան թաքնվեցին թանձրախիտ մայրիների մեջ, որ իրենց չտեսնեն և մատնեն դատավորի ձեռքը:

Իսկ սրբերի սպասավորներից մեկը ննջեց և երազում տեսավ սուրբ Վաղերիանոսին, որ ասում էր նրան. «Լավ արեցիք, որ մեր մարմիններն ամփոփեցիք: Դու ե՛լ, քո ընկերներից մեկին վերցրու, ցերեկը գնացեք, իսկ երբ երեկո լինի, գիշերվան մոտ, երբ խոր քնած լինեն պահպանները, առեք մեր գլուխները, բերեք, դրեք մեր ոսկորների, նշխարների մոտ: Ձեզ նրանցից փայլակնացայտ լույս կերևա և այդպես կգտնեք մեր գլուխները»:

Եվ արթնացավ քնից, իր ընկերներին պատմեց երազը և ընկերներից [մեկին] վերցրեց ու գնաց: Եվ տեսան, որ նրանց շուրջը լույս էր փայլում, ինչպես ասաց Վաղերիանոսը: Եվ վերցրին, բերին գլուխները և շատ ուրախացան սուրբ նշխարների գյուտով: Երեք գիշեր անց պատրաստվեց նրանց հանգստարանը Հարավի Միջագետք կոչված վայրում: Եվ նրանց մեջ կռիվ ընկավ, թե որը որ վկայի մարմինն է, որ գիտենան նրանց անունով, որովհետև բազում հարվածներից քրքրված մարմինները չէին կարող ճանաչել և սպասում էին սրբերի հայտնությունը:

Եվ զինվորներից մեկը, որին հրամայված էր պահել սրբերին, Հոգով լցվեց և ասաց նրանց. «Աղոթեցեք Աստծուն, և Նա մեզ կհայտնի մեր խորհուրդները. թողնենք յուրաքանչյուր սրբին գրաստները, որոնք բարձած տանում են նրանց նշխարները՝ ուր հաջողեցնի Աստված և առաջնորդի, որ կողմ գնան նրանք, կիմանանք սրբերի տեղը»: Եվ միաբան աղոթելով գրաստներին «ազատ» թողին, և գրաստներից մեկը սուրբ

Կանտիտոսի նշխարներով գնաց Սավղահինա կոչված տեղը, մյուսը, որ բարձել էր Վաղերիանոսին, նույնն էր, որ Կանտիտոսին էր կրում, տարավ այնտեղ, որտեղից սուրբն էր. այս կերպ եղավ սրբերի հայտնությունը: Յուրաքանչյուրը առավ իր վկային, բազում ուրախություններ ու խնդրություններ գնաց իր քաղաքը և երանելիների գլուխները, նրանց մյուս նշխարների հետ դրին տապանի մեջ: Անպակաս և անապական գանձ հավաքվեց ի բարեխոսություն հավիտենական կյանքի հույս չիսուս Քրիստոսի հավատացյալների փրկություն: Եվ միաբան օրհնում էին մարդկանց այդպիսի համբերություն տվողին:

Երբ այն ժամանակներն անցան և հալածանքը դադարեց, վայելուչ վկայարան կառուցեցին յուրաքանչյուր սրբի համար ի փառս ամենասուրբ Երրորդություն՝ Հոր, Որդու և Սուրբ Հոգու:

Իսկ երանելի և անպարտելի վկա Եվգինեոսը տակավին կենդանի էր և արգելված խավարչտին բանտում, մեխերով գամված փայտին այնտեղ, որ կանգնեցրել էին տան մեջ, անհազ ձայնով ու սաղմոսերգություններ գոհանալով օրհնում էր Աստծուն Նրա անպատում պարգևների համար, աղաղակում էր և բարձրաձայն աղոթում, ասելով այսպես. «Ամենակալ Աստված, Քո սիրելի Միածին Որդու Հայր, Աստված զորությունների և հրեշտակների և ամեն անուն կրողների, որ ամեն ինչ հաստատեցիր Քո զորություններ, որ ծոցածին և էակից Քո Բանը ուղարկեցիր փրկելու արարածներիս, որ եկավ Քո կամքով և մարմնացավ անարատ Կույս Մարիամից, և կրեց մարմնի բոլոր չարչարանքները, բացի մեղքից, և խաչի ու մահվան դիմակայեց և թաղվեց գերեզմանում, և իջավ դժոխք և բոլորին վեր բարձրացրեց մեղքից ու ապակառությունից, իսկ երրորդ օրը հարություն առավ մեռելներից և համբարձավ Քեզ մոտ, նստեց Քո մեծություն աջ կողմը, ուր էր նախապես, և խոստացավ դարձյալ գալ երկրորդ անգամ դատելու կենդանիներին ու մեռյալներին և հատուցելու յուրաքանչյուրին ըստ գործերի: Դու, Տեր, Քո մեծ զորու-

թյամբ յուրաքանչյուր ժամանակ և դարում լսեցիր արդարների ձայնը և փրկեցիր, պահպանեցիր ամեն վշտից ու նեղությունից, որ հավատի վեժ Քո սուրբ առաքյալ Պետրոսին հրեշտակի միջոցով հանեցիր բանտից, որ կրկնակի շղթայով կապված էր չորս զինվորների մեջ, և Հերովդեսի ձեռքից ու հրեաների ակնկալությունից ազատեցիր, և նրան վստահեցիր արքայության փականքը: Եվ ընտրություն անոթ Պողոսին ու Շիղային բանտի տանջանքներից ազատեցիր: Այժմ առաքիլ Քո հրեշտակին և Քո ողորմություններ ինձ ազատիր այս բանտի նեղությունից, և արձակիր ոտքերս գայթակղությունից և ազատիր անօրեն ու ամբարիշտ Լյուսիասի ձեռքից, որովհետև Դու ամենակարող ես, Տեր, և Քեզ ենք հղում օրհնություն և փառք Հոր և ամենասուրբ Հոգուդ հետ հավիտյանս. ամեն»:

Այսպես աղոթեց Քրիստոսի երանելի վկան, և ահա Տիրոջ հրեշտակը իջավ երկնքից, երևաց նրան, և բանտում մեծ լույս ծագեց և Քրիստոսի սուրբ վկան ցնծաց ուրախություններ: Ու մինչդեռ նա այս մտքերի մեջ էր, Լյուսիաս Անթիպատոսը դահիճներ ուղարկեց բանտ, և երանելիին հանեցին, սուսերով կտրեցին գլուխը, երբ փառավորում էր Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն հավիտյանս. Ամեն:

Երանելի Եվգինեոսը վախճանվեց վկայություններ, Տրապիզոն քաղաքում, հունվար ամսի 28-ին, Դիոկղետիանոսի և Մաքսիմիանոսի հյուսիսարևմտյան ժամանակ: Նրա ոսկորները նշխարները զբնակեցին վկայարանում, որ մոտ է զոլակի պարսպին, բարձրադիր ու վայելուչ բլրին, գեղեցկաչեն վկայարանում: Ամեն տարի անխափան տոնախմբություններ կատարվում էր նրա հիշատակը ի փառս Քրիստոս չիսուսի, որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:



## ՍՈՒՐԲ ԵՎ ԴՌՔՄԻՈՍԻ ԵՎ ՌՈՄԵԼՈՍԻ, ՆՈՒՆԻ ԵՎ ՄԱԿԱՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մյն ժամանակ, երբ թագավորում էր Տրայանոսը, բարիատյաց սատանան նրա սիրտը չար միտք գցեց հալածանք սկսելու Աստու եկեղեցու դեմ: Ամենուրեք նեղում էին Քրիստոսի հավատացյալներին և ստիպում զոհ մատուցել անշունչ դևերին: Եվ ամբարիշտ թագավորը նստեց ատյանում և հրամայեց բոլոր քաղաքներում ու գյուղերում զոհ մատուցել աստվածներին, մանավանդ նրանց, որ Քրիստոսի բարեպաշտությունը էին [ապրում]: Նամակներով հեծելագոր ուղարկեց ամբողջ երկրով մեկ, որ տանջանքի մատնվեն քրիստոնյաները, ուր և գտնվեն: Իշխաններից մեկը՝ Ռոմելոս անունով, մոտեցավ թագավորին ու ասաց. «Ձեր բարեպաշտության հրամանը հզոր է և պատվական, բայց պալատի պատվավորներից որոշ երևելիների ուղարկիր Գալիլիացոց գավառը՝ քաջամարտիկ և արիագույն զորքի մոտ»: Թագավորն ասում է Ռոմելոս իշխանին. «Երգվում եմ աստվածների փրկությունը, որ բարի է քո խորհուրդը»: Եվ պալատի մեծամեծներից հինգ հոգու հրամայեց՝ նրան առաքելով բազում նվերներ, գրեց և հրովարտակներ, այսպես. «Տրոյանոս միշտ հաղթող թագավոր, կայսր Հռոմայեցոց, կոմսերի զորագլուխների պատվական դասին, տասներկու ազգերին՝ ուրախություն: Մեր քաջությունը հրամայում է երևելի գլխավոր իշխաններիդ մեր պաղատանքը, մեր պատվիրանների միջոցով, որ խորհեցինք միասին ծանուցել ձեզ աստվածների բարերարության մասին, որոնք արիական քաջություն ու զորություն են շնորհում բոլորին: Դրա համար պարտավոր ենք ընծաներ մատուցել նրանց և զոհեր, և սիրել նրանց ամբողջ մտքով ու զորությունը, որպեսզի դուք ելնելով պատերազմի՝ իսկույն հաղթող երևացիք ձեր թշնամիների վրա, որ կան արևելյան կողմերում, մերժելով սպառազինությունը և

զինվորութեան գեներալները՝ հարձակվեք նրանց վրա»:

Իսկ նրանք իսկույն արհամարհեցին թագավորի հրամանը: Եվ թագավորը տեսավ իր հրամանը արհամարհված, խիստ բարկացավ և հրամայեց նրանց ելնել իրենց հայրենի գավառից և գնալ Հայաստանի կողմերը, Մելիտենե քաղաքը, ուղեւոր դրանով անարգել նրանց: Իսկ նրանք, զարհուրած բռնավոր Տրայանոսի սպառնալիքից՝ եկան վերոհիշյալ գավառը, որ բարկանալով չկոտորի իրենց: Եվ նրա զորքի թիվը տասնմեկ հազար այր էր, սուսերամերկ պատերազմողներ:

Այնժամ իշխան Ռոմելոսը, որ պրոպոսիդոսութեան աստիճան ուներ, ասաց թագավորին. «Ո՛վ թագավոր, դու այնպես կարծեցիր, թե այդ անելով ինչ-որ իմաստուն գործ ես կատարել»: Թագավորն ասաց նրան. «Ուրեմն դու ե՞ս խաբվեցիր նրանց աղանդի մոլորութեամբ»: Ռոմելոսն ասաց. «Հիմար և անզգա չարի մոլորութեամբ դու ինձ պատմիր քո սնոտի ջանքերը, որ ունես անմոռնչ կուռքերի նկատմամբ և մի՛ բամբասիր իմ կատարյալ հավատքը»: Եվ թագավորը բարկանալով հրամայեց մահակով ծեծել նրան և ասաց. «Տեսնենք՝ այսուհետև քեզ կօգնի՞ Քրիստոսը, որ ասում ես»: Սուրբն ասաց. «Անդնդային վիշապ և կեղծավոր, չիմացար որ քո չարչարանքը, որով ենթադրում ես զարհուրեցնել ինձ, ազատում և փրկում է ինձ կուռքերի պղծութունից և ինձ հագցնում է անապական զգեստը, որ պարգևում է Քրիստոս իր սիրելիներին»: Բարկացած թագավորը հրամայեց կտրել նրա գլուխը: Եվ սուրբ Ռոմելոսը բարի խոստովանութեամբ վախճանվեց ի փառս Աստուծու, հոկտեմբեր ամսի տասնիննին, շաբաթ օրը:

Նրանից հետո մահացավ Տրայանոսը, և ժամանակ անց այլ թագավոր նստեց՝ Դիոկղետիանոս անունով, որ Աստուծու չէր ճանաչում, մանավանդ ուղքեր Քրիստոսին էին հավատում՝ աշխատում էր ուրացնել: Եվ նստած բարձր բեմին հրովարտակ ուղարկեց բոլոր գավառների իշխաններին, դատավորներին, զորազուխներին՝ բոլորին հավատքից դարձնելու կուռքերի խաբեութեան:

Այսպիսի հրաման ստանալով՝ Մելիտենե քաղաքի իշխանը, որի անունը Պոնտիանոս էր, և կրոնով հելլենացի, հրամայեց հայտարարել բոլոր հրապարակներում և գավառներում, թե ուղքեր չկամենան հետևել ինքնակալի հրամանին և զոհ մատուցել աստվածներին՝ անողորմ տանջանքով և սրով կվերջացնեն իրենց կյանքը: Եվ բոլոր քրիստոնյաները, լսելով բռնավորի այսպիսի սպառնալիքը, իսկույն խուճապի մատնվեցին տանգապի երկյուղից, թաքնվում էին, որ չընկնեն անաստված թագավորի ձեռքը, որովհետև որտեղ գտնեին՝ նեղում էին և մեծամեծ տանջանքներ տալով՝ ստիպում զոհ մատուցել աստվածներին ու երկրպագել անշունչ արձաններին:

Որոշ մարդիկ եկան իշխանի մոտ չարախոսելու Մարիանոսի մասին, որ կոչվեց Եվդոքսիոս և պրիմեկիոնների դասից էր, որ պատվվեց կոմսական իշխանութեամբ, և ասացին. «Երբեք չի հավանում թագավորական հրամանները և աստվածներին զոհ չի մատուցում, այլ խոստովանում է խաչված Աստուծու և հավատում է Նրան»: Այս լսելով դատավորը զորականներից հինգ հոգու հրամայեց գտնել նրան՝ ուր որ լինի և բերել դատական ատյան: Նրանք եկան այն գյուղը, ուր բնակվում էր նա, և հարցրին նրա մասին, և նրանց պատասխանեցին. «Ում որ դուք փնտրում եք, ահա շրջում է այն դաշտում, որ կոչվում է Կուպատիա»: Գնացին նրա մոտ, իսկ նա կանխավ իմացավ նրանց գալուստը, գնաց սարը և նստեց այնտեղ՝ տեսնելով նրանց: Եվ տեսնելով, որ փութով իրեն են փնտրում, եկավ իր տունը, փոխեց հագուստները, հագավ աղքատի շորեր և եկավ մի տեղ հանդիպեց նրանց: Զինվորները հարցրին նրան. «Արդյո՞ք գիտես, թե որտեղ է բնակվում կոմս Մարիանոսը, որ կոչվում է Եվդոքսիոս»: Եվ պատասխանեց նրանց. «Իսկ ինչի համար եք փնտրում նրան, կամ ինչ գործ ունեք նրա հետ, ասացեք ինձ, և ես ցույց կտամ»: Նրան ասացին. «Իշխանն է փնտրում նրան»: Եվ հարցրեց նրանց. «Ինչո՞ւ է փնտրում նրան»: Եվ ասացին. «Որովհետև չի ենթարկվում ինքնակալի հրամաններին և աստվածներին զոհ չի մատուցում»: Եվ ասաց նրանց. «Եկեք իմ տունը, մի

փոքր հանգստացեք, և ձեզ ցույց կտամ նրան»: Եվ նրանց տարավ իր տունը, իր կնոջն ասաց. «Ճաշ պատրաստիր մեզ մոտ եկողներին»: Իսկ նա սեղան դրեց նրանց առաջ, և ճաշակեցին: Եվ ասացին նրան. «Այժմ մեզ ցույց տուր Եվդոքսիոս կոմսին»: Եվ նա ասաց նրանց. «Ում որ փնտրում եք՝ ես եմ»: Եվ նրան ասացին այրերը. «Ինչո՞ւ դա արեցիր. հիմա կգնանք և իշխանին կասենք՝ «Չգտանք նրան»,– իսկ դու թաքնվիր, որ չբռնվես և ընկնես իշխանի ձեռքը»: Պատասխանեց. «Այդ չեմ անի, այլ կգամ ձեզ հետ, բայց մի քիչ սպասեցեք ինձ»:

Եվ կանչելով իր կնոջը իր տան մասին ասաց նրան. «Ո՛վ կին, ես փոխվելու եմ այս սնոտի ու հանցավոր կյանքից մշտնջենական և հավիտենական կյանք, այլևս ինձ չես տեսնելու այս մարմնով: Արդ, լսի՛ր ինչ եմ ասում քեզ. երբ ելնեմ այս մարմնից, ողբալով չարտասովես ինձ վրա, այլ հագիր քո հարսանյաց զգեստը, վառիր լապտերներ ու ջահեր, վերցրու մաքուր անոթ և հավաքիր իմ արյունը և վերցրու իմ և իմ որդի Մակարիոսի գլուխները և ուրախ եղիր: Եվ սա արա որպես Քրիստոսի հարս»: Երբ նա այս ասաց, զինվորները առան նրան, նստեց իր երիվարը՝ ազնիվ և պայծառ զգեստներ հագած: Նրան տարան դատավորի առաջ:

Բռնավորն ասաց. «Ուրա՛խ եղիր, փառավորյալ կոմս Եվդոքսիոս»: Եվդոքսիոսն ասաց. «Ուրա՛խ եղիր և դու, ո՛վ բռնավոր»: Դատավորն ասաց. «Ո՛վ կոմս, իմացա՞ր, թե ինչ գործի համար քեզ փնտրեցինք»: Երանելին ասաց. «Պատմիր ինձ, ո՛վ դատավոր, ինչի համար էիր փնտրում ինձ»: Իշխանն ասաց. «Քեզ կանչեցինք, որ ենթարկվես ինքնակալի հրամանին և զոհ մատուցես աստվածներին»: Իսկ սուրբ վկան ծիծաղելով դատավորի անմտությունն վրա ասաց. «Ես դրա համար եմ հագել պատվական և պայծառ զգեստներ ու նստել սպիտակ երիվարին և եկել–կանգնել եմ բեմին՝ քո առջև»: Դատավորն ասաց. «Երդվում եմ բոլոր աստվածներով, եթե թագավորը լսի, որ հնազանդ ես կայսերական հրամանին և զոհ ես մատուցում աստվածներին՝ քեզ կնստեցնի իր թագավորության երկրորդ աթոռին»: Երանելին ասաց. «Ես

հուսացել եմ արժանի լինել հավիտենական կյանքին և երկրպագել Նրա ճշմարիտ Աստվածությունը»: Իսկ բռնավորն ուրախացավ, կարծելով թե այս բանն ասում է աստվածների մասին: Դատավորն ասաց նրան. «Փառավորյա՛լ և քաջ կոմս, առավոտյան արի աստվածների տաճարը և մեզ հետ երկրպագիր նրանց»: Կոմսն ասաց. «Այո՛: Եվ քանի՞ աստծու ես հրամայում զոհ մատուցել»: Իշխանն ասաց. «Դիային, Ապոլոնին և մեծն Արտեմիսին»: Կոմսն ասաց. «Հրամայեցիր երեքին հավատալ, այդպես և ես հավատում եմ՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն՝ անբաժանելի Երրորդությունը»: Իշխանն ասաց. «Ի՞նչպես, ինքնակալի հրամանն արհամարհելով»:

Այնուհետև նրա զինակիցներից շատերը հավաքվել էին նրա մոտ և կանգնել սրբի առաջ: Բռնավորն ասաց. «Այժմ, ով ձեզնից չի ուզում ենթարկվել ինքնակալի հրամանին, թող քանդի զինվորական գոտին և դնի իմ առաջ»: Իսկ երանելի Մարիանոսը, որ կոչվեց Եվդոքսիոս, բոլորից առաջ քանդեց իր գոտին և գեցեց բռնավորի առաջ: Եվ նրանք հարյուր չորս հոգի էին, որ բռնավորին ասացին. «Մենք դասված ենք հրեշտակների երկնային զինվորության մեջ»: Այնժամ իշխանը տեսավ նրանց համարձակությունն ու բազմությունը՝ սարսեց նրանցից և նամակ գրեց թագավորին՝ եթե այս բազմությունը կոտորենք՝ այլևս ոչ ոք չի կարող հակառակվել ձեր հրամանին և անարգել աստվածներին: Եվ իմանալով՝ թագավորը հրամայեց՝ սրով կոտորել նրանց, ովքեր նախապես քանդեցին իրենց գոտիները, իսկ մյուսներին՝ անպատուհաս արձակել: Ստանալով թագավորի հրամանը՝ [իշխանն] արձակեց վերջիններին:

Իսկ երանելի Եվդոքսիոսին մոտեցնել հրամայեց իր բեմին և նրան դատավորն ասաց. «Մարիանո՛ս կոմս, այսուհետև հեռացրու քեզնից հիմար մտքերը, որ քեզ պես–պես չարչարանքով չնեղեն»: Երանելին պատասխանեց ասելով. «Ինչ չարչարանքով ես ուզում ինձ համոզել»: Դատավորը պատասխանեց. «Հրով և ձեթով, բանտով և սրով»: Սուրբն ասաց. «Ո՛վ բռնակալ, ինձ ասա. ո՞րն է բարի՝ փախչել անանց

հրից, որ ծովն ու գետերը չեն կարող հանգցնել, թե՞ այժմյան հրից, որ քիչ ջրով կհանգչի: Թե՞ ձյուլթը, որ անանց հրով է եռում, թե դրանից, որ մի փոքր փայտով հալչում և անցնում է, բոցեղեն ապտա՞կը, և հոգեղեն զվարթուններին, թե ապահանացու և տկար այրերի ապտակը, սառնամանի՞քը, որ չունի ջերմութուն, և ատամների կրճտումը, թե քո սպառնալիքը, այս խոսքե՞րդ, թե այն որ հավիտյան չի անցնում: Արդ, իմացիր այն, որ քեզ ասացի և հավատա, որ քո աստվածներին զոհ չեմ մատուցի և անշունչ կուռքերին չեմ երկրպագի, այն որ կոչում ես Ապողինար՝ կորուստ և ապականություն է խաբեություն, Արտեմիսը՝ կորստյան մայր և դուք երեքդ խաբեբա՝ Դիոկղետիանոս թագավորը, դու՝ բռնավոր, և ձեր հայր սատանան»:

Դատավորն առավել բարկացավ և ասաց. «Պատվական աստվածներին չարախոսեցիր: Արդ, մենք երեքս ովքեր ենք»:  
Եվ դոքսիոսն ասաց. «Քեզ ասացի՞ դու, թագավորը և ձեր հայր սատանան: Տե՛ս և իմացիր, ո՛վ անդնդային վիշապ, որ քեզ և թագավորին պատրաստված են հավիտենական հուրը, արտաքին խավարը և տանջող հրեշտակները»:  
Դատավորն ասաց. «Թող որ ինձ անարգեցիր, ա՛յ կեղծավոր, ինչո՞ւ հանդգնեցիր հայհոյել թագավորին ու աստվածներին»:  
Սուրբն ասաց. «Դուք կլինեք նման ձեր աստվածներին, որոնք անշունչ և անբան են»:

Բռնավորը բարկացավ, նրա երեսի գույնը թռավ, հրամայեց [գետնին փռել], չորս կողմից կապել լարերով և արջառաջիլով տանջել սրբին: Եվ երանելին նայելով երկինք ասաց. «Տե՛ր, Քեզ հուսացողներին խաղաղությո՛ւն շնորհիր՝ երկնքում և երկրի վրա: Տե՛ր, բոլորին, որ Քեզնից խնդրում են օգնել ինձ նեղության մեջ կամ պատերազմում, կամ ծովի վրա, կամ մրրկոտ լեռներում, կամ մոլորության մեջ չարչարվելիս, կամ ճանապարհին, կամ բանտում, և այրիներին ու աղքատներին, ծերությունից վտանգվածներին և մեղքի բեռով ծանրացածներին և ովքեր կգան իմ վկայության տեղը, ուր հեղվում է իմ արյունը Քո սուրբ անվան համար, և իմ հիշա-

տակին ողբալով ու արտասովելով իրենց համար ողորմութուն կխնդրեն, շնորհիր նրանց, Տե՛ր, անմիջապես ողորմութուն և օգնութուն և կատարյալ առողջութուն, և փրկիր նրանց բոլոր նեղութուններից: Տե՛ր, հիշիր և իմ ծնողներին և բոլոր ազգակիցներիս, որ նրանց մահ-տարածամ չլինի՝ մարդու և անասունի, և բոլորին ովքեր իմ անունը հիշեն, շնորհիր, Տե՛ր, խաղաղութուն երկնքում և երկրի վրա, և պտղավետ արա նրանց այգիներն ու անդաստանները, և ովքեր իմ բարեխոսությունյամբ խնդրում են և կանչում օգնության, դու ողորմիր նրանց և կատարիր նրանց բարի խնդրանքը: Տե՛ր, շնորհիր և իմ զուգակցին մասն բարի ժառանգության ինձ հետ գալիք հավերժի մեջ, որ չբաժանվենք միմյանցից»:

Երբ վերջացրեց աղոթքը, դատավորը հրամայեց բանտ տանել նրան և տասն օր անց երանելիին բերել [իր] առջև: Եվ երբ բերին, բռնավորը նայեց և ասաց նրան. «Եվ դոքսիո՛ս կոմս, գոնե այժմ հավանեցի՞ր երկրպագել և զոհ մատուցել աստվածներին, թե՞ նույն համառությունն ես»:  
Եվ դոքսիոսն ասաց. «Ես հավատացել եմ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն՝ անբաժանելի Երրորդությանը: Ես առաջին չարի խաբեությունից, անօրեն կռապաշտությունից կուրացած և հիվանդ էի հոգով, նաև մարմնով հիվանդ: Իսկ երբ արժանի եղա վերստին լվացման ծննդյան ավազանում և սուրբ մկրտություն՝ բացվեցին աչքերս և իմաստնացա իմ սրտի ողջախոհ խորհուրդներով: Բայց այս իմացիր, ո՛վ անիրավ բռնավոր, որ չեմ հավանում քեզ, և քո ոսկեպատ անշունչ աստվածների արձաններին զոհ չեմ մատուցի. դրանք մարդու ձեռքի գործ են և նման են նրանց, ովքեր ստեղծեցին դրանք և բոլոր նրանց հուսացողները»:

Եվ դատավորը բարկացավ, հրամայեց կապարե մուրճով հարվածել նրա կրծքին և ասաց նրան. «Ենթարկվիր ինքնակալի հրամանին, երկրպագիր աստվածներին և կազատվես տանջանքներից»:  
Իսկ սուրբը աչքերը երկինք համբարձած՝ Տիրոջից խնդրում էր տանջանքի առաջին մրցումը և՛ ուրախությունյամբ նահատակվել: Այնժամ դատավորը տեսավ վկայի

Ջերմեռանդ հավատքն ու հոժարությունը և այսպիսի վճիռ կայացրեց սրբի համար. «Եվ դոքսիոս անվանված Մարինոսին, որ գերագույն պատիվ է ստացել կոմսության իշխանությամբ և չի հնազանդվել ինքնակալի հրամանին, անպատվել է մեր աստվածների բարերարությունը՝ բազում չարչարանքներից հետո տալ մահվան վճիռ»: Սուրբ վկան մահվան այսպիսի վճիռ ստանալով և հասնելով վկայության տեղը, նայեց, տեսավ իր զինվորության դասից բազմաթիվ զորականների, որ լալով ու ողբալով գնում էին նրա հետևից: Նրանց հետ լալիս էր և ամբողջ ժողովուրդը: Եվ ասում է դահիճներին. «Ինձ մի փոքր ժամանակ տվեք աղոթելու մեր Տեր Հիսուս Քրիստոսին»: Եվ նայելով երկինք ձեռքերը տարածեց ու այսպես ասաց. «Տեր Աստված, որ ստեղծեցիր երկինքն ու երկիրը, ծովը և ամեն ինչ, որ կա նրանց մեջ, լսիր իմ աղաչանքին և ունկն դիր իմ խնդրանքին: Օգնիր բոլոր Քեզ հավատացողներին և բոլոր քրիստոնյաներին շնորհիր իրենց հայցածը, ովքեր ինձ կոչում են օգնության: Եվ այս երկրի վրա սով, սրածովյուն կամ սասանություն կամ պտղաբերների և խաչանց ծնունդի և ամեն անհրաժեշտ բաների նվազություն չլինի, կամ քաղաքների ու կառույցների ավերող շարժում: Այլ ովքեր կզան իմ վկայության տեղը և արտասուքով կխնդրեն, Դու, Տեր, անմիջապես կատարիր նրանց սրտի ցանկությունը: Տեր, շնորհիր և իմ զինակիցներին, իմ ընկերներին խաղաղություն, որ նրանց չհաղթի թշնամին, և նրանք չտեսնեն պատերազմի խառնակություն, իսկ ովքեր լինեն պատերազմի մեջ՝ չպարտվեն իրենց թշնամիներից, այլ խաղաղեցրու նրանց կյանքը և խորտակիր բոլոր թշնամիներին հեթանոսների պատերազմում»:

Սրանից հետո իր կնոջն ասում է. «Այսուհետև բեր այն անոթը, որ ասացի քեզ և հավաքիր իմ արյունը և կառնես իմ գլուխը ուրախությամբ, և ոչ լալով ու տրտմությամբ և արտասուք չթափես ինձ վրա, որ հեռանում եմ քեզանից և ինձ տապան կպատրաստես, որ կոչվում է Ամինո և դու ննջիր իմ աջ կողմը»:

Եվ դարձավ ժողովրդի կողմը, տեսավ իր զինվորներից մեկին՝ Զինոն անունով, որ հույժ ողբում էր: Սուրբը նրան ասաց. «Զինոն, մի՛ ողբա, որ բաժանվում եմք իրարից, որովհետև քեզ չեմ լքում, այլ, ինչպես երկրի վրա շրջում էիր իմ ետևից, նույնպես կշրջես ինձ հետ»:

Այս ասելով եկավ դահիճների մոտ և ասաց. «Որդյակներ, այժմ կատարեցեք ձեզ հրամայվածը»: Եվ երկնքից ձայն եկավ նրան ասելով. «Արի՛ քո երկնավոր Հոր մոտ, և դու երանելի ես, որովհետև ավարտեցիր քո ընթացքը երկրի վրա և պահեցիր քո հավատքը, կկատարվեն քո խնդրանքները, որ բոլորի համար խնդրեցիր: Բայց եթե մեկը լինի պատերազմի կամ նեղության մեջ և քեզ հիշի ամբողջ սրտով՝ կխորտակվեն նրա թշնամիները: Ովքեր մեղքով ծանրացած են և կզիմեն քո սրբության տաճարը, ուր դրված կլինեն քո ոսկորների նշխարները, կթողնվի նրանց մեղքերի ծանրությունը»:

Սրանից հետո խոնարհեց իր պարանոցը դահիճի առաջ, և [վերջինս] հանեց սուսերը և հատեց նրա գլուխը: Եվ նրա կինը անոթը բերեց, հավաքեց արյունը և ծիծաղելով վերցրեց նրա գլուխը և ուրախությամբ տարավ սրբի նշխարները այնտեղ, ուր հրամայեց երանելին:

Քրիստոսի ճգնավոր Եվդոքսիոսի նահատակության ընթացքը ավարտվեց հոկտեմբեր ամսի 19-ին, կիրակի օրը, և նրա կին Մանտանան եկավ, անարգեց աստվածներին, թագավորին ու դատավորին: Եվ բռնավորը լսելով ասաց նրան. «Դա անում ես, որպեսզի դու ևս վկայես և քո ոսկորները հարգվեն անմիտ քրիստոնյաներից: Երգվում եմ բոլոր աստվածներով և ի փառս նրանց՝ չեմ կատարի քո սրտի փափազը»:

Հինգ օր անցնելուց հետո սուրբը երևաց իր տիկնոջը և ասաց. «Ընկեր իմ և զուգակից, Մակարիոսին շտապ ուղարկիր իմ ապարանքը, բան ունեմ նրան ասելու: Եվ առավոտյան վեր կենալով տիկինը կանչեց նրան ու ասաց. «Որդյակ իմ Մակարիոս, քո տերն իր ապարանքն է կանչում քեզ»: Եվ սա ուրախությամբ գնաց ապարանքը, զինվորական դասից

ոմանք տեսան նրան, կանչեցին, տարան դատավորի մոտ և ասացին. «Սա Եվդոքսիոսի իշխանության տակ էր»: Տեսնելով նրան՝ բռնավորն ասաց. «Ո՞ր ազգից ես»: Մակարիոսն ասաց. «Քրիստոնյա եմ»: Իշխանն ասաց. «Մի՛ հիմարանա ու մի՛ խենթանա, այլ հավատա աստվածներին և կփրկվես»: Սուրբն ասաց. «Ես հավատացյալ եմ և հավատում եմ մեծ Թագավորին ու Աստծուն և Որդուն և Սուրբ Հոգուն, և հուսացել եմ իմ Աստծուն, որ հաղթեմ թշնամուն: Եվ հույս ունեմ հասնելու ինձ շտապ կանչողին»: Այս լսելով դատավոր Պոնդենդիանոսը հրամայեց սրով նահատակել:

Սուրբ Մակարիոսը վախճան ստացավ, հոկտեմբեր ամսին, ի փառս և ի գովություն մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի, որին փառք հավիտյանս. ամեն:



## ՍՈՒՐԲ ԵՎ ՍՏԱԹԵՈՍԻ, ՆՐԱ ԿՆՈՋ ԵՎ ՈՐԴԻՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարկիանոս կայսեր երկրորդ տարում նա ուներ մի շատ նշանավոր զորավար, կորովի՝ պատերազմելիս և փորձված առավել ևս եղջերուների, այծյամների ու ավելի մանր չորքոտանիների որսի մեջ: Նրա անունը Եվստաթեոս էր, և կնոջ անունը՝ Մարիամե: Եվ նրանք ունեին երկու որդի, առաջինը վեց, երկրորդը՝ չորս տարեկան: Այրը ցանկալի էր բոլորին և հռչակված էր հարստությանը՝ հոտերով և ծառաներով, ձիերով և ուղտերով, նրա սեղանին երեք հարյուր արծաթե սկուտեղ էր բերվում նրան սպասավորելու: Ինքը պաշտամունքով հեթանոս էր, հասնող բոլոր քաղցածներին և վիրավորներին, քանի որ մերկերին զգեստ էր հագցնում, քաղցածներին կերակրում, ատյանում դատապարտվածներին բազում անգամ փրկագնում, վերցնում իր հովանու տակ, քառասուն տարի ծառայածներին ազատություն էր տալիս պարգևներով հանդերձ և տեսնող էր բոլոր կարոտյալներին և նախախնամող: Սրան աստվածային այցելությունը չկամեցավ այս կյանքում թողնել ծառայական լծի տակ, այլ՝ պատահել Քրիստոսի ամենասուրբ մկրտության ազատությունը:

Մի օր Եվստաթեոսը լեռը բարձրացավ՝ հովիտը դիտելու, որ կենդանիների որս գտնի: Իսկ Հիսուս Քրիստոս Ինքը՝ Աստծու Որդին, որ ծառայի կերպարանք առավ և Իրեն մարդ ցույց տվեց աստվածությունը ծածկելով սուրբ Կույսի մարմնի մեջ, այսպես և այժմ Տեր Հիսուսը իրեն եղջերու ցույց տվեց Եվստաթեոսին, որի եղջուրները ամպերին էին հասնում, իսկ եղջուրների միջև խաչի տեսքով լույս երևաց: Երբ երևաց Եվստաթեոսին՝ փախավ հովտի եզրը, անտառն անցավ և վազում էր՝ բարձր ապառաժներում վայր ու վեր անելով: Եվստաթեոսը տեսավ կենդանուն առավել զեղեցիկ, մանավանդ եղջուրների տեսքի համար: Կամեցավ ցույց տալ պայ-

ծառագուլն սինկղիստսին, մտքով հետևում էր սաղարթախիտ անտառի մեջ, ասես առավել ընթացքից անհետանում էր Եվստաթեոսը գլխավոր որսորդների ու գորականների աչքից: Այլև ճշմարտության Հոգին հետը գնալով մյուսներին հեռու տարավ, որպեսզի առաջիկա լինելիքը Եվստաթեոսը առանձին գիտի: Երբ ծառաներից հեռացավ անգիտելի տեղ, բազում ժամեր կենդանին երևում էր ու թաքնվում: Այրը մոտենալով ուզում էր հարվածել եղջերուի կողին: Եվ հանկարծակի երևաց կենդանին ավելի հեռու, անընտել վայրում: Այնժամ ձայն տվեց Եվստաթեոսին ասելով. «Ո՛վ Եվստաթեոս, ինչո՞ւ ես ինձ հալածում. քեզ համար եկա և քեզնից հալածվում եմ: Երբեմն Սողոսը, ինչպես և դու, հալածում էր ինձ, բայց ես հալածված՝ հալածիչին բերի իմ ծոցը: Այդպես և դու այժմ, ո՛վ Եվստաթեոս»:

Եվստաթեոսը երկյուղով գետին ընկավ, իսկ փոքր ժամանակ անց ուշքի եկավ, կանգնեց տեսնելու, թե ով էր, որ խոսում էր. և ահա եղջերուի եղջյուրներից ձայն լսելի եղավ նրան և մի պահ եղավ, որ Եվստաթեոսը տեսավ եղջյուրները պտղով լի, իսկ եղջյուրների մեջ՝ ճառագայթաձև, լուսաճաճանչ մարգարտե խաչ: Եվստաթեոսն ասաց. «Ի՞նչ է այս ձայնը, որ լսում եմ: Հայտնվիր ինձ՝ որ խոսում ես ինձ հետ»: Այնժամ ինչը մարդու տեսք ընդունեց, և այդ դեմքը բարբառելով ասաց. «Իմացի՛ր Եվստաթեոս, Ես եմ Նա, որ աշխարհս մարդու համար ստեղծում էր, որ ջրերը ջրերից անջատում էր և այդ հաստատություն պղպղակը մածուցանելով պնդացնում էր, որ Օվկիանոսի ջուրը լուսաշող օդով գորանում էր արեգակի և լուսնի նավարկությունը, լուսնյակ գիշերի լրթություն մեջ, և ջուրը սանձվում էր, որ ամեն օդային թռչուն կազմեց, նաև չորքոտանիներին ու սողուններին, լողացողներին ու բոլոր ջրայիններին կառավարելով անձանապարհ՝ հետ էր ձգում. երբ Ագամը չորս տարրերից շինված քարոզության գլուխ առնվեց. երբ կինը արտաքս ելավ ամուսնուց, հարություն էր խնդրում որդեգրության հանդերձյալ գալուստի համար. որովհետև Եվա՝ Գամիրքի լեզ-

վով նշանակում է տանել: Ես եմ Աստված, որ մարմնացած մարդ եղա: Երբ Նոյը տապան էր կառուցում փայտը պնդելով ի հաշտություն աշխարհի, որ ցույց տար ապագայում փայտի վերացումը. երբ Աբրահամը որդուն մատուցեց Աստծուն և փոխարենը գառ տրվեց, Ես էի, երբ դեմքի գեղեցկությունը նկարվեց՝ անհաստատ ունեցվածք. երբ պարզեց մարդկանց դժոխքի հարևանությունը՝ մահվան առաջնորդ, հեթանոսների կռապաշտության սուտը և հավատացյալների ճշմարտությունը: Այս բոլորի ճարտարապետը Ես եմ, իմացի՛ր, ո՛վ Եվստաթեոս: Լսիր և երկրորդ բանը, որովհետև մարդկանց վրա իրենց բնությունից տրված է չար ազդումն, այս վարքի ծփանքում քեզ վրա ևս կարգված է և չի անցնի. ահավասիկ բարձրացար հարստությունը և մեծությունը, բայց քեզ հարկ է խոնարհվել առավել մեծությունից. կարծես երկրի վրա ապրել ես քո կյանքը, և դարձյալ՝ քեզ հոգով բարձրանալ. և որ քեզ հետ խոսում է՝ Կատարյալը: Եվ որովհետև քո վարքը կազմված է քաղաքավարություն, ասա՝ ուզում ես խոնարհվել ա՞յժմ, թե դրանից հետո, որովհետև բոլոր գրվածները քեզ վրա կատարվելու են»: Նա դողով բռնված ասաց. «Աղաչում եմ, Քո բարերար նախախնամությունը, որ եթե սրանցից ոչինչ ինձ չպատահի, թող մինչև վաղը, որպեսզի պատմեմ քո աղախնին՝ իմ կնոջը, և ինչ որ ասի՝ կկատարենք: Աղաչում եմ Քեզ, սպասիր ինձ այստեղ և կպատմեմ Քեզ»: Տեսիլը երկրորդ անգամ ասում է. «Եթե վաղը գաս այստեղ՝ նախ լվացվիր քրիստոնյաների օրենքով՝ քահանայի կողմից, և դրանից հետո կտեսնես իմ երեսը այստեղ»: Երբ երեկո եղավ, իջավ սարից, սկսեց տեսիլը պատմել իր կնոջը: Եվ երբ վերջացրեց պատմելը, կինը բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Խաչվածին ես տեսել, տեր իմ, որին քրիստոնյաները պաշտում են, և առավել աղաղակելով ասաց,՝ Աստծու Որդի, ողորմիր ինձ և իմ երկու որդիներին»: Երբ իր ամուսինը հարցրեց՝ պատասխանեց ասելով. «Անցյալ գիշեր տեսա այդ երազը, որ պատմեցիր. Նա է Քրիստոսը. իր կամքով այսպիսի ձևով երևաց քեզ, որովհետև առանց Նրա մկրտության

ենք: Արի այս գիշեր գաղտնաբար մկրտվենք, որ առավոտյան գնաս ասես Նրան. «Տե՛ր իմ, որպեսզի գրվածը չանցնի, ավելի լավ է մեզ նվաստանալ այժմ, քանի մեր մեջ կա գորուծյուն, և ոչ ծերուծյան վախճանին, որովհետև մեզ ավելի լավ է ելնել հրից և ցողի հույս ունենալ, քան թե մտնել ցողի մեջ և ակնկալել բոց»:

Երբ գիշերվա առաջին պահն անցավ, վերցրին երկու տղաներին, գնացին քահանայի մոտ, մկրտվեցին հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու: Իսկ նա մկրտվելով Եվստաթեոս կոչվեց, իսկ նրա կինը կոչվեց Հավատուհի, տղաները՝ անդրանիկը կոչվեց Ագապիոս, իսկ կրտսերը՝ Հավատացյալ: Քահանան ասաց նրանց. «Աստված լինի ձեզ հետ և աճեցնի ձեզ արքայության մեջ, քանի որ իմացավ, թե Տիրոջ ձեռքը նրանց վրա է: Բայց երբ հասնեք փափկության դրախտը՝ հիշեցեք Հովհաննեսի հոգին»:

Երբ դա եղավ, Եվստաթեոսը հեծյալներ առավ, բարձրացավ սարը: Երբ մոտեցավ տեղին, ուր հայտնվելու էր տեսիլը՝ պատրվակով հեռացրեց իրենից [հեծյալներին]: Եվ տեսնում է նույնը, ինչպես առաջին անգամ, և ընկած երեսի վրա գոչում է ասելով. «Աղաչում եմ Քեզ, քանի որ Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծու Որդին: Արդ եկա, ինչպես խնդրեցի Քեզ՝ անապական Տիրոջը, որ ա՛յժմ համբերենք առաջիկա տառապանքին, քան ծերուծյան ժամանակ»: Եվ իր Տերը փոխվեց ավելի ընտանի փառքով և ասաց երանելի Եվստաթեոսին. «Երանի է ձեզ, որ իմ անապականության լվացումը հագաք և հաղթեցիք ձեր հակառակորդին: Եվ այս երեք օրը ձեզ կլինի այդ ամենը. այսուհետև զգուշ եղեք՝ ձեր սրտից հայհոյության խոսք չելնի: Որովհետև երբ կաճեք՝ կրկին կգամ ձեզ մոտ և ձեզ կվերցնեմ»: Այս ասելով Տերը վերացավ երկինք:

Նախքան Եվստաթեոսի իջնելը մեռան նրա 70 ձիերը և սենեկապանները, և զինակիր երիտասարդները, ծառաներն ու աղախիները: Իսկ առավոտյան նրա բոլոր հոտերը սպառվեցին, իսկ մյուս օրը մինչդեռ նրանք բուրաստանի պարսպի մոտ զբոսնում էին՝ կործանվեց նրա բարձրաբերձ ապա-

րանքը: Եվ միասին այնտեղ դիմեցին հափշտակողների բոլոր բազմությունները և հափշտակեցին Եվստաթեոսի ամբողջ ունեցվածքը, որպեսզի ոչինչ չմնա, բացի զգեստներից, որ հագած էին այդ ժամին: Նաև թագավորն էր ուղևորվել դեպի Պարսկաստան: Եվ ուրախացան մեծապես նրանք, որ նրա հետ էին, ասում էին՝ «Անհնարին է լինել մեր Եվստաթեոս գորավարի, նրա կնոջ և երկու որդու նման»: Իսկ նրա կինը վարանել էր երկմտությամբ, իր ամուսնուն ասաց. «Այսուհետև լսիր ինձ, Տեր իմ, արի վերցնեք մեր երկու տղաներին և փախչենք այս աշխարհից, քանի որ նախատինք եղանք մեր նախկին ծանոթներին: Եվ գիշերով մաղախի մեջ դնելով երկու տղաներին՝ գնացին Եգիպտոս, երկու օրվա ճանապարհ անցնելով մոտեցան ծովին և ջանում էին նավել: Նավավար գտան Շնագլուխների ազգից և նավարկելով գնացին:

Եվստաթեոսի կինը շատ գեղեցիկ էր դեմքով, իսկ տեսքով բարի: Երբ նրանք խորքը մտան, Շնագլուխը սիրահարվեց Եվստաթեոսի կնոջը և մտքում խորհում էր. «Երբ իջնեն այս նավից՝ վարձի փոխարեն այս կնոջը չեմ տա իր ամուսնուն, իսկ եթե ընդդիմանա՝ խորասույգ կանեմ»: Եվ երբ նրանք նավից ելնում էին, չկամեցավ կնոջը նրան տալ: Երբ Եվստաթեոսն սկսեց հակաճառել, Շնագլուխը ակնարկեց իր մերձավորներին՝ խորտակելու նրան: Եվ Եվստաթեոսը իմացավ իր համար պատրաստվող դավը՝ ակամա բաց թողեց կնոջը: Եվ առավ երկու տղաներին, դրեց մաղախի մեջ, և ուսին առավ, գնաց լալով ու հեծեծալով և ասում էր. «Վա՛յ ձեզ, տառապալներիդ, որ ձեր մայրը մնաց այլազգիի ձեռքին և զայրացած ժամանակ Շնագլուխը կուտի նրան»:

Անցնելով երկար ճանապարհ՝ հասավ մի գետի, ջրի սաստկության պատճառով վախեցավ երկուսին միասին անցկացնել: Եվ կրտսեր մանկանը ուսին առնելով, մյուսին այստեղ թողեց, շտապեց դառնալ, որ վերցնի երկրորդին: Եվ երբ դարձավ և հասավ գետի մեջտեղը, այսկողմինին հափշտակեց առյուծը, իսկ մյուսին՝ գայլը: Եվստաթեոսը տեսնելով պոկում էր իր գլխի մագերը և մտածում իրեն գետը նետել:

Բայց նախախնամությամբ ջրից դուրս եկավ, այն ժամանակ առյուծը գետն անցնելով գնում էր՝ ողջ մանուկը բերանին: Ինչ-որ հովիվներ տեսնելով՝ հասան առյուծին և Աստուծո կամքով մանկանը փրկեցին գազանից, իսկ մյուս՝ գայլի տարածին, արտվորները տեսան դաշտում, շներով հարձակվեցին գայլի վրա [և փրկեցին]: Ե՛լ հովիվները, և՛ երկրագործները նույն գյուղից էին:

Իսկ երանելի Եվստաթեսուր գնում էր հեծեծալով, հեծեծումից մորմոքած ստեպ-ստեպ նստում էր և արտասուքներից մշուշված [աչքերով] օդը տեսնում էր խավարած, միշտ իր առաջ տեսնելով կնոջ և որդիների դեմքը և հիշելով նրանց՝ գոչում էր. «Վա՛յ ինձ, մի ժամանակ ծաղկած ծառ էի, իսկ այժմ թառամել եմ, որովհետև իմ գլխի պսակը ծովը գերեց, իսկ պտուղը գազանի կեր եղավ, դրախտը նվազեց, և տունկերը ցամաքեցին: Վա՛յ ինձ, որ հաստատունս անհաստատ դարձա. վա՛յ ինձ, վա՛յ ինձ, առանց զորքի զորավարիս, վա՛յ ինձ, վա՛յ ինձ, որ երբեմն թագավորել եմ, իսկ այժմ՝ անարգ-ված, որ երբեմն զորքի իշխան էի, իսկ այժմ օտարական, որ երբեմն բյուրեր ունեի, այժմ մնացի չորսով, քառյակ լինելով՝ միայնակ գտնվեցի: Բայց դու, Տե՛ր իմ, ինձ անմիջապես արմատախիլ մի՛ անի հեծությանս, ապականվելուս համար. անմեղ հոգիս սուրբ կգա Քեզ մոտ, քանի որ հիշելով Հոբեին՝ համբերում եմ հեծությանս, բայց Հոբը այսպիսի նեղություն չկրեց, որովհետև գիտեցավ, թե ուր թաղեց իր որովայնի պտուղը, ու թեպետ պտուղը կորցրեց, բայց կնոջ ոստերը տեսնելով մխիթարվում էր: Իսկ ես՝ տառապյալս, բոլորից արմատախիլ եղա և ջահից մի փոքր կայծ մնացի: Մրրկահողմը փչեց՝ ահա սպասում եմ պակասելուս: Բայց չգայրանաս, զորությունների Տեր, Քեզ հետ իմ շատ խոսելու համար, որովհետև վարանում եմ ցավով և ակամա գալիս եմ Քեզ ասելու անպատեհը. հասկացիր ինձ, Տեր իմ, որովհետև ինչ որ չունեի՝ ստացա, իսկ ինչ տվել էիր՝ կորցրի, այսուհետև ընդունայն տրտմելով մաշվում եմ: Տուր ինձ, Տեր, այսուհետև հանգիստ բոլոր նեղություններիցս, որ ակամա անտե-

ղի բաներ չասեմ՝ ընդդիմանալով Քեզ և Քո հոտից դուրս մնալով գազանակուր լինեմ»:

Այս ասելիս հասավ մի գյուղ, որ կոչվում է Բատիսոն: Տեղի բնակիչներին խնդրեց և վարձվելով տասնհինգ տարի պահում էր նրանց պտուղներն ու տեղերը: Իսկ նրա որդիները մեծացան մի գյուղում՝ եղբայրներով իրար չիմանալով: Եվ Շնագլուխը նրա կնոջն առավ, հասավ իր աշխարհը: Եվ այնպիսի շնորհ եղավ կնոջ վրա, որ այլազգիին հնար չեղավ մոտենալու նրան:

Եվ օրեր անց այլ թագավոր նստեց և փնտրում էր զորավար Եվստաթեսին ու չէր գտնում: Ուղարկեց բոլոր գյուղերն ու քաղաքները նրանց ասելով. «Ով բերի ինձ զորավար Եվստաթեսին՝ նրան հասույթ կավելացնեմ տասնհինգ տարով: Եվ երկու հոգի՝ մեկի անունը Անտիոքոս, երկրորդին՝ Ակակիոս, որոնք երբեմն նրա իշխանության տակ են եղել, հասան այն գյուղը, ուր Եվստաթիոսն էր: Հեռվից Եվստաթեսուր տեսավ նրանց, զբոսնելու պատրվակով մոտեցավ նրանց և ճանաչեց, հիշեց իր առաջին նեղությունը, սկսեց տրտմել, ազոթում և ասում էր. «Զորությունների Տեր, մեր հայրերի Աստված, գոնե գիտության օրը հրամայիր ինձ տեսնել լծակցիս և իմ դժբախտացած զավակներին, որոնք թշվառականիս պատճառով գազանակուր եղան: Տուր ինձ, Տե՛ր, Քո ողորմությունից, որ այժմ մոռանամ և հարության հանդերձյալ օրը տեսնեմ իմ անդամներին և իմ երանքից ելածներին»: Եվ երկնքից ձայն լսեց, որ ասում էր. «Քաջալերվի՛ր, Եվստաթես՛ս, որովհետև մոտ ժամանակներս կտեսնես քո կնոջը և երկու որդիներին, իսկ հարության ժամանակ՝ պես-պես տանջանքով շատ դատապարտվածների օգնական կլինես, և քո անունը կմեծացնեմ մարդկային ցեղի մեջ»:

Նա նայում էր, դիտելով տեսիլը ժայռերի վրա: Իսկ նրա զորականները հեռվից եկան, և ճանաչեց նրանց, կանգնեց ճանապարհին՝ սպասելով նրանց: Նրանք եկան և ասացին նրան՝ Ուրախացիր: Իսկ նա ասաց՝ Խաղաղություն ձեզ: Նրանք ասացին նրան. «Գիտե՞ս Եվստաթեսու կոչված մեկին՝

իր կնոջ և երկու որդիների հետ. ասա մեզ, և քեզ պարզեցնե՛ք»։ Իսկ նա խոռովքի մեջ չէր կարողանում պատասխանել, ապա ասաց. «Այստեղ այդպիսի մեկին չգիտեմ, բայց դուք եկեք մի փոքր հանգստացեք այն տանը, ուր ես պանդխտանում եմ, որովհետև ես ինքս օտար եմ, թերևս գտնեմ մի քիչ գինի և տամ ձեզ ըմպելու՝ տոթի պատճառով»։ Եվ գնաց, ասաց իր տանտիրոջը. «Իմ ճանապարհի ծանոթներն են։ Նրանց բեր փափուկ կերակուրներ, որովհետև նշանավոր մարդիկ են մեզ մոտ եկել։ Եվ ամբողջը քեզ կհատուցեմ իմ վարձատրության ժամանակ»։ Եվ հոժարաբար տանտերը նրանց ուրախության [սեղան բացեց]։ Եվ երբ նստեցին, [տան տերը] նրանց գինի տվեց, իսկ Եվստաթեոսը եփած ջուր էր մատուցում, և երբ ելնում էր տեղից, լալիս էր, լվանում էր դեմքը՝ դարձյալ սպասարկում։ Նա պատերազմում վիրավորված էր, նշան ուներ՝ սպի պարանոցին։ Ու մինչդեռ սպասարկում էր, զորականներից մեկը՝ Անտիոքոսը, տեսավ նրա պարանոցը, վազեց լալով և համբուրեց Եվստաթեոսին։ Ակակիոսը մտածում էր, թե՛ ինչ է սա։ Ինքը ևս իմացավ նշանը, իսկույն գրկեց և համբուրեց նախորդի պես։ Երբ որ նույն ձևով մյուսները համբուրում և լալիս էին նրանց հետ, ամբողջ գյուղն այնտեղ գնալով ասում էր՝ Ի՞նչ է սա։ Եվ մի փոքր խոնարհվելով հարցնում էին կնոջ և երկու որդիների մասին։ Իսկ նա ասաց նրանց. «Եվստաթեոսին չգիտեմ, և ես ինքս չեմ, ինչո՞ւ եք ինձ չարչարում»։ Նրանք ասացին՝ Դու ես մեր տերը։ Եվ դարձան պատմեցին բնակիչներին նրա քաջության մասին։ Իսկ նրանք լալով ասում էին. «Ինչպիսի այր է մեզ վարձկան դարձել»։ Եվ եկել ծունր իջնելով աղաչում էին նրան։ Զորականները մատուցեցին թագավորի հրամանը, իսկ երբ հարցրին կնոջ և որդիների մասին, ասաց, որ մեռել են։

Զինվորները վերցրին նրան և հանդերձներ հագցնելով ճանապարհ ընկան։ Իսկ տեղացիները լալով ուղարկեցին նրանց, և ինքը աղաչելով արձակեց նրանց։ Եվ երբ մոտեցան թագավորին՝ Եվստաթեոսին տեսավ թագավորը և ասաց. «Ինչպիսի ճանապարհ գնացիր, Եվստաթեոս, և ինչու մեզնից

անհետացար»։ Իսկ նա սկսեց հերթով պատմել, և բոլոր սինկղիստոսները լալով հետևում էին նրան։ Որովհետև պատմեց, թե ինչպես կինը մնաց ծովում կամ ինչպես որդիները գազանակուր եղան, և ինչպես համբերեց բոլոր նեղություններին։ Եվ մեծ աղմուկ եղավ և թագավորից մխիթարված՝ գոտին կապեց ինչպես առաջ՝ զորավար ժամանակ։ Եվ տեսնելով, որ զորքը հավաքված չէ, հրամայեց նորերին հավաքել։

Երկու հոգի գնացին այն գյուղը, ուր Եվստաթեոսի որդիներն էին, և հանդիպեցին։ Եվ զանազան դեմքով էին՝ իբրև արևի ճառագայթներ, խոսող և ամենևին անբիծ։ Գյուղացիները տղաներին հանձնեցին իբրև օտարների և իբրև գին վերցրին երեսուն տաղանդ։ Երբ նրանց վերցրին, տարան Եվստաթեոսի մոտ։ Եվստաթեոսը գինվորներին իրեն գինակից դարձրեց, և իր սեղանի մասնակից և շատ սիրեց նրանց, որովհետև որդեծնության սովորությունը, հայրական կարոտ էր պահանջում։ Եվ բոլոր զորականներին հավաքելով՝ սովորականի պես հրաժեշտ տվեց թագավորին, գնաց պատերազմ։

Եվ Իղիմացիների երկիրն անցնելով կոտորեց [նրանց]։ Դանուբը անցան, խորացան Բարբարոսների երկրի մեջ, որպեսզի Քրիստոսի նախախնամությունը նրան տաներ այնտեղ, ուր բնակվում էր նրա կինը։ Իսկ զորավարը իջևանել էր իր կնոջ խորանում։ Մի օր՝ միջօրեին, եղբայրները շրջում էին պարտեզում, որը մոտ էր խորանին։ Եվ նստած ծառի տակ պատմում էին իրենց մանկությունը։ Իսկ նրանց մայրը պատուհանի մոտ նստած անցյալը հիշելով հեծեծում էր և ծածուկ լսում էր նրանց խոսակցությունը։ Ավագ եղբայրը կրտսերին ասում էր. «Մանկությունից ոչ մի բան չեմ հիշում, միայն այն գիտեմ, որ հայրս զորական էր, իսկ մայրս խիստ գեղեցիկ է եղել։ Իսկ իմ փոքր եղբայրը խարտյաչ մագեր ուներ։ Մեր հայրը մեզ մախաղի մեջ դրեց, մայրիկը հետևից եկավ՝ մեզ և մայրիկի հետ նավ բարձրացավ։ Իսկ [նավից] իջնելիս մայրս մեզ հետ չէր, չգիտեմ՝ արդյո՞ք ծովում մնաց, իսկ հայրս մեզ ուսին առած հեծեծալով գնում էր։ Երբ հասանք մի գետի,

մյուս տղային անցկացրեց, ինձ թողնելով այս փոխին, և մինչև նրա դառնալը առյուծը հափշտակեց ինձ, որից ազատեցին ոչխարի հովիվները: Մեծացա այն գյուղում, որ դու գիտես: Բայց հորս և մյուս երեխայի մասին չգիտեմ, թե ինչ եղան»: Եվ իսկույն խոսեց նրա եղբայրը և լալով ասաց. «Քրիստոսի գորուծյամբ՝ քո եղբայրն եմ, որովհետև ինձ մեծացնողներն ասում էին, թե գայլից են փրկել ինձ»,– և գրկելով համբուրեց նրան: Մայրը լսեց նրանց, սիրտը շատ հուզվեց, որովհետև իմացավ, որ իր որդիներն են, և տեսնելով, թե երիտասարդներն ինչպես են իրար գրկած լալիս, կարոտած սրտով մինչև երեկո չէր կարողանում դադարեցնել լացը:

Իսկ առավոտյան ուժ հավաքելով գալիս է Եփեսոսի մոտ ասելով. «Աղաչում եմ քեզ, տե՛ր իմ, ես հռովմայեցի եմ, փրկիր ինձ այստեղից՝ տանելով իմ գավառը»: Այս ասելով նկատում է ամուսնու նշանը և ասում. «Աղաչում եմ քեզ, տե՛ր, մի՛ գարշիր քո աղախնուց, այլ պատմիր ինձ, քո նախորդ կյանքը. միգուցե դու ես, որ կորցրիր ինձ: Պատմիր ինձ քո Տեր Քրիստոսի գորուծյունը»: Եվ նա Բարբարոսների երկրում լսելով Քրիստոսի անունը մտածում էր, թե հռոմայեցիներից մեկը Քրիստոս է քարոզել, և փոքր ինչ փութալով սկսեց պատմել: Ու մինչ նա պատահածներից մի բան էր ասում, կինը պատմում էր հաջորդ դեպքերը: Եվ երբ այրն ասաց, թե ինչպես նավավարը հափշտակեց իր կնոջը, կինը որդիների պատմությունը գիտենալով՝ գազանների հափշտակությունը պատմեց: Եփեսոսում լսելով ասաց. «Երգվեցնում եմ քեզ Քրիստոսով, ինձ պատահածը որտեղից գիտես»: Եվ նա մոտեցավ, ընկավ նրա ոտքերն ու ասաց. «Ես քո տառապյալ կինն եմ՝ Աստվածհավատուհին եմ: Մի՛ բարկացիր ինձ վրա, տե՛ր, ով քեզ լեռան վրա երևաց եղջերուի տեսքով՝ նրա շնորհիվ ես անմերձենալի եմ այլազգուց, որ հափշտակեց ինձ»: Իսկ նա լալով ասաց. «Ինձ նեղություն չէ. որովհետև օրհնյալ է Աստված, որ ամենուրեք ինձ հետ է»: Կինն ասաց. «Որդիների մասին իմացա՞ր, թե չէ»: Նա պատասխանեց. «Ասացի, որ գազանակուր եղան մանուկները,

իսկ դու հարցնում ես՝ իմացար քո որդիների մասին»: Կինն ասաց. «Քո այս երկու գեղեցիկ զինակիրները մեր որդիներն են, և իրենք իսկ չգիտեին մինչև այժմ միմյանց եղբայր լինելը, որովհետև երեկ պարտեզում լսեցի, որ պատմում էին միմյանց»: Եվ կանչելով նրանց հարցրեց, թե ինչպես մեծացան: Իսկ նրանք հերթով հիշելով նրանց տեղեկացնում էին պատահածը: Եվ երկուսը ձեռք ձեռքի տված, միմյանց պարանոցի ընկած լալիս էին երկու ժամ, մինչև որ ամբողջ գորքը հավաքվեց և լացեց նրանց հետ՝ այս բանն իմանալով:

Առավոտյան մեծ տոն կատարեցին աղաղակելով առ Աստված և կոտորելով բոլոր այլազգիներին: Եվ մեծ հաղթություն գառնալով հասան Հռոմ: Նրա վերադառնալուց առաջ մեռավ իր սիրելի թագավորը և եղավ այլ թագավոր՝ Տրայանոս անունով, որ Քրիստոսին չէր ճանաչում և ոչ Եփեսոսին, և իմանալով, որ Քրիստոսին է հավատում, հրամայեց բերել Եփեսոսին, նրա կնոջն ու երկու որդիներին՝ մտնելու հանդես. հրամայեց, որ նրանք առյուծների հետ մարտնչեն: Եվ առյուծը եկավ երկրպագեց նրանց և մարդկային ձայնով ասաց. «Աղաչում եմ ձեզ, որ արժանի եք Աստծու արքայություն, մի՛ գարմացեք, որ ահամա հասել եմ ձեզ մոտ»,– այս ասելով ասպարեզից դուրս եկավ: Եվ Քրիստոսին հավատացողների բազմությունը հավաքվեց: Իսկ թագավորը հրամայեց պղնձե ցուլ սարքել և մեծ կրակով ջերմացնել, մինչև որ փայլակի նման շիկանա: Եվ այսպես նրանց գցեցին ցուլի մեջ, որ կյանքերն ավարտեն: Երբ մոտեցան ամենադժնի գործիքին, ծուներ իջան, աղոթեցին ասելով. «Զորությունների Տե՛ր, անտեսանելի Աստված, մեզ երևացիր, ինչպես և կամեցար: Լսի՛ր մեր պաղատանքը, և մեր աղոթքը կտարածվի, որ միաբանելով արժանի լինենք միասին հասնելու Քո Քրիստոսին, ինչպես անբիծ մանուկները վախճանվեցին հրով: Տե՛ր, մեր անունը հիշողներին առատություն տուր երկնքից ու երկրից, գետերն ու ծովերը առանց վտանգի անցնելու, ում զավակները վախճանվեն՝ իսկույն օգնություն հասիր: Թեթևացրու ծանր մեղքերը նրանց, որ ճանապարհին հիշում են

մեզ, ամեն ինչով բարեգործիր, մեզ հիշողների հիվանդներին շտապ բժշկիր և առողջություն տուր, այս եռացումը ցողի վերածիր, մեր հոգիները խաղաղությամբ ընդունիր, մեր մարմինները մի՛ բաժանիր, այլ միասին հանգեցրու»։ Հրեշտակի միջոցով Տերն ասաց նրանց. «Ճշմարտապես դա կլինի ձեզ, և ավելի քան դա, քանի որ ուր ձեր հագուստի քղանցքներն են, այնտեղ կլինի և Իմ գորությունը»։ Երբ նրանց փակեցին ցուլի մեջ՝ եռացումը եղավ ձյան նման, և խաղաղությամբ ավանդեցին իրենց հոգիները, իսկ տանջանարան գործիքը նրանց աղոթատուն եղավ։

Արդ, բարեհաղթ այս վկաների հիշատակը հոկտեմբերին ութ կաղանդից առաջ է, որ քաղոց ամիսն է և [նրանք] բարեխոս են մեր Տեր Հիսուս Քրիստոսին հավատացողներին, որին փառք և գորություն, այժմ և միշտ հավիտյանս հավիտենից ամեն։



## ԵՎԱՏՌԱՏԻՈՍ, ԵՎԳԻՆԻՈՍ, ՕԳՄԵՆՏԻՈՍ, ՄԱՐԴԱՐԻՈՍ ԵՎ ՈՎՐԵՍՏՈՍ ՍՈՒՐԲ ՎԿԱՆԵՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մբարիշտ և անօրեն Դիոկղետիանոսի թագավորության ժամանակ հռոմայեցոց ամբողջ իշխանությունը լցված էր հեթանոսական պաշտամունքով, բազմատեսակ կոռուքերի մոլորությամբ, և ամեն մարդ ամբարշտությունը բարեպաշտություն էր համարում, կատաղած շան նման անգրգայորեն տարված էին չար կրոնով։ Մանավանդ որ ինքնակալների գրավոր հրամանները ամեն օր ուղարկվում էին նրանց, որ գավառների իշխան և կուսակալ էին կարգված։ Եվ նրանց հրամայում էին՝ ուշադիր հետևել տոներին և ամսամուտներին, աստվածներին զոհեր մատուցել երևելի պատվով. և թագավորական նվերների ու ընծայատուր պարգևների, պատվի և ճանաչման արժանի լինել և այդպիսի պատվասիրության փութացողներին հասցնել մեծ բարիքների։ Իսկ ովքեր կշեղվեին այլ կրոնի կամ ավելի ծուլ կլինեին պաշտամունքի մեջ՝ զրկվում էին տնից և ունեցվածքից, բազում պատուհասներով մահվան վճիռ էին ստանում։ Արդ, այսպիսի հալածանք և խռովության ամպրոպ և պատուհասների սաստ էր տարածվում ամբողջ երկրով։

Նույն ժամանակ լուր է հասնում անօրեն իշխանի ականջին, իբր ամբողջ Հայաստան աշխարհն ու Կապադովկիան ընդդիմացան թագավորական հրամանին և միաբանությամբ ձեռնարկել են ապստամբություն և քրիստոնեական հավատքին անփոփոխ հետևելով՝ իրենց մտքում ունեն մի ոմն Հիսուսի, որին և Աստված են քարոզում։ Այս լսեց Դիոկղետիանոս կայսրը, սիրտը խռովեց, մեծ ցասումով զայրացած և մեծ հեծությամբ լցված երկմտում էր։ Անմիջապես հրամայեց իր բոլոր մեծամեծներին իր մոտ կանչել՝ հելլենացոց իմաստունների հետ։ Եվ երեք օր՝ առավոտից երեկո, հելլենական

իմաստունների հետ հաստատեցին իրենց միտքը՝ փոխադրել այն կուսակալներին, որոնք կարգված էին այն երկու ազգերի վրա՝ չար և անարի համարելով նրանց: Եվ նրանց փոխարեն ուղարկեց երկու հոգու, որ եկել էին հելլենական գավառից՝ հույժ իմաստուն, վարժ և կիրթ ամենայն հռետորական և փրկիսոփայական հանճարով, և խորագիտությամբ խոհեմ քան բոլոր ծերակուտականները: Նրանցից մեկը հայտնի Լուսիասն էր, որ ամբողջ Ջենտացոց գավառի դքսություն իշխանն էր, երկրորդը կոչվում էր Ագրիկոդայոս, որին ընձեռված էր բոլոր երկրամասերի դատավորական իշխանությունը, նաև բոլոր գնդերի զինվորները, որ մերձակա գավառներում էին:

Արդ, սրանք հասնելով այն գավառները, անմիջապես ամեն հասակի մարդկանց անխնա սրով ու սուսերով մաշում էին և առանց պատշաճ պատճառի մտածում էին Աստծու վկաններին օրհասական մահ հասցնել, եթե փոքր-ինչ այլ դավանություններ էին, կամ թշնամիներից, կամ չարասեր մարդկանցից ու չարանախանձ այրերից: Այսպիսի մրրիկ և չար տազնապ էր տարածվում այդ անմաքուր և անաստված այրերից այն աշխարհի բոլոր բնակիչների վրա: Քրիստոնյաների բազմությունը նորից քննվեց, և բռնված անթիվ զորքը մատնվեց այն արյունարբու գազաններին ի կորուստ: Այնուհետև Լուսիաս դուքսը իր բնակությունը Սատաղա քաղաքում հաստատելով՝ այն գավառում ում գտներ՝ սուրբ այրեր և կանայք, բազում հարցաքննություններից և դառն տանջանքներից հետո զգուշորեն կապկպած ուղարկում էր Ագրիկոդայոս դատավորի մոտ՝ Սեբաստիա մայրաքաղաքը, նրանից սրով վախճանվելու: Եվ թույլ չէր տալիս բնակվել իրենց հայրենի գավառում, որպեսզի ընտանիքներից և ազգականներից չդարմանվեն: Նաև որ նրանց մարմինները օրինական թաղման հասնելով պատշաճաբար գերեզման չգրվեն: Այսպեսև անօրեն Ագրիկոդայոսը Սեբաստիայում բռնվածների ուղարկում էր Սատաղա քաղաքը՝ Լուսիաս դուքսին, մահվան պատուհասը նրանից կրելու:

Այս այսպես եղավ: Այն տարի մի իշխան՝ Եվստուատիոսը, Լուսիաս բղեշխի գնդերից, աստվածապաշտ և Աստծու երկյուղած մարդ, անպարսավելի կենցաղավարությամբ անցկացրած իր օրերը՝ տեսնելով անօրեն իշխանի դառնաշուկն արհիլը՝ տխրում էր օր-օրի պատահածների համար, որովհետև միշտ տեսնում էր նորանոր սաստիկ պատուհասներ քրիստոնյաներին. արտասովազոչ պաղատանքով և հաստատուն պահքով անդադար աղոթք էր մատուցում գիշեր ու ցերեկ մեր փրկիչ Քրիստոսին, որ թերևս հաշտվի իր ծառաների հետ և նայի իր ժողովրդին, որ գնեց իր արյունով, և փրկի անօրենների ձեռքից և ազատի չարիքների՝ նորից երևալուց: Ցանկանում էր և ինքը ըղձալի տենչով սրբերին հավասար ջանք դնել նահատակության և նրանց հետ արժանանալ մեծ վկայություն: Բայց անօրեն իշխանի խորամանկ դավաճանությունը տեսնելով փոքր-ինչ վախենում էր առաջիկա մրցումից: Այսպիսի վիճակով փորձում է նախապես իր ճանաչողությունը: Իր մոտ է կանչում իր հավատարիմ ծառաներից մեկին և իշխանական գոտին տալիս նրան, որ տանի Արորակ քաղաքի եկեղեցին, որտեղից ինքը եկել էր, և պատվիրում է նրան այսպես անել. համարձակ մտնել եկեղեցի, բոլորից թաքուն: «Իմ գոտին,՝ ասում է,՝ դիր Աստծու սեղանի վրա, և դու թաքնվիր եկեղեցում: Եվ եթե կտեսնես Օգսենտիոսին՝ բոլորից վկայված և բարձրյալ Աստծու քահանային, երբ կմտնի Աստծու սուրբ եկեղեցին, սովորական աղոթքը մատուցելու, եթե իմ գոտին վերցնի այն սեղանից՝ կթողնես նրա մոտ համարձակ և կվերադառնաս ինձ մոտ: Իսկ եթե ժառանգավորներից մեկը վերցնի՝ չթողնես նրանց»: Նա իր մտքում խորհեց այսպես, որ եթե երանելի Օգսենտիոս երեցը գոտին վերցնի իր սուրբ ձեռքը, դա աստվածային մի տնօրինություն կլինի՝ հայտնելով նրան ցանկալի վկայությունը, նրան մոտեցնելով մրցման նույն հանդեսին, իսկ եթե այլ կերպ կատարվի՝ լուել և դադարել, և չհամարձակվել հանդգնաբար այս ժամանակ մտնել ճգնություն մարտի մեջ:

Մի քանի օրից Եվստուատիոսի ծառան վերադարձավ նրա հրամանը կատարած: Մեկ առ մեկ պատմեց և ասաց նրան.

«Այն ժամին երբ ես մտա Արորակ քաղաքի եկեղեցին և քո իշխանական գոտին դրի սեղանին ու թաքնվեցի եկեղեցում, նույն ժամին եկավ մտավ սրբազան Օգոսենտիոս քահանան՝ կատարելով սովորական աղոթքը: Եվ նա, ասես մեկից ուղարկված, մտավ այն խորանը, ինքը վերցրեց քո գոտին»: Այս լսելով իր ծառայից երանելի Եվստոնատիոսը անասելի խնդությամբ լցվեց, նույն ժամին իշխանի ապարանքից իր հետ վերցրեց իր բոլոր բարեկամներին, ճաշի ժամին մեծ ուրախությամբ եկավ իր տունը, զվարթ և բերկրալի դեմքով, որ երբեք նա այդպիսի ուրախ դեմքով չէր երևացել, և նրա բոլոր ծանոթները զարմացան անսովոր կերպարանքից: Մտածում էին հարցնելով նրան, որ ստուգությամբ իմանան դրա պատճառը: Այնժամ նստածներից մեկը, որ նրան հասակակից էր և սիրելի բարեկամ ու քաղաքակից, որի անունը Եվգինեոս էր, համարձակ հարցրեց նրան ասելով. «Ո՞վ բարի ուսուցիչ մեր, պատվական Եվստոնատիոս, մի՞թե մեր իշխանի հրամանի համար, որ որոշել է վաղը հանդիսավոր երթ կազմակերպել և քրիստոնյաների դեմ ամեն տեսակ տանջանքների գործիք պատրաստել, դրա համար ուրախությամբ ակնկալում ես նրանցից ինչ-որ բան շահել»: Բայց սա ասաց նրա համար, որ այն տարի նրա բոլոր գործերի իշխանն էր: Այնժամ սուրբ Եվստոնատիոսը պատասխանեց. «Լավ ասացիր դա, սիրելի եղբայր, որովհետև ակնկալում եմ շահել մի բան այդ անպական և անկողոպտելի գանձերից, որովհետև եթե իմ Տիրոջով ընթանամ դեպի այն բարիքները, վաղը մեծապես կշահեմ»:

Մյուս առավոտյան լուսաբացին, երբ արևի ճառագայթները ծագեցին, դուքս Լուսիասը հրամայեց քաղաքի մեջ ավելի բարձր բեմ պատրաստել և բոլոր հանդիսատեսներին և քաղաքացիների բազմությունը միահամուռ հավաքել այնտեղ: Այնժամ իշխան Լուսիասը եկավ թատրոն, նստեց բարձրագույն բեմին, հրամայեց բանտում արգելված քրիստոնյաներին բերել տանջանքով հարցաքննելու: Սուրբ Եվստոնատիոսը արագ հասնում է բանտ, աղաչում սուրբ վկաներին՝

աղոթել իր համար, որովհետև ուզում է այն օրը ինքը ևս անձկալի տենչանքով կցորդ լինել նրանց չարչարանքին: Այնժամ բոլորը տարածեցին իրենց սուրբ ձեռքերը առ Աստված, մեծ պաղատանքով նրա համար աղոթեցին: Երբ ավարտեցին աղոթքը և ասացին ամբողջը, երանելի Եվստոնատիոսի հետևից գնացին՝ զինվորների կողմից բռնված, և ատյան մտան իշխանի առաջ:

Այն ժամանակ Լուսիասը հրամայեց մեկ առ մեկ սրբերին առաջ բերել իր բեմի մոտ: Նույն պահին առաջ եկավ անհաղթ Թագավոր Քրիստոսի գորական Եվստոնատիոսը և մեծ համարձակությունով ասաց իշխան Լուսիասին. «Ինքնակալի գրավոր հրամանը դարձյալ ընթերցվի այստեղ դատարանում, այն որ հրամայել է երկրի բոլոր քրիստոնյաներին, որ քո իշխանություն տակ են, ուր հանդիպեն ու գտնվեն՝ բռնվեն և քո կողմից հարցաքննություն ու տանջանքի ենթարկվեն: Արդ, Օգոսենտիոսը երևելի բախտով ու ընտրիկ կենցաղավարությունով, արիական հանդեսով պատերազմի մեջ քաջ արիությունով գարդարված և բոլորից անվանի եղած, քիչ օրեր առաջ անմահական ջանքով նահատակվեց քո բեմի առաջ որպես Քրիստոս Թագավորի քաջ զինվոր և կշտամբեց քո անաստվածությունը իմաստուն խոսքերով և համբերություն գործերով. հետ նահանջեց քո կարծեցյալ խոհեմությունը: Քանի որ այն օրվանից մինչև այժմ նա բանտում է, հրամայեցիր այսօր արի և մեծ նահատակին սուրբ ժողովրդի հետ բերել հարցաքննության: Արդ, ահա բոլորը ինձ հետ քո դատարանի առաջ են: Ես ևս զինվորագրվել եմ իմ անմահ ու անվախճան Թագավոր Քրիստոսին, չարչարակից լինելով սրանց իմ կամավոր հոժարությունով, հանգցնելով քո բազմահնար մեքենայությունները, որ քո հայր սատանան արմատացրեց քո սրտում և ամոթ եմ համարում բանսարկուի բռնությունը»: Լսեց սրանք անօրեն Լուսիաս դուքսը, զարհուրեց այրի համարձակությունից, շառագունած երեսով և մահացու աչքով նայելով, բարկացող հոգուց որոտաց մեծ ձայնով և թունալի ցասումով ասաց. «Պայծառ և հռչակելի եղավ ինձ համար այ-

սօր դատարանը, ասես հայրենի հելլենական իմաստությամբ լցված այս չարաբարո հոետորը և դահիճը հարուցեց արժանասատ և արդարադատ իրավունքը և թագավորների հրամանը ոչ միայն իր, այլև աստվածների բարերարությունից բոլոր ապստամբածներին, նաև ինքնակալների պատվիրանները անտեսողներին»: Այնժամ ամբարիշտ Լուսիասը հրամայեց զինվորներին մերկացնել Եվստուատիոսին և ասաց. «Նախ իմ առջև թող կողոպտվի իշխանական այդ պատմուճաններից, որ դրա շուրջն են, քղամիդից, ոսկեհուռ հանդերձներից, պատվական գոտուց, և այս օրինակով հայտնի լինի զինվորական պատվից բոլոր օտարացածներին և ապա դրան մերկ մարմնով մոտեցնելով՝ լարերով ձգեցեք ոտքերն ու ձեռքերը և ամրացրեք և քառակի տարածելով հպեցեք երկրին ըստ իր հանդգնագուլյն ճառի»: Եվ դահիճներն իսկույն կատարեցին հրամանը:

Դուքսն ասաց. «Ո՛վ Եվստուատիոս, եթե քո չարակրոն համառությունից զղջալով չդառնաս, հույս չունենաս փրկվել իմ ձեռքից՝ քո սկսած կորստական մտքերի համար»: Սուրբ Եվստուատիոսն ասաց. «Ո՛վ Լուսիաս, նրանք պիտի զղջան, որ բարիքից անցնում են չարության, և ոչ նա, որ վատթարությունը արհամարհելով հետևում է ճշմարտությանը, ինչպես և սկզբից և եթ ընթացել եմ իմ ճշմարիտ Աստծու օրենքներով»: Դուքսն ասաց. «Նախ պատմիր ինձ, տանձվելուց առաջ, քո բախտը, անունը, հայրենիքը և գավառը, որտեղ ծնվել ես, և կրոնի նորոգումը, որ թաքնված էր քո մեջ. ամեն ինչ հայտնիր մեզ ստուգությամբ»: Սուրբ Եվստուատիոսն ասաց. «Ազգով և տոհմով ես Արորակ քաղաքից եմ, և իմ անունը Եվստուատիոս է: Ես ծառան եմ իմ Արարչի՝ երկինքն ու երկիրը ստեղծողի, և խոստովանող Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի և ամենասուրբ Հոգու: Մանուկ հասակից և մայրական խանձարուրից սովորել եմ այս պաշտամունքը և երկրպագել»: Իսկ դուքսը տեղեկանալով նրա մասին հարցրեց զինվորների ամբողջ զնդին. «Նա քանի տարի է մնացել իշխանության մեջ և թագավորներից պարգևներ ստացել»:

Այնժամ ովքեր սկզբնապես տեղյակ էին նրա վարքին, դուքսին ասացին. «Այս մոտեցող տարվան կլրանա քսանյոթ տարին, որ նա մտել է զինվորության: Դրանից առաջ մանուկ հասակում նա ծառայել է նոտարին»: Դուքսն ասաց. «Բայց այժմ, Եվստուատիոս, տեսնելով քեզ հասած տանջանքի վիշտը, որ քո ամբարտավան միտքը սխալ մոլորությամբ բռնել է, մենք ողջախոհության կամք դրսևորեցինք քեզ համար, միգուցե դու քեզ ազատես հանդուգն ու վայրենի բարքիցդ և զգաստանալով՝ դիմես բարեհաղթ աստվածների մարդասիրական զորությանը և հպատակվես մեր ինքնակալներին»: Սուրբ Եվստուատիոսն ասաց. «Չարաբարո դեերին և խուլ կուռքերին ես զոհ չեմ մատուցի, որ մարդկանց կազմածն ու ստեղծածն են, որ բերան ունեն և չեն խոսում, ականջ ունեն և չեն լսում, աչք ունեն և չեն տեսնում, ունեն ձեռք և չեն շոշափում, ոտքեր ունեն և չեն գնում, և նրանց կոկորդում խոսք չկա, որի համար մարգարեն ասում է. «Նրանց նման կլինեն բոլորը, որ ստեղծեցին նրանց, և ովքեր հույս են կապել նրանց հետ, որովհետև աստվածները, որ երկինքն ու երկիրը չեն ստեղծել, կկորչեն երկնքի ներքո» (Մատթ. Ժ. 28): Դուքսն ասաց. «Իմ ներողամտությամբ համբերելով քո շաղակրատ ճոռմաբանությանը, որ մտքի համար անըմբռնելի և անպատշաճ բաներ խոսեցիր իմ դատարանում. մեր անմահ և բարերար աստվածներին հայհոյելով, նրանց մահկանացու անվանելով և մեր ցասումը շարժելով, ուստի հարկավոր է վրեժ պահանջել քեզնից քո համառության համար ըստ հռոմայեցոց օրենքի՝ վրեժխնդիր լինել աստվածամարտներին: Բայց հիմա ասա դու ինձ. մարդը, որ մտքի իշխան է և իմաստուն խորհրդով պարտավոր է այնպիսի մեկին, որ խաչվեց Պոնտացի Պիղատոսի ձեռքով և անարգաբար ձաղկվեց եբրայեցիների դասից՝ կոչել անմահ Աստված, Այն, որ չկարողացավ իր անձը փրկել, այլ իբրև չարագործ փայտի վրա կախվեց, դու Նրան անհանձար մտքով բոլոր եղածների արարիչ ես անվանում»: Սուրբ Եվստուատիոսն ասաց. «Ո՛վ Լուսիաս, եթե քո ոգին ախտերի հողանյութ զանգվածով խավա-

րած չլինեն և միտքդ՝ թմրած բանասարկուի խորհուրդներով, ցույց կտայի քեզ թերևս նաչյալին՝ Տեր և Փրկիչ բոլոր արարածների և մշտնջենական Հոր Որդի առաջ քան հավիտյանս, իր անապական Մոռողի անսկիզբ ճառագայթ և կերպարանք, որ անճառ խոնարհությամբ իջավ Նրա ծոցից և մարմին հագավ մարդկորեն անարատ և միշտ կույս Մարիամից և կրեց մեր բոլոր տանջանքները, բացի մեղքից, և չարչարանքով ու աստվածահրաշ թաղումով, սքանչելի հարուխթյամբ [ոտքի] կանգնեցրեց չար բանասարկուի խաբեությունից ընկած և կործանված մարդկային ազգը: Եթե ստահող և երազապատիր այդ պաճուճանքներից և սնոտի պաշտամունքից հրաժարվեիր, ընկալեիր Աստծու մեծամեծ սքանչելիքները և զինվորագրվեիր իմ Թագավոր Քրիստոսին՝ ինձ նման ժառանգորդ կլինեիր անապական և անվախճան հավիտենական կյանքին, որ աչքը չի տեսել և ականջը չի լսել, որ Աստված պատրաստեց իր սիրելիներին»:

Այնժամ իսկույն անօրեն Լուսիոսը առավել ևս բորբոքվեց, կատաղության ցասումով և ասաց դահիճներին. «Այդ հանդուգն և ճոռոմ պատասխան տվողը թող բարձրացվի գետնից լարերով և նրա լանջերի ու որովայնի տակից կրակ տարածվի, իսկ նրա թիկունքին փշալից գավազաններով հարվածեցեք և ասացեք զրան, որ հնազանդվի ինքնակալի հրամանին և չհայհոյի մեր աստվածների զորությունն ու փառքը»: Եվ ծառաները անմիջապես կատարեցին բռնավորի հրամանը և բազում ժամեր նրա որովայնի տակ տարածում էին կրակի բոցը և այրում, խորովում վկայի ամբողջ մարմինը՝ մինչև ներքին անդամները: Եվ դժնդակ տանջանքով ծեծում էին նրա թիկունքը, տանջում-չարչարում փշալից գավազաններով, մինչև նրա մարմնի մասերը պատառ-պատառ գետին էին ընկնում, բայց չէին այլայլում նրա երեսի գույնը, այլ բոլորը տեսնում և կարծում էին, իբր օտար մարմնով է կրում պատուհասը:

Սուրբ վկայի համարձակությունից զարհուրած բռնավորը միաժամանակ զարմացել էր, որ հոգին մնում է նրա

մեջ. հրամայեց դահիճներին դադարեցնել տանջանքները և ծիծաղելով ասաց սուրբ վկային. «Ասա ինձ, ո՛վ Եվստոռտիոս, ինչպիսի խոհեմություն ունես, ախորժում ես առավել ևս տանջանք պատճառել քեզ, որ հրճվելով ուրախանաս, որ և քեզ փառք ես համարում»: Եվստոռտիոսն ասաց. «Շատ եմ ըղձում և փափագում այժմ ցանկալի փառքին, որին հասցնել ինձ խոստացար, քանի որ գրված է. «Այս ժամանակի չարչարանքները արժանի չեն հանդերձյալ փառքին, որ հայտնվելու է մեզ» (Հռոմ. Ը. 18): Դուքսն ասում է մերձակա զորականներին. «Մեր բոլոր մտածածները սրա տանջանքների մասին, պատշաճ եմ համարում գործադրել չարաբաստ մարմինն. աղ և բորակ խառնել քացախին, որ մորմոքեցնի նրա անդամների այրված-սաստկացած վերքերը և խեցի տարածել գետնին և փշի տատասկ և գալարեցնել դրա վրա սաստկապես, որ անջատվեն դրա մարմնի ջլերը և ոսկորները, որպեսզի հագենա մեզնից իր սպասած պարգևներով, որև սիրեց»: Եվ չարի սպասավորները մեծ ջանքերով սրբին չարչարանքի պատուհաս էին հասցնում, իսկ Քրիստոսի նահատակը տակավին ավելի մեծ ուժով մնում և դիմանում էր և ճիչ կամ խոսք չէր լսվում, այլ միայն իր սրտում գոհանում էր Տիրոջից և կրում էր նեղության տանջանքները:

Իշխանն ասաց. «Նիստ զարմացած եմ, որ իր վրա եկածները խաղալիք է համարում Նազովրեցու այդ զինվորը և քամահրում է մեր տանջանարանը: Այժմ թող դատական ատյանի առաջ ասի, թե գոնե այսուհետև ողջախոհացավ և կամ իր անձը հավանեցրե՞ց մեծ աստվածներին երկրպագություն մատուցելու և հպատակ լինելու ինքնակալների հրամանին, թե՞ ոչ»: Սուրբ Եվստոռտիոսն ասաց. «Ձեր աստվածների երկյուղի պատճառով, որ ունես, այս պատուհասը պատճառեցիր ինձ տգիտացած, ո՛վ դատավոր, հիմարացած մտքով, և չգիտես, թե այժմ ինձ արժանի արեցիր անճառ ու անպատում հարուխթյանը, որ Տերը պահում է իրեն հուսացողներին, և ինձ փրկության ճանապարհ հարթեցիր մարմնից ելնելու անբժությամբ և մտնելու Նրա մոտ, ում որ կարոտել եմ, և

վայելելու մշտնջենական և անանց բարուկթյունները իր անվան կամարարների հետ: Այժմ ինչ անելու ես արա՝ անմիջապես, որովհետև քո աստվածներին դարչելի և պիղծ եմ համարում և աշխարհի բոլոր մեծուկթյունները և փառքը անպիտան աղբ եմ համարում: Դրանք ինձ ապականացու և խոտան են երևում, որ Քրիստոս շահեմ և զվարթերես մնամ Նրա առաջ հանդերձյալ հավիտենին»:

Դուքսն ասաց. «Ո՛վ չար բախտի հանդիպածդ և չարի արբեցուկթյամբ նանիր խորհուրդներից թմրածդ, ինչու ես պառ կորցնում ես պատիվդ ու զինվորական մեծուկթյունդ և դառնուկթյամբ զրկվում աշխարհիս քաղցր լույսից, կամովին իջնում ես դժոխք, և կամ ինչ են հատուցումները, որ ասում ես, և կամ ով է պարգևատուն այն ամենի, մեղմով ասա ինձ այդ ամենը»: Պատասխան տվեց երանելի Եվստուատիոսը և ասաց. «Հանդերձյալի հույսը, որ ունենք՝ անճառ է և անհայտ, բերանով չի ասվում և արարածներից ոչ ոք չի կարող օրինակ բերել այստեղի երևելի և ապականացու արարածներից, որ խոստացավ Աստված իր սիրելի կամարարներին: Այդպես և անհավատներին, որ քեզ նման են և ճշմարտուկթյունն ուրացողներին գանձված պահում է գեհենի անշեջ հուրը, ատամների կրճտում, և աչքերի լաց, անքուն որթ և աղջամուղջի արտաքին խավար, որ պատրաստել է սատանան իր հաճույքը կատարողների համար: Իսկ մենք ակնկալուկթյամբ սպասում ենք այն հույսին, և այսպիսի սպառնալիքից զանազան և դառն տանջանքներից, որ գալիս են մեզ վրա ձեզնից՝ չենք զարհուրում, քանի որ բանասարկուի որոգայթներից փրկված զվարթերես կկանգնենք Քրիստոսի բեմի առաջ»:

Երբ Լուսիաս դուքսը այս լսեց՝ բարկուկթյան ցասումով ասաց երանելիին. «Եթե քո Աստվածը հնար ունենար, ինչպես դու ես ասում, կարող էր իսկույն իր անմահուկթյան կցորդ դարձնել քեզ, կփրկեր նախորդ տանջանքներից, որ պատճառեցի քեզ: Ուստի լսիր ինձ և քո սնավաստակ կամքը հեռացրու քեզնից, ուղղուկթյան արի և փրկվիր առաջիկա տանջանքներից և նախկինից ավելի պարգևներ ու մեծամեծ

պատիվներ կստանաս մեր ինքնակալներից և կլինես մեզ սիրելի»:

Սկսեց խոսել երանելին և ասաց. «Ո՛վ խավարասեր և չարի գործակից և հեռացած հավիտենական կյանքից, արդ, նայիր և տես ինձ, որ դու մեռած և կորսված ես կարծում, ոչինչ անհնար չեղավ իմ Աստծուն կրկին նորոգելու ինձ և ապրեցնելու, ամբողջացնելու բոլոր վերքերն ու ցավերը իմ մարմնի»:

Ամբողջ քաղաքի բազմուկթյունը ապշած նայում էր, իսկույն, հանկարծակի, ինչպես ծառի կեղևը՝ մարմնից ընկնում էին [վերքերը], և սուրբը ողջանդամ երևաց ամբողջ բազմուկթյանը, այնպես որ սպի կամ վերք չի երևում նրա սուրբ մարմնին: Եվ մարդիկ տեսան սրբի վրա կատարված սքանչելիքը, և բոլորը, որ թատրոնում էին, և քաղաքի բազմախումբ ուսուցիչները փառավորում էին Աստծուն՝ սքանչելիքի համար, որ ցույց տվեց իր սուրբ վկայի վրա:

Իսկ գորականներից մեկը, որի անունն էր Եվգինեոս, որ նույն Արորակ քաղաքից էր, որտեղից երանելի Եվստուատիոսը, և իշխանական պատվով նրա դասից լինելով, երբ տեսավ սուրբ Եվստուատիոսի անդրդվելի համբերուկթյունը հանուն Քրիստոսի, մեծաձայն աղաղակեց և ասաց. «Լուսիաս, Լուսիաս, ես ևս քրիստոնյա եմ, ծառա՝ բարձրյալ Աստծու, երկինքն ու երկիրն ստեղծողի, և նզովում եմ քո կրոնը, արհամարհում քո աստվածներին և հակառակվում եմ ամբարիշտ թագավորներին և քո կամքին, ինչպես իմ տեր Եվստուատիոսը»:

Իսկ անօրեն իշխանը, երբ այս լսեց, ամոթ զգաց բազմամբոխ հրապարակի առաջ նախատվելու համար և գլուխը խոնարհած, ապշած նայում էր գետնին: Այնժամ հրամայեց առաջ բերել Քրիստոսի երանելի զինվոր Եվգենիոսին: Եվ մունետիկը աղաղակում էր հրապարակի մեջ և ասում այսպես. «Այս չարաբախտին և նորագույն երևելիին երկար հարցաքննուկթյուն և քննուկթյուն է պետք: Եվ այժմ չենք հասցնիչտապում ենք մեր սովորական գորքի հանդիսուկթյանը: Եվ հրամայում եմ այս կախարգին՝ Եվստուատիոսին, իր համախոհ Եվգինեոսի հետ բանտ նետել և երկաթե շղթաներ դնել պարանոցներին ու ոտքերին և զգուշուկթյամբ պահել մյուս

մահապարտների հետ, որ ազատ և պատշաճ ժամի, ըստ օրենքի դատեմ նրանց»: Այս ասելով ելավ ատենական աթոռից:

Զինվորները քառեցին երանելիներին կապանքով, ըստ իշխանի հրամանի, դրին բերդի ներքին խավարչտին մի տեղ: Իսկ երանելիները մեծ ցնծությամբ և ուրախությամբ օրհնում էին Աստծուն և սաղմոսում միաբան ձայնով և ասում. «Ահա ինչ բարի, ինչ վայելուչ է, որ բնակվում են եղբայրները միասին» (Սաղմ. ՃԼԲ. 1): Եվ ամբողջ գիշերը լուսացնում էին Աստծուն աղոթելով, սուրբ Եվստուատիոսից սովորում նահատակության մարտի հանդես, համբերություն, ժուժկալություն, փոխանակ անճառ բարիքի, որ Աստված պատրաստեց իր սիրելիներին:

Իսկ առավոտյան արևածագին դուքսն շտապեց գնալ Նիկոպոլիս քաղաքը և գնաց բանտը, ուր սուրբ վկաներն էին: Եվ հրամայեց միայն սուրբ Եվստուատիոս երանելիին դուրս հանել: Երբ ծիծաղելով ու խնդալից եկավ, [Լուսիասն] ասաց սուրբ վկային. «Ո՛րդ եղիր, սիրելի Եվստուատիոս»: Պատասխանեց սուրբը և ասաց. «Բոլորի Աստվածը, որին պաշտում եմ մանկությունից, Նա կողջունի քեզ արժանապես, ո՛վ Լուսիաս»: Դուքսն ասաց. «Քո Աստծու մասին պետք է, դու առաջիկա ժամին հասնելով քեզ տրված հողաթափները ոտքդ կհագնես, որ դրանով հեշտությամբ ընթանաս մեր ետևից՝ ճանապարհին ուղեկցելով»: Այդ հողաթափները տատակապատ էին, երկար, հաստ և սուր մեխերով, որպեսզի թափանցեին նրա ոտքերի ներբանները: Արդ, զինվորները հողաթափները բերին, հագցրին երանելիի ոտքերը, երկաթեղենները միասին խրոցներով պնդեցին, և իշխանը կնքեց իր մատանիով, որ ոչ մեկը նրան խղճալով չհանի սրբի ոտքերից: Եվ դահիճներին պատվիրեց ծեծելով ու քարչ տալով նրան ճանապարհ հանել՝ այլ ընկերների հետ: Եվ ինքը գործի բազմության հետ շարժվեց, երկու օր հետո հասավ և բանակեց դղյակի մոտ, որ մոտ էր Արորակ քաղաքին: Երբ սրբերը հասան այնտեղ, այն քաղաքի բոլոր բնակիչները ելան տեսնելու երանելիներին, բայց իշխանի երկյուղից, նրա ազգական-

ներից կամ սիրելի բարեկամներից ոչ ոք չէր հանդգնում մոտենալ նրան, որ իրենք ևս չբռնվեն:

Մարդարոս անունով մի ռամիկ, տարիքն առած և արդարությամբ կենցաղավարած, այն օրերին տուն էր կառուցում իր համար և տանիքից, երբ ծածկում էր տան ձեղունը, դիտում էր և տեսավ Աստծու սուրբ վկաներին, որ կապանքով անցկացնում էին պողոտայով, որ մոտ էր այն գյուղին: Սրբերի մեջ տեսավ երանելի Եվստուատիոսին՝ ձեռքերն ու ոտքերը կապած, և իսկույն ճանաչեց և շտապով իջավ այնտեղից, ասաց իր կնոջը հայերեն զրուցադրությամբ. «Ո՛վ կին, տեսնո՞ւմ ես Եվստուատիոսն՝ մեր տիրոջը, որ կոչվում է Կիրակոս, մեր ամբողջ շրջակայքի իշխանին, որ արհամարհելով լքեց այնքան և այնպիսի գերապատիվ մեծություններ և աշխարհի փառքը, և ունեցվածքի ամեն երևելի փարթամություն, և քաջամարտիկ զինվորությունը, որ ոչ ոք չուներ ամբողջ շրջակայքում, այլ կալանավորների հետ գնում է հանդիսավայր՝ սպանման ասպարեզ և վկայի նահատակության: Իր ցանկալի կենցաղավարությունից հետո կժառանգի հավիտենական թագավորությունների առհավատչյա բարությունները»: Իսկ նրա գեղեցիկ և պարկեշտ կինը ասաց նրան. «Ինչն է խանգարում, որ դու ևս գնաս ուղեկից լինես նրան և հետևես երկնագնաց ճանապարհին, հաղորդ լինես նրա չարչարանքին, այն բանին, որ հավիտենական անապականության բրաբրոնը կվերածաղկեցնի, և փրկության պաշտպան կլինես ինձ և [մեր] երկու երեխաներին և ամբողջ քո ազգատոհմին»: Իսկ ցանկալի և բարենշան այն այրը Հոգու հրով վառված և ըղձալի տեսչությամբ ցանկանում էր խառնվել Աստծու սուրբ վկաների գնդին: Անմիջապես գրկեց իր երեխաների պարանոցները, համբուրեց և ասաց. «Խաղաղություն ձեզ, սիրելի՛ որդյակներ իմ»: Եվ տարածելով ձեռքերը՝ աղոթեց Տիրոջը և արտասովազոչ պաղատանքով ասաց. «Տե՛ր Աստված, երևելիների և աներևույթների ամենակալ Հայր, որ Քո սիրելի Որդու՝ Հիսուս Քրիստոսի և ամենասուրբ Հոգուդ միջոցով նորոգեցիր ամեն ինչ, որ երկնքում է ու երկրի վրա,

և Քո աստվածուծությունը ճանաչել տվիր մարդկանց բոլոր որդիներին և մեզ փրկուծյան ճանապարհ բացիր դեպի հավիտենական կյանք, ուր անապական բարուծյունների պարզեներն են պահվում Քեզ հուսացողների համար, որի համար աղաչում եմ Քո բարեգութ ողորմուծյունը. ինձ վրա հեղիր Քո բարերարուծյան շնորհը և ինձ առաջնորդիր աներկմիտ սրտով և կատարյալ սիրով գնալու մարտիրոսուծյան հանդեսին, որ ընդունելի պատարագ լինեմ քո Աստվածուծյանը և հեռացրու մեզնից ընդդիմամարտ չար բռնուծյունը: Դու, որ սրբերի Հայրն ես և բոլոր հուսացողների Տերը, Քո ամենագոր աջով իմ երեխաներին պահիր խաղաղուծյամբ և ճշմարիտ հավատքի մեջ անբեծ, և իմ տիկնոջը, որ հանդիսադիր եղավ ինձ այս երանավետ կոչումին, որին հրավիրվեցի Տիրոջից, և ուղարկիր Քո խաղաղուծյան հրեշտակին, որ ինձ դեպի բարուծյուն առաջնորդի, թողուծյուն շնորհիր իմ հանցանքներին, որ չարի խաբկանքով մոտեցել են ինձ, որովհետև Քեզ ամեն ինչ կարելի է, և օրհնյալ է Քո անունը հավիտյան»: Այս ասելով սրբերի հետևից գնաց երանավետ ճանապարհը:

Եվ հանդիպեց մի մեծատան, որ երևելի այր էր և Տիրոջ երկյուղած, բնակվում էր նույն գյուղում: Նրա անունը Մուսատարիոս էր: Եվ ասաց նրան երանելի Մարգարիոսը. «Ահավասիկ ես գնում եմ քո սիրելի և ազգական Եվստուատիոսի մոտ, որպեսզի, նրա հետ նահատակուծյան ջանք հանձն առնելով վկայեմ ճշմարտուծյան համար՝ ցանկանալով մեր Աստուծուն: Արդ, սրանից հետո քեզ եմ հանձնարարում իմ տունը՝ երեխաներով ու ընտանիքով, և ես Տիրոջից կխնդրեմ վարձահատույց լինել քեզ հանդերձյալ հավիտենին, որ լինելու է»: Պատասխանեց այրը և ասաց նրան. «Գնա խաղաղուծյամբ անձկալի և գեղեցիկ ճանապարհդ և քո ընթացքը ավարտիր մեր Տեր Աստուծու հաճուծյամբ: Իսկ ինչ որ պատվիրեցիր ինձ, կլինի՝ ինչպես կամենում ես»: Երանելի Մարգարիոսը լսեց, հրաժեշտ տվեց նրան և դղյակի մոտ հասավ Աստուծու սուրբ վկաներին, աղաղակեց բարձր ձայնով և ասաց. «Տե՛ր իմ Եվստուատիոս, ինչպես հոտի կարոտած ոչխարը գնում է հով-

վի մոտ, այդպես ես, մեծ փափագով եկա՝ ցանկալով ճանապարհակից լինել քեզ: Արդ, ընդունիր ինձ սրբերի խմբի մեջ, որ քեզ հետ ներկայացել են վկաների նահատակուծյան հանդեսին: Որովհետև, թեպետև անարժան եմ, բայց լինելու եմ Քրիստոսի վկա»: Երբ այս ասաց, բարձր ձայնով աղաղակեց. «Քրիստոնյա եմ, ինչպես իմ պատվական Տեր Եվստուատիոսը, լսեցեք այս, սատանայի՛ բոլոր պաշտոնյաներդ»: Այնժամ զինվորները բռնեցին, կապեցին այլ սուրբ կալանավորների հետ և գցեցին այն դղյակի բանտը:

Սա իսկույն հասավ Լուսիաս դատավորի ականջին: Եվ երբ իշխանը լսեց, առյուծի պես մռնչալով նստեց ատյանում, իր առջև ունենալով զինվորներին, ըստ կարգի և ըստ սովորուծյան: Եվ բերվեցին երանելիները նրա առաջ, կրկնակի կապանքով ձեռքերը հետևները կապած և պարանոցներին շղթա, մերկացած իրենց բոլոր զգեստներից: Եվ սուրբ Օգսենտիոսը սրբերի մեջ էր, զվարթ երեսով, պայծառ դեմքով և ուրախ սրտով: Դուքսն ասաց նրան. «Օգսենտիոս, այժմ ասա մեզ, թե քեզ ազատեցի՞ր չարչարանքից և արժանացար մեծ փրկուծյան, հրաժարվեցի՞ր այն կորուսյալի սնտի պատրանքի խաբուծյունից և մերձեցար աստվածների բարերարուծյանը, թե՞ մնացել ես նույն համառուծյանը»: Սուրբ Օգսենտիոսը պատասխանեց. «Ո՛վ Լուսիաս, երգվում եմ քեզ ճշմարիտ Աստուծու տեսչուծյան իրավունքով, որ անփոփոխելի է իմ սրտի կամքը Քրիստոսի հավատից և Աստված եմ ճանաչում Նրան, անձին Հոր ծնունդ և Նրա ամենակալ Հոգին՝ մշտնջենահոս բխումը. անճառ, անքնին ամեն ինչում, Միաստվածուծյուն, որին հավատացել և պաշտում եմ իմ մանկուծյունից: Եվ եթե բյուր տանջանքներ հասցնես ինձ և գանահար պատուհաս՝ առավել քան առաջինը և ինձ անցկացնես բոլոր տանջանքների միջով՝ չես կարող իմ միտքը խոնարհեցնել երկնքի բարձրուծյունից: Արդ, իսկույն արա՛ ինչ որ մտածել ես»:

Այնժամ դուքսը մահվան վճիռ կայացրեց նրա վրա այսպես. «Օգսենտիոսին, որ բազում տանջանքից հետո չուղղվեց

և հպատակ չեղավ ինքնակալին, հրամայում ենք անապատ վայրում գլխատել սրով, որպեսզի նրա չարաբաստ մարմինը գրկված լինի օրինավոր թաղումից»: Եվ երանելին այսպիսի դատավճիռ ստանալով շտապ հասնում է կատարման վայրը և ծուկի իջնում աղոթելու. «Աստված հավիտենական, բոլոր արարածների Տեր և արարիչ, անճառ լույսի Աստված, մեր միակ Տեր Հիսուս Քրիստոսի Հայր և փառակից Հոգու, որ ելնում է Քեզանից և նախախնամ ողորմությամբ լցնում տիեզերքի ծալքերը, բաց Քո ողորմության դուռը անարժանությանս, որ կամ Քո առջև այս ժամին, երբ իմ կենցաղական դեգերումները թողնում եմ իմ հետևից և ծարավի հոգով ընթանում Քո հրամանի կոչման կետին, ըստ Քո ավետարանական քարոզության աստվածային անսուտ հրամանի. «Ով չառնի իր խաչը և գա իմ ետևից՝ արժանի չէ Ինձ» (Մատթ. ԺԶ. 24, Մարկ. Ը. 34, Ժ. 21, Ղուկ. Թ. 23): Եվ արդ, Տեր իմ և Աստված իմ, իմ ճանապարհն ավարտեցի անբժուկությամբ, այժմ գալիս եմ Քեզ մոտ: Ինձ արժանի արա հանդերձյալ հավիտենին՝ աչալրջությամբ և զվարթերես կանգնելու Քո բեմի առաջ: Եվ անարատ պահիր սուրբ վկաների դասը, որոնք ինձ հետ չարչարակից եղան քեզ համար. և արժանավորիր հասնելու այս վիճակիս և շնորհիր խաղաղություն Քո սուրբ եկեղեցուն և Քեզ փառք հավիտյանս. ամեն»: [Այս] ամենն ասելով նահատակվեց տեղում:

Իսկ անօրեն Լուսիասը պահանջեց առաջ բերել սուրբ Մարդարիոսին, որպեսզի նրան ևս դատի բազմամբողջ հրապարակի առջև: Եվ գինվորները քանդեցին նրա շղթաները, որ պարանոցին էին, և փուլով բռնի քարշ տվին թատրոն: Իսկ երանելին ասաց. «Տե՛ր իմ Եվստոռատիոս, աղաչում եմ քեզ՝ աղոթիր ինձ համար և ինձ սովորեցրու, թե ատյանում ինչ պատասխան տամ այն ապականիչ և չար գազանին»: Սուրբ Եվստոռատիոսը պատասխանեց. «Եղբա՛յր իմ Մարդարիոս, ինչ որ քեզ հարցնի՝ բնավ այլ պատասխան չտաս նրան, միայն ասա՝ Քրիստոնյա եմ և Քրիստոսի ծառա, և մի՛ շեղվիր այս խոսքերից»: Եվ անօրեն դահիճները երանելիին բերին իշխա-

նի առջև: Դուքսն սկսեց խոսել և ասաց նրան. «Ա՛յ երիցս թշվառական և բարիքը ատող, օտարացածդ աստվածների բարերարությունից, իսկույն ասա քո անունն ու բախտը և քո ազգատոհմի գահավորությունը՝ թե ինչպիսի պաշտոն ունես»: Պատասխանեց սուրբ Մարդարիոսը և ասաց իշխանին. «Այդ ամենը, որ հարցնում ես՝ փուլթ չէ ինձ համար, որովհետև ես քրիստոնյա եմ և Քրիստոսի ծառա»: Եվ [գինվորները], առաջ գալով, ասացին նրան. «Եղկելի՛ և նվաստ քան բոլոր մարդիկ, պատասխան տուր ըստ մեր Տիրոջ հարցման»: Երանելին պատասխանեց. «Ասացի և կրկնում եմ՝ քրիստոնյա եմ՝ Քրիստոսի ծառա»:

Այնժամ նրա հավատի հաստատությունը և մտքի անփոփոխելիությունը տեսնելով [իշխանը] զայրագին ցասումով նայելով դահիճներին ասաց. «Թող ծակվեն դրա ոտքի պճեղները և պարան անցկացրած կախվի ձողից, հրաչեկ շամփուրներ մոտեցվեն դրա թիկունքին, և այրվեն ամբողջապես դրա մարմնի բոլոր անդամները, թերևս ուղքի գա և արժանի պատասխան տա մեր հարցումներին»: Եվ անօրեն իշխանի սպասավորները իսկույն կատարեցին բոլոր հրամայածները: Իսկ երանելին բնավ չէր պատասխանում տանջանքներին, այլ միայն աղաղակում էր ասելով՝ «Քրիստոնյա եմ և Քրիստոսի ծառա»: Նա բազում ժամեր մնաց կախադանի վրա, և փոխելով գործիքները, կարմրաչեկ շամփուրներով հրկիզում էին սուրբ վկայի մարմինը: Եվ նա բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Տե՛ր Հիսուս, Քեզ եմ հանձնում իմ հոգին, ընդունիր խաղաղությամբ և ինձ արժանի արա մաս ստանալու սրբերի ժառանգության լույսից, որ Քեզ փառք վերառաքեմ՝ այժմ և միշտ և հավիտյանս. ամեն»: Եվ այս ասելով ավանդեց հոգին, և երանելիին կախադանից իջեցնելով քարչեցին [քաղաքից] դուրս, որ կերակուր լինի շներին:

Ու մինչդեռ ամբարիշտ Լուսիասն ինքը հրճվում և ցնծում էր վկաների չարչարանքով, գինվորներին ասաց. «Մերկ մարմնով ատյանս քարշ տվեք և նրան, որ Սատաղայից էր, այն Եվգենիոսին, որ Եվստոռատիոսի հետ հարցաքն-

նուլթյան էր»։ Եվ նույն պահին արագ բերին կանգնեցրին դուքսի առաջ՝ մերկ, առանց հանդերձի։ Եվ նայելով նրան դառն ու զայրագին ցասումով՝ [Լուսիասն] ասաց. «Ասա՛ ինձ, ո՛վ ամենապիղծ և չարադև այր. ինչպե՛ս համարձակվեցիր այդքան հանդգնություն մոտենալ, որ ոչինչ համարեցիր ինքնակալի անհաղթ և անպարտելի հրամանը և ամբողջ հանդգնությունից հետո ժպրհեցիր անարգել մեծամեծ աստվածներին, որոնց պաշտում և պատվում են մեր թագավորներն իրենք»։ Պատասխանեց սուրբ այր Եվգինեսուր և ասաց Լուսիաս իշխանին. «Իմ Աստվածը, որին պաշտում եմ իմ մանկությունից, որին և հուսացել եմ, Նա գորացրեց ինձ և համարձակություն շնորհեց, որ թքեմ քո կուռքերի վրա և արհամարհեմ քո սուրբ ու ապականիչ կրոնը»։

Այնուհետև ամբարիշտ Լուսիասը ցասումով ու բարկություն բորբոքված ասաց դահիճներին. «Նախ, թող պոկվի դրա անարգող և հայհոյիչ լեզուն և [նա] զրկվի երկու ձեռքերից և դալար բրեքով ծակծկվեն փափուկ տեղերը և ջախջախվեն դրա ոտքերի սրունքները, փշոտ գավազանով ծեծվի դրա թիկունքը»։ Եվ երբ այս այսպես արեցին չար դահիճները, ոսկորներն ու միսը իրար էին կպել, և սաստիկ վշտից չէր կարողանում բերանը բանալ, բայց միայն աղաղակելով ասում էր. «Տե՛ր Հիսուս, ընդունիր իմ հոգին և օգնիր ինձ»։ Եվ անմիջապես ավանդեց հոգին։

Իսկ անօրեն իշխանը, երբ այս ամենը կատարեց իր ամբողջ բանակով իջավ այն դաշտը հանդես կատարելու և հաշվառելու արքունի գործը։ Եվ կատարեցին այն ընտրություն գործը. յուրաքանչյուրը ցույց էր տալիս արիական ներհմություն կորով՝ զինական մարտակցություն մեջ։ Այնժամ գործի բազմություն մեջ երևաց մեկը, գեղեցիկ ու հուշակելի տեսքով զարդարված, որի անունն էր Ովրեստես. քաջ այր, վայելուչ և պանծալի հասակով, լի ամենայն խոհեմ իմաստություն և հանճարով, գորավոր խոսքերով ու գործով և կիրթ մարտական առաջադիմություն մեջ։ Սա կանգնեց շարքում՝ Լուսիաս իշխանի առաջ։ Նրան նայելով [իշխանը] տեսավ

նրա չքնաղ և պարկեշտագեղ հասակը։ Եվ նրա աչքին հաճոթվաց՝ նրան կանչեց իր մոտ, հրաման տվեց դեպի նպատակը նետել գեղարդը, որ ուներ ձեռքին։ Եվ նա իսկույն արիաբար երիվարով առաջ ընթացավ, ուժ տվեց բազուկներին, գեղարդը վայելուչ կերպով խփեց նպատակին։ Եվ երիվարի քաջ/չապինդ արշավանքի ժամանակ հանդուգն շարժումով թափահարեց բազուկները, զգեստից դուրս երևաց մի ոսկե խաչ, որ պահված էր նրա պատմուճանի զրպանում։ Եվ երբ բոլորին հայտնի եղավ, Լուսիասն ինքը իր մոտ կանչեց նրան, և երբ եկավ, կանգնեց նրա առաջ, [իշխանը] աստվածընկալ նշանն առավ իր ձեռքը և հարցրեց. «Ի՞նչ է սա։ Մի՞թե դու ևս Գալիլեացիների նահանգից ես, կախարդասար աղանդավորներից»։ Իսկ Ովրեստեսը բացեց իր շնորհալից բերանը, բարձրաձայն ասաց ի լուր ամբողջ գործի. «Ես ծառան եմ խաչված Հիսուս Քրիստոսի, որ ստեղծեց երկինքն ու երկիրը և ինչ արարածներ, որ կան նրանց մեջ։ Եվ այդ Նշանը կրում եմ ի պահպանություն իմ անձի՝ ինձ վրա հարձակված թշնամու հակառակամարտ գորություններից»։ Այնժամ դուքսը դահիճներին հրամայեց երկաթե կապանքներ բերել և դնել Քրիստոսի գինվորի գեղեցիկ պարանոցին և ասաց. «Դա ևս ուղեկից լինի մեր ճանապարհին՝ մահապարտ Եվստոատիոսի հետ»։ Հայտարարեց օրը, երբ հարցաքննությունը դատապարտելու է նրան։

Երբ դուքսը մեծ հանդիսություն հասավ Նիկոպոլիս քաղաքը, այն գնդի գորականներից շատերը, որ քաղաքում էին, մեծ համարձակություն մոտեցան Լուսիաս իշխանին, միաբերան աղաղակելով ասացին. «Ո՛վ Լուսիաս, մենք ևս քրիստոնյա ենք և զինվորագրվում ենք երկնավոր Թագավոր Հիսուս Քրիստոսին և ապավինել ենք Նրան և պաշտում ենք միայն Նրան և հավիտյան խոստովանում Նրա անուներ և արհամարհում ենք քո աստվածների բոլոր սնոտի և դիվաբնակ ընդունայն պաշտամունքը։ Արդ, ինչ որոշել ես՝ արա՛ իսկույն, որպեսզի մեր անձերը նվիրենք ճշմարիտ Աստծուն։ Ոչինչ չի կարող մեզ հեռացնել մեր Աստծու սիրուց,

որ անգոյուլթյունից լինելու թյան բերեց երևելի և աներևույթ արարածներին. ո՛չ հուրը, ո՛չ սուրը, ո՛չ գազանների ժանիքը, և ո՛չ ամեն տեսակ տանջանքները չեն կարող մեզ բաժանել Հիսուս Քրիստոսի սիրուց»: Սա, և առավել քան սա, միաբան աղաղակում էր գորականների բազմությունը, որ այն քաղաքում էր: Դուքսը զարհուրեց և նրա դեմքի գույնը փոխվեց և նրա տեսուն աչքերը մթազնեցին ասես մութ շամանդաղով, որովհետև վախեցավ քաղաքացիների բազմությունից, որ հանդուգն հարձակումից չար բան չպատահի իրեն, և իմացավ, թե ինչպես երկնավոր Հովվի խաչները կամովին իրենց մահի մատնեցին:

Այնժամ իշխանը տեսնելով՝ ի Տեր Հիսուս Քրիստոս նրանց հավատի անխախտությունը, բոլորին բռնեց, կապանքով բանտ նետեց, իսկ ինքը մտածում էր, թե նրանց ինչպես կործանի չարաչար և դառն տանջանքով: Եվ անմիջապես ասաց. «Շփոթություն չլինի քաղաքացիների և մանավանդ Եվստուատիոսի ազգականների միջև»: Դարձյալ ասաց. «Գուցե նրան տանջելով նույնպես սքանչելի հրաշքներ երևան, ինչպես առաջին անգամ: Եվ ոչ միայն նրանք կհաստատվեն հավատի մեջ, ովքեր քրիստոնյա են, այլև հելլենացիները կհրաժարվեն մեր աստվածներին երկրպագելուց»: Եվ իր սրտում այսպիսի չար խորհուրդ հաստատեց, որ սուրբ Եվստուատիոսին և երանելի Ովրենտեսին ուղարկի Սեբաստիա քաղաքը, Ագրիկոլայոս դատավորի մոտ, նրան գրելով հանդիսավոր նամակ այսպես.

«Իմ տեր գերահուզակ և վսեմախոհ դատավոր Ագրիկոլայոսին. Լուսիաս դուքսից աստվածների օգնությամբ բազում ողջույն:

Անբացատրելի և անհամեմատ և պանծալի բուն իմաստներով ծայրագույն ողջախոհությունների կատարելությունները կուտակած քո կշռադատիչ մտքում վեհագույն խոհեմությամբ ավելի քան ընդհանրական մակընթացությունները, դյուցազնական արգասիքների անթառամելի արբեցմամբ՝ շառավիղված դեպի քեզ, և առաջացած դեպի բազմահանճար

իմաստների իրողության գիտություն, ավելի քան արեգակի տակ բոլոր եղածները բարձր եղար: Որի համար և բոլորի մեջ, որ նրանց հետ են, և ոչ մեկի մեջ տիեզերքի նախախնամության իրերը հաստատեցին տնօրինելով, ավելի աստվածային և հեզահայաց քո կամքին վերագրեցին ընդհանուրի ճանաչողությունը, որովհետև հավաստի գիտեն՝ քեզնից հնար կա, և գիշերը երբ հասնի, օրվան հանդիսավոր իրողություն կանցկացնես, որովհետև ավելի շուտ քնածները կհավանեցնեն անքուն աստղերին, քան թե քո աչքերը կննջեցնեն, քանզի առավել մտահոգվողների մոտ առանց ձանձրանալու տարածում ես ներանձնական նախախնամությունից անբաղդատելի խոսքերի հարմարությունը: Ամենուրեք խռովությունների դադարումը քեզնից է առաջացել, և գերադրական անմահ աստվածներից արտափայլած հրաշափառագույն՝ լիովին հավասար բացատրվեց երևացած պատիվը, զի նախ քան քո՝ աստվածներին օգնել մտածելը, ամփոփելով բոլորը տարածում է քո իմաստնագույն խոհականության առաջ, և պարզապես ասած՝ առաքինության բոլոր մասերը քո անձի մեջ երևալով կարտահայտվեն: Եվ արդ, ինչ [կարիք] ունեմ ամբողջը բացահայտելու. ավելի համառոտ հասարակ խոսքով տեղեկացնում եմ վսեմագույն հանճարեղ իմաստությանդ այդ Եվստուատիոս կոչված մարդու մասին, քանի որ բազում քննություններից և չարաչար տանջանքներից հետո դրան գտա Գալիլեացոց աղանդի խորհրդակից և դավանող առասպելական կրոնին ոմն խաչյալ հրեայի, որին Հիսուս են անվանում, որ իր նույն երբայական ազգից չարագործի մահով մեռավ: Նաև տեսա այդ [Եվստուատիոս] մարդուն ոչ անտեղյակ իմաստասիրական վարժարանների գիտությանը և լավ կրթված է ասպարեզներում մարտակցելու, և հասել է գինվորության բարձրագույն աստիճանի, և ամեն ինչ դրա աչքին քամահրելի է երևում իր չարասեր պաշտամունքի բերմամբ, անհնազանդ լինելով ինքնակալի հրամանին և անարգող եղած մեծապայծառ աստվածներին, միաժամանակ և մեհյաններ կողոպտող: Որի համար ես ծանոթանալով դրա

անաստվածությանը՝ բյուրաբազում տանջանքներով, որպես հնոցի բովում, մաշեցի դրա երկաթեղեն մարմինը և հնար չգտա դրան ուղղության բերելու: Բազում քննություններից ու հարցումներից հետո հույս կտրեցի դրա փրկությունից, ուղարկեցի քո տերություն առջև, որպեսզի դու կարողանաս քո արդար դատաստանով, հետևելով քաջարանց անպարտելի հրամաններին՝ աստվածների անարգություն արժանավոր վրեժը գտնել: Ո՛ղջ եղիր»:

Այնուհետև զինվորներն առան նամակը և սրբերին՝ կապանքներով հանդերձ, ընկան ճանապարհ: Իսկ նրանք ճանապարհին անհազ ձայնով մշտապես աղոթում էին Աստծուն: Ապա երանելի Եվստուատիոսը հարցրեց սուրբ Ովրեստեսին. «Եղբայր Ովրեստես, ինձ պատմիր, թե ինչ կերպ նահատակվեց սուրբ Օգեսնտիոսը և կամ ո՞րտեղ»: Սուրբ Ովրեստեսը պատասխանեց. «Դուքսի՝ սրբի վրա մահվան վճիռ կայացնելուց հետո երանելին աղաչեց դահիճներին թույլ տալ իրեն, որ դա տեսնի քո առաքինությունը և քեզ ողջունի: Բայց ոչ ոք նրան լսել չուզեց, քանի որ ճաշի ժամ էր: Եվ որովայնի ծառաները շտապում էին կատարել իշխանի կողմից իրենց հրամայվածը: Արագորեն նրան տարան մոտակա մի ձորակ, որ մենք Լեոնտոն ենք անվանում, և ճանապարհին նա սկսեց սաղմոսել ու ասել. «Երանելի են ամբիժները ճանապարհին և ովքեր ընթանում են Տիրոջ օրենքով» (Սաղմ. ՃԺԸ. 1): Եվ սաղմոսն ավարտելուց հետո հասավ այն տեղը և ընկավ գետնին երեսնիվայր, արտասովազոչ պաղատանքով աղոթում էր իր սրտում, ապա ոտքի ելավ և ամբողջն ասաց և շուրջը նայելով, որ իրեն մոտիկ էի, կանչեց ինձ գաղտնաբար, պատվիրեց. «Եղբայր Ովրեստես, ողջունիր երիցս երանյալ իմ տեր Եվստուատիոսին և ասա նրան, որ աղոթի ինձ համար և փութով հասնի, որովհետև ես կարոտած սպասում եմ նրա գալստյանը»: Երբ նա այս ասաց, իսկույն կտրեցին նրա գլուխը նույն տեղում: Եվ այնուհետև իշխանի սպառնալիքի ահից հավատացյալներից ոչ ոք չէր համարձակվում մոտենալ նրա նշխարներին:

Բայց Արորակ քաղաքից գիշերով եկան վեց երեցներ, գողացան սուրբ վկայի մարմինը, իսկ նրա գլուխը չգտան, սկսեցին դառնապես լալ: Այնժամ մի ագուավ նստեց ծառի վրա, ուժգին ճչաց, և երեցները գնացին այնտեղ, գտան նրա սուրբ գլուխը ծառի ճյուղերի մեջ և անճառ խնդուլթյամբ լցված ամփոփեցին երանելիի մյուս նշխարների հետ»: Այս լսելով երանելի Եվստուատիոսը արտասուքի վտակներ հոսեցրեց աչքերից, ուժգին պաղատանքով և աներկբա հույսով դիմեց Տեր Աստծուն, որ ըստ այդ օրինակի կատարվի և իրենց նահատակությունը ընթացքը, և ասաց սուրբ Ովրեստեսին. «Շտապենք գնալ, եղբայր իմ, որպեսզի մենք ևս արժանանանք հասնելու նրա վայելքին մշտնջենավոր Լույսի մեջ»:

Սուրբ վկաներին Սեբաստիա մայրաքաղաքը բերելուց հինգ օր անց Լուսիաս դուքսի հրովարտակը մատուցեցին Ագրիկոլայոս հեգեմոնին, որ հրամայեց ընթերցել և հրովարտակի խոսքը լսելուց հետո հրաման տվեց զինվորներին՝ բանտ նետել նրանց և ոտքերը ամրացնել կոճղով և զգուշությունով պահել: Մյուս օրը՝ արևածագին հրամայեց թատրոն պատրաստել քաղաքի մեջ, նստեց բեմի վրա, շուրջը ունենալով անթիվ բազմություն: Ապա հրամայեց սրբերին բերել հրապարակի առաջ: Եվ մոնետիկը դատավորի հրամանով աղաղակում էր ի լուր ամենքի. «Նամակը, որ առաքվեց պարհացիների դուքս Լուսիասից նորից կընթերցվի ի լուր ամբողջ ատյանի, և դրանից հայտնի կլինեն վերագրվող ամբաստանությունները, որ վերաբերում են Եվստուատիոսին»: Եվ երբ ատյանում կարդացին նամակը, գլուխը շարժեց անօրեն Ագրիկոլայոսը՝ զարմացած Եվստուատիոսի իմաստությունով և հավատի պնդությունով և նրա արի դիմակայությունով:

Այնժամ սրբին ասաց. «Ո՛վ Եվստուատիոս, քեզ չթվա, որ այստեղ տանջանքներից դատաստանը ինձնից [այնպես է], ինչպես որ տեսար այնտեղ և կրեցիր մեծ դուքս Լուսիասից: Առավել դժնդակ և չար տանջանք կպատճառեմ քեզ, քո անձը նաև կմատնեմ մահվան: Արդ, լսի՛ր ինձ տանջանքներից առաջ. խոնարհվելով երկրպագիր մեր մեծ աստվածներին և

Հպատակվիր ինքնակալի հրամաններին, որպեսզի նրանցից պարզեաներ և պատիվներ ստանաս»: Սուրբ Եվստուատիոսը պատասխանեց դատավորին. «Ո՛վ իմաստունդ և խոհեմագուլնդ իշխաններից, թագավորների օրենքը կարո՞ղ է, թե՛ անկարող»: Ազրիկողայոսն ասաց. «Այո՛, կարող է, քանի որ պահում են նրանք»: Սուրբ Եվստուատիոսն ասաց. «Ամեն ինչից առաջ, պետք է գիտենալ, թե քեզ մո՞տ և նրանց [մո՞տ] ովքեր քեզ հետ են, թե միայն գրքերում է գրված»: Ազրիկողայոսն ասաց. «Ինչի մասին ես այդպես խոսում, ո՛վ անմաքուր գլուխ. ով է օրենքներին հակառակ գործել և համարձակվել անիրավաբար և հանդգնություն մարհել»: Երիցս երանելին համարձակ ասաց. «Ո՛վ դատավոր, Սեբաստիոս կայսեր օրենքը այսպիսի [խոսք] է պարունակում. «Բռնությունը, ասում է, մերժվի ամեն ինչից՝ և՛ գործերից, և՛ խոսքերից, իսկ հավանությունը լինի ամեն ինչի մեջ, որովհետև նա, որ իշխանություն կլինի, պարտավոր է իրեն հրամայվածը կատարել՝ կամ հավանեցնել, կամ հավանել»: Եվ դարձյալ սրանից փոքր-ինչ հետո ասում է այսպես. «Քայց իշխանին, ասում է, հրամայում ենք երկյուղը հեզություն խառնել, երբ ինքը դատում է, որպեսզի ոմանք երկյուղից թշվառություն չանեն, և ոչ հեզության համար ոմանց նկատմամբ ծուլություն ցուցաբերեն»: Սրանք, որ ասացի, ո՛վ դատավոր, այդպես գրված է, թե ոչ»: Ազրիկողայոսն ասաց. «Այո՛»: Սուրբ Եվստուատիոսն ասաց. «Արդ, աղաչում եմ քեզ, որ կարգավորության սահմանված այս օրենքը նաև իմ նկատմամբ կիրառվի»: Ազրիկողայոսն ասաց. «Քո և բոլորի նկատմամբ հաստատուն և անշարժ և մեծ երկյուղով պետք է պահել»: Եվ սուրբ Եվստուատիոսն ասաց. «Ուրեմն խնդրում եմ քեզ, ո՛վ իմաստունդ դատավորներից, քո երկյուղին հեզություն խառնիր, ըստ օրենքի, ինչպես որ դու ավելի հմուտ ես, քան բազում մարդիկ, նախապես հավանել կամ հավանեցնել ըստ օրենքի դատելով, ապա եթե այդպես չէ, առանց խոսքի և քննության և երկարաձգման իսկույն պատուհասիր, սպանիր, արա՛ ինչ որ կամենում ես»: Ազրիկողայոսն ասաց. «Ինչ որ ախորժում ես՝ ասա համարձակորեն

և համաձայնիր ենթարկվել արդար դատաստանիս»: Սուրբ Եվստուատիոսը հարցրեց. «Ո՛վ դատավոր, ինձ հրամայում ես ո՞ւմ երկրպագել՝ աստվածների՞ն, թե Աստծուն»: Ազրիկողայոսն ասաց. «Աստծուն և աստվածներին»: Սուրբ Եվստուատիոսն ասաց. «Մեծագույններին, թե փոքրերին»: Ազրիկողայոսն ասաց. «Նախ Արամազդին, Ապոլոնին և ապա Պիսիդոսին»: Սուրբ Եվստուատիոսն ասաց. «Ո՞ր մարգարեներն ու քարոզիչներն են հավանել, կամ ո՞ր իմաստուններին եք գտել նրանց երկրպագելիս»: Ազրիկողայոսն ասաց. «Պղատոնին, Արիստոտելին, Հոմերոսին և Հեմեսին և այլ իմաստունների նրանց հետ միասին, որոնց եթե հմտացած լինեիր՝ կպաշտեիր նրանց հիշատակը, ո՛վ Եվստուատիոս»:

Սուրբն ասաց. «Դրանցից ոչ մեկին անտեղյակ չեմ, այլ բոլորին հմտացել եմ իմ մանկությունից, սովորել եմ և ամբողջ երաժշտական արվեստը, հմուտ եմ աստղաբաշխության և ոչ հեռու երկրաչափական գծերից, իսկ թվականության վարժումը մեր օրենքն է: Առաքինասեր հոր եմ հանդիպել, որ հմուտ էր արհեստագյուտ մասանց և գիտություններին: Եվ եթե կուզես՝ սկսեմք նախ Պղատոնից»: Ազրիկողայոսն ասաց. «Գիտեմք Պղատոնի և Տիմեոսի տրամախոսությունը. Պյուրիոսից իջավ աղոթք մատուցելու աստվածներին. սա քեզ իմաստո՞ւն է թվում, թե ոչ»: Սուրբ Եվստուատիոսն ասաց. «Պղատոնը խիստ բամբասում է քո Արամազդ աստծուն, որովհետև երկրորդ գրքում այսպես է գրում. «Քանի որ Աստված բարի է, թերևս բոլոր բարիքների պատճառ և շատերին, այսինքն չարիքին անպատճառելի. իսկ բարիքին այլ ոչ մեկին պատճառ չենք համարում, միայն Աստծուն: Պետք չէ՞ ընդունել ո՛չ Հոմերոսի և ո՛չ այլ քերթողների, որոնք ասում են, թե Ջևսը բարիքի ու չարիքի պատճառ է լինում և երդման և համբույրի շփոթությունը նրանից է եղել՝ որ Աքայեցիների դեմ գործում էր Պանտորոսը: Սա չէ՞ Ջևսը, ինչպես ասում է քերթողը, Աթենասի հետ բնակություն մտնելով, այլևս չենք գովի և աստվածների մաքառումը, դատաստանը, որ նույն քերթողը ասում է Թիմիդոսի և Արամազդի ձեռքով

եղած, որին մյուս աստված ես կարծում, և Եսքեղոսն ասում է. «Աստված իսկ բանավոր մարդկանց պատճառ է, երբ հողեղեններին կամենում է չարացնել: Իսկ Պղատոնը չի կամենում բնակիչներից ոչ մեկի վարմունքը, ո՛չ համբակինը, և ո՛չ ծեղինը՝ մի բան ասել կամ լսել նրա մասին, որովհետև Աստծու օրենք չէ՝ լինել հոր անարգող, ինչպեսև Զևսը, որ այժմ ձեզնից պաշտված է՝ իր հայր Կրոնոսին երկնքից իջեցրեց երկիր և խորտակեց նրան և կարապ դարձրեց, որ այնպիսի սնտոի ապիրատ խաբեությամբ ապականի կնոջը, որի համար, հիրավի, Պղատոնը նախանձով անարգում է քո աստված Զևսին, նկատի ունենալով ողբերով և կնոջական մոլորությամբ քո Զևս աստծու բռնվելը: Ո՛վ դատավոր, ողբա Ակեգրովին մահը. դա այդպես չէ՞: Եվ կամ դրանք գրված չեն՞ ձեր առասպելական մատյաններում: Ապա թե ինքը Պղատոնը, ձեր իմաստության շարադրողը հրաժարվեց ըստ այնմ շարժվել, որ երկնքի և երկրի հանգամանքների որպիսությունը քննեց, որ հասել էր բոլոր արհեստների համադրմանը, բոլոր թշվառությունների առիթ է սրան համարում և բոլորից սրա վրա կշտամբանք է նետում վատթարագույն պղծությամբ, մեջ է բերում սրա բղջխոհական անիրավությունները, տիրող անդեղային չարահոգ դառնությունը, անհագ վավաշտությունը, ապականությամբ հեղեղելը, որև հրամայում են՝ մարդկանցից ոչ մեկը, որ առաքինության փուլթ ունենա՝ չնմանվի նրա ախտերին, այլ մանավանդ մեռելությունը բացառի և նմանվի Աստծուն՝ ըստ մարդկանց կարողության: Եվ ինչու կամ ինչպես դուք ստորագասվում եք նրանց, որ գործով և անհանձար մտքով բռնված եղան, և այսօր մեզ հարկադրում եք երկրպագել ստահոգ ոչինչներին և ապականագործ մանկամոլներին և դիվանվեր անշունչ պատկերներին»:

Ագրիկոդայոսն ասաց. «Իմ մեծ մարդասիրության բերումով ներում եմ քո հանդգնագույն շաղակրատանքը: Այժմ դու ասա, ո՞վ է Նա, որ պաշտում ես Աստված անվանելով և ինչպիսին է Նա, և ինչպես մարդ լինել ձևացրեց կնոջից և մահվան դատաստանի եկավ և խաչվեց հրեաների ազգից և ձեզ-

նից Աստված ճանաչվեց»: Սուրբ Եվստոատիոսն ասաց. «Եթե հրամայես, անձանձիր լսես, քննությամբ հարցնես՝ այնժամ կարգով կասեմ ինչ որ խնդրում ես, եթե ժամանակը ների»:

Ագրիկոդայոսն ասաց. «Երկրորդ անգամ ներողություն խնդրելով ինձնից՝ ժամանակին և տարածամ, ասա՛ ինչ ես ախորժում»: Սուրբ Եվստոատիոսն ասաց. «Պարտուպատշաճ է, որ բարիք խորհող ամեն ոք Աստծուն արդար համարի, անհասանելի, անքննելի, անսահման, անայլայլելի, անպատմելի, ամենայն էական զորության վերագույն ստացած աստվածային առավելությունը իրե՞նն է, թե ոչ»:

Ագրիկոդայոսն ասաց. «Կարծեմ այդպես ճիշտ է, ինչպես դու ես ասում»: Սուրբ Եվստոատիոսն ասաց. «Այս բոլորի վրա ավելացնենք Նրա անապական լինելը կամ ոչ»: Ագրիկոդայոսն ասաց. «Առանց որևէ պատճառի»: Սուրբ Եվստոատիոսն ասաց. «Հապա ի՞նչպես է, որ ուրիշներին «աստված է» կասենք. և այնպիսի ապականության ներքո են նրանք՝ կասենք հաստատելով, թեպետև փոքր-ինչ բարեբախտության են հասել, նրանց աստվածներ չես համարում: Որովհետև Աստված անապական է, ինչպես ասացինք նախապես, որը և արժանի է, որ ամեն մարդ հավատա և երկրպագի»: Ագրիկոդայոսն ասաց. «Ճշմարիտ այդ այդպես է»: Սուրբ Եվստոատիոսն ասաց. «Ինչու քո բազում աստվածները այս անմահ և անարատ առավելությունից ներքև են բոլորովին, ինչպեսև դուք եք ասում, և հավասարագոր են իրար, որոնք հեռացել են գոյակցությունից: Եթե այդպես է՝ ովքեր ի մի աստվածություն են, և զորությամբ ու գործերով հավասարված, չեն կոչվի մեծագույն և նվազ աստվածներ: Իսկ Աստված անբաղդատելի զորությամբ միացած և միակամ աստվածություն ունենալով՝ [երեքը] չեն մտածվում, թե մեկը երկնքում է բնակվում, մեկը ծովում, մյուսը սանդարամետում: Որովհետև ովքեր հանդգնում են բարբառել, վրիպում են կյանքի հույսից և օտարացած այն անբաղդատելի իսկությունից, որ կա և մնում է հավիտյան, որը և քո մեծ հրաշալի վարդապետ Պղատովնը տրամադրում է իր տրամախոսական մատ-

յանում և ասում այսպես. «Գերակատար գուլթը, արարչական գորութիւնը բոլորիս է տածում հավասարազոր բնութիւնը և վերելում լինելով ամեն ինչով խնամում է և ամեն ինչ տեսնում, իսկ ինքը ոչ մեկից չի տեսնվում, այլ անցյալ կա վեր բարձրանալով իր առանձին բնութիւնը: Իսկ Հերմեսը նրան մեծ, շարժող, տածող և անեղ կամեցավ ասել: Եվրիպիդեսը՝ անվայր, իսկ Հոսիոսը՝ բարերար և անկարոտ: Արիտոտելեսը հետևում էր Պղատոնական խոսքերին: Արդ, եթե ձեր իմաստունները մեծ աստծու աներևույթ գորութիւնը ակնարկեցին և ասացին, որ նա ամեն ինչի արարիչն է, ինչու դուք իմաստութիւն մեջ ավելի անիմաստ եղաք, որ ձեր իմաստունները պախարակում են և դիպուկ հանդիմանում են, համարձակվում եք նրանց աստվածներ ասել և հանդգնում եք համարել երկնքի ու երկրի ստեղծող, իսկ Արամազդին ասում եք աստծու հայր, այն որ սպանութիւնն ու ապականութիւնը, դիվահար այլակերպութիւնն ու ամեն չար գիժուկիւն ակնարկը հիշատակ է թողել իրենից հետո: Հրկիզված ընկած է Կրետես կղզում՝ ժառանգելով ապականութիւն վախճան, և վայելչութիւնից զրկված է մնացել: Պիսիդոնին ասում եք ջրի արարիչ և ծովի գոյացուցիչ, դիվաբնակ Ապոդոնին արեգակին հանգունակ ու հավասար, և չեք ամաչում, այլ Դիոնիսիոսին, որին արեցութիւն մայր եք անվանում, երկրպագում եք նրան, որ ցանկութիւն ակտի նյութ է, իսկ Հեփեստոսին ասում եք հրո պարգևիչ և հավատում եք առասպելական և սնոտի պատմութիւններին: Բաց եմ թողնում բոլոր բարբառանքները, չարաղև խելացնոր մարդկանց զանազան չարիքների գլուտները, որոնք պետք չէ, որ մարդկանցից մեկը հիշի կամ ճառի պարզամիտ լսողների առջև: Արդ, ո՛վ դատավոր, եթե կուզես լսել իմ ճշմարիտ Աստծու պատմութիւնը՝ կենսաբեր տնօրինութիւնը, կարծեմ թե իսկույն վրեժխնդիր կլինես նրան, և իսկույն արագորեն կխորտակես քո աստվածների դիվածույլ արձանները և ազատվելով վիշապի խավարային ժանիքներից, կընկնես երկնքի Արքայի Ավետարանի կենսաբեր ուղկանը»:

Այս ամենն ասաց երանելի Եվստուատիոսը դատավորի և ամբողջ հրապարակի առաջ և այս առթիվ Ագրիկոդայոս դատավորը չկարողացավ ամենևին պատասխան տալ սրբին, երկար ժամանակ լուռ էր, և [վերջապես] ասաց. «Ո՛վ Եվստուատիոս, անհարմար խոսքերիդ բոլոր հիմարութիւն շողակրատանքները, որ սովորել ես մանկութիւնից և չես կարողացել իմանալ երբեք իմաստունների խրատների օգտակարութիւնը, այլ անպատշաճ և քեզ համար վնասակարն ես սովորել, որ համարձակվեցիր կրկնել իմ առջև՝ ցանկանալով մի փոքր մեզ քաշել քո կրոնի կողմը և առանց իմանալու հասկացրիր, որ քո բերանի բոլոր խոսքերը առասպել են երևում իմ աչքերին: Արդ, այսուհետև քեզ չի ների մեր առջանը և ինքնակալի հրամանը՝ խոսել քո Աստծու մասին, որ խոստացար ճառել, որովհետև չենք թույլ տա մեր մեծերի և աստվածայնագույն թագավորների առաքինութիւնները բամբասել, այլ՝ ամեն ինչով հպատակ լինել նրանց: Որի համար թողնելով քո բոլոր վրպասանական պատմութիւնները և հրաժարվելով ընդդիմաբանութիւններիցդ, ընկիր, երկրպագիր և ինքնակալների աստվածներին զոհ մատուցիր, ապա թե ոչ, առավել սաստիկ տանջանքների կենթարկվես, որ բնավ չես տեսել»:

Սուրբ Եվստուատիոսն ասաց. «Ինչո՞ւ վայրապար և անիմաստ չարչարանք ես հասցնում մեզ խոսքով և ավելի շուտ չես գործադրում ասածներդ»: Այնժամ անօրեն Ագրիկոդայոսը հրամայեց բերել երկաթե մահիճներ և տակը շատ կրակ վառել տվեց՝ մինչև մահճի շիկանալը, երբ փայլատակող ճառագայթներ էին ելնում նրանից, հրամայեց սուրբ Ուրբեստեսին առաջ բերել և հրաչեկ մահճի վրա պառկեցնել: Դատավորն ասաց սուրբ Եվստուատիոսին. «Ո՛վ Եվստուատիոս, պատուհասը, որ կա քեզ համար՝ այս բանը տեսնելով նախապես մտածիր քեզ սպառնացող տանջանքների մասին»:

Այնժամ Ագրիկոդայոսի անօրեն սպասավորները Ուրբեստեսին տարան հրաչեկ մահճի մոտ: Երբ սուրբը տեսավ պատրաստված տանջարանը, զարհուրեց և վախեցավ շատ, նրա երեսն սկսեց այլագունել և նայելով Եվստուատիոս սրբին՝

ասաց նրան. «Աղոթիր ինձ համար, տե՛ր Եվստուատիոս, որովհետև իմ մտքերն ալեկոծվում են»: Սուրբ Եվստուատիոսը պատասխանեց նրան. «Մի՛ երկնչիր և մի՛ վրդովվիր, և մի՛ վախենա, եղբա՛յր իմ Ովրեստես, որովհետև տեսողությունը միայն ունի երկյուղ, այլ զգայությունը ոչինչ չի լինի քեզ, եթե հավատով գնաս նահատակություն: Որովհետև մեզ հետ է մեր Տեր Աստուծո օգնությունը, փրկելու մեզ ժամանակավոր այս նեղությունից: Արդ, մի՛ երկնչիր, այլ հիշիր Օգսենտիոսի և այլ սրբերի նահատակությունը, և չես թվա վերջին և վատթարագույն, որովհետև երևելի բաները ժամանակավոր են, իսկ Հանդերձյալները հավիտենական, որ պատրաստված կա և մնում է անապական գանձ Տիրոջից՝ իրեն հուսացողներին»:

Մինչդեռ այս բաներն ասում էր սուրբ Եվստուատիոսը սուրբ Ովրեստեսին, նրանց շուրջը անթիվ բազմություն, նաև Սեբաստիա քաղաքի այրերը՝ կանանցով և որդիներով հավաքվել էին սրբերի տեսարանին: Եվ դիզվում, կուտակվում էին իրար վրա, որ թիվ չկար: Եվ սատանայի սպասավորները առավել ևս բորբոքում էին կրակը մահճի ներքո: Այնժամ Քրիստոսի երանելի վկան մոտեցավ հրաշեկ մահճին և սկսեց աղոթել այսպես. «Աստված հավիտենական, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, ապավեն և հույս բոլորի, ովքեր նեղության մեջ դիմում են Քեզ. գթա՛ իմ անարժանությանը և հաստատուն պահիր ճշմարտության հավատին, որ Քեզ է [պատկանում]: Իմ Տեր Աստված, համբերություն տուր տկարացած իմ մարմնին, Դու չես արհամարհում նրանց, որ հուսացել են Քեզ, զորացրու իմ միտքը, որ Քո անունը փառավորվի հավիտյանս»: Ասելով ամբողջը՝ երանելի վկան Եվստուատիոսի հետ խաչակնքեց ինքնիրեն և իսկույն, առանց վախենալու, եկավ կանգնեց հրաշեկ մահճի առաջ, ամբողջ մարմնով մեկնվեց հրահոսան գործիքի վրա, բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Տեր Հիսուս, Քո ձեռքն եմ ավանդում իմ հոգին»: Եվ նույն պահին ավանդեց հոգին:

Այս ամենից հետո դատավորը հրամայեց սուրբ Եվստու-

ատիոսին կապանքով տանել բանտ: Եվ նա, այնտեղ մենակ մնալով, իր մոտ կանչեց ծառային, որ իր հետ էր, և ասաց. «Ուրդյա՛կ իմ, գնա՛ և շտապ այստեղ բեր թուղթ, որ գրեմ իմ հրաժարական ելքի կտակը, որովհետև վաղը ես եմ կանգնելու Աստուծու առաջ»: Երբ հրամայվածը կատարվեց, երանելին գրեց իր վրա հասած նեղությունների ամբողջ պատմությունը և պատվիրեց, որ իրենց ոսկորների սուրբ նշխարները տանեն իրենց հայրենի բնակավայրը՝ Արորակ քաղաքը և դնեն այնտեղ, որ կոչվում է Բոսոսա, հանդերձ մյուսներով, որ նրա հետ նահատակվեցին՝ Ովրեստիոսի, Մարգարիոսի, Օգսենտիոսի, Եվգենիոսի, քանի որ այս սուրբ վկաները երդվեցրին սուրբ Եվստուատիոսին, որ իրենց վախճանից հետո նրա մոտ թաղվեն իրենց մարմինները: Եվ իր հայրենի կալվածները, որ Արորակում էին, հրամայեց տալ իրենց սուրբ վկայարանի պետքերի համար: Իսկ այլ անասունները, հանդերձ և ինչքը երկուսի բաժանելով՝ մեկը բաշխել աղքատներին, իսկ մյուսը շնորհել իր քույրերին և ծառաներին, իսկ աղախիներին ազատել՝ թողալով հանդերձ: Այսպես կտակ գրելով՝ այն օրը մնաց բանտում:

Իսկ Սեբաստիա քաղաքի եպիսկոպոսը այն ժամանակ թաքնված էր չարաշուկ և դառն տանջանքների պատճառով: Գիշերով ծածուկ եկավ բանտ, կաշառք տալով պահապաններին, աղաչեց, որ հանդիպի սուրբ Եվստուատիոսին, քանի որ երանելի եպիսկոպոսը լսել էր նրա իմաստություն, նրա համբերատար դիմացկունության և չարչարանքի մասին, և թե ինչպես ամոթի մատնեց անօրինության իշխանին իր աստվածներով: Եվ, մտնելով բանտ, տեսավ սուրբ վկային՝ կոճղին ամրացված, ընկավ նրա պարանոցին, լացեց դառնապես և սկսեց համբուրել նրա ոտքերի ու ձեռքերի շղթաները: Եվ ասաց նրան սուրբ եպիսկոպոսը. «Երանելի ես դու, որդյա՛կ իմ Եվստուատիոս, որ մարդասեր Աստուծու ստացար այդպիսի դիմակայման համբերություն և անպարտելի ախոյան եղար թշնամու ընդդիմամարտ զորությունը և բարձրացրիր քո արդարության արդյունքը, միայն թե անսխալապես հաս-

նես վերին հաղթանակի նպատակին, երկնավոր Հոր կոչումին, հաղորդակից լինելու Նրա Միածնի չարչարանքներին: Արդ, աղաչում եմ քեզ, որդյա՛կ իմ, հիշիր ինձ Միածնի աթոռի առջև, երբ հանդիպես Նրան փառքով, չմոռանաս անարժանությանս, այլ հայցիր, որ ես ողորմության մաս գտնեմ, որ փարատվի մեզը և հալածանքի խավարը, որ տարածված է մեր շուրջը. թող մեզ վրա հարձակվողների սրտերում ծագի լույսը աստվածգիտության, աշխարհին շնորհելով խաղաղություն, և բարձրանա սուրբ եկեղեցու եղջյուրը»: Սուրբ Եվստուատիոսը պատասխանեց և ասաց եպիսկոպոսին. «Տե՛ր իմ և հայր հոգևոր, և Քրիստոսի հոտի վերատեսուչ, թող այդպես չխորհի քո սրբությունը, քանի որ ես ևս քո օգնականության կարիքն ունեմ, որ հուղարկավոր լինես ինձ աղոթքով, որպեսզի արժանավոր լինեմ հասնելու լույսից սրբերի ժառանգության մասին»: Այս ասելուց հետո նստեցին բանտի մեջ: Այնժամ սուրբ Եվստուատիոսն ասաց եպիսկոպոսին. «Քանի որ վաղը երրորդ ժամին ելնելու եմ այս մարմնից և մտնելու առ Աստված, որին կարոտել եմ, քանի որ ինձ երեւացած հրեշտակից իմացա ինձ սպասվող ճանապարհը, արդ, վերցրու կտակս և ընթերցիր»: Երբ կարդաց, երանելին եպիսկոպոսին խնդրեց ստորագրել թուղթը նրա հետ եղած կղերականների դասի հետ, որպեսզի հաստատուն և անփոփոխ լինի: Եվ երգվեցրեց եպիսկոպոսին, որպեսզի նա տանի իր և սուրբ Ուրեստիոսի նշխարները իրենց գավառը: Եվ ինչպես հրամայված էր, մյուս ընկերների հետ միասին թաղի նույն տեղում, որ հիշատակված է իր կտակի մեջ: Եվ եպիսկոպոսն ասաց. «Բարիքի վարձք կտանաս Արարչից հանդերձյալ հավիտենին բոլոր սրբերի հետ»: Եվ եպիսկոպոսը խոստացավ նրա բոլոր պատվիրածները կատարել: Ապա երանելի վկան նրան աղաչեց, որ նրանից ստանա վերջին հաղորդություն, քանի որ ասում էր. «Բռնված եմ կապանքներով, հաղորդված չեմ Որդի Աստծու կենարար մարմնից ու արյունից»:

Այնուհետև երկյուղած և պատշաճավոր պաշտոնյաները բերին սրբության խորհուրդը և կատարյալ զենման արյունը,

սուրբ Եվստուատիոսը մոտեցավ երանելի եպիսկոպոսին, ընդունեց նրանից երկնային մանանան, և հանկարծակի բանտում ծագեց ահեղ փայլատակում, և շենքը լցվեց անսովեր լույսով, և անուշուրթյան հոտ բուրեց, և նրանց հետ՝ հրեշտակների երգերը: Եվ ահա այն անճառ Լույսից լսելի եղավ ձայն, որ ասաց. «Ո՛վ Եվստուատիոս, իմ քա՛ջ զինվոր, լավ աշխատեցիր, այսուհետև ընդունիր պսակը, որ պատրաստված է քեզ ինձնից»: Երբ լսեցին երանելի և երկնավոր բարբառը՝ բոլորն ընկան իրենց երեսների վրա և անճառելի խնդրությամբ լցված երկրպագում էին Աստծուն, փառք առաքելով բարձունքները մեր փրկիչ Հիսուս Քրիստոսին, որ կամեցավ զորացնել իր երանելի վկային:

Արդ, ամբողջ գիշերը աղոթեց Աստծուն սուրբ վկայի համար, եպիսկոպոսով հանդերձ. և երբ առավոտյան այգը բացվեց, եպիսկոպոսն ընկավ սուրբ վկայի առաջ, ողջունեց նրա սուրբ և աստվածակիր մարմնին և ծունկի եկած Աստծու առաջ, նրա հետ խնդրում էր այցելել և փրկել իր ժողովրդին, և դադարեցնել սուրբ եկեղեցու հալածանքների խռովությունը: Իսկ սուրբ վկան՝ բռնելով եպիսկոպոսի ձեռքը դրեց իր աչքերի վրա և համբուրեց ասելով. «Աղոթիր ինձ համար, Քրիստոսի կենդանի վկա և չմոռանաս իմ կտակում գրվածը»: Սրանից հետո եպիսկոպոսը ելավ, խաչակնքեց նրան և ասաց. «Տե՛ր Աստծու խաղաղությունը լինի քեզ հետ», և անմիջապես դուրս ելավ:

Իսկ Ագրիկողայոս դատավորը առավոտյան նստեց բեմին և հրամայեց առաջ բերել սուրբ Եվստուատիոսին: Եվ երբ եկավ, նրան ամբոխից մի կողմ տարավ և ասաց. «Եվստուատիո՛ս, ես երգվել եմ աստվածների փրկությունից, և իմ վկան են նրանց վերատեսչությունները, որ շատ տրտմած եմ քեզ համար, որ հանձն չառար ենթարկվել ինքնակալի հրամաններին: Արդ, հանդիսական ատյանի համար, արտաքնապես միայն, որ ռամիկները տեսնեն, խոնարհվելով երկրպագիր աստվածներին, բայց քո սրտում հաստատ պահիր քո հավատն առ Աստված և երկրպագիր նրան: Որովհետև եթե նա

Աստված է, սրտիդ գաղտնիքը կտեսնի, և երանելի կլինես այս աշխարհում, և այդպես քո հասակի գեղեցկությունը մի՛ կործանիր չարաչար, որ այդքան իմաստություն ունենալով գնաս մահապարտների կորստյան: Եվ թե հնար լիներ թեթևացնելու դատարանի վճիռը քեզ վրա, այդ ևս չէի խնդրի քեզնից: Բայց իմ սիրտը խանդաղատում է քեզ համար, և ճմլվում են երիկամներս, շատ ամոսոսում և գլխում եմ քեզ, ամբողջ գիշերս ցավազնորեն տրտմեցի, այնքան, որ և քունը հատավ իմ աչքերից»: Սուրբ Եվստուատիոսն ասաց. «Ո՛վ դատավոր, մի՛ տրտմիր և մի՛ տագնապիր ինձ համար, և քո միտքը պարապ խորհրդով մի՛ վրդովիր, որովհետև երբեք չեմ մտածել լսել քո կորստական խրատը, այլ ամեն ինչում հաստատուն և անշարժ հավատ ունեմ մեր Տեր Հիսուս Քրիստոսի նկատմամբ և քո տանջարանները ես ուրախություն եմ համարել, և եթե չես հավատում մեկ անգամ ևս սկսիր չարչարել ինչպես ուզում ես»:

Այնժամ Ագրիկոդայոսը ամոսոսաց վկային, երկար ժամանակ ծածկել էր երեսը, որպեսզի ամբոխը, որ շուրջն էր, չիմանար նրա խանդաղատանքը արդարի հանդեպ. կական բարձրացնելով ողբաձայն լալիս էր և հելլենացիների ամբողջ բազմությունը քաղաքացիներով հանդերձ: Մորմոքում էին այնպիսի իմաստուն այրի համար: Այնժամ սուրբ վկան բարձրաձայն աղաղակով սկսեց խոսել ատյանի առջև և ասաց. «Ո՛վ Ագրիկոդայոս, ինչու ես հապաղում և իսկույն չես կատարում քո թագավորների հրամանը և քո հայր սատանայի հաճույքը: Քանզի իմ վրա կուտակում է այս փորձությունները, որպեսզի այդպիսի խաբուսիկ մեքենայություններով ինձ զրկի առաջիկա երանություններից: Բայց ես ծառան եմ բարձրյալ Աստծու՝ երևելի ու աներևույթ արարածների ստեղծողի և հակառակվում եմ ձեր ինքնակալի անաստված հրամանին, արհամարհում և հրաժարվում եմ ձեր աստվածների չարաչար պաշտամունքից:

Այնուհետև Ագրիկոդայոս դատավորը տեսավ Քրիստոսի անհաղթ վկայի անփոփոխելի և հաստատուն միտքը և

մահավճիռ հանեց այսպես. «Եվստուատիոսին՝ զինվորական գնդերի իմաստուն և երևելի այրին, որ իշխանական փառքով պատվվել է ինքնակալներից, և անարգելով մեր անմահ աստվածների պաշտամունքը, արհամարհելով ինքնակալների հրամանն ու կրոնը, նախընտրել է մահ սնոտի հույսի համար, [որ կապված է] խաչյալ հրեա ոմն Հիսուսի հետ, որ Գալիլիացոց Նազարեթից էր: Որի համար Հռոմայեցիների օրենքը հրամայեց հրով կենդանակեզ անել նրա չարաբաստ և անբարեսեր մարմինը»:

Երբ ընթերցեցին սա բազմություն առաջ՝ իսկույն հնոցը պատրաստվեց և ամբողջ ատյանը և քաղաքի մարդիկ գնում էին սրբի ետևից՝ տեսնելու նրա նահատակություն հանդեսը: Իսկ երանելին հանեց շորերը իրենից, որոնցով ծածկվել էր, և սփածանելիով կանգնեց հնոցի մոտ և աղոթեց այսպես. «Կենդանի Աստծու Որդի, օրհնյալ ամեն ինչում, ահավոր Հոր անքնին Մնունդ, որ չի տկարանա քեզնից ոչինչ, գոհանում եմ քեզնից, որ անարժանիս արժանի համարեցիր քո անապական բարություններին. մեծարելով մեծարում եմ քեզ, ամենակալ Տեր, մեծացիր, Տեր Հիսուս, իմ մարմնում և հոգում, որովհետև նայեցիր իմ խոնարհությունը և ինձ չմատնեցիր իմ նեղիչների ձեռքը, և ապրեցրիր ինձ Քո ողորմությամբ և փրկեցիր անձս վշտերից, և ծածկեցիր ինձ Քո թևերի հովանու տակ. թող ինձ վրա գա Քո գթությունը, Տե՛ր, զի հույժ աղքատացա, խռովեց անձն իմ, երբ ելավ ոգիս մարմնից. երբեք հակառակորդի չար խորհուրդները չտիրեն ինձ վրա և արգելեն ինձ արտաքին խավարից, իմ հանցանքների համար այս կյանքում: Ողորմիր ինձ, Տե՛ր, և մի՛ մատնիր իմ անձը դժոխքին, մի՛ տուր ինձ տեսնել բանասրկուի խարդավանող երեսը, այլ ինձ թող ընդունեն Քո հրեշտակները՝ զվարթացած և լուսավորված: Տե՛ր, տո՛ւր Քո սուրբ անվան փառքը և Քո զորությունը ապրեցրու ինձ, և ինձ նստեցրու աջ կողմը Քո աստվածային բեմին՝ ինձ դատելիս, ինձ չմոտենա այս աշխարհիս իշխանի ձեռքը՝ գցելու ինձ անդունդի խորքը, քանի որ մարմնավոր չարչարանքներս, որ հասան ինձ վրա՝

ուերախուսթյունն և ցնծութիւնն եղան Քո ծառայիս: Ողորմի՛ր ինձ, Տե՛ր Աստված, այս կյանքում մեղքով շաղախված իմ անձին և մաքուր ընդունիր, որովհետև իմ լինելը Քեզնով է, իսկ մեռնելը՝ Քո փառավորյալ անվան, անապական գանձերի և անկողողպտելի հարստութեան համար: Ծննդարտութեան Աստված և ողորմութեան Հայր, բարութեան, գորութեան և իմաստութեան Հոգի, գոհանում եմ Քեզնով, խաղաղութեան Նավահանգիստ, որ ծփում եմ հավերժի պատրանքով այս կյանքի մեղքի ծովի անդնդապտույտ հորձանքում, Քեզ եմ դիմում, խնդրում եմ Քեզանից, համբերութեամբն տուր նեղութեանս մեջ, որ հաղթեմ բանասարկուին, քանի որ Դու ես ճշմարիտ Աստվածը, որ կյանքի բանը տարածեցիր աշխարհում և հալածեցիր անօրինութեան մրրիկը և Քո արդարութիւնը ծագեցրիր ինձ վրա, որ միշտ փրկում ես քեզ հուսացողներին. տո՛ւր ինձ արժանանալ հավիտենական կյանքին, արժանավորապես նահատակվելով Քո առջև: Եվ ովքեր հավատով կատարեն մեր հիշատակը և հիշեն մեզ նեղութեան պահին դիմելով Քեզ, մեր Տե՛ր Աստված, ի բարեխոսութիւնն իրենց անձանց, դու որպէս բարերար Աստված և մարդասեր, լսես և փրկես նրանց բոլոր նեղութիւններից և նրանց հոգու ու մարմնի վտանգներից, և մի՛ թող Քո ձեռքից Քո Սուրբ Եկեղեցին: Ընդունիր խաղաղութեամբ և իմ հոգին Քո բոլոր սրբերի մեջ, և Քեզ փառք հավիտյանս. ամեն»:

Եվ երբ ասաց այս ամենը՝ ձայն եղավ երկնքից ասելով. «Կլինեն քո խնդրածները»: Եվ իսկույն ինքնիրեն կնքեց սուրբ Խաչի նշանով և մտավ Հնոցի մեջ, և առագաստած և բորբոքված հուրը շրջապատեց երանելի վկայի մարմինը, և բոցը բարձրանալով երկինք էր ելնում, և այնպէս կենդանախարույկ լինելով հրի մեջ՝ Քրիստոսի վկան օրհնութեամբ հանդերձ ավանդեց հոգին: Եվ ում Տերը արժանի արեց՝ տեսան, որ սրբի հոգին իբրև փայլատակող ճառագայթ փայլելով ելնում էր վեր:

Վկայի վախճանից հետո անօրեն Ագրիկողայոսը ելավ գնաց իր ապարանքը և մեծ խրախճանք արեց՝ ընթրիք էր

տալիս իր բարեկամներին, մեծ քաջութիւնն համարելով իր արած գործը, իսկ բոլոր քաղաքացիները ցրվեցին իրենց տեղերը, և ոչ ոք չէր համարձակվում մոտենալ և ձեռք տալ սրբի նշխարներին՝ դատավորի սպառնալիքի պատճառով:

Իսկ քաղաքի եպիսկոպոսը, որի անունը Պետրոս էր, իր հետ վերցրեց եկեղեցու ժառանգավորների, երկյուղած այրերի, գիշերով եկավ, ամփոփեց սուրբ վկաներ Ովրեստիոսի և Եվստոատիոսի նշխարները, դրեց փայտյա տապանի մեջ, պահեց որոշ ժամանակ, ապա ինքը վերցրեց տարավ իրենց հայրենի գավառը, Արորակ քաղաքը և դրեց հանգստի այնտեղ, որ սուրբ վկան նշանակել էր իր կտակի մեջ: Իսկ հալածանքները դադարելուց հետո վկայարաններ կառուցեց Քրիստոսի անհաղթ վկաների՝ հինգ սրբերի հանգստարանի վրա. Օգսենտիոսի, Մարդարիոսի, Եվգինեոսի, Ովրեստիոսի և մեծն Եվստոատիոսի:

Մեծապայծառ խնդութեամբ և փառավոր հանդեսով ամեն տարի կատարվում է նրանց հիշատակի օրը դեկտեմբեր ամսի տասներեքին: Անեղծութեան և անապականութեան պսակն ընդունեցին Դիոկղետիանոսի թագավորութեան և մեզ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի թագավորութեան ժամանակ, որին վայել է փառք, իշխանութիւնն և պատիվ, Հոր և Սուրբ Հոգու հետ հավիտյանս հավիտենից. ամեն:



**ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԵՓԻՄԻԱ  
ԿՈՒՅՍԻ ԵՎ ՔՐԻՍՏՈՍԻ ՔԱՌԱՍՈՒՆԻՆԸ  
ՎԿԱՆԵՐԻ**

**Ա**մբարիշտ Դիոկղետիանոս թագավորի ժամանակ Քաղկեդոն քաղաքը եկավ Պրիսկոս անթիպատոսը, որ այնտեղ քրիստոնյաներից ում գտնի՝ չարաչար տանջանքով վերացնի: Իսկ այն քաղաքում հավաքված էր քրիստոնյաների շատ մեծ բազմություն: Պրիսկոս իշխանը ամբարիշտ քաղաքացիներից մի բարեկամ ուներ, որի անունը Ապելիանոս էր՝ ժանտաբարո և խիստ ապերասան, որ մշտապես դեզերում էր դիք անվանված սնոտի աստվածների մոտ, մանավանդ փարվում էր Արեսի արձանին և մասնագիտությունը սովորում էր: Սա Պրիսկոս իշխանի մոտ չարախոսեց քրիստոնյաներին և ասաց. «Քո հաջորդությունը թող հիշի, ո՛վ անթիպատոս, որ մենք բոլորս պարտավոր ենք ըստ ինքնակալների հրամանների ավանդության զոհ մատուցել աստվածներին, մանավանդ մեծ աստված Արեսին»: Անթիպատոսին հաճո թվաց այս խոսքը՝ կործանելու հաստատուն հավատքի բարձրությունից թուլացածներին: Ուստիև հայտարարություն գրեց՝ դնելով քաղաքամիջի աչքի ընկնող մի տեղ, և գրությունը հետևյալ բովանդակությամբ էր. «Սիրելի՛ այրեր, Քաղկեդոն քաղաքի բնակիչներ, ի գիտություն ձեզ բոլորիդ, մեր ինքնակալ թագավորների հրամանը հայտնում ենք ձեզ, որպեսզի մաքրելով ձեր անձերը ութ օր զոհ մատուցեք մեծ աստված Արեսին, իսկ եթե գտնվի մեկը անհնազանդ մեր օրենքին և ուրիշ կրոնի փոխվի՝ դրան չարաչար պատուհասելով կկորցնենք: Եվ այդ հրավերի նշանակն այսպես է. ո՛ր ժամին հնչի փողը, բոլորս միանգամից համատեղ հոժարությունը և հաշտեցնելու անմահ աստվածներին»: Իսկ անօրեն Ապելիանոսը մշտապես մտահոգված էր գիտենալու և քննե-

լու օրվա բոլոր ժամերին, որ գտնի թագավորների ավանդու-  
թյանը անհավան մարդկանց, և շան նման հաչելով հարձակ-  
վում էր նրանց վրա:

Երբ հասավ նշված ժամը, հնչեց ողբերգական փողը՝ բո-  
լորին առհասարակ միասին կանչելով, ովքեր սնոտի հույ-  
սի հետ զնալու էին: Բայց կային նրանք, որ հավատում էին  
մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ փոքր տնակում փակված և  
թաքնված, մշտական աղոթքներով և համբերությամբ: Այն-  
տեղ էր նրանց սրբուհի վկա Եփիմիան՝ մշտական աղոթքի  
ցանկացող: Նա դուստրն էր պատվական ծերակուտականնե-  
րից մեկի և մոր՝ Թեոդոսիանե բարեպաշտ կնոջ, որ բազում  
ողորմություն էր անում ժողովրդին՝ հույս ունենալով երկ-  
նային վարձահատուցման: Իսկ Ապելիանոս չարը ասում է  
անթիպատոսին. «Անթիպատոս, մի տան մեջ թաքնված են  
մարդիկ, որոնք ոչ թագավորների ավանդության և ոչ քո  
հրամանին են ուզում ենթարկվել: Եվ եթե դու ներող լինես  
այս հարցում՝ շատերը կհեռանան աստվածների գոհելուց  
և կմիանան նրանց, և մեր ընծաներն ու պաշտամունքը ար-  
համարհանքով կանարգեն»: Անթիպատոսը այս լսեց նրա  
անաստված բերանից, հրամայեց նրանց բերել իր առջև, և  
երբ բերին նրանց իշխանի առաջ, այն սրբերի մեջ էր սուրբ  
Եփիմիան՝ ուրախ դեմքով, և պայծառ զարդարմամբ առավել  
քան բոլորը, որ սրբի հետ էին: Այնժամ անթիպատոսն ասաց  
նրանց. «Շատ զարմացած եմ ձեզից յուրաքանչյուրի վրա՝  
տեսնելով ձեր հոժարության ընթացքը և ձեր հասակի, մար-  
մինների գեղեցկությունը, որի համար խորհուրդ եմ տալիս  
հնազանդվել ինքնակալի հրամանին և վայելել աստվածների  
գոհերի [մսից]: Եվ ես սա կտեղեկացնեմ թագավորին և դա-  
տավորական իշխանությանը»:

Այս լսելով սուրբ վկաները իրենց դեմքերի տրամուկյու-  
նը փոխեցին, լցվեցին աստվածային ուրախությամբ, և սուրբ  
Եփիմիային մեջտեղ բերելով՝ իբրև հրեշտակների խումբ հա-  
մարձակորեն պատասխանեցին միասին. «Մենք, ո՛վ անթիպա-  
տոս, զինվորագրվել ենք մեր Թագավոր Հիսուս Քրիստոսին

և ծառայում ենք հավատին, որին մինչև վերջ հաստատուն  
մնալ ավանդեց մեզ, որպեսզի հանդիպենք անսուտ խոստու-  
մին, որ ասում է. «Բարի և հավատարիմ ծառա, որ քչով հա-  
վատարիմ եղար՝ քեզ կկարգեմ շատերի վրա» (Մատթ. ԻԵ. 21,  
23, Ղուկ. ԺԹ. 17, 19): Եվ դու, անթիպատոս, անտեղյակ չես,  
որ յուրաքանչյուր ոք, որ հավատում է իշխանությանը, ջա-  
նում է գոհանալ Նրանից, որ պարգևել է իրենց այն, որպեսզի  
ավելի մեծ պատվի հանդիպի: Արդ, եթե այդպիսիները ապա-  
կանացու են՝ ծառայելով ապականացու տերերի, փնտրում են  
ժամանակավոր և անցավոր պատիվը, որքան առավել մենք  
պարտավոր ենք ջանալ, որպեսզի խոստացած անապական և  
հավիտենական փառքը ժառանգենք, որ կա և մնում է հա-  
վիտյանս հավիտենից: Այժմ ինչ անելու ես՝ իսկույն արա՛,  
մենք պատրաստ ենք քո ամեն տեսակ տանջանքներին»: Իսկ  
Պրիսկոս անթիպատոսը նրանցից երեսը մի կողմ շրջեց և դա-  
հիճներին հրամայեց չարաչար կտտանքով տանջել նրանց:

Իսկ նրանք տանջանքների մեջ գոհանում էին Աստծուց  
և քաջալերում միմյանց, հաստատվելով նահատակության  
համբերության մեջ, և երանելի կույս Եփիմիային հորդորում  
Քրիստոսի խոստացած բրաբրոսին: Եվ նա ուրախանալով,  
իբրև ազնիվ ընթրիքի հրավիրված, լցվեց իմաստությունով,  
որ անմահ Փեսայի մոտ կմտնի Լույսի առաջաստ՝ իմաստուն  
կույսերի հետ, անչեղ լապտերներով: Արդ, սուրբ վկաների  
մեծ նահատակության տասնիններ օրը լրանալուց հետո բան-  
տում էին, սոված, կերակրվում էին Սուրբ Հոգու շնորհներով,  
իսկ քսաներորդ օրը անթիպատոս Պրիսկոսը խորհրդակցեց  
ամբարիշտ Ապելիանոսի հետ, նրա, որ միտքը անվան նմա-  
նություն էր ստացել, հրամայեց սրբերին բերել դատաստա-  
նի հարցաքննության: Այնուհետև Աստծու երանելի վկանե-  
րը բերվեցին՝ ձեռքերը հետևները կապած և պարանոցները  
շղթայած: Այնժամ ամբարիշտ Պրիսկոսը ելավ նստեց բարձր  
բեմին և հրամայեց բերել սրբերին: Եվ երբ բերին նրանց բեմի  
մոտ, նրանց մեջ էր նաև սուրբ Եփիմիան՝ որպես լուսավոր  
ջահ և որպես պայծառ դամբար փայլում էր ճառագայթնե-

րով: Անթիպատոսը հարցրեց նրանց. «Ասացեք ինձ, ով պատանիներ, որ հանձն առաք առաջիկա տանջանքները, արդյոք զգաստացա՞ք ձեր համառուլթյունից՝ զոհ մատուցելու մեծ աստված Արեսին, թե տակավին նույն մտքին եք համառուլում»: Նրանք միաբան ու միաբերան պատասխանեցին նահատակազգյաց Եփիմիայի հետ. «Ո՛վ անթիպատոս, մինչև ե՞րբ պիտի համառես մոլորությանդ մեջ և չճանաչես մեր Աստծու զորությունը, որն ստեղծեց երկինքն ու երկիրը»: Այնժամ Պրիսկոսն ասաց ամբարշտության պաշտոնյաներին. «Դրանց մի անգամ չարաչար տանջանքով խփեցեք և ստիպեցեք ենթարկվել ինքնակալի հրամանին և զոհ մատուցել աստվածներին»: Սպասավորները անմիջապես կատարում են բռնավորի հրամանը, և երբ նրանք կռփահարում էին սրբերի երեսները՝ հույժ պայծառացան նրանց դեմքերը, և չարի արբանյակները տանջելիս տկարանալով մեռածի նման եղան: Իսկ բանասարկուի խորհրդակից Ապելիանոսը, որ չարի սպառազինություն էր հագել, ասաց անթիպատոսին. «Դրանց պատուհասելով ուղարկենք թագավորի մոտ»: Եվ այս բանը հաճո թվաց անթիպատոսին և նրա հետ եղողներին [նա] և հրամայեց նրանց բանտարկել դոյակի բերդում՝ մինչև նրանց կուղարկի թագավորի մոտ:

Քառասունինը այր էին և սուրբ կույսի հետ լինում էին Հիսուս: Նրանց բանտ տարան. եկավ անթիպատոսը՝ իբրև մի ավագակ կամ հափշտակիչ գայլ, սրբուհի Եփիմիային առանձնացրեց մյուս սրբերից, նրան կարծելով չարության պատճառ, իսկ այն քրիստոսասեր վկան աչքերը երկինք հառած ասաց. «Օգնի՛ր ինձ, Քրիստո՛ս, մշտնջենավոր Հայր Աստծու Որդի և էակից, որ ստեղծեցիր երկինքն ու երկիրը և այնտեղ եղած արարածներին, որովհետև իմ հույսը դու ես, Տե՛ր իմ, չմարի իմ կուսության ջահը և չկորչի իմ հույսի հավատքը Քո նկատմամբ, որ անարատ պահեցի մանկությունից»: Այս լսելով՝ իշխանն ասաց. «Պատվի՛ր քեզ և, որ քեզ պատշաճ է ըստ ազգի՝ մի՛ կորցրու, զի թեպետ սասանվեցիր և խաբվեցիր իբրև կին, այսուհետև զղջալով զոհ մատուցիր աստվածներին»:

Քրիստոսի աղախինը պատասխանեց. «Մենք չենք ջանում մարմնի տկար բնությամբ պատիվ վայելել, այլ արիական ճգնությամբ ձգտում ենք նահատակության մեջ ընտիր և քաջ երևալ, որի համար իմաստուն և քաջ ախոյանի նման եմ քո դիմաց, որպեսզի հաղթեմ քեզ և քո հայր սատանային, և հանդիպեմ մեր հայրերի անսուտ խոստումին»:

Այնժամ անօրեն իշխանը բորբոքվեց կատաղի ցասումով, որ հաղթվել էր կնոջից, և դահիճներին հրամայեց չարչարանքի անվաճև գործիքներ պատրաստել և սուրբ վկային գցել անիվների մեջ, որ պտտվելիս իսկույն ավանդի հոգին: Իսկ երանելին, ամրացված անիվին, իրեն խաչակնքելով ասաց. «Օ՛, ինչպես է նստել ճշմարտության թշնամին և անօրինության մշակ Պրիսկոսը հնարելու չարի հրապույրները՝ շարժվելով չարից, բարեպաշտների դեմ, կարծելով նրանց կորցնել, և ավելացրեց սուրբ վկան՝ ասելով նրան, չարագործ և նենգավոր թշնամի՛, հավատա ինձ, որ քո չարարվեստության գործարանը չի մոտենում մարմնին, և ամենևին տանջանք չզգացի, որովհետև օգնական ունեմ Քրիստոսին՝ ջանալով հաստատուն պահել իմ նահատակության համբերությունը»: Երբ նա այս ասաց, բռնավորի պաշտոնյաները պտտում էին անիվը, և սրբի մարմնի բոլոր անդամները սաստիկ և չարաչար տանջանքից քանդվելով՝ մերկանում էին ոսկորներից: Իսկ տանջանքի մեջ սկսեց աղոթել՝ զոհանալով Աստծուց և ասել այսպես. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, որ ապավենդ ես բոլոր Քեզ դիմողների, Լույսդ ճշմարտության և Տերդ ողորմության, գթա՛ ինձ, քանի որ չես արհամարհում նրանց, ովքեր նեղության մեջ աղաղակում են առ Քեզ, նայի՛ր Քո աղախինին և դուրս հափշտակիր ինձ բարին ատեցող բանասարկուի կորստից և անմաքուր ու ամբարիշտ Պրիսկոսի սպառնալիքներից»: Երբ նա այս ասում էր, իսկույն երկնքից հրեշտակ իջավ, դադարեցրեց անիվի պտույտը և դահիճներին զրկեց զորությունից. այնպես որ երկնավոր գործերից սարսափած՝ նրանք գոռնատվել ու վհատվել էին: Եվ երանելի վկան անարատ ելավ գործիքից, բազմության առջև երևալով զվարթ

ու պայծառ, կարծես թե ոչ մի չարչարանք չի կրել: Եվ անթիպատոսն ասաց. «Երդվում եմ աստվածների փրկությամբ և ինքնակալի բախտով, եթե զոհ չմատուցես մեծ աստված Արեսին՝ հրով կվատնեմ քեզ, և կհասկանաս, որ քեզ չի օգնի քո Աստվածը, որին պաշտում ես»: Սուրբն ասաց. «Հրով ես սպառնում ինձ, նրանով, որ փոքր-ինչ վառվելով բորբոքվում և արագ հանգչում է: Բայց ես այդքան անարի չեմ, որ վախենամ քո սպառնալիքից, այլ ոտնակոխ կանեմ քո գոռոզությունը, երդվում եմ Քրիստոսի բարեպաշտ վկաների նահատակության ջանքով, որ մինչև վախճան հաստատուն կպահեմ հավատի իմ ընթացքը, որ արժանանա անվախճան ուրախության և նրանց հետ վայելեմ անպատում կյանքում ի Քրիստոս»:

Անթիպատոսն այնժամ գարհուրեց, բորբոքվեց կատաղությամբ, հրամայեց վառել բազմապատիկ հրի հնոց, որ շատ բարձրանալով՝ ցոլա բոցը, և սրբին գցել կրակի մեջ: Եվ բռնավորի սպասավորները կատարեցին հրամանը: Եվ երանելին զվարթ երեսով և ամբողջ մարմնով կանգնեց հնոցի մոտ և ասաց. «Օրհնյա՛լ ես, Տե՛ր Աստված, որ բնակվում ես բարձունքին ու տեսնում խոնարհներին, որ փառավորում են հրեշտակները և երկնքի բոլոր գորությունները, քեզ եմ դիմում, օգնի՛ր ինձ Քո բարերարությամբ և կնքիր Սուրբ Հոգուդ գորությամբ և չարամիտ ու քրիստոսատյաց Պրիսկոսին ցույց տուր, որ դու ես Աստվածը, դու առաքեցիր հրեշտակին Բաբելոն՝ երեք մանկանց մոտ և մարեցիր հնոցի բոցը: Այժմ նայիր ինձ՝ տառապյալիս, առաքիր Քո օգնությունը և փրկիր ինձ առյուծի բերանից ու որսացողի ձեռքից, անթիպատոսի սպառնալիքներից, որովհետև Քո անունը ահավոր ու փառավորված է հավիտյան»: Այս բաներն ասաց նա, և անթիպատոսը հրամայեց իր պաշտոնյաներին նրա մեջքին գոտի կապել: Երբ կատարեցին ասածը, այնժամ հրամայեց նրան բռնել և գցել հնոցը: Եվ սպասավորներից մեկը, որի անունը Սոսթենես էր, մեջքին սուսեր ուներ, եկավ կանգնեց իշխանի առաջ և ասաց նրան. «Հրամայի՛ր ինձ, ո՛վ անթի-

պատոս, այս սրով ինքնասպան լինեմ, քանի որ անկարող եմ ձեռք տալ այդ սուրբ վկայուհուն, որովհետև տեսնում եմ իմ աչքի առաջ պայծառազգեստ մարդկանց, որ սպասարկում են դրան»: Նույնպեսև զինվորներից մեկ ուրիշը, որի անունը Բեկտորիանոս էր, անձանոթ էր ճշմարտության գիտության, քանդելով իր գոտին, իշխանին ասաց. «Աղաչում եմ քեզ, անթիպատո՛ս, ազատիր ինձ այս պարտականությունից, որովհետև ծանր է ինձ համար դիպչել սուրբ վկային, քանի որ իմ աչքերով տեսնում եմ հնոցի եզրին որոշ այրերի, որ կանգնած ցրում են հնոցի հուրը սպառելով և անարատ պահում Քրիստոսի սուրբ վկային»: Անթիպատոսը հրամայեց նրանց պահել և այլ պաշտոնյաների կանչեց, որոնց հետ և մի բարբարոսի, որի անունը Կայսր էր՝ բռնելու սուրբ նահատակին և հնոցը գցելու: Եվ երբ գցեցին հնոցի մեջ, նրան ընդունեցին աստվածության լուսազգեստ պաշտոնյաները՝ խաղաղության հրեշտակները, ցրելով հնոցի հուրը: Իսկ անօրեն Պրիսկոս իշխանի սպասավորներից մեկին՝ Կայսր կոչվածին, սատակեց հուրը: Եվ երանելին հնոցի մեջ էր՝ ինչպես արքունական ապարանքում՝ պարկեշտ գեղեցկությամբ, տեսնելով Թագավորին՝ ձեռքերը տարածելով ասաց. «Օրհնյալ ես, մեր հայրերի Տե՛ր Աստված, որ Քո անհիշաչար Աստվածությամբ չանտեսեցիր Քո աղախներին և ճշմարտության Բանը տարածեցիր ամբողջ տիեզերքում և ճշմարտության հավատքը ընդարձակեցիր և հալածեցիր անօրինության մրրիկը, որև Քո արդարությունը ծագեցրիր ինձ վրա և Քո Սուրբ Հոգով անջատեցիր իմ անձը խավարից և միշտ փրկում ես Քեզ հուսացողներին: Տո՛ւր ինձ՝ արժանավորապես Քո առջև նահատակվելով արժանի լինել հավիտենական կյանքիդ»: Այս ասելով հնոցի միջից Տիրոջը հանձնեց բարեպաշտության պաշտոնյաներին: Անթիպատոսը հրամայեց դարձյալ բանտ նետել նրան. «Որ ցույց տանք դրա, ասում է, աստվածների գորությունը, ոչ թե հայհոյելու, այլ հնազանդվելու ինքնակալի հրամանին, կամ իսպառ կսատկեցնենք դրան»: Եվ սուրբը գնաց բանտ՝ փառավորելով Աստծուն:

Իսկ երանելի վկաները, որ բանտում էին՝ նրան չարչարակից, մեծ խնդուկթյամբ ուրախանում էին սուրբ կույս Եփիմիայի նահատակությամբ և ասում. «Տե՛ր Հիսուս Քրիստոս, Քո աղախնին արժանի արա ընդունելի պատարագ լինել Քեզ՝ մեր հայրերի հետ, որ փափագելով խոստովանեցին Քո աստվածությունը»:

Մինչդեռ Պրիսկոս իշխանը ատյանում նստած հրամայեց բերել Սոսթենես և Բեկտոր սուրբ վկաներին և ասաց նրանց. «Ձո՛հ մատուցեցեք աստվածներին»: Նրանք պատասխանեցին ասելով. «Մենք, ո՛վ անթիպատոս, մոլորվել էինք խավարասեր թշնամուց, որին դու պաշտում ես, և կորած դժոխքի անօրինուկության վիճերում, սնտոի կյանքում ծառայելով քեզ, հեռացել էինք Աստծու հույսից: Այժմ հավատում ենք Տիրոջը, որ ճգնակյաց կույսի վարդապետությամբ կարող լինենք ջնջել մեր հանցանքների գիրը և փրկվել հավիտենական հրից: Այժմ իսկույն արա՛ քո սատանա հոր գործը, որովհետև մենք չենք հնազանդվում Հոռոմոց անօրեն թագավորին և զոհ չենք մատուցի անմաքուր և սնտոի աստվածներին»: Այս լսելով անթիպատոսը հրամայեց սրանց միասին բերել, որ գազանակուր լինեն: Այնժամ նրանք երկուսը, որ ընկան գազանների առաջ, աղոթելիս ասացին այսպես. «Տե՛ր Աստված, որ մեծդ ես և ահավոր, որ Քո անունով հաստատեցիր ամեն ինչ, որ երկիրը հիմնեցիր Քո հրամանով, որ ծագեցրիր լույսը և ցրեցիր խավարը, որ սպանեցիր վիշապին և վերացրիր մահվան երկյուղը, ազատի՛ր մեզ հափշտակողի ցնորքից, փրկի՛ր մարդասպանի թակարդից և տուր մեզ խաղաղությամբ, անարատ հոգով ու մարմնով դիմել Քո սուրբ անվանը»: Եվ իսկույն ձայն եղավ երկնքից ասելով. «Լսեցի ձեր աղաչանքը և կկատարեմ ձեր բոլոր խնդրանքները»: Եվ սրբերը իրենց անձերը հանձնեցին Տիրոջը, ավանդեցին հոգիները: Անթիպատոսը տեսավ սրբերի վախճանվելը, ելավ և գնաց իր ապարանքը: Եվ քրիստոնյաներից երկյուղած մարդիկ վերցրին սրբերի մարմինները, պատեցին սուրբ պատառակալով, օծեցին անուշ յուղերով, արժանավորապես դրին գերեզման:

Հաջորդ օրը, երբ բացվեց առավոտը, անթիպատոսը եկավ, որ լսի սուրբ կույս Եփիմիայի խոսքը: Եվ սուրբ բանտից ելավ, երգում էր և ասում. «Քեզ եմ երգում, Տե՛ր, նոր օրհնությունն այս երկրում: Փառավորում եմ քեզ իմ զորությամբ, սաղմոս կասեմ քեզ իմ ազգով հանդերձ, օրհնում եմ քո անունը երգելով, սաղմոսելով, գովելով և փառավորելով քեզ»: Արդ, եկավ անթիպատոսը, ելավ նստեց բեմի վրա և ասաց Քրիստոսի սուրբ վկային. «Մինչև երբ անզգամությամբ պիտի կորցնես քո անձը: Այսուհետև հաճիր, քո միտքը հավանեցրու աստվածներին զոհ մատուցելու, որ քեզ հետ հաշտվեն: Այժմ լսիր ինձ և մի՛ արհամարհիր իմ խրատի խորիմաստ խոսքը, որ կենդանի մնալով իմ մայրը կոչվես»: Իսկ երիցս երանելին ծիծաղելով ասաց նրան. «Արդարև, քո անզգամ և անմիտ, կորստական խրատը լսելով՝ խուլ և անշունչ դիվածույլ արձանների՞ն զոհ մատուցեմ, անօրեն՞ դու, և Քրիստոսի ճշմարտությունից հեռու ընկածդ և բեկուկածդ որոգայթադիր օձի հետ, տարտարոսի բնակիչդ և անշեջ հրի ժառանգորդդ, ջանում ես ճշմարտության որդեգրվածներիս քո կողմը ձգել, բայց ես չեմ հավանի քո սնտոի սպառնալիքներին և ոչ իբրև մանուկ կխաբվեմ քո ասածներով, որովհետև հագած եմ Քրիստոսի հավատի սպառազինություն, որ անխափան զորացնում է ինձ»: Այնժամ անթիպատոսը հրամայեց իր ծածուկ գործակալներին, սրբի համար տանջանքի գործիք պատրաստել և գլորելով բերել թատրոն, սուրբ Եփիմիային դնել տանջանքի գործիքի մեջ, որ այնպես բռնված՝ վայրի վարազների նման, մեռնի առանց գիտակցելու: Եվ երբ պատրաստեցին տանջանքի որոգայթը, սուրբ վկան եկավ պայծառ դեմքով, ասես բնավ տանջանք չէր կրել և չէր վախենում չարչարանքներից: Եվ երբ ամբարիշտ Պրիսկոսի պաշտոնյաները ուզում էին քարշ տալով մտցնել տանջանարան՝ հրեշտակները հափշտակեցին [նրան], խաղաղությամբ անցավ տանջանքի մեքենայից, իսկ գինվորներն ընկան մեքենայի մեջ ու սատկեցին:

Եվ երանելի Եփիմիան դարձյալ բացեց բերանն ու ասաց. «Տե՛ր Աստված, որ երկնքից առաքեցիր Քո միածին Որդուն, որ եկավ և մարմնացավ սուրբ կույս Մարիամից և Իր խաչի չարչարանքով վերացրեց մահվան երկունքը և տրորեց բանսարկուռի գորուծությունը և գամվեց խաչափայտին և բացեց երկնքի դռները: Դու մոտեցար այն զինվորներին, որ Քո անվան համար հեղեցին իրենց արյունը և հերքեցին ընդդիմամարտ գազանին. որ նրանցով հաստատեցիր հավատի հիմքերը. որ միշտ օգնական եղար ինձ բոլոր տանջանքների մեջ, փրկիր և այժմ իմ անձը այն սրբերի աղոթքով, որ բանտում էին անսուտ խոստովի համար, որ աչքը չի տեսել և ունկը չի լսել: Պահիր քո աղախնին, որովհետև միայն դու ես անհիշաչար, որ փրկում և ազատում ես քեզ հուսացողներին»: Անթիպատոսը տեսավ, որ բնավ չվնասվեց գործիքից՝ հրամայեց առաջ բերել նրան և ասաց. «Դու, իմաստուն ես ամեն ինչով, իսկ ազգով՝ ազնվական և առաջավոր, խիստ զարմացած եմ, թե ինչու խոսքերով խաբվեցիր և կորցրիր ամեն ինչ ու տակավին մնում ես նույն համառությունը, չկատարելով ինքնակալի ցանկությունը: Բայց և այժմ, իբրև իմաստուն և պարկեշտագեղ կին, լսի՛ր ինձ և քո հորից համարիր՝ ինձնից քեզ արված անարգանքն ու տանջանքը, զոհ մատուցիր աստվածներին, որ քո ազգին նախատինք չլինես»: Իսկ սուրբ վկան, քրիստոսասեր մտքով պատրաստ լինելով, ասաց անթիպատոսին. «Ո՛վ չարագեղ, դրուժան այր, թշնամի արդարություն և վայրենի գազան, որ ուզում է ինձ որսալ եղեռնահամ խոսքերով, որ լեղից ավելի դառն է և մոլեխինդ սատակիչ: Այնքան անզգա չեմ, որ թողնելով անապական կենդանություն գանձը՝ երկրպագեմ բանսարկուռի խաբեությունը: Արդ, մի՛ խաբիր, անթիպատո՛ս, թե կհամոզես ինձ խոսքով զոհ մատուցել անմաքուր դեերին և կամ Աստված անվանել նրանց և կամ ինչպես անամոթացած միշտ կենդանուն նմանեցնում ես բնավ կենդանի չեղածներին և նրանց զոհ ես մատուցում: Արդ, չի՛ լինի, որ ես հավանեմ քո անհամ և կորստական խոսքերին, ուստի փութա և իսկույն արա՝ ինչ ուզում

ես, որովհետև ես ուզում եմ քեզնից ստացած չարչարանքով մտնել հավիտենական երկնային ժառանգությունը, ուր բոլորի Հայրն է և մարտադիր Աստվածը, որ պսակում է Իր բոլոր սրբերին, և միածին Որդին և Սուրբ Հոգին՝ ամեն բարություն պարգևաբաշխը»: Եվ դուքսը զայրացած հրամայեց նրան ձաղկել արջաջիլերով: Իսկ նա, երբ իրեն հարվածում էին՝ ասաց. «Ձի կպչի ինձ քո տանջանքը, անօրեն, քայքայված ես և չունես բնություն էությունը, հաղթված և հերքված է քո գոռոզությունը»:

Այնժամ Ապելիանոսը անթիպատոսի հետ ցասումով զայրացած հրամայեց սայրասուր սղոցներ և երկաթե տապակներ պատրաստել և սղոցով նրան երկու մասի բաժանել՝ մամլակների տակ դնելով նրան և ջեռուցած տապակների մեջ դնել, որ նրա մարմնի բոլոր անդամները աճյունի վերածվեն: Ու երբ պատրաստվեցին տանջանքի այդպիսի գործիքներ՝ Պրիսկոսի անաստվածությունը սպասավորները բերին վկայուհուն և դրին մամլոգ գործիքի մեջ: Եվ իսկույն բթացան սղոցները և տապակների եռանդը մարեց, քանի որ Աստծու հրեշտակները կանգնեցին սուրբ կույսի մոտ: Եվ անօրեն Ապելիանոսն ու անթիպատոսը տեսան, որ զինավառ է Քրիստոսի վկան և հաղթում է համբերությունը, մտածեցին նրա վրա արձակել գազանների բազմությունը:

Այնժամ Քրիստոսի աղախնին մտցրին թատրոն: Եվ ձեռքերը տարածած աղոթում էր և ասում. «Հայտնի ես, Աստված, ովքեր դիմում են Քեզ, ընդունիր իմ հոգին անուշ հոտի մեջ, ինչպես ընդունեցիր մեր հայր Աբրահամի ընդունելի պատարագը: Այսպես և իմ՝ տառապալիս հոգու և մարմնի պատարագը, կամավոր ու բանավոր զոհիս, որ մատուցում եմ Քեզ»: Այս ասելով խաչակնքեց իրեն՝ Տիրոջ անունը արտասանելով: Այնժամ գազաններ արձակեցին նրա վրա: Իսկ գազանները վազքով մոտեցան Քրիստոսի վկային և հանդարտություն լիզում էին նրա գարշապարները: Մյուսների նման էին անում նաև առյուծները: Իսկ իշխանի զինվորները սրերով խոցոտում էին սուրբ վկային:

### ՅՈՒՍՈՒՐԲ ՄԱՆԿԱՆՑ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մինչդեռ պետք էր վերջ տալ սուրբ վկայի [կյանքին], նաև ինքը խնդրում էր գազաններին անվախ մոտենալ իրեն, որ արագորեն վերացնեն նրան այս չար աշխարհից, որպեսզի մտնի Աստծու մոտ, որին անձկացել է: Այնժամ մի մատակ առյուծ մոտեցավ և ճիրաններով ճանկեց նրա կողերը՝ ոչ սաստիկ խոցոտելով նրան: Եվ նույն ժամին երկնքից ձայն հնչեց և ասաց. «Վերև՝ ընթացիր, Եփիմիա՛, ընթացքդ կատարեցիր, հավատքը պահեցիր»: Երբ այս ձայնը հնչեց, մեծ շարժում եղավ՝ ասես ուժգին սասանումով դղրդաց թատրոնը, և բոլորը դողացին: Եվ սուրբ վկան ասաց. «Տե՛ր, [վճիռ] տուր պիղծ և անօրեն անթիպատոսին՝ իր չար սրտի համեմատ, և եղիր Քո աղախնի հետ, Տե՛ր իմ Աստված»: Այս ասելով ավանդեց հոգին: Եվ եկավ նրա մայր Թեոդոսիանեն և նրա հայր Փիլոփոնը, վերցրին նրա մարմինը և դրին նոր գերեզմանի մեջ, մի տեղ, որ մեկ ասպարեզ հեռու էր Քաղկեդոն քաղաքից: Իսկ անթիպատոսը թագավորի մոտ ուղարկեց սուրբ վկաներին, որ բանտում էին, և պատվիրեց զորականներին՝ ճանապարհին զգուշությամբ պահել նրանց: Այնտեղ նահատակվեցին Քրիստոսի սուրբ վկաները, որ թվով քառասունինն էին: Իսկ չարախոհ և անօրեն իշխան Պրիսկոսն ընկավ չարաչար ախտերի մեջ և մեծամեծ տանջանքներով սատկեց:

Երանելի սուրբ կույս Եփիմիայի կատարման օրը սեպտեմբերի տասնվեցն էր, Դիոկղետիանոսի, Մաքսիմիանոս Հերկուլիանոսի հյուպատոսության և մեր Տեր և փրկիչ Հիսուս Քրիստոսի մեզ թագավորելու ժամանակ, որի հետ միասին Հորը և Սուրբ Հոգուն վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ հավիտյանս հավիտենից. ամեն:



Բոլորի Տերն ու արարիչը, որ գիտե վերջն ու սկիզբը, փորձում է սրտերն ու երեկամները, գիտե առաջիկա լինելիքները, որ պատրաստ էր հառնել իր այն հավատացյալների դեմ, որ չեն ուզում ուղիղ վարվել կամ ուղիղ հավատով առաջնորդվել և անկողոպտելի գանձ թողնել բնական վիճակում, որը ուզեց հայտնել, երբ որ այդպիսի բանի հարց ծագի, նրանց մեջ, ի սկզբանե այնպիսի խորհուրդների փնտրող լինեն: Քանզի մարդասեր Աստծու սովորությունն է՝ բարերարություն անել բոլորին, հավատացյալներին անշարժ պահել հավատքի մեջ և հաստատել, իսկ անհավատներին ուղղության բերել նշաններով և զորություններով՝ ըստ ժամանակի և ըստ հարկի: Այդպեսև սուրբ յոթ մանկանց միջոցով սքանչելիք ցույց տվեց և սրանցով հաստատեց հարություն հույսը: Նրանց անուններն են. Մաքսիմիլիանոս, Ամլիքոս, Մարտիրոս, Դիոնեսիոս, Հովհաննես, Հեքսակիոս, Տատիանոս:

Այս յոթը բնակվում էին Եփեսոս քաղաքում: Եվ մեր Տեր Հիսուս Քրիստոսի հավատքի նախանձախնդիր էին, զարդարված առաքինի վարքով և խաղաղ կյանք էին վարում անբիծ հավատով: Եղավ՝ որ Դեկոսը իր թագավորության ժամանակ եկավ Եփեսոս քաղաքը, բոլոր քաղաքացիների հետ իրենց աստվածներին զոհ մատուցելու, և այդպես կատարում էին նանիր և աղտեղի պղծալից նվիրատվություններ: Իսկ հավատացյալները թաքնվում էին նրա աչքից:

Դեկոս թագավորը հրամայեց մեհյաններ կառուցել կուռքերին և կամեցավ կատարել աղտեղի տոնը: Հրամայեց հավաքել քաղաքի և շրջակայքի գլխավորներին, որ գան նրա հետ զոհ մատուցեն: Եվ մարդկանց անթիվ բազմություն հավաքվեց, որոնք հաղորդակից էին թագավորի կամքին և զոհ էին մատուցում: Իսկ հավատացյալներին մեծ սուգ էր՝ կուռքերով

մուլեգնածների, Աստուծու ճշմարտությունից շեղվածների համար, որովհետև քրիստոնյաների հալածանք սկսեց և նեղում էր բոլորին, ովքեր կանչում էին մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունը: Լեռներում, այրերում, անտառներում և քարանձավներում թաքնվածներին որոնում էին զինվորները թագավորի հրամանով: Ովքեր թուլասիրտ էին, ընկնում էին հավատքի բարձրությունից: Իսկ հավատքին և կենդանի շուշին հավատացողները պատրաստ էին ընդդեմ սատանայի և անշարժ հավատով ամոթի էին մատնում բռնավորին, հիշելով ավետարանական խոսքը, որ ասում է. «Մի՛ վախեցեք նրանցից, որ սպանում են մարմինը և հոգին սպանել չեն կարող, այլ վախեցեք Նրանից, որ սպանելուց հետո կարողություն ունի գեհենն նետելու» (Մատթ. Ժ. 28): Սրբերը զանազան տանջանքների էին համբերում, որ նրանց պատճառում էր ամբարիշտը՝ սատանայի հնարքով: Եվ Տիրոջ անվան համար կամավոր մահվամբ վկայողները բազում են եղել: Բայց սրանով չէր բավարարվում Աստուծուց օտարացածը, այլև նրանց մարմինները պահում էր պարսպից կախած, կամ ձողին ցցած՝ քաղաքի դռան առջև, պահում էր անթաղ: Ո՛հ, որքան էր մոլորությունը Դեկոսի ահավոր և որքան լի ցասմամբ դեպի քրիստոնյաները: Բայց Աստուծուն հուսացողները չէին վախենում մեռնելուց և բռնավորի երկյուղից, և հրեշտակները երկնքում երգում էին հաղթական օրհնություններ սրբերի համար, որոնք ուղիղ խոստովանությունից վախճանվեցին ի փառս Աստուծու, և դեները սրբերի հաղթությունից ամոթահար եղան:

Իսկ յոթ մանուկները, որոնց անունները վերևում ասացինք, և որոնք անշարժ էին Քրիստոսի հավատքի մեջ, այն ամենը տեսան, անդադար աղոթքի մեջ էին՝ տքնությունից և արտասուքով Տիրոջից խնդրելով հավատքի հաստատությունը: Եվ սրանք երևելի էին Եփեսոսում և պատվավոր մարդկանց որդիներ և թաքնվում էին ամբարիշտ Դեկոսից: Աղոթում էին ցերեկ ու գիշեր և արտասուքով աղաչում Աստուծուն, որ իրենց փրկի սատանայի հնարներից, և հավատարիմ մնան Տիրոջը: Որոշ չարաբարոներ տեսան նրանց, պատմեցին

թագավորին և ասացին. «Քաղաքիս երևելիների որդիները, եպարքոսի որդի Մաքսիմիլիանոսը և նրա ընկերները, յոթ պատվավորների որդիները՝ միաբանած Քրիստոսի հավատքով՝ չեն հնազանդվում քո հրամանին և զոհ չեն մատուցում աստվածներին, որոնց մատուցում ես դու»: Երբ լսեց թագավորը, ցասումով լի՝ հրամայեց շտապ նրանց բերել և ասաց նրանց. «Ինչո՞ւ զոհ չեք մատուցում աստվածներին, որոնց մատուցում ենք ես և իմ մեծ հրամանին բոլոր ենթարկվողները»: Մաքսիմիլիանոսը պատասխանեց թագավորին. «Մենք պաշտում ենք երկնքի և երկրի Աստուծուն, որի փառքով լցված է ամբողջ երկիրը, Նրան ենք երկրպագում և մատուցում օրհնություն պատարագ՝ խոստովանությունից և անուշահոտությունից, որ մնանք Նրա առաջ սրտի սրբությունից և կատարյալ հավատով և ուղիղ վարքով: Դեներին զոհ չենք մատուցում մենք և չենք ապականում մեր անձանց սրբությունը»:

Երբ թագավորն այս լսեց, հրամայեց կտրել նրանց գոտիները և պատվազրկել: Բայց իսկույն մարդասիրություն ցուցադրելով՝ իբրև մանուկների, ասաց. «Խնայում եմ ձեր մանկությունը, սպասելով որոշ ժամանակ, որ թողնելով այդ մտքերը՝ հավանեք [իմ խոսքը]: Իսկ եթե նույն մտքին մնաք՝ մահով կմեռնեք»: Եվ հրամայեց տանել նրանց իր մոտից մեծ սպառնալիքով, ինքը մեկնեց քաղաքից:

Սուրբ մանուկները թագավորի մոտից մեկնեցին ուրախանալով, որ Քրիստոսի անվան համար արժանացան անարգանքի: Եվ գնացին: Արդարությունից գործը կատարում էին առավել քան առաջ: Իրենց ծնողներից ոսկի և արծաթ վերցնելով բաշխում էին կարոտյալներին: Եվ մտածեցին ելնել քաղաքից և գնալ Ողբոս լեռան անձավը և այնտեղ մնալ անխռով, առանց երկյուղի, պարապել աղոթքով, մինչև Աստված իրենց այցելի և արժանացնի իրենց ընթացքը ավարտելու բարի խոստովանությունից, ընդունելու պսակը, որ խոստացավ իր սիրելիներին:

Եվ այսպես յոթ մանուկները միասին իրենց հետ դրամ վերցրին աղքատների և իրենց պետքերի համար և գնացին

անձավը և մնացին ամենայն արդարութեան հպատակ լինելով, անդադար ազդեցելով, բոլորի Տիրոջից իրենց անձանց փրկութիւնը խնդրելով: Եվ սպասավոր կարգեցին Ամլիքոսին, որ իմաստուն և ժիր երիտասարդ էր, որպէսզի սպասավորի իրենց: Եվ երբ գալիս էր քաղաք անհրաժեշտ բաների համար՝ իր հետ վերցնում էր դրամ, փոխում էր իր կերպարանքը, գնում իբրև աղքատ, իրենց պետք եղածը գնում էր և տեղեկանում՝ թե ինչ են խոսում քրիստոնյաների մասին, վերադառնալով պատմում էր լսածը և սպասավորում նրանց:

Օրեր անց թագավորը վերադարձավ քաղաք և որոնեց մանուկներին: Երբ թագավորն եկավ՝ Ամլիքոսն այնտեղ էր եկել իրենց պետքերի համար: Այս լսելով մեծ երկյուղով ելավ քաղաքից, գալով իր ընկերների մոտ, ունենալով սակավ հաց, պատմեց նրանց: Երբ լսեցին՝ խիստ վախեցան, ընկան երեսնիվայր գետնին, արտասուքով և բազում հառաչանքով աղաչում էին Աստծուն, որ ազատի իրենց այս չար աշխարհից և թագավորի սպառնալիքներից ու սատանայի խարդախութիւններից, և իր բարեսեր կամքի համաձայն ելնեն այս չար աշխարհից, մտնեն Աստծու մոտ՝ արժանավոր վկայութեամբ, ժառանգելու անպատում հավիտենից կյանքը, որ պահում է իր հավատացյալներին:

Ազդեցից հետո Ամլիքոսը սակավիկ հացը դրեց նրանց առջև և աղաչեց, որ ուտեն: Բոլորը քաջալերված կերան հացը արևամուտին և գոհացան Տիրոջից: Եվ միմյանց քաջալերում էին ու հորդորում ի սեր Աստուծու և ի համբերութիւնը Քրիստոսի, և հոգ էին տանում արժանանալու վկայութեան պսակի: Նիհնեցին և միանգամից բոլորը քնեցին, և մարդասերն Աստված այցելեց նրանց, որ մեռնեն և ազատվեն անօրենի երկյուղից, իսկ ժամանակ անց հավատացյալների հարութեան վկա լինեն և ամաչեցնեն նրանց, ովքեր չեն հավատում հարութեանը: Եվ չիմացան հոգիների ելնելը մարմիններից, այլ սովորականի նման քնած էին:

Առավոտյան թագավորը հրամայեց մանուկներին տանել ատյան, և ոչ մի տեղ չէին գտնում: Կանչեց մանուկ-

ների ծնողներին, որ երևելի էին, և սպառնաց չարիք պատճառել նրանց, եթե անմիջապէս երեխաները մեջտեղ չգան: Մանուկների ծնողներն ասացին. «Ինչու նրանց համար մեռնենք մենք, որ համոզմունքով պաշտում ենք աստվածներին և զոհ ենք մատուցում՝ ինչպէս հրամայում է քո կամքը: Իսկ նրանք Ողբոս լեռան անձավում են և մեծ նեղութեամբ քրիստոնեական հավատին են հետևում»: Այս ասացին ծնողները, որովհետև վախեցան թագավորից: Իսկ նա խորհում էր, թե ինչ անի նրանց: Եվ չէր ուզում երկրորդ անգամ կանչել նրանց ատյան, որ չհանդիմանվի մանուկներից, քանի որ գիտեր նրանց առաջին հարցաքննութիւններից:

Ապա հրամայեց մեծամեծ քարերով փակել անձավի դուռը, որտեղ մանուկներն էին: Սա լինում էր Աստուծու տեսչութեամբ, որպէսզի սրբերի նշխարները անշարժ մնան, միաժամանակ և վկա լինեն մեռելների հարութեանը, և նրանցով փառավորվի Աստված ժամանակին, և նկուս լինեն սատանան ու նրա համախոհները: Եվ այսպէս հրամայեց փակել անձավի դուռը, որպէսզի այնտեղ մեռնեն և նրանց լինի բանտ ու հավիտենական գերեզման: Հրամայեց, որ ոչ ոք չմտնի անձավը և տեսնի, ինչպէս կարծում էր, նրանց կենդանի: Սա լինում էր վերին խնամքով, որ մնան այնտեղ: Իսկ Թեոդոսը և Աբոսը՝ թագավորի հավատարիմները, ծածուկ քրիստոնյա էին: Իրար հետ խորհեցին և ասացին. «Գրենք սրանց վկայաբանութիւնը և ժամանակները, դնենք պղնձե գրորցի մեջ և գցենք անձավը, թերևս Աստված այցելի, և հայտնվեն այս սրբերի նշխարները»: Եվ ինչպէս մտածեցին, այդպէս արեցին այս այրերը Աստուծու տեսչութեամբ. գրեցին սրբերի ժամանակն ու վկայութիւնը և անունները, և թե ինչպէս Դեկոսի հրամանով փակեցին անձավի մուտքը, որ [սրբերն] այնտեղ մեռնեն: Այս ամենը գրեցին ըստ կարգի, գետեղեցին պղնձե գրորցի մեջ և ներս գցեցին անձավը: Եվ Դեկոսի հրամանով շրջապատվեց անձավը, և այն ժամանակ ոչ ոք չիմացավ մանկանց մահը, և սա եղավ Քրիստոսի տեսչութեամբ: Այս ամենից հետո մեռան Դեկոսը և այն ամբողջ ազգը, և փոխվեցին այլ թագավորներ, մինչև Թեոդոս մեծը:

Երբ թագավորեց մեծն Թեոդոս բարեպաշտը, այն տարիներից հետո ըստ Քրիստոսի հավատքի հնազանդվում և պաշտում էր ամենասուրբ Երրորդությունը: Եղան մարդիկ, որ ասում էին, թե մեռելների հարուժյունն չկա և կործանում էին ոմանց հավատը՝ ինչպես առաքյալն էր նախապես տեսել և ասել. «Տերը ճանաչեց նրանց, որ Իրենն են» (Բ. Տիմ. Բ. 19): Իսկ բարեպաշտ Թեոդոսը ճգնում էր դրա համար և խնդրում Աստծուց լուծում տալ հարցին: Եվ Թեոդորիտ աղանդի գլուխն էր ոմն Թեոդորիտ՝ ելլադացոց եպիսկոպոս: Նա և նրա այլ չար համախոհներ, եկեղեցու և ուղղափառ հավատի ապականխներ, որոնք ասում էին՝ «Մեռելների հարուժյունը արգեն եղել է»,- իսկ ուրիշները թե՛ «Մաշված և հողից ապականված, բազում տեղեր ցրված մարմինները չեն հառնի, այլ հոգիները միայն կրնդունեն անմահությունն ու անանց կյանքը»: Եվ «Մոլորյալները չիմացան, որ մանուկ չի ծնվի առանց մարմնի որովայնի, և դարձյալ թե՛ «Մարմինը կենդանի չի ելնի առանց հոգու»: Եվ փակեցին իրենց ականջները Տիրոջը չլսելու, որն ասում է. «Կլսեն մեռելները Աստծու Որդու ձայնը և դուրս կգան՝ ովքեր բարիք են գործել՝ կյանքի հարուժյան, իսկ ովքեր չար են գործել՝ դատաստանի հարուժյան» (Հովհ. Ե. 28-29): Եվ առաքյալն է ասում. «Անմիտ, դու որ սերմանում ես՝ չի կենդանանա, եթե չմեռնի և Աստծուն չտա մարմինը, և ինչպես ուզում է և յուրաքանչյուրը իր մարմինը» (Ա. Կորնթ. ԺԵ. 36): Եվ Եգեկիել մարգարեն ասես Տիրոջ անունից ասում է. «Կբանամ ձեր գերեզմանները և կհանեմ ձեզ ձեր գերեզմաններից, ժողովուրդ իմ, և իմ ոգին կտամ ձեզ և կլինեք կենդանի» (Եգեկ. ԼԷ. 12): Եվ այլ այսպիսի բազում բաներ, որ պատմվում են սուրբ Գրքում մեռելների հարուժյան մասին:

Իսկ բարեպաշտ Թեոդոսը արտասուքով խնդրում էր Տիրոջից, քուրճեր հագած և մոխրի վրա նստած հարուժյան երևումն տեսնելու, որ հաստատվի հավատացյալների հույսը, և ամբարիշտների ժողովը նկուն լինի: Իսկ Նա, որ իր երկյուղածների կամքն է կատարում և լսում նրանց աղոթք-

ները, կամեցավ սուրբ մանկանց միջոցով ցույց տալ հարուժյունը՝ Թեոդոս մեծ թագավորի օրերին, որ հայցեց Տիրոջից և ստացավ, որովհետև՝ «Բոլորը, որ խնդրում են կստանան, և ով հայցում է՝ կգտնի» (Մատթ. Է. 8),- ինչպես ասաց Տերը Ավետարանում:

Այսպես եղավ մանուկների հայտնությունը. մի պատվավոր այր, որի անունը Ոգոդի էր, որի իշխանությունն տակ էր Ողքոս լեռը, կամեցավ իր հոտի համար գոմ շինել մոտակա անձավը, որի մեջ սուրբ մանկունք էին: Եվ նրա ծառաները գործավորների հետ աշխատում էին: Եվ գլորում են քարերը այն դռնից, և բացվում է այրը, որ փակել էր տվել Դեկոսը: Այնժամ Փրկչի հրամանով կենդանացան մանուկները, որ անձավում էին, և հարուժյունն առած նստեցին ուրախ ու լուրջ երեսով՝ ինչպես երեկ կամ նախորդ օրը: Եվ նրանց վրա մեռելի տեսք չկար, քանի որ մարմիններն ու հանդերձը նույնն էին, և կերպարանքները բնավ փոխված չէին: Հարուժյունն առան առավոտյան և այսպես կարծում էին, թե երեկոյան ննջել են, և մտահոգ էին ամբարիշտ Դեկոսի հալածանքի և իրենց որոնելու առթիվ: Դարձան և հարցրին նույն բանի մասին Ամլիքոսին, թե ինչ էր լսել Եփեսոս քաղաքում: Ամլիքոսն ասաց. «Ինչպես երեկ պատմեցի Դեկոս թագավորը մեզ է փնտրում. կամ զոհ մատուցենք կուռքերին, կամ մեռնենք, եթե չհնազանդվենք նրան»: Մաքսիմիլիանոսն ասում է իր ընկերներին. «Եղբայրներ՝ իմ, հիշեցեք երկնային և ահավոր ատյանը և մի՛ զարհուրեք ժամանակավոր երկյուղով, որ բնավ չունի սպառնալիքի ահ: Չուրանանք մեր կյանքը, որ ունենք Աստծու Որդու հավատով, որ Իր անձը տվեց մեզ համար, որպեսզի մեզ փրկի այս չար աշխարհից, և լինենք ի փառս ամենասուրբ Երրորդության: Եվ դառնալով Ամլիքոսին՝ ասաց,- Դու դրամ վերցրու, գնա՛ քաղաք, իմացի՛ր, թե ինչ է մտածում Դեկոսը մեր մասին»:

Ամլիքոսը դրամ վերցրեց, փոխեց իր կերպարանքը, որ ոչ ոք չճանաչի և նրան չմատնի Դեկոս թագավորի ձեռքը, ու գնաց: Նա չգիտեր, որ Դեկոսի ոսկորները հող են դարձել

և հոգին խոշտանգման մեջ է: Եվ երբ մտավ Եփեսոս քաղաքը, տեսավ սուրբ Խաչի նշանը քաղաքի դռանը, իր մտքում զարմացավ: Շրջեց ամբողջ քաղաքը և նույնպես տեսնում էր տերունական Խաչի նշանը կանգնեցրած տարբեր տեղեր: Եվ մարդկանց, որ երգվում էին Տեր Հիսուսի անունով: Եվ քաղաքը թվում էր այլ կերպ, նա հիացած էր ու ապշած և ասում էր իր մտքում. «Երեկ ոչ մի տեղ չկար տերունական Խաչի նշանը, և ոչ ոք չէր համարձակվում տալ գորությունների Տիրոջ անունը, իսկ այժմ համարձակ քարոզվում է Տիրոջ անունը և իսկապե՞ս սա Եփեսոս քաղաքն է, որովհետև բնավ նման չէ, կամ թե երազ է, որ երևում է, չգիտեմ: Եվ ի՞նչ է այս եղածը, որ ապշեցնում է ինձ: Ինձ ո՞վ խելամիտ [պատասխան] կտա»: Եվ մոտենալով մի մարդու ասաց. «Սա ո՞ր քաղաքն է»: Եվ նա պատասխանեց՝ Եփեսոսն է: Եվ Ամլիքոսն իր մտքում ասաց. «Ի՞նչ եղա, Տե՛ր Հիսուս, օգնիր ինձ»: Եվ ապշած մտքով ու երկյուղով գնում էր շուկա՝ հաց գնելու և հեռանալու քաղաքից, որ չբռնվի: Եվ տվեց դրամը, որ ուներ՝ հաց առնելու, և հացավաճառն ասաց. «Նախկին թագավորների պատկերն ու գիրն ունի»,– և ցույց էր տալիս իր ընկերներին: Նրանք նայելով Ամլիքոսին ասացին. «Սա գանձ է գտել, որովհետև այս դրամը շատ հին է»: Ամլիքոսը լսեց և շատ վախեցավ, որովհետև կարծեց, որ Դեկոսի ձեռքն են մատնելու: Եվ ասաց նրանց. «Աղաչում եմ ձեզ, տվե՛ք ինձ հասնող հացը, և գնամ իմ տեղը»: Եվ նրան ասում են. «Դու ո՞ր տեղից ես... մեզ բաժին տուր, եթե ոչ՝ կմատնվես դատավորների ձեռքը և կմեռնես»: Ամլիքոսը այս լսելով ահաբեկված ասաց. «Ես սրան չէի սպասում. ինձ ավելացավ տրտմություն տրտմության վրա»: Եվ չգիտեր, ինչ պատասխան տա նրանց, որ նեղում էին իրեն:

Քաղաքում լուր տարածվեց, թե բռնվել է մեկը, որ գանձ է գտել, և բազում մարդիկ հավաքվեցին նրա շուրջը: Նա նախում էր, թե ծանոթներից մեկը երևա, և ոչ ոքի չէր տեսնում: Եվ զարմացած էր: Իսկ նրանք նեղում էին իրեն և ասում. «Այս այրը օտարական է, և ոչ ոք չի ճանաչում սրան»: Ոմանք, կերպարանքից դատելով, փախստական էին համարում նրան:

Լուրը հասավ բղեշխին, որ պատահամբ սուրբ Մարիս եպիսկոպոսի մոտ էր, եկեղեցում: Հրամայեցին բերել Ամլիքոսին և պարզել խնդիրը: Եվ երբ բերին ու տեսան դրամները՝ հարցրին նրան. «Դու ո՞ր տեղացի ես, և ի՞նչ են այս դրամները, որ առաջին թագավորների պատկեր ու գիր ունեն. ամեն ինչ ասա ստուգությամբ»: Իսկ նա չգիտեր ինչ պատասխաներ: Եպիսկոպոսն ասաց. «Ճշմարիտն ասա, որդյա՛կ, և ազատվիր փորձությունից, որ բռնվել ես»: Ամլիքոսն ասաց. «Աղաչում եմ քեզ, տե՛ր, ինձ բան հասկացրու, և ամենն ինչ որ գիտեմ՝ կասեմ: Դեկոս թագավորը քաղաքո՞ւմ է, և կամ քաղաքս Եփեսո՞սն է»: Եպիսկոպոսն ասաց. «Այժմ երկրի վրա չկա Դեկոս թագավորը, այլ բազում ժամանակներ առաջ պաշտում էր կուռքերին և հալածում քրիստոնյաներին: Այժմ Թեոդոսն է թագավոր՝ Քրիստոսի հավատացյալ, և ամենասուրբ Երրորդությունը օրհնվում և երկրպագվում է բոլորից, և այս քաղաքը Եփեսոսն է»: Ամլիքոսն ասաց. «Երեկ Դեկոս թագավորն այս քաղաքում էր, և պատուհասում էր քրիստոնյաներին, և ես երբ լսեցի՝ վախեցա, գնացի պատմեցի իմ ընկերներին, որ [Դեկոսը] մեզ է փնտրում կորցնելու համար, որովհետև հանուն Քրիստոսի հալածված ենք նրանից յոթ հոգով՝ քաղաքի պատվավորների որդիներ: Մենք վերցրինք բազում ոսկի և արծաթ, բաշխեցինք աղքատներին, և մնաց սակավ դրամ՝ մեր կարիքների համար: Այս է, որ տեսնում եք: Եվ մնում ենք Ողբոս լեռան անձավում, եկեք և տեսեք»: Եվ ասաց իրենց և ծնողների անունները, և ոչ ոք չէր ճանաչում նրանց: «Ես,– ասաց Ամլիքոսը,– եկա հաց գնելու և տանելու, իմանալու Դեկոսի մասին: Եվ այս փորձությունները, որ հանդիպեցի, չէի սպասում: Ես ձեզ պատմեցի ստույգը: Այժմ թող կատարվի Աստծու կամքը, որ գիտե ամեն ինչ: Ես ուրիշ ոչինչ չգիտեմ»:

Այնժամ եպիսկոպոսն ասաց. «Աստված այսօր մի մեծ սքանչելիք է ուզում հայտնել այս երիտասարդի միջոցով: Եկեք գնանք Ողբոս լեռան անձավը, տեսնենք Աստծու մեծամեծներին»: Եվ իրենց հետ բազմությունը վերցնելով գնա-

ցին՝ եպիսկոպոսը, բղեշխը և քաղաքի մեծամեծները, իսկ Ամլիքոսը նրանց առջևից: Եվ մտավ անձավ, պատմեց իր ընկերներին՝ ինչ որ պատահեց իրեն: Ու մինչդեռ եպիսկոպոսը ուզում էր մտնել անձավը՝ այս ու այն կողմ նայեց, տեսավ պղնձե գզրոցը, հանեց դուրս, բղեշխի և պատվավորների առջև բացեց, և տեսան երկու կապարե տախտակ, որոնց վրա գրված էին յոթ մանկանց անունները, և թե Դեկոս թագավորից հալածված են հանուն Քրիստոսի հավատի: «Քրիստոսի սուրբ վկաները չհամաձայնեցին պաշտել կուռքերին: Դեկոսի հրամանով փակվեց անձավի մուտքը, որ լինի սրանց բանտ ու գերեզման: Եվ մենք՝ Թեոդոս և Աբոս, արքայի հավատարիմներ և քրիստոնյաներ, գրեցինք, որպեսզի երբ Տերն այցելի, և հայտնվեն սրանց նշխարները՝ հայտնի լինի, որ այս սուրբ մանկուհիքը Քրիստոսի վկաներ են»:

Այս լսելով փառավորում էին Աստծուն անպատում սքանչելիքի համար, որ ցույց տվեց Տերը: Եվ մտան անձավը, տեսան սուրբ մանուկներին՝ պայծառ, գեղեցիկ և վայելուչ՝ Աստծու հրեշտակների նման և ընկնելով իրենց երեսների վրա երկրպագում էին և միմյանց ողջունում հոգևոր ողջունով: Եվ գոհացան Աստծուց, որ արժանի եղան տեսնելու հարույթյան սքանչելիքը և ահավոր տեսիլը, որ ցույց տվեց Տերը ժամանակին: Եվ խոսեցին միմյանց հետ, սուրբ մանուկները պատմեցին Դեկոսի օրերին եղած հալածանքների ու գործերի մասին: Իսկ եպիսկոպոսը պատմեց անաստված թագավորների կործանման, ուղղափառ և քրիստոսասեր թագավորության, քրիստոնյաների կարգի և հավատքի հաստատության մասին: Եվ նրանք օրհնում էին Աստծուն և անմիջապես տեղեկացրին Թեոդոս թագավորին մանուկների հարույթյան մասին, որ հայտնվեց իր ժամանակ:

Երբ այս լսեց մեծն Թեոդոս, Ամենատիրոջը մատուցեց գոհույթյուն և օրհնություն, որ հարույթյան հույսը հաստատեց սուրբ մանուկների միջոցով, ամոթահար արեց չարին: Եվ ուրախ եղավ, ցնծում էր և օրհնում Աստծուն, և շտապ հասավ այնտեղ՝ ցանկանում էր տեսնել սուրբ մանուկներ-

րին: Եվ մանկուհիք ելան նրան ընդառաջ՝ անձավից դուրս, և նրանց երեսները փայլում էին աստղերի նման, և երկրպագեցին արքային, իսկ նա երեսնիվար ընկավ, համբուրում էր նրանց ոտքերը, և մանուկները բռնեցին բարձրացրին նրան և նրա հետ մտան անձավը: Եպիսկոպոսը և բոլոր պատվավորները նստեցին գետնին և գրկելով համբուրում էին սրբերին մեկ-մեկ: Եվ թագավորը զվարճանում և օրհնում էր, Աստծուն ասելով. «Ո՞վ կպատմի Տիրոջ զորությունները, որ միայն սքանչելիքներ գործեց: Ո՞վ Աստծու մարդասիրության խորհուրդ, հավիտյան է նրա ողորմությունը իրեն հուսացողներին: Եվ ասաց, ինչ որ քարոզեցին սրբերը հարույթյան մասին, այժմ հայտնապես տեսանք այս սրբերի միջոցով: Եկեք բոլորս փառք վերառաքենք ամենասուրբ Երրորդությանը՝ այժմ և հանապազ հավիտյան»:

Թագավորը հարցրեց մանուկներին. «Ձեր ոգիներն ի՞նչ զգացողություն ունեին»: Սուրբ մանկուհիք պատասխանեցին. «Ինչպես նրանք, որ իրենց անկողնում ննջում են, առավել զգայություն մեզ հուսով բարին է, որ հակառակորդի բոլոր հնարներից ազատված է, զարմանալի մի գեղեցկություն բերկրացած, որ ոչ աչքն է տեսել, ոչ ունկն է լսել, և մարդու սիրտ չի ընկել, ուր պատրաստվեցին հոգիների շտեմարաններ՝ արժանավորներին՝ խնդությամբ և ուրախությամբ, ի փառս Աստծու, իսկ մեղավորներին՝ տրտմությամբ և հեծությամբ՝ ըստ յուրաքանչյուրի բարի և չար գործերի: Բայց կատարյալ բարիքը և պատուհասը մարմնով և հոգով ընդունվում են Աստծու արդար դատաստանին»:

Նաև այլ բազում բաներ խոսեցին թագավորի հետ և նրան օրհնեցին՝ հանուն Տիրոջ զորությունների և ասացին. «Օրհնյալ լինես դու տիրոջից, Աստծուն սիրելի, որովհետև Աստված քեզ համար մեզնով ցույց տվեց հարույթյան սքանչելիքը»: Եվ բոլորը միասին ոտքի կանգնելով աղոթեցին և օրհնեցին Աստծուն և [մանուկները] ասացին բոլորին. «Ո՞ղջ եղեք, խաղաղություն ձեզ»: Եվ իրենց գլուխները դրին [գետնին] ու դարձյալ ննջեցին և ավանդեցին իրենց հոգիներ-

րը ի փառս Աստծու: Եվ թագավորը և ամբողջ ժողովուրդը տեսնելով սքանչելիք սքանչելիքի վրա՝ օրհնում էին Աստծուն և փառավորում Նրան սքանչելիքի պատճառով:

Եվ թագավորը հրամայեց ոսկի տապաններ պատրաստել նրանց: Եվ այն գիշեր երևալով սրբերն ասացին թագավորին. «Թող մեզ մեր տեղում՝ ինչպես կանք, մինչև բոլորի հարուժյունը, և դարձյալ հարուժյուն կառնենք անապակա-նուժյուն հագած, և անմահացած կժառանգենք անսպառ բարիքը»: Այս լսելով բարեկարգեցին անձավը և գեղեցկացրին, հախճապակիով պատեցին: [Վկաներին] թողեցին այնպես, որպես ննջել էին, մեծ տոն կատարելով այն օրը՝ ինչպես վայել էր սրբերին. ի փառս ամենասուրբ Երրորդության հավիտյանս հավիտենից. ամեն:



## ՍՈՒՐԲ ԹԱՂՂՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եգիպտացի քաղաքում Նումերիոսի թագավորության և Թեոդորոսի դատավորության ժամանակ, ինը կաղանդներից առաջ, Հոռի ամսի քսաներեքին դատավորը նստեց Եգիպտացի Անդրիանոսի տաճարում և ասաց. «Կանչեցեք կրոնով ամբարշտին»: Զորականներն ասացին. «Ահա այստեղ է. խնդրում ենք քեզ»: Թեոդորոս դատավորն ասաց նրանց. «Ո՞րտեղ բռնեցիք դրան, որի մորուքի հասնելու և ծաղիկ երիտասարդության պայծառանալու սկիզբն է»: Դենեսիոս դահճապետն ասաց. «Մինչդեռ զնում էինք Անարգաբա մայրաքաղաքը, դեռ հիսուն ասպարեզով հեռու էինք, տեսանք դրան՝ արևելք ընթանալիս: Երբ մեզ տեսավ, թաքնվեց անտառի մեջ, և մենք իմացանք, թե քրիստոնյա է և աստվածներին պատվելով՝ անտառում մնացինք քառասուն օր ու քառասուն գիշեր և դրան գտանք ձիթենու տակ թաքնված: Երբ բռնեցինք, որ կապենք՝ սկսեց դիմադրել մեզ, և մենք բերով չարչարեցինք դրան, ջարդեցինք ոսկորները և երկաթե [կապանք] դնելով ձեռքերին ու ոտքերին՝ բերինք քեզ մոտ»:

Թեոդորոս դատավորն ասաց նրան. «Ո՞ր պաշտամունքից ես, կամ ո՞ր դահից, կամ ո՞ր քաղաքից, և ի՞նչ է քո անունը»: Թաղղոսն ասաց. «Եթե ուզում ես իմանալ, թե ինչ պաշտամունքից եմ՝ կոչվում եմ քրիստոնյա, իսկ թե ուզում ես իմանալ՝ ինչպես են մարդիկ անվանում՝ կոչվում եմ Թաղղոս և Լիբանանից եմ, հավատում եմ Գալիլիացուն և ընտանի եմ Երուսաղեմացուն: Իմ մայրը Հռոմեղիանան է, իսկ հայրս՝ Բեկոսիանոսը: Ես արվեստով բժիշկ եմ և եղել եմ Հովհաննես եպիսկոպոսի սարկավագը: Քրիստոնյաների հալածանքի ժամանակ բոլորը փախան, միայն ինձ բռնեցին և հանձնեցին Եդեսիայի Տիբերիանոս դատավորին. ինձ չարաչար տան-

Ղանքներ պատճառեց և երեք անգամ հրապարակում տան- ջանքի ենթարկեց՝ կարծելով թե իմ մտածումները կդարձնի Աստծու ուրացության: Ես դիմեցի Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն, և [Աստված] ինձ փրկեց նրա անօրեն ձեռքերից: Իսկ այժմ հասա, հանձնվեցի քո ատյանին, որով եկավ Աստծու անվան համար իմ մեռնելու ժամանակը: Արա՛ ինչ ուզում ես, որովհետև մոտ է նա, ով օգնում է ինձ՝ Քրիստոս»:

Դատավորն ասաց. «Ա՛յ փախստական, մի՛ կարծիր, թե կարող ես իմ ձեռքից փախչել»: Թաղղոսն ասաց. «Հավատում եմ ամենաթագավոր Աստծուն, որ ամոթի չի մատնի իր՝ ի Քրիստոս հուսացողներին, և ովքեր Նրա անվան համար գալիս են այս վկայությունը»: Դատավորն ասաց. «Գայլիկոնով ծակեցեք դրա պեղները և պարաններ անցկացրեք և քարչ տվեք քաղաքով, որ փախչող է, գուցե կփախչի թագավորներից»:

Եվ սկսեցին անել այդպես, Ղանացին ու չկարողացան: Եկավ նվիրակապետն ու ասաց. «Աղաչում ենք քեզ, տեր, առավոտից մինչև հիմա չարչարվեցինք ու ոչինչ չկարողացանք անել»: Դատավորն ասաց. «Կրկին Ղանացեք, թե-րևս կարողանաք ծակել»: Եկավ Հյուսն Աստերիոսը և ասաց. «Ինչպես հրամայեցիր՝ ծակեցինք նրա պեղները և կապեցինք պարաններով»: Թեոդորոս դատավորն ասաց. «Այստեղ բերեք փախչողին»: Եվ բերին: Ասաց նրան. «Մոտեցիր և զոհ մատուցիր աստվածներին թագավորների հրամանի համաձայն, որ փրկվես տանջանքներից»: Թաղղոսն ասաց. «Քրիստոսն եմ և կուռքերին չեմ երկրպագի, որպեսզի չկորցնեմ Աստծուց ինձ խոստացված վարձը»: Դատավորն ասաց. «Եկեք-կախեցեք նրան գլխիվայր, որպես անզգամներից մեկի»: Իսկ սատանայի արբանյակները միայն փայտ[ից] կախեցին: Եվ Թաղղոսի աշակերտ Տիմոթեոսն ասաց. «Տե՛ս ինչ են անում սատանայի արբանյակները»: Թաղղոսն ասաց. «Լո՛ւռ մնա, քանի որ Քրիստոսն է, որ մեզ օգնում է և նրանց Ղանքերը ունայն է դարձնում»: Դատավորն ասաց. «Օ՛, թշվա՛ռ, ո՛վ է, որ ձեզ չհրամայեցի կախել դրան, և դուք միայն փայտ[ից] կախելով եք տանջում և ծաղրում եք արքունական հրա-

մանս»: Հյուսն Աստերիոսն ասաց. «Այն հավատացյալ մարդու Տեր Աստվածը կենդանի է, հանցանք չեմ գործում և կամ ծաղրում, այլ ես ևս խոստովանում եմ Քրիստոսին՝ Թագավոր երկնքի և երկրի, որին նա է հուսացել ու հավատացել»:

Իսկ Աղեքսանդրոս դահճապետն ասաց. «Արդարև մեծ փառք տեսանք այս երանելի մարդու պարագային և չենք կարող դրան ձեռք տալ, որի համար և մենք հավատացինք Քրիստոսին և քրիստոնյա ենք: Դրանով ճշմարտության գիտություն ստացանք, սուրբ Թաղղոսի չարչարակից կլինենք»: Եվ դատավորը տեսնելով՝ խիստ բարկացավ նրանց վրա, մոնչալով իբրև առյուծ, ատամներն էր կրճտում նրանց վրա: Իսկ Աստերիոսն ու Աղեքսանդրոսը աղոթելով ասացին. «Տեր Աստված քրիստոնյաների, մի՛ թողնիր, որ սատանան հափշտակի անձերը Քո ծառաների, որ խոստովանում են Քեզ»: Այս ասելով փախան դատավորի առջևից: Եվ պալատից Միտոս անունով մեկը հասավ ու սպանեց նրանց, եկավ, պատմեց դատավորին, ասաց. «Տե՛ր դատավոր, նրանց հասա լեռան վրա, բռնեցի և սպանեցի սրով և նրանց գցեցի այնտեղ, և ամբողջ բազմությունը տեսավ»:

Դատավորն ասաց. «Դու ի՞նչ ես կամենում, Թաղղո՛ս, զոհ մատուցել աստվածներին և ապրե՞լ, թե՞ մեռնել չարչար»: Թաղղոսն ասաց. «Ձեա կարող համոզել Աստծու ծառայիս զոհ մատուցելու սնտի դեերին և նրանց պատկերներին: Ձեմ վախենում քո տանջանքներից, քանի որ մերձ է ինձ իմ հույս Քրիստոսը և ինձ կազատի քո տանջանքներից»: Եվ դատավորը բարկացավ, ելավ անձամբ տանջելու երանելիին, և նրա ձեռքերը փայտացան: Դատավորն աղաղակեց ասելով. «Աղաչում եմ քեզ, ճշմարիտ Աստծու ծառա, աղոթիր ինձ համար, որ ձեռքերս բուժվեն»: Եվ երբ Թաղղոսը աղոթեց՝ ողջացան նրա ձեռքերը: Եվ բոլորը զարմացած ասացին. «Մեծ է Աստվածը քրիստոնյաների»: Դատավորն ասաց. «Կանչեցեք նավավարին»: Եվ երբ եկավ՝ ասաց. «Դրան գցեցեք նավ և տարեք Սիպրոս քաղաքը և այնտեղ կմեռնի դա, թող իմ ձեռքով չմեռնի»: Թաղղոսն ասաց. «Դու ես դրել սկիզբը և

քո ձեռքով եմ մեռնում»։ Նրան վերցրին, գցեցին նավի մեջ, ու մինչդեռ վարում էին, Թաղղոսն ասաց. «Քրիստոս կարող է դարձնել այս նավը այնտեղ, ուր Թեոդորոսը հարվածեց ինձ»։ Երբ գնում էին, ծովի մեջ ուժեղ հանդիպակաց հողմ ելավ, ետ դարձրեց նավերը, այն նավով հանդերձ, որի մեջ սուրբ Թաղղոսն էր։ Եվ երբ մոտեցան այն տեղին, ուր ատյանն էր, Թաղղոսը աղաղակեց և ասաց դատավորին. «Արդ, ուր են քո աստվածները, ուր են քո պարծանքները. դիմադարձելով Քրիստոսը հաղթեց և բթացրեց քո հայր սատանայի խայթոցը»։

Դատավորն ասաց. «Տեսեք, թե ինչպես կախարդեց և նավերը ետ դարձրեց»։ Եվ հրամայեց կախարդներ բերել։ Երբ բերին, Թեոդորոս դատավորն ասաց. «Ինչ անենք սրան, որովհետև իր կախարդուժյամբ հաղթեց»։ Ուրբեկոս կախարդն ասաց. «Քրիստոնյաների ազգը չարակոխի է և չարամահ, բայց դու արա ինչ որ կասեմ քեզ, և արագ կսատկեցնես նրան. պատրաստիր տախտակներ և կարկինի նման սուր գամեր և նրա մազերը մեխել տուր տախտակներին և քարշ տուր քաղաքի հրապարակում։ Այդպես կվերանա նրա կախարդուժյունը, իսկ դրանից հետո թող նետեն գազաններին, որ քաչքչեն նրա մարմինը»։ Եվ դատավորը շտապ հրամայեց կատարել տախտակներով գամելու հնարքը։ Երբ պատրաստեցին, բերին սուրբ Թաղղոսին։ Նա ձեռքերը տարածելով սկսեց աղոթել և ասաց. «Տե՛ր Աստված, մնա Քո ծառայի մոտ և հաղթիր սատանայի չար հնարներին, որ ինձնով փառավորվի Քո անունը և ճանաչվի նրանց չարուժյան ամբարշտուժյունը, որ ոչ թե կախարդուժյուն է, այլ քո աստվածուժյան անպատմելի զորուժյունը»։ Եվ երբ այս ասաց՝ նրան պառկեցրին տախտակների վրա և գամեցին, և կապելով քարշ էին տալիս նրան քաղաքի ասպարեզում։ Եվ դատավորը նստեց ասպարեզում, հարցրեց. «Ասա՛, ո՞վ տվեց Քրիստոսի չար պաշտամունքը»։ Զորականներն ասացին. «Կարծում ենք, որ մեռավ»։ Դատավորն ասաց. «Շամփուր տաքացրեք, դարձրեք հրի նման և ծակեցեք դրա կողերը, միգուցե խաբուժվի»։ Եվ երանելի Թաղղոսը ինքնի-

րեն տյառնագրեց Քրիստոսի Խաչի սուրբ նշանով, շարժվեց վեր վազելով, կտրեց բոլոր կապանքները, որ պնդված էին բևեռներով, կանգնեց մեջտեղում, ավելի զորավոր խոսելով ասաց. «Օրհնյալ է Աստված, որ ինձ հարուցեց մեռելներից և ամոթահար արեց կուռքեր պաշտողներին»։

Այնժամ դատավորը հրամայեց նրա վրա գազաններ բաց թողնել։ Եվ մի մատակ առյուծ եկավ, նրան չվնասեց։ Եվ դարձյալ արձակեց նրա վրա վագրեր, և գազանները զնացին, գորովանքով ընկան նրա ոտքերը։ Եվ սուրբ Թաղղոսը բարձրաձայն ասաց. «Երանի նրանց, որ հավատում են Քրիստոսին, երանելի են՝ ու՛քեր առանց երկմտուժյան կմոտենան նրա խոստովանուժյանը, երանելի են, որ իրենց անձը չարչարանքի մատնեցին՝ հանուն Քրիստոսի, որովհետև նրանք հաղթում են սատանային»։ Երբ այս լսեց դատավորը, ասաց. «Ինչպե՞ս կախարդեց վայրի գազաններին՝ դիմելով Քրիստոսի անվանը»։ Եվ հրամայեց բերել նրան ասպարեզի պատի մոտ, որ քաղաքի ամբողջ բազմուժյունը քարկոծի նրան։

Թաղղոսն աղաղակեց և ասաց. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի ամենակալ Հայր, ինձնից հեռացրու մարդկային սպառնալիքը, որպեսզի իմանան, որ Դու ես միակ Աստվածը, բացի Քեզնից՝ ուրիշ ոչ ոք, իսկ ես Քո ծառան եմ»։ Եվ նա այս ասելով աղոթեց. քարերը ետ էին դառնում և վիրավորում ամբարիշտներից շատերին, իսկ սուրբը չվիրավորվեց, քանի որ ծածկված էր Աստծու շնորհով։ Եվ դատավորը հրամայեց իջեցնել նրան և ասաց. «Մոտեցիր և զոհ մատուցիր աստվածներին, որովհետև նրանք օգնում են քեզ, և որի համար ես ներողամիտ եղա քո նկատմամբ, իսկ եթե ոչ՝ երզվում եմ Ասկլեպիոսով, այսուհետև կհրամայեմ քեզ մատնել դառն տանջանքների»։ Թաղղոսն ասաց. «Քրիստոնյա եմ և չեմ կարող զոհ մատուցել դեներին։ Ինչպես ուզում ես արա՛, չեմ վախենում քո տանջանքներից, որովհետև Քրիստոսն է, որ օգնում է ինձ»։

Եվ դատավորը հրամայեց ձեթ և ձյուլթ, ծծումբ և կուպր բերել և միասին խառնել երկաթե կաթսայի մեջ և լավ տա-

քացնել և լցնել նրա գլխին: Ասաց. «Տեսնե՞մ՝ դրան կօգնի՞ Քրիստոսը, որ նրա հուշան է»: Թաղղոսն ասաց. «Հավատում եմ իմ Տեր Հիսուս Քրիստոսին, որ զորացրեց և օգնեց ինձ, Նա է, որ հաղթում է քեզ ինձանով, և դու՛՛ս՝ ամբարշտությամբ կուրացած անօրեն, չես կարող տեսնել իմ Քրիստոսի օգնականութունը»: Երբ այս ասաց, կաթսան մոտեցրին, որ դեռ եռում էր, և լցրին նրա գլխին: Իսկ կուպրը եղավ ջրի նման սառն և նրան չվնասեց: Դատավորն ասաց. «Քո կախարհությամբ հաղթում ես բոլորին, միգուցե քո կախարհությամբ մեզ համոզես քրիստոնյա՞ դառնալ»: Եվ հրամայեց կանչել Ուրբեկոս կախարհին: Նա այնպես կռվեց նրա հետ, և երբ [Թաղղոսը] բոլորին հաղթեց՝ դատավորը հրամայեց կանչել Իլիթոպոս և Քարտիկուր թովիչներին: Եվ երբ եկան՝ ասաց. «Ի՞նչ անենք այս քրիստոնյային, որովհետև պարծենալու է, թե հաղթեց մեզ: Այժմ դրան գցեցեք չար գազանների մեջ»: Եվ նրան ասացին. «Այս օրերին կան գազաններ, որ ոչինչ չեն կերել»: Դատավորն ասաց. «Մի՛ խնայեք դրան, այլ գցեցեք գազանների առաջ, որպեսզի գազանները վերջ տան դրան»:

Երբ նրան գցեցին գուբը, գազանները գնում, նրա ոտքերն էին ընկնում, լիզում էին ոտքերը և նրան չէին վնասում: Իսկ գուբի մեջ կային իժեր, քարբեր և եղջերավոր օձեր: Թաղղոսը գուբի մեջ գազանների հետ մնաց երեք ցերեկ և երեք գիշեր և այնտեղ փառավորում էր Աստծուն: Երեք օր անց դատավորն ասաց թովիչներին. «Կախարհները հաղթեցի՞ն այն թովիչին»: Եվ նրանք պատասխանեցին. «Քո հրամանի համաձայն նրան գցեցինք գուբը. այնտեղ գազանների մեջ մնաց երեք օր ու գիշեր: Եվ ամենևին չմոտեցան նրան, այլ գիշեր-ցերեկ նրան շրջապատած օրհնում ու փառավորում էին իրենց Տեր Աստծու անունը»: Զարմացած դատավորը հրամայեց բերել նրան: Եվ երբ [սուբբը] մտավ նրա մոտ, դատավորն սկսեց համոզել նրան և ասաց. «Ե՛կ, բարի՛ մարդ, զո՛հ մատուցիր աստվածներին, խոստովանի՛ր Ադրիանոս ամենակալին, և քեզ կազատեմ»: Թաղղոսն ասաց. «Ե՛լ առաջ քեզ ասացի և՛ այժմ ասում եմ, որ քրիստոնյա եմ, չեմ ուրանա իմ Աստծուն, չեմ մոտենա անզգա քարեղեններին և պիղծ

դեերի պատկերներին: Եվ Ադրիանոսի՝ ամբարշտ մարդու համար ինչո՞ւ ես ինձ բռնադատում, որ ես չեմ խոստովանում նրան, այլ գիտեմ, որ անօրեն ու ամբարիշտ է, անսուբբ ու ժանտագործ»: Թեոդորոս դատավորն ասաց. «Իմ ձեռքից չես պրծնի, մինչև աստվածների վրեժը չլուծեմ, որ հայհոյեցիր, անարգեցիր և արհամարհեցիր մեր դատավորական իշխանութունը»: Եվ հրամայեց տաքացնել հնոցը, և առավել ջերմացրին: Պալատից եկավ ոմն Կղավդիանոս և դատավորին ասաց. «Այնպես եղավ հնոցը, ինչպես ճառագայթները սաստիկ այրումից»: Եվ հրամայեց դատավորը Թաղղոսին գցել հնոցը ընկերներով հանդերձ, որոնք կոչվում էին քրիստոնյա, և որոնց անունները սրանք են. Նարգիսոս, Թեոդիոս, Ակաստասիա, Փիղադուս, Մարկարիա, Թեոդոդե և Անաստասիա:...

... Եվ դահիճները վերցրին Թաղղոսին ու նրա ընկերներին, որ բազում չարչարանք էին կրել Տիրոջ անվան համար և գցեցին հնոցը: [Նրանք] գովում և փառավորում էին Աստծուն, որ իրենց արժանի արեց հասնելու երկնային պսակին: Իրար գրկած՝ այրը՝ այրին, կինը՝ կնոջը, աղաղակում և ասում էին. «Դու, որ երեք մանուկներին հնոցում հովանի եղար, պահիր մեզ անարատ այս հրի մեջ և ընդունիր մեր հոգիները, որ սուբբ և ճշմարիտ ես և Քո լույսի խորանում դասիր սրբերի հետ, որպեսզի անդադար փառավորենք Հորը, Որդուն և Սուբբ Հոգուն, այժմ և հավիտյանս ամեն»: Ամբողջը ասելով հոգիներն ավանդեցին Տիրոջ ձեռքը: Եվ հանկարծակի որոտմունք, փայլատակում և սաստիկ անձրևներ եղան ու մարեցին հուրը: Դատավորը երկյուղից հուսալքվեց, աղաղակեց ասելով. «Վա՛յ ինձ՝ մեղավորիս, որ դառնացրի Աստծուն, և նրա սրբերին կոտորեցի», - և քիչ օրեր անց կյանքից զրկվեց և շատերը հավատացին Տիրոջը:

Ես՝ Տանեբոսս, սուբբ Թաղղոսի ծառան, վերցրի սրբերի մարմինները և գերեզման դրի ասպարեզի վերևը՝ Ադրիանոսի տաճարի մոտ: Եվ հանապազ փառավորվում է Աստված սուբբ վկաների ճգնությամբ և սրբերի հիշատակը կատարողների հոգիներին ու մարմիններին բժշկութուն է շնորհում, որոնք ճշմարտությամբ փառավորում են երեքանձնյա Տերու-

թյունն ու Միաստվածությունը այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն<sup>1</sup>: .....

...[Թաղղոսը] խաչակնքվելով շարժվեց դեպի վեր, խզեց բոլոր կապանքները, քանդեց գամերը, կանգնեց մեջտեղը և խոստովանելով ասաց. «Օրհնյալ է Աստված, որ ինձ հարություն տվեց մեռելներից և ամոթահար արեց կուռքերի պաշտոնյաներին»: Այնժամ դատավորը հրամայեց նրա վրա արձակել գազաններ: Եվ մոտեցավ մի մատակ առյուծ, ընկավ նրա ոտքերը: Հետո արձակեցին վագր, որ ընկավ նրա առաջ: Գազանները ձայնով ձևացնում էին սրբի գովություն: Եվ սուրբ վկան ասաց բարձրաձայն. «Երանի նրանց, որ հավատում են Քրիստոսին, երանելի են, որ առանց երկմտության մոտենում են Նրան խոստովանելու, որովհետև նրանք կժառանգեն պարգևներ: Երանելի են, որ իրենց անձերը մատնում են Աստծու համար, որովհետև նրանք հաղթում են սատանային»: Երբ այս լսեց դատավորը, զարմացավ և ասաց. «Ինչպես վայրենի գազաններին կախարդեց՝ հիշելով Հիսուսի անունը»: Դատավորը հրամայեց. «Դրան գամեցեք պարսպին», և ամբողջ բազմությանը հորդորեց քարկոծել նրան: Եվ քարկոծելիս սուրբն աղաղակում և ասում էր. «Ամենակալ Աստված, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, ինձնից դարձրու սպառնալիքը, որ հասկանան, թե Դու ես Աստվածը և այլ Աստված չկա բացի Քեզնից, և ես՝ Քո անարժան ծառաս կխոստովանեմ Քեզ»: Եվ աղոթելիս քարերը ետ էին դառնում և բազում ամբարիշտներ սպանվում էին, իսկ սուրբը չէր վերավորվում...

Ես սուրբ Թաղղոսի ծառա Տանեբոսը վերցրեց սրբերի մարմինները, դրեց գերեզման ասպարեզի վերնամասում, Ազրիանոսի տաճարի մոտ: Դրանով Աստված փառավորվում է սուրբ վկաների ճգնությունը և բժշկությունն է շնորհում սրբերի հիշատակը կատարողների հոգիներին ու մարմիններին, որոնք ճշմարտություն փառավորում են երեքանձնյա Տերությունը և մի Աստվածությունը. այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

1 Բնագիրն այսպես է:

## ՍՈՒՐԲ ԹԵԿՂԻ ՎԱՐՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Պողոսը հալածվելուց հետո ելավ, գնում էր Իկոնիոն քաղաքը, նրա հետ ճանապարհ ընկան Դեմասն ու Հերմոգենեսը՝ պղնձագործ և դարբին, որ լի էին խոովքով, մեծաբանում էին և Պողոսի հետ խոսում իբրև իրենց սիրելի: Իսկ Պողոսը Քրիստոսի ողորմության շնորհ էր հայցում և կեղծությունը չէր գնում նրանց հետ, այլ սիրում էր նրանց: Եվ այնպես էր սիրում, որ Ամենատիրոջ վարդապետությունը, քարոզությունը, ծնունդն ու հարությունը իբրև սիրելիների պատմում էր նրանց և նրանց հասու էր դարձնում Քրիստոսի մեծությունը և խոսքերով ցույց տալիս, թե ինչպես [Քրիստոս] հայտնվեց իրեն:

Ոնեսիփորոս անունով երանելի մի այր լսեց, որ Պողոսը գալիս է Իկոնիոն քաղաքը, ընդառաջ ելավ ընտանիքով և կնոջով հանդերձ՝ ընդունելու նրան, քանի որ Տիտոսը նրանց պատմել էր և ասել Պողոսի արտաքին նշանները, որովհետև նա Պողոսին մարմնով չէր ճանաչում, այլ միայն հոգով: Նա գնաց, կանգնեց պողոտայի ճամփաբաժանին, որ գնում էր Լյուստրիա քաղաքը: Եվ սպասում էր նրան: Եվ նրանց, որ գնում ու գալիս էին՝ նայում էր ըստ նշանների, որ տվել էր նրան Տիտոսը: Երբ տեսավ, որ գալիս էր Պողոսը՝ չափահաս մարդ, գանգրահեր, ծնկները կարճ, ծավի, մեծ աչքերով, կից հոնքերով, երկար բեղերով, Տիրոջ շնորհով և ողորմությունով լի. երբեմն իբրև մարդ էր երևում, երբեմն՝ հրեշտակի պես: Երբ Պողոսը տեսավ Ոնեսիփորոսին, շատ ուրախացավ: Ոնեսիփորոսն ասաց նրան. «Ողջո՛ւյն քեզ, Պողո՛ս, Օրհնյալի առաքյալ»: Պողոսն ասաց նրան. «Ողջո՛ւյն քեզ և քո ամբողջ ընտանիքին, Ոնեսիփորո՛ս»: Իսկ Դեմասն ու Հերմոգենեսը լցվեցին ցասումով և մեծ քինով երգիծում էին և ասում Պողոսին. «Մենք Օրհնյալինը չէ՞ինք, որ այդպիսի ողջույն երբեք մեզ չտվիր»: Պողոսը պատասխանեց. «Որովհետև

ձեր մեջ չեմ տեսնում արդարութեան պտուղ»։ Ոնոսիփորոսն ասաց նրանց. «Լսեցե՛ք ինձ, դուք ևս եկեք իմ տունը և հանգստացեք»։ Եվ երբ Պողոսը մտավ Ոնոսիփորոսի տունը, այնտեղ մեծ ուրախություն եղավ։ Ծուներ իջած աղոթեցին և ելան հաց կտրեցին։

Պողոսը մոտեցավ և սկսեց խոսել Տիրոջ Բանը ոգիների ճշմարտության և մեռելների հարության մասին և ասաց այսպես. «Երանի նրանց, որ սուրբ են սրտով, որովհետև կտեսնեն Աստծուն։ Երանի նրանց, որ իրենց անձը պահում են սրբութեամբ, որովհետև կկանչվեն Աստծու տաճարը։ Երանի նրանց, որ ճնշում են մարմինն ու հոգին, որովհետև նրանց հետ խոսում է Աստված։ Երանի նրանց, որ կարհամարհեն աշխարհս, որովհետև հաճո կլինեն Աստծուն։ Երանի նրանց, որ կին ունենան այնպես, կարծես թե չունեն (Ա. Կորնթ. է. 29), որովհետև նրանք կժառանգեն երկիրը։ Երանի նրանց, որ իրենց սրտում ունեն Աստծու երկյուղը, և նրանք հրեշտակ կկոչվեն։ Երանի նրանց, որ դողում են, երբ լսում են Աստծու խոսքը, որովհետև նրանց կկանչի Տերը։ Երանի նրանց, որ ընդունեցին Հիսուս Քրիստոսի իմաստությունը, որովհետև նրանք Աստծու որդի կկոչվեն։ Երանի նրանց, որ կպահեն մկրտությունը, որովհետև նրանք կհասնեն Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն։ Երանի նրանց, որ կառնեն Քրիստոսի օրինակը, որովհետև նրանք կլինեն մեծ լույսի մեջ։ Երանի նրանց, որ Քրիստոսի սիրո համար կելնեն մարմնից, որովհետև նրանք կժառանգեն հավիտենականը և մշտապես կլինեն Աստծու Որդու աջ կողմում։ Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն կգտնեն Հորից և դատաստանի օրը կստանան արքայություն։ Երանի կույսերի հոգիներին ու մարմիններին, որովհետև նրանք հաճո կլինեն Աստծուն, և չի կորչի նրանց սրբության վազքը, որովհետև Բանի Հոր գործը կգտնի նրանց, և կյանք կժառանգեն Աստծու Որդու օրերին, և հավիտենական հանգիստ կլինի նրանց»։

Ու մինչ Պողոսը խոսում էր Աստծու բոլոր մեծություններից, Ոնոսիփորոսի տանը հավաքվածների մեջ, Թեկղ անու-

նով մի կույս՝ Թեկղիոսի դուստրը, որ նշանածն էր մի այրի, որի անունը Թեմերոս էր, եկել նստել էր մի պատուհանի մոտ, որ մերձ էր նրանց տանիքին, լսում էր Պողոսի խոսքերը սրբության մասին և բոլորովին չէր հեռանում պատուհանից գիշեր ու ցերեկ և լսում էր Պողոսի աղոթքը, զարմանում նրա հավատի վրա։ Մանավանդ տեսնում էր բազում կանանց, որ մտնում էին Պողոսի մոտ՝ լսելու Աստծու պատվիրանների պատգամները, որ նա ուսուցանում էր։ Ինքը ևս կարոտում էր նրան, քանի որ չէր տեսնում նրա տեսքը, այլ միայն լսում էր խոսքերը։ Եվ բոլորովին չէր հեռանում պատուհանից։ Այնժամ մայրը [մարդ] ուղարկեց Թեմերոսի մոտ, որի հետ նշանված էր [դուստրը]։ Երբ Թեմերոսը լսեց, որ իր զոքանչը կանչում է, իսկույն եկավ, կարծելով թե Թեկղին իրեն կտան կնություն։ Թեմերոսը հարցրեց զոքանչին և ասաց. «Ո՞ւր է իմ կին Թեկղը, որ տեսնեմ նրան»։ Պատասխանեց զոքանչը Թեմերոսին և ասաց. «Քեզ պատմելու մի բան ունեմ, Թեմերո՛ս։ Քո նշանած Թեկղը ահա երեք օր և երեք գիշեր չի հեռանում մի պատուհանից, ո՛չ ուտում է, ո՛չ խմում, ո՛չ ելնում է այնտեղից, այլ աչքերը վրան հառած ակնդետ նայում է մի օտար մարդու և իբրև քաղցր բանի է նայում նրա խաբեական, սնոտի և անհուն խոսքերին։ Ես զարմացած եմ, թե ինչու մի իմաստուն կույս այդպես հետևում է չարաչար ու պատիր խոսքերին։ Ասում եմ քեզ, Թեմերոս, որ այն մարդը ապականեց Իկոնիա քաղաքը և Թեկղին, որ քեզ ենք խոստացել, խաբում է։ Բազում այլ կանայք և երիտասարդներ գնացին նրա մոտ, և [նա] սովորեցնում է պաշտել մի Աստծու և ապրել սրբութեամբ։ Եվ նա պատում է Թեկղիին ինչպես սարդի ոստայնը, և ընկղմվեց մի ցանկություն և չարաշուկ ապականության գործի մեջ։ Եվ աչքը չի հեռացնում պատուհանից և բնավ չի հեռանում նրանից, ո՛չ ուտում է, ո՛չ ըմպում և ձեռքից գնում է կույսը։ Արդ, Թեմերո՛ս, դու մտիր և խոսիր նրա հետ, որովհետև քո հարսնացուն է»։

Եվ Թեմերոսը մոտեցավ նրան, որ իր հարսնացուն էր, որորովհետև նախ՝ սիրում էր Թեկղին, երկրորդ՝ վախենում

էր [Պողոսի] նկատմամբ նրա հիացմունքից և ասաց. «Չէ՛ որ դու իմ նշանածն ես. ի՞նչ է այդ չար ապականությունը, որ բռնել է քեզ, դարձիր ինձ մոտ և ամաչիր ինձնից»։ Խոսեց և մայրը. «Ինչո՞ւ խոնարհ նայում ես և չես տալիս պատասխան, այլ և նմանվել ես մոլեգնոտի»։ Երբ տեսան տնեցիները՝ սկսեցին բոլորը լաց լինել։ Թեմերիսը լալիս էր, թե կինը հեռանում է իրենից, իսկ մայրը՝ թե դուստրն է հեռանում իրենից, աղախինները՝ թե զրկվում են իրենց տիրուհուց։ Եվ տանը բազում տրտմություններ ու վիշտ եղան, իսկ Թեկղի համար փուլթ չէր այդ ամենը, այլ ականջը խոնարհեցնում էր լսելու Պողոսի խոսքերը։

Այնժամ Թեմերոսը լցվեց ցասումով, գնաց հրապարակ և նայում էր մարդկանց, որ մտնում ու ելնում էին Պողոսի մոտ։ Եվ հանկարծ տեսավ երկու մարդու, որ վիճում էին միմյանց հետ։ Այդ պահին Թեմերոսը մոտեցավ և ասաց նրանց. «Ինչի համար եք վիճում, կամ ո՞վ է այդ մարդը, որ ներսում ձեզ հետ է, որ մոլորեցնում է երիտասարդներին ու կույսերին և պատվիրում, որ բոլորովին հարսանիք չլինի։ Ես ուզում եմ ձեզ տալ շատ արծաթ, որ ինձ ասեք՝ ո՞վ, ո՞րտեղից է, որովհետև քաղաքիս գլխավորներից եմ»։ Իսկ Դեմասը և Հերմոգենեսը, երբ նրան տեսան, եկան և ասացին. «Այն մարդը, որ դու ասում ես, ո՞վ է և ո՞րտեղից՝ չգիտենք, բայց այս գիտենք՝ մեկն առանձնացնում է երիտասարդներին կույսերից և կույսերին երիտասարդներից և ասում է. «Դուք չեք կարող հառնել մեռելներից, եթե ձեր անձը սրբությամբ չպահեք»։ Թեմերոսն ասաց նրանց. «Ընկերնե՛ր, եկե՛ք ինձ հետ իմ տունը և մնացեք ինձ հետ»։ Եվ նրա հետ գնացին ընտիր ընթրիքի։ Եվ հաց դրեց և խորտիկներ պատրաստեց, ընթրիք տվեց նրանց Թեմերոսը։ Քանի որ սիրում էր Թեկղին և կամենում էր կնության առնել, այն օրը, որ նշանակել էր նրա գոքանջը։ Եվ մինչդեռ խնջույքի էին, Թեմերոսն ասաց նրանց. «Ի՛մ սիրելի ընկերներ, ինձ ասացեք՝ ի՞նչ է ուսմունքը, որ սովորեցնում է այն այրը, որ ես ևս իմանամ, որովհետև քչերը չեն, որ ամբաստանում են նրան, իսկ ես շատ եմ

ցավում իմ կնոջ համար, որ սիրեց տարաշխարհիկ և օտարական մարդուն, և ահա զրկվում եմ նրանից»։ Պատասխանեցին Դեմասն ու Հերմոգենեսը և ասացին նրան. «Դու, Թեմերո՛ս, գնա՛, նրա մասին տեղեկացրու դատավորին և ասա այսպես. «Այն այրը նոր և օտարոտի ուսմունք է սովորեցնում հանուն Քրիստոսի»։ Այն ժամանակ, երբ [դատավորը] լսի, կկորցնի նրան, և դու կառնես քո կնոջը, իսկ մենք քեզ կսովորեցնենք մեռելների հարությունը, որ ուսուցանում է նա»։ Երբ Թեմերոսն այս լսեց, քանի որ լի էր նախանձով ու քեհով, ծերերով հանդերձ և բազում զինավառ զորքով շտապեց առավոտյան գնալ Ոնեսիփորոսի տունը։ Եվ ասաց Պողոսին. «Կորցրիր Իկոնիա քաղաքս և իմ նշանած Թեկղին մոլորեցրիր քո ուսմունքով, որ ինձ կին չդառնա։ Այժմ արի, գնանք դատավորի մոտ»։ Եվ ամբողջ քաղաքն ասում է զորքին. «Քարշ տվեք այդ մոգին, որ եղծելով ապականեց մեր կանանց օտարոտի ուսմունքով»։ Երբ Պողոսն իրեն բռնողների հետ գնաց և կանգնեց դատավորի առաջ, Թեմերոսը ձայնը բարձրացրեց և ասաց դատավորին. «Չգիտենք այս այրը ո՞վ և ո՞րտեղից է, թույլ չի տալիս կույսերին ամուսնանալ։ Այժմ թող ասի քո առաջ, թե ինչի համար է այդ ուսմունքը սովորեցնում»։ Իսկ Դեմաս և Հերմոգենես դարբինները, որ խռովքով լի էին, մոտեցան և ասացին նրան. «Ասա՛, որ քրիստոնյա է, և անմիջապես կկորցնի դրան»։ Երբ դատավորը լսեց Թեմերոսի խոսքը և մյուսներին, որ բռնել էին Պողոսին, հարցրեց. «Ասա՛ ինձ, Պողոս, ո՞րտեղից ես դու և ի՞նչ ես ուսուցանում, քանի որ քիչ չեն չարախոսները, որ ամբաստանում են քեզ»։

Այնժամ Պողոսը բարձրացրեց ձայնը և ասաց. «Ես կպատմեմ, թե ինչ եմ ուսուցանում, լսի՛ր, դատավո՛ր. ուսուցանում եմ մի Աստված, որ մարդկանց չարի դեմ չար չի հատուցում. Աստված, որին ոչինչ պետք չէ, միայն մարդկանց որդիների կյանքը, ինձ առաքեց որպեսզի կորստից և պղծությունից և մահվան ամեն ցանկությունից սրբեմ նրանց, որ այլևս մեղք չգործեն. դրա համար ինձ առաքեց Աստված, որ ես քարոզում և ավետարանում եմ, որպեսզի ամեն մարդու հոգսը

Նրա վրա լինի, որը հոգ տարավ փրկելու իր ժողովրդին մոլորությունից, որ այլևս մեղք չգործեն և զերսությամբ չընթանան, այլ նրանց մեջ ահ ու երկյուղ լինի Աստծու հավատքով, որ ճանաչեն Սերը և ճշմարտության երկյուղը: Արդ, ինչ հայտնեց ինձ Աստված՝ այն եմ ուսուցանում, ինչ պարտական եմ դրանց»:

Երբ դատավորը լսեց այս խոսքերը՝ հրամայեց, որ նույն կապանքով բանտում մնա, մինչև հնարավոր լինի կարգին լսել նրան: Իսկ Թեկղը նույն գիշերը առավ իր ապարանջանը, տարավ, տվեց իր տան դռնապանին: Եվ բացեց դուռը և ելավ զնաց բանտապետի մոտ, որ պահում էր Պողոսին և նրան տվեց ոսկի հայելի, որ մտնի Պողոսի մոտ: Եվ [պահակը] նրանից հայելին վերցրեց և թույլ տվեց: [Թեկղը] գնաց, նստեց Պողոսի ոտքերի մոտ և լսում էր Աստծու մեծությունները: Պողոսը բնավ տրտում չէր, այլ համարձակ և բոլոր իր մոտ եղողներին բացահայտ ուրախացնում էր Աստծու պատվիրանով: Թեկղը մեծ ուրախությամբ համբուրում էր նրա ոտքերը, ոտքերի ու ձեռքերի կապանքները:

Եվ երբ ընտանիքը Թեկղին փնտրեց և չգտավ, համարեցին, թե կորել է, զնացին և նրան փնտրում էին ճանապարհներին: Եվ եկավ դռնապանի մի ընկերը, հայտնեց. «Ես [երազ] տեսա, որ Թեկղը իր ապարանջանը տվեց դռնապանին և ելավ»: Եվ երբ դռնապանին տանջեցին՝ հարկադրված խոստովանեց ու ասաց. «Այո՛, ելավ, և ասաց թե գնում է օտարականի մոտ, որ կապված է բանտում»: Եվ զնացին նրան գտան՝ ինչպես ասաց դռնապանը. տեսան, որ նստած է Պողոսի ոտքերի մոտ: Կային և այլ բազում մարդիկ, որ լսում էին Քրիստոսի մեծագործությունները: Եվ այնտեղից Թեմերոսը և բազում մարդիկ, որ նրա հետ էին, ելան և ցասումով զնացին, եղածը պատմեցին դատավորին:

Այնժամ դատավորը հրամայեց բերել Պողոսին: Երիտասարդները զնացին, քանդեցին Պողոսի [կապանքները], քարչ տալով բերին բանտից: Թեկղը՝ գետին ընկած դառնապես լալիս էր, այնտեղ, ուր նստել էր Պողոսը և ուսուցանում էր Աստծու պատվիրանները: Դատավորը հրամայեց բերել Թեկ-

ղին, և Թեմերոսը զնաց, բազում մարդիկ նրա հետ, բռնեցին Թեկղին և քարչ տվին: Երբ դատավորը տեսավ, նրա համար շատ տրտմեց, իսկ Թեկղը մեծ ուրախությամբ կանգնած էր նրա առաջ և բնավ տրտում չէր: Այնժամ հանկարծակի աղաղակեց ամբողջ զորքը և ասաց. «Կորցրե՛ք այդ մոգին»:

Բայց դատավորը Պողոսին ոչինչ չասաց, նստեց աթոռին և կանչեց Թեկղին և հարցրեց նրան դատավորը. «Ինչո՞ւ Իկոնիայի օրենքով քո ամուսնու կինը չես լինում»: Եվ Թեկղը ինքնամոռաց ակնդետ նայում էր Պողոսին և բոլորովին չէր պատասխանում դատավորին: Մեծ աղաղակով նրա մայրը ճիչ բարձրացրեց և ասաց. «Այդ անմիտին կորցրեք թատրոնի մեջ, որպեսզի մյուս կանայք դրան նայելով այլևս չսովորեն այդ չար ուսմունքը»: Երբ դատավորը լսեց, շատ տրտմեց նրա համար, ապա հրամայեց գանահարել Պողոսին և քաղաքից դուրս հանել: Եվ վճիռ կայացրեց, որ թատրոնի մեջ հրով այրեն Թեկղին: Դատավորը վեր ելավ, որ զնա թատրոն, և ամբողջ զորքը նրա հետ՝ տեսնելու Թեկղին այրվելիս: Եվ ինչպես մոլորյալ ոչխարը լեռներում փնտրում է հովվին, այնպես Թեկղը որոնում էր Պողոսին: Ու մինչդեռ նայում էր բոլոր մարդկանց, տեսավ Տեր Հիսուսին՝ նստած իր դեմ-հանդիման, Պողոսի նմանությամբ: Եվ Թեկղը ասաց. «Պողոսը եկավ, նստեց իմ դեմ-հանդիման, որպեսզի կարողանամ դիմանալ ինձ երևացած տեսիլին»: Ու մինչդեռ աչքերը հառել էր նրա վրա՝ Տերը ելավ այնտեղից և բարձրացավ երկինք:

Մանուկներն ու կանայք փայտ բերին և դրին թատրոնում՝ այրելու Թեկղին, և նրան մերկ մտցրին թատրոն: Երբ դատավորը տեսավ նրան, սկսեց լալ և կական բարձրացրեց, և զարմանում էր այն զորությամբ, որ նրա մեջ էր: Հավաքեցին փայտը և վառեցին, և երիտասարդները պահանջում էին, որ նա բարձրանա ու մտնի բորբոքված հրի մեջ: Եվ Թեկղը իսկույն ելավ, մտավ կրակի մեջ: Երբ հրի բոցը ելնում, դիզվում էր բորբոքվելով, նրա գլխից ոչ մի մազ չէր այրում, որովհետև զթաց նրան Աստծու Հոգին, և երկնքից գոչման ձայն էր ելնում և ցողաբեր ամպը հովանի էր լինում նրա վրա, և

ասատիկ կարկուտ ու անձրև թափվեց երկրի վրա, և մարդկանցից շատերը, որ լսեցին և նայեցին՝ մահացան, և հուրը մարեց, բայց Թեկղը ապրեց: Իսկ Պողոսը պահճի մեջ էր. ինքը, Ոնեսիփորոսը, նրա կիսն ու որդիները մի երիտասարդի տան[ն էին], որի բաց դուռը նայում էր Իկոնիա քաղաքի ճանապարհի կողմը: Երբ բազում օրեր այնտեղ պահճի մեջ էին, մանուկներն ասացին Պողոսին՝ Սոված ենք: Եվ նրանք մի բան չուներին, որով թերևս գնեին, քանի որ Ոնեսիփորոսը թողել էր իր տունն ու կայքը և ընտանիքով հանդերձ ելել էր Պողոսի հետ: Այնժամ Պողոսը հանեց իր պարեգոտը, տվեց պատանու և ասաց. «Որդյա՛կ, գնա և հաց գնիր, ինչքան պատահի»: Գնաց պատանյակը հաց գնելու և այնտեղ տեսավ Թեկղին՝ իրենց դռանը: Եվ զարմացած հարցրեց. «Ո՛րք ես գնում, Թե՛կղ»: Պատասխանեց նրան. «Պողոսի հետևից եմ գնում, որովհետև փրկվեցի այն կրակից»: Եվ պատանյակն ասաց. «Արի՛, քեզ տանե՛մ նրա մոտ, քանի որ հոգոց է հանում, հեծում ու լալիս է, և այս վեց օրը, որ պահճի մեջ է, և Աստծուն խնդրում է քեզ համար»: Եվ Թեկղը նրա հետ գնաց երիտասարդի տունը, մնաց Պողոսի մոտ, որին գտավ ծունկի իջած աղոթելիս, որ աղաչելով ասում էր. «Հայր մեր, որ երկնքում ես, խնդրում եմ Քեզնից՝ հուրը չմոտենա Թեկղին, այլ մարեցրու, որովհետև նա Քոնն է»: Իսկ Թեկղը նրա հետևն էր. բացեց բերանը և ասաց. «Հա՛յր, որ ստեղծեցիր երկինքն ու երկիրը և Դու ես որբերի Հայրը, գոհանում եմ Քեզնից ողորմության համար, որ արեցիր ինձ և ապրեցրիր, որ տեսնեմ Պողոսին»: Պողոսը ելավ, տեսավ նրան և ասաց. «Բոլորի սրտագետ Աստված, Հայր մեր Տեր Հիսուս Քրիստոս, գոհանում եմ Քեզնից, որ ում համար խնդրեցի՝ հանցիր կրակից և ինձ [հնարավորություն] տվիր տեսնելու նրան և սրանց, որ ինձ հետ են, և միայն Քո ձեռքին է՝ վշտերից փրկել բոլորին, որ փառավորում են Քո անունը հավիտյան»:

Եվ Պողոսը ցնծում էր և ուրախ էր բոլորով հանդերձ, որ իր հետ էին: Եվ պատանյակը նրանց բերեց հինգ նկանակ հաց, խավարտ, այլև աղ և ջուր, և զորացան Աստծու

ողորմության շնորհով: Եվ Թեկղը ասաց Պողոսին. «Կարճացնե՛մ մագերս և գամ քո հետևից, ուր և դու երթաս»: Պողոսն ասաց. «Պատերազմը ասատիկ է, իսկ դու գեղեցիկ ես, գուցե և այլ փորձությունն գա քեզ վրա՝ ավելի մեծ քան առաջինը, և չկարողանաս համբերել»: Թեկղը ասաց Պողոսին. «Ներող եղիր և արա ինչ խնդրում եմ»: Եվ Պողոսը արձակեց Ոնեսիփորոսին ընտանիքով հանդերձ, և գնացին իրենց տունը: Պողոսը բռնեց Թեկղի ձեռքը և նրանց հետ եղած մարդկանց ուղեկցությունը գնացին մտան Անտիոք քաղաքը և մինչդեռ մտնում էին, Անտիոք քաղաքի գլխավորներից մեկը՝ Աղեքսանդրոս անունով, որը բազում գործեր էր կատարել Անտիոքում, տեսնելով Թեկղին սիրեց նրան, և փաղաքշում էր Պողոսին և համոզում էր նրան, [խոստանում] տալ շատ արծաթ և ոսկի: Պողոսն ասաց. «Չգիտե՛մ կնոջը, որի մասին ասում ես, և դա իմը չէ»:

Եվ քանի որ Աղեքսանդրոսի [ցանկությունը] մեծ էր, հասավ, բռնեց Թեկղին և հրապարակի մեջ գրկեց նրան: Իսկ նա չհամբերելով աղաղակ բարձրացրեց, մեծ գուժով խնդրելով ասաց. «Մի՛ նեղիր օտարականիս, մի՛ տառապեցրու Աստծու աղախնիս: Ես Իկոնիա քաղաքի գլխավորներից մեկի դուստրն եմ և քանի որ չկամեցա կին լինել իմ նշանածին, ինձ արտաքսեցին իմ քաղաքից»: Այն ժամանակ Աղեքսանդրոսը բռնելով պատուեց նրա պատմուճանը և ոսկի պսակը, որ ուներ գլխին, հանեց և գետին գցեց և նրան մերկ, կողոպտված և ամոթալի թողեց: Եվ քանի որ Աղեքսանդրոսը նրան տեսնելով սիրեց, իսկ նա ամոթահար արեց նրան իր արարքով, իսկույն ցույց տվեց դատավորին. «Այս և այս բաները գործեց իմ դեմ Թեկղը, այժմ դատիր նրան և հրամայիր, որ գցեն գազաններին»: Եվ Աղեքսանդրոսը ինքն էր, որ այդ տեսարանի համար քաղաքին տվեց գազանները: Երբ լսեցին բոլոր քաղաքացիները, զարմացան և բողոքեցին ատյանի առաջ և ասացին. «Անիրավ է դատաստանը, որով դատում եք Թեկղին»: Եվ Թեկղը եկավ կանգնեց դատավորի առաջ, երգվեցրեց նրան և ասաց. «Այս շնորհը արա՛ ինձ, որ մինչև ինձ

գցեն գազաններին, սրբությամբ մնամ: Եվ դատավորը, երբ սա լսեց, ասաց Թեկղին. «Գնա՛ ուր ուզում ես»: Եվ այնտեղ կար մի թագավորազն մեծատուն՝ տիկին Տրիփոնիա անու- նով, որի դուստրը մահացած էր և նրան վերցրեց իր տունը և մխիթարվում էր տեսնելով Թեկղին:

Երբ գազանները թատրոն մտան՝ եկան Տրիփոնիայի տնից տանելու Թեկղին և տարան թատրոն ու մերկացրին նրան, փաթաթեցին կտավով և կանգնեցրին: Արձակեցին նրա վրա մատակ առյուծ: Տրիփոնիա տիկինը թատրոնի դռանն էր և աղիողորմ ձայնով գուժում էր: Մատակ առյուծը եկավ և սկսեց լիզել Թեկղին, և դատավորն ու ամբողջ գործը զար- մացան նրա զորությանը, որ տվեց Աստված: Եվ տախտակի վրա գրեցին և ցույց տվեցին մարդկանց, որ այնտեղ նստած էին, թե՛ «Թեկղի համար դիմեցե՛ք մեհենակապուտ աստված- ներին, որ կայսերական պսակը գցեց Աղեքսանդրոսի գլխից, որ կամենում էր նրա նկատմամբ պղծություն անել»: Բոլոր մարդիկ աղաղակում էին իրենց որդիներով հանդերձ և ասում էին. «Բողոք առ աստված, այս ամենի համար, որ լինում է մեր քաղաքում»:

Դարձյալ նրա վրա արձակեցին այլ գազաններ, և դրանք չմոտեցան նրան: Այնժամ նա ելավ ասպարեզից, նաև՝ գազանները: Եվ Տրիփոնիա տիկինը իսկույն եկավ Թեկղի մոտ, որովհետև իր մեռած դուստրը գիշերը երազին եկել և պատմել էր մորը. «Մա՛յր իմ, այս հալածական-օտարական Թեկղին պահիր քեզ մոտ իմ տեղը, որպեսզի ինձ համար աղոթ- թի, որ արժանի լինեմ անցնել սրբերի և արդարների մեջ»: Եվ երբ Տրիփոնիան ընդունեց Թեկղին և հոգ էր տանում նրա համար. մեկ, որ տրտմել էր թե առավոտյան նրան նորից տա- նելու են գազաններին գցելու, և որ նրա վրա դրված էր մե- ռած դստեր գուժը, տիկինն ասաց. «Ահա այս երկու անգամ է, թախիծ և տրտմություն է իմ տան մեջ լինում: Արդ, աղա- չիր և խնդրիր իմ դստեր համար, որ ապրի, քանի որ այսպես տեսա նրան իմ երազում»: Եվ իսկույն ելավ Թեկղը, ձայնը բարձրացրեց երկինք և ասաց. «Աստված, որ երկնքում ես,

Բարձրյալի Հայր, Տրիփոնիա տիկնոջը տուր իր կամքի համա- ձայն, որ նրա դուստրը ապրի հավիտյանս հավիտենից»: Երբ այս լսեց տիկինը, նստեց թախծելու սուգով, լացեց աղիողորմ և ասաց. «Քո այդպիսի գեղեցկությունը մյուս անգամ ուտե- լու են գազանները»:

Երբ առավոտը բացվեց, Աղեքսանդրոսը փուլթով եկավ, հասավ Թեկղին տանելու, որովհետև նա էր, որ քաղաքից գազաններ էր տալիս թատրոնին: Եվ ասաց. «Ահա դատավորը նստած է, և ամբողջ գործն շտապում է: Շտապ այստեղ տուր Թեկղին, որ գազանակուր կորցնենք»: Եվ Տրիփոնիան ճչաց, լացեց գուժի ձայնով, և աղաղակից փախավ Աղեքսանդրոսը զարհուրած: Եվ տիկինն ասաց. «Ահա այս երկրորդ անգամ է՝ սգո թախիծ է իմ տանը: Չկա մեկը, որ օգնի ինձ: Որով- հետև իմ դուստրը կենդանի չէ, մեռավ, և իմ ազգատոհմից ոչ ոք չկա իմ թիկունքին: Եվ ես այրի կին եմ: Այժմ գնա՛, Թե՛կղ, և քո Աստվածը լինի քեզ օգնական»: Եվ դատավորը ուրիշ մարդկանց ուղարկեց Թեկղին տանելու, բայց տիկինը նրանց ձեռքը չտվեց Թեկղին, այլ ամուր բռնել էր նրա ձեռ- քը: Գալիս էր, գոտեպնդելով իրեն, ասում էր. «Իմ դատրիկին ուղարկեցի գերեզման, և քեզ, Թե՛կղ, ուղարկում եմ որպես կերակուր գազաններին»: Թեկղը մեծ լաց ու կոծ դրեց, հոգոց էր հանում հեծեծալով Աստծու առջև և ասում. «Տե՛ր Աստ- ված իմ, հավատում եմ՝ ում ապավինեցի, և փրկեցիր ինձ այն հրից: Հատուցում տուր բարի Տրիփոնիային, որ գլխաց քո աղախնին և ինձ պահեց սրբությամբ»:

Անմիջապես նույն պահին բազմությունը մեծ աղմուկ-աղաղակ բարձրացրեց, և պայթյուն ու ճչույն եղավ, զրգուելու գազաններին: Կեսը գազաններին էին հանում, և շատ այրեր ու կանայք մեհենակապուտ, տաճարակապուտ աստված էին կոչում նրան: Մյուսներն ասում էին. «Կկործանվի մեր քաղաքը անօրինության համար, որ դուք եք անում: Բոլորին կորցրեց այդ դատավորը: Դառն է տեսարանը, որ տեսնում ենք և անիրավ՝ դատաստանը, որով դատում են Թեկղին»: Եկան երիտասարդները, վերցրին Տրիփոնիա տիկնոջ ձեռ-

քից Թեկղին ու տարան թատրոն՝ գցելու գազաններին: Տարան կանգնեցրին թատրոնի մեջ: Մերկացրին հանդերձները և փաթաթեցին կտավով, և այդպես ասաց. «Տեր Աստված, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հա՛յր, Դու ես հալածվածների օգնական, Դու ես աղքատների վերակացու: Տե՛ս և նայիր Քո աղախներն, որ մերկ, խայտառակված է ամբողջ այսքան գորքի առջև: Տեր իմ և Աստված իմ, այս ժամիս հիշիր Քո աղախներն»: Այնժամ նրա վրա արձակեցին մի վագր, որ շատ չար էր և դարձյալ մի մատակ առյուծ արձակեցին նրա վրա: Եվ Թեկղը ինքնամոռաց տարածել էր ձեռքերը խաչափայտի նմանուկթյամբ: Մատակ առյուծը գնաց, հարձակվեց նրա վրա, և երբ եկավ-հասավ՝ նստեց նրա ոտքերի մոտ: Եկավ-հասավ և վագրը, ուզում էր հարվածել նրան, ընկավ նրա առաջ և կիսվեց մեջտեղից:

Այս անգամ արջ բերին, որ ավելի ուժեղ էր, ընթացավ հարձակվելու Թեկղի վրա. մատակ առյուծը, որ նստած էր նրա ոտքերի մոտ, ելավ, բռնեց արջին և հոշոտեց: Մի առյուծ ևս, որ սովորեցրել էին հարձակվել մարդկանց վրա, որ նույն Աղեքսանդրոսինն էր, հարձակվեց Թեկղի վրա: Մատակ առյուծը, որ նստած էր նրա ոտքերի մոտ, ելավ, դիմավորեց առյուծին, և երկուսով բախվեցին միմյանց, և քիչ անց երկուսը սպանեցին միմյանց: Կանայք, որ նստած նայում էին, առավել ևս սգացին և ասում էին, թե մատակ առյուծը, որ օգնում էր Թեկղին, նույնպես մեռավ: Դարձյալ նրա վրա արձակեցին այլ գազաններ: Երբ Թեկղը տեսավ, որ բազում գազաններ ելան, տարածեց իր ձեռքերը և սկսեց աղոթել: Երբ ավարտեց աղոթքը, հետ դարձավ և տեսավ ջրով լի մի մեծ փոս և ասաց. «Ահա այսուհետև մկրտվելու ժամանակն է, բարձրացրեց ձայնը և ասաց. հանուն Հիսուս Քրիստոսի, ահա այսօր, վերջին օրը, մկրտվում եմ»: Երբ կանայք, որ նստած լալիս էին, տեսան՝ ասացին նրան. «Մի՛ մտիր այդ ջրը, որովհետև չար են գազանները, որ այնտեղ են»: Եվ երբ դատավորը տեսավ նրան, լացեց թե այնպիսի վայելուչ գեղեցկուկթյունը ուտելու են գազանները, որ ջրի մեջ են: Բայց Թեկղը իսկույն գնաց

և իջավ ջրի մեջ, և գազանները երբ տեսան նրան՝ ինչպես հրի փայլակից, սատկեցին և ջրի վրա մնացին, գալիս էին նրա շուրջը, և նրա վրա լուսափայլ ամպհովանի եղավ, այնպես, որ թվում էր թե Թեկղը մերկ է: Երբ թատրոնում նստած կանայք տեսան, թե նորից գազաններ են արձակում Թեկղի վրա, ավելի չար քան առաջիները, սկսեցին ճչալ և ասել. «Բողոք առ աստված. ի՛նչ ենք տեսնում այս քաղաքում»: Ապա եկան կանայք և սկսեցին խուճկ դնել Թեկղի վրա. կեսը նարդյան պտուղ էին դնում, կեսը՝ հիրիկ խուճկեր, իսկ կեսը ապուրսամ խուճկեր և այլ անուշ խուճկեր էին ցանում թատրոնում:

Բերին արձակեցին և այլ գազաններ: Գազանները եկան, նստեցին նրա շուրջը, ետևը և առաջը, և ննջեցին, և նրանցից ոչ մեկը Թեկղին չվնասեց: Աղեքսանդրոսը դարձյալ գնաց և ասաց դատավորին. «Ես ունեմ երկու ուժեղ չար գազան. բերենք այստեղ և մեջտեղը կապենք աղջկան: Թերևս զայրանան և սատկեցնեն նրան»: Եվ դատավորն ասաց Աղեքսանդրոսին. «Գնա՛, արա՛ ինչպես քեզ հաճո է թվում»: Եվ ուղարկեց բերելու գազաններին, և բերին, Թեկղին հանեցին գազանների միջից և երեսնիվայր կապեցին ոտքերը՝ երկու գազանների մեջտեղը և բերին շամփուրներ, դրին կրակին և հրով շիկացրին շամփուրները և դրին գազանների ազդրերին, որ զայրանան և կոտորեն նրան: Եվ խարանի ցավից զայրանում էին գազանները, և հրի բոցը ելավ և այրեց կապանքները, որով կապել էին Թեկղի ոտքերը: Թեկղը ելավ, վազեց, կանգնեց գազանների առջև, ասես ամենևին ցավ չի եղել նրան և ոչ իսկ կապանքով կապված է եղել: Իսկ Տրիփոնիա տիկինը թատրոնի դռան մոտ էր, ճչաց հանկարծակի և ընկավ կործանվեց, որովհետև կարծեց, թե Թեկղը մահացավ: Երբ ծառաները տեսան, թե ճչաց, նվաղեց և ընկավ, սկսեցին գուժ բառնալ և պատուել իրենց պատմուճանները և ասացին. «Վա՛յ, մեռավ տիկինը»: Եվ ամբողջ քաղաքը դողաց: Աղեքսանդրոսը վախեցավ, գնաց դատավորի մոտ և ասաց. «Գթա՛ ինձ և քաղաքը և արձակիր գազանի կերին, թող գնա առհա-

սարակ ազատ, որ այս քաղաքը ամբողջապես չկորչի. գուցե երբ կայսրը լսի այս գործը, որ կատարում ենք, կորստյան մատնի քաղաքս, քանի որ Տրիփոնիա տիկինը, որ թատրոնի դուռն էր և մեռավ, կայսեր ազգից է»:

Այնժամ դատավորն ասաց. «Թեկղին բերեք այստեղ»:  
Եվ ծառաները գնացին գազանների միջից Թեկղին բերելու և կանգնեցրին դատավորի առաջ: Թեկղին ասաց. «Ո՞վ էս դու, և ի՞նչպես է, որ չեն մերձենում քեզ գազանները»: Պատասխանեց. «Աստծու աղախինն եմ, և որ ինձ հետ է Նա՝ կենդանի Աստծու Որդին է, որ իմ հույսն է, Նրա համար է, որ գազանները չեն մոտենում ինձ, որովհետև Նա կյանքի սահմանն է, բոլոր հալածվածների հասնող և անհույսների հույս ու կյանք: Բայց քեզ եմ ասում, դատավոր, և բոլորին, որ քեզ մոտ են. ով որ հավատա Աստծուն, որի մեծ գործերը տեսնում եք, որ արեց իր աղախնի համար՝ ևս առավել կլինեն: Իսկ ով չի հավատում Նրան՝ կմեռնի հավիտենական մահով»: Եվ դատավորն այս լսեց Թեկղի բերանից, հրամայեց նրան զգեստ բերել և ասաց նրան. «Հեռացրու այդ կտավը և առ, հագիր հանդերձը, որ տվի քեզ»: Թեկղը պատասխանեց դատավորին. «Ով ինձ գորուծյուն հագրեց գազանների մեջ, Նա կզգեցնի ինձ դատաստանի օրը»: Եվ Թեկղը մերկացավ կտավից և հագավ զգեստները:

Դատավորը ամբողջ զորքի առջև քարոզ կարդաց. «Թեկղին Աստված արձակեց և տվեց ձեզ»: Եվ կանայք, որ նստած էին թատրոնում, մեծաբարբառ ձայն արձակեցին, սկսեցին աղաղակել և փառք տալ Աստծուն: Եվ ասացին. «Մեծ է Թեկղի Աստվածը, որ ապրեցրեց և փրկեց նրան գազանների միջից»: Եվ կանանց աղաղակի ձայնից դղրդաց ամբողջ քաղաքը, և իսկույն գնացին ավետիս տվին Տրիփոնիա տիկնոջը, նա եկավ, գտավ նրան, գրկելով համբուրում էր նրան և ասում. «Դուստր իմ Թեկղ, այժմ հավատում եմ, թե կենդանի է իմ դստրիկը: Արդ, արի՛ իմ տունը, Թեկղ, և իմ ամբողջ ունեցվածքը քեզ կտամ»:

Եվ նրա հետ Թեկղը գնաց, մտավ նրա տունը, և նրա մոտ հանգստացավ ութ օր, Տրիփոնիա տիկնոջը սովորեցրեց Աստծու բոլոր պատվիրանները, և տիկինը հավատաց Աստծուն, նաև՝ նրա աղախիններից շատերը: Եվ այնտեղ մեծ էր Թեկղի ուրախությունը: Եվ քանի որ նա սիրում էր Պողոսին՝ [մարդ] ուղարկեց ամեն տեղ փնտրելու նրան: Եվ երբ գտան, եկան նրան պատմեցին և ասացին. «Ահա նա Մեռովք քաղաքում է»: Եվ [Թեկղը] ելավ Տրիփոնիա տիկնոջ տնից, տղամարդու զգեստ հագավ, իր հետ բազում մարդիկ վերցրեց, նաև՝ տիկնոջ աղախիններից, գնաց մտավ Մեռովք քաղաքը և այնտեղ գտավ Պողոսին, որ նստած ուսուցանում էր Աստծու պատվիրանները: Գնաց նրա մոտ մնաց և Թեկղը, և երբ Պողոսը տեսավ նրան և նրա հետի մարդկանց՝ զարմացավ և կարծեց, թե դարձյալ ինչ-որ փորձություն է պատահել նրան: Թեկղը նրան ասաց. «Ես մկրտություն ընդունեցի, որովհետև՝ Ով որ քեզ պատվիրեց քարոզել, Նույնը ինձ հրամայեց մկրտվել»: Եվ ելավ Պողոսը, վերցրեց նրան և նրա հետի բոլոր մարդկանց, տարավ Հերմեսի տունը: Պողոսը նստեց, նաև Թեկղը և մյուս մարդիկ, որ նրա հետ էին: Թեկղը պատմեց այն ամենը, որ արեց Աստված նրան, և Պողոսը խիստ զարմացավ գորուծյունների համար, որ տրվեցին նրան: Եվ բոլորը այնտեղ էին և լսում էին, թե ինչ արեց Աստված նրան, Չերմորեն հաստատում էին և ճշմարտում: Եվ բոլորը միասին ելան փառավորում և օրհնում էին Աստծուն, որ սքանչելիքներ է գործում բոլորին, ովքեր Իրեն հավատում են և պահում Իր պատվիրանները: Ազոթում էին և խնդրում Աստծուն Տրիփոնիա տիկնոջ համար, որ իր գույքը ցուցաբերեց Նրա աղախնի հանդեպ և պահեց նրան սրբություն: Թեկղը ասաց. «Գնամ Իկոնիոն քաղաք»: Եվ Պողոսն ասաց. «Գնա՛ և ուսուցանիր այնտեղ Աստծու պատվիրաններն ու խոսքերը»:

Երբ Տրիփոնիա տիկինը լսեց, թե Թեկղը գնում է Իկոնիոն քաղաքը, վերցրեց բազում հանդերձանք, ոսկի և արծաթ և ուղարկեց Թեկղին: Եվ [նա] վերցրեց հանդերձանքը և ոսկուց ուղարկեց Պողոսին՝ ի սպաս պաշտամունքի: Եվ Թեկղը գնաց

մտավ Ոնեսիփորոսի տունը, երեսնիվայր ընկավ այն տեղը, ուր նստել Պողոսը ուսուցանում էր Աստծու պատվիրանները, լացեց և ասաց. «Աստված մեր, այս տան Աստված, որտեղ ինձ լույս ծագեց Հիսուս Քրիստոսից, որ օգնեց ինձ բանտում և դատավորի առջև, փրկեց զագանների միջից և ինձ մկրտություն տվեց Հավիտյանս Հավիտենից: [Այսուհետև] գնամ երանությունների մեջ, որ պահված են ինձ և նրանց, որ պահում են Քրիստոսի պատվիրանները, որովհետև Նա միակ բարձրյալ Աստվածն է, նստում է քերովբեների աթոռին, և Նրանն է փառքը Հավիտյանս Հավիտենից. ամեն»:

Այս բոլոր սքանչելիքներից հետո, որ նրան արեց Աստված Իկոնիա քաղաքում, գտավ, որ մեռել է իր փեսացու Թեմերոսը, իսկ իր մայրը կենդանի էր: Ասում է նրան Թեկղը. «Մայր իմ, թե կարող ես հավատալ մեկին է բարձրյալ Աստվածը՝ իմ Տերը, որ երկնքում է: Իսկ եթե ոսկի և արծաթ և ինչք ես սիրում, որ մաշվում են, ահա այսուհետև տրված է քեզ: Եթե հավատաս, որ մեկին է Աստված երկնքում և բացի Նրանից այլ Աստված չկա, կարող ես լինել և պահել, ինչ որ ասեմ քեզ, որովհետև ահա ես քո առջև եմ, որ փրկվեցի կրակից, չար գագաններից և դատավորի ձեռքից, քանի որ իմ նույն Աստվածը և Տերը օգնեց ինձ և տվեց համբերելու կարողություն»:

Այս ամենը վկայություն տվեց իր մորը և ելավ Իկոնիա քաղաքից և գնաց Սելևկիա. այնտեղ բազում մարդկանց լուսավորեց Աստծու խոսքով և ննջեց հանգիստ քնով:

Ավարտվեց երանելի Թեկղի պատմությունը: Փառք ամենակալ Աստծուն և Իր Օծյալին և Սուրբ Հոգուն, որ գործություն տվեց թարգմանչին ու գրչին, որ նույն Աստվածը կատարի ողորմություն երկու աշխարհում. հավիտյանս հավիտենից. ամեն:



## ՍՈՒՐԲ ԹԵՈԴՈՐՅՈՍ ՔԱՆԱՆԱՅԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ոչ միայն զարմանալի են երանելի Թեոդորիտոս վկայի առաքինի և աստվածասեր հոգարությունը և համբերության կարծրությունը, այլև հաստատուն և անշարժ հավատը, որ ունեւր առ Աստված: Նա Հուլիանոս արքայի ժամանակ, մանավանդ բռնավորի և ոչ արքայի, վկայեց Անտիոք քաղաքում. ոչ միայն իր անձը բարի օրինակ ցույց տվեց մարդկանց, լինելով Քրիստոսի հավատարիմ վկա, այլև սքանչելի և զարմանալի երևաց բոլորի մեջ, անպարտելի և հաղթող ախոյան եղավ սատանայի դեմ, որ և անեղծության պսակ ստացավ և երկինք մտնելու արժանավոր եղավ և՛ վերին քաղաքի քաղաքացի: Ինքը եղավ հալածանքների սկիզբ և ավարտ, և Քրիստոսի բոլոր մյուս ծառաներին շեղեց սպառնալիքներից, որ սպասվում էին, Քրիստոսի թագավորության անպարտելի և հաղթող վկա եղավ:

Հուլիանոսի թագավորության առաջին տարում, մինչդեռ նորընձա էր իբրև թագավոր՝ կասկած ունեւր Կոստանդիանոս մեծ արքայի թշնամությունից. մտածում էր, թե նույն սրով, որով իր հայրը մեռավ՝ կմեռնի, որ այնքան և այնպիսի եպիսկոպոսներով երբեմն փրկվեց մահից, թաքնվելով Աստծու սուրբ սեղանի ետևը, եղավ աստվածային Գրքի գիտակ ու ընթերցող: Ինչ-որ ժամանակ անց, հանգավ աստվածասեր Կոստանդիանոսը, և Հուլիանոսը վերցնելով թագավորությունը՝ ոչ միայն հավատքը անարգեց, այլև թշնամանքի ու անհնարին վտանգի էր ենթարկում Աստծու մտերիմներին, և կռապաշտներից շահում էր պարգևներ ու պատիվներ, բազմաթիվ մարդկանց մոլորեցնում էր այդպիսի բաներով, մինչև իր քեռուն և անվանակցին՝ Հուլիանոսին ապստամբեցրեց Աստծու հավատից ու հույսից, ընդունելու կուռքերի մոլորությունը: Իր քեռի Հուլիանոսը նրան հայտնեց, որ Անտիո-

քի եկեղեցին ոսկու և արծաթի բազում նվերներ ու սպասքեղեն ունի, [հուշելով, թե պետք է] վնասակար պատճառ գտնել կողոպտելու ոչ միայն սպասքն ու նվերները Աստծու եկեղեցու, որին հավատարիմ չեղավ Հուլիանոսը, այլև բոլոր քահանաներին փախստական դարձնելու, մինչև որ Աստծու սուրբ եկեղեցիները փակվեցին, և հալածանքների և սպասքը կողոպտելով ցրելու պատճառով բոլորը [փախան]՝ ով ուր կարող էր, ապրել և ծառայել Աստծուն:

Իսկ սուրբ Թեոդորիտոսը Անտիոքի կաթողիկե եկեղեցու երեցն էր, ո՛չ քաղաքից մեկնեց և ո՛չ խափանեց պաշտամունքը՝ եղբայրներով հանդերձ մտնելով եկեղեցի, հավաքելով ժողովրդին, պարտ ու պատշաճ աղոթք մատուցելով: Ժամերգության պահին վրա է հասնում Հուլիանոս արքայի քեռին. սա ևս իշխանություն էր ստացել և արքունի բոլոր գործերին հավատարիմ էր: Եվ բնավ չէր դադարում հանապազորդ աղոթք մատուցել Աստծուն ամեն առիթով: Եվ դա կայսրի համար ավելի հպարտություն էր համարում: Հրաման տվեց բռնել և առաջինին՝ ամենօրյա խոսքերով և շղթաներով, աղտեղի տեղերում արգելափակելով ահ էր տարածում, հետո նաև դուրս հանել և մինչև վերջ թշնամանել ու նախատել հրամայեց նրանց, որ ինչպես ինքը, չէին ճանաչում Աստծուն, և կամքով ու մտքով նման էին իրեն: Բայց զնդանում ոմանք այնպիսի աստվածասեր այրի մեծաշուք վեհաթյունից ակնածում էին, այլև հասու լինելով նրա գիտությանը՝ գիտեին պիտանի մարդու ուղիղ կարգերն ու պարկեշտ վարքը, քանի որ միշտ և հանապազ, ամեն ժամանակ աղոթք էր անում: Շատերը մտքում վարանում էին այնպիսի աստվածասեր մարդուն թշնամանել և երբեք չէին համարձակվում որևէ անարգանքի: Բազում օրեր հետո Հուլիանոսը հասու եղավ վկայի անպարտ և անշարժ մտքին, որ օր-օրի գորանում էր և վառվում հավատքով: Խորհուրդ արեցին մինչև իսկ տանել ատյան և գիշերով սպանել նրան: Բայց ավելի լավ համարեցին ուրիշներին ահաբեկելու համար հարվածներով վնասել այնպիսի մարդուն: Բայց դա ևս Աստծու շնորհնե-

րից էր, որ այդպիսի հավատացյալ այրը անփորձ և աննշան մահով չվերջացնի իր կյանքը: Ոչ թե չէր եղել բոլորի աչքի առաջ, Աստծու հանդեպ վաստակների վարձը կորցնում էր, այլ իր անձը օրինակ էր դարձնում Քրիստոսի բոլոր հավատացյալների համար:

Երբ բերին մտցրին ատյան, ձեռքերը ետևը կապած և մի ձող թիկունքին անցկացրած, անօրեն դատավորն ասաց. «Դո՞ւ ես Թեոդորիտոսը, որ Կոստանդիանոս կայսեր ժամանակ կործանում էիր աստվածների արձանները և ավերում աստվածների մեհյանները, կառուցում եկեղեցիներ ու մեռելների գերեզմաններ, որոնք և մատուռ էիք անվանում»:  
Թեոդորիտոսն ասաց. «Ես քրիստոնյա եմ և աղոթում եմ, որ մինչև վերջ նույնը լինեմ և դառնամ Քրիստոսի հավատարիմ վկա: Ես երբեք ո՛չ եկեղեցի եմ կառուցել, ո՛չ մատուռ, որովհետև հաստատել և կառուցել են նախնիները»:  
Հուլիանոսն ասաց. «Աստվածների արձանները կործանեցիր և այժմ չքմեղանում ես ու չես պատասխանում»:  
Թեոդորիտոսն ասաց. «Ես աստվածներին երբեք չեմ կործանել, որովհետև չեղածը ի՞նչպես կործանես, այլ կործանեցի անշունչ արձաններն ու նրանց տները, կարողանալու համար փրկել կռապաշտությունից մոլորված մարդկանց հոգիները, որովհետև սուրբ Գիրքը հենց այդ պատվիրեց»:  
Հուլիանոսն ասաց. «Քանի որ ինքդ խոստովանեցիր՝ կրիր պատուհասի պատիժը, որ հանդգնեցիր այդպիսի գործ անել»:  
Թեոդորիտոսն ասաց. «Աստվածապաշտ և աստվածասեր Կոստանդիանոսի ժամանակ կատարեցի դա, և չզայրացավ [նա], որ իշխանություն ուներ: Բայց զարմացած եմ քեզ վրա՝ ինչո՞ւ այժմ կուռքերի վրեժխնդիր դարձար»:

Հուլիանոսն ասաց. «Հարվածեցեք դրա կողերին, որ համարձակվեց աստվածներին կուռք կոչել»:  
Եվ գանահարվելուց հետո Թեոդորիտոսն ասաց. «Հանցանք ես գործում, Հուլիանո՛ս, որ միակ ճշմարիտ Աստծու և ամենակալի անունով կոչում ես կուռքերին, աստված ես անվանում այժմ կռածներին ու արարվածներին»:  
Հուլիանոսն ասաց. «Խփեցե՛ք հան-

դուզնի երեսին, որ համարձակվեց հայհոյել աստվածներին»: Թեոդորիտոսն ասաց. «Դարձյալ տակավին քեզ սովորեցնում եմ, Հուլիանոս, արձանները, որ դու աստված ես անվանում, կրտսեր են արձանագործներից և նրանց հետ, նրանց նման ապականելի են. ոչ բարիք և ոչ չարիք կարող են պատճառել արարածներին: Իսկ դու հրամայում ես գանահարել ինձ, որովհետև քեզ ճշմարիտն եմ ցույց տալիս»: Հուլիանոսն ասաց. «Այժմ ծեծ կերար և ըմբոստացած փոքր-ինչ, այնպիսի տանջանք կկրես, որով չես կարող հանդարտվել, եթե չկատարես աստվածների արժանին ու օրենքը, որովհետև այդպես հրամայեց քաջ արանց արքա Հուլիանոսը»: Թեոդորիտոսն ասաց. «Ես քեզ նախապես ասացի և դարձյալ ասում եմ՝ մի՛ մեղանչիր և աստված մի՛ կոչիր մարդկանց ձեռակերտներին, այլ հրաժարվիր ժամանակավոր ամբարտապանությունիցդ, որով հանդգնեցիր աստվածամարտ լինել, ճանաչիր միակ Աստծուն, որ ստեղծեց երկինքն ու երկիրը»: Հուլիանոսն ասաց. «Քրիստոսին ևս Աստված չես համարում, որ քեզ քրիստոսնյա ես կոչում»: Թեոդորիտոսն ասաց. «Քրիստոսը մարդկանց փրկիչն է, որ թվում է գիտես, բայց չգիտես, Հոր Բանն ու գորությունն է և իմաստությունը, Աստծու միածին Որդին, որ Հորից առաքվեց մարդկանց փրկության համար և մարդկային մարմին հագավ, որպեսզի ազգականություն մարդկանց մերձեցնի Աստծուն, ազատի մոլորությունից ու կռապաշտությունից և սովորեցնի ճանաչել ճշմարիտ Աստծուն»: Հուլիանոսն ասաց. «Խոսքի ճշմարտության մասին ճշմարտությունը ետ ես չըջվել մանկությունից ի վեր և առապելներ ես հոգում, որով կարող ես մոլորեցնել մարդկանց»: Թեոդորիտոսն ասաց. «Երբեմն դու ևս ճանաչում էիր Աստծուն և խոստովանում ճշմարտությունը, իսկ այժմ դարձար խաբեություն, երբ աշխարհական ամբարտապանություն մարդկանց հպարտացար և կուռքերին աստված համարելով ճշմարտությունը խաբեություն ես անվանում»:

Հուլիանոսն ասաց. «Ա՛յ չարագործ և դրուժան, ինձ թվում է, դու այժմ Աթենքից ես եկել»: Թեոդորիտոսն ասաց.

«Ես Աթենք քաղաքից չեմ եկել և աշխարհական գիտություն խրատը չեմ վայելել, այլ աստվածային Գրքի իմաստություն մե համակվել: Պատասխանում եմ ըստ քո հարցումների և ազոթում եմ, որ դու վերստին լավություն դառնաս»: Հուլիանոսը զայրանալով հրամայեց կապել նրան մի ձողի և ամրացնել: Եվ դահիճները հրամանը կատարեցին, պարանով և անիվով պրկեցին երանելի վկայի բոլոր անդամները, և ջիլերը այնքան երկարեցին, մինչև որ այրը թվում էր ութ կանգունանի: Եվ երբ այսպես եղավ, Հուլիանոսն ասաց. «Գոնե այժմ տանջանք զգացի՞ր, Թեոդորիտո՛ս, հրաժարվելով մի մեռած կախարհից՝ կերկրպագե՞ս կուռքերին»: Իսկ սուրբը և առավել սուրբ վկան, բարձրաձայն խոսելով, լուրջ և զվարթ դեմքով պատասխանեց. «Մոռացա՞ր, – ասում է, – Հուլիանո՛ս, գեղեցիկ խրատը, որ տվի քեզ, թե աստված մի՛ անվանիր փայտեղենն ու քարեղեն, մեռելների ոսկորներից պատրաստված արձանները, այլ ճանաչիր Աստծուն, որ ստեղծեց երկինքն ու երկիրը և ամեն ինչ, որ նրանց մեջ է, և Նրա Բան միածին Հիսուս Քրիստոսին՝ փրկիչ մարդկանց և ամբողջ աշխարհի, աշխարհաստեղծ»: Հուլիանոսն ասաց. «Մի մարդու, որ խաչվեց, մեռավ և թաղվեց, աշխարհի արարիչ ես կոչում, ա՛յ ընդդիմացած հանդուգն»: Թեոդորիտոսն ասաց. «Քեզ սովորեցնում եմ պաշտել Խաչվածին, մեռածին և թաղվածին, որ մարմնով հանդերձ երկինք բարձրացավ, Հոր անձին Որդուն, որ Բանն Աստված է, և քարոզիչ ու գուշակ եղավ աստվածային գաղտնիքների՝ ըստ Հոր կամքի, որ պատվիրեց արհամարհել անմոռոնչ կուռքերը, որ հենց քո աչքի առաջ կտորկտոր կկոտորեմ, և չեն կարող ինձ որևէ վնաս պատճառել, քանի որ ինձ օգնական ունեմ Աստծուն»: Հուլիանոսն ասաց. «Եթե աստծուց վախենում ես՝ հնազանդ եղիր թագավորների հրամանին, քանի որ գրված է. «Թագավորների սիրտը Աստծու ձեռքին է» (Առակ. ԺԱ. 1): Թեոդորիտոսն ասաց. «Եթե կարդացել ես այն, որ ասացիր, պարտավոր ես կարդացածդ ըմբռնել, իսկ եթե լսել ես և կարգին չես հասկացել՝ սովորիր ինձնից: Արդարև ճշմարիտ է՝ «Թագավորի սիրտը Աստծու

ձեռքին է»,- ո՛չ կռապաշտի, այլ Աստծուն ճանաչողի, որովհետև նրան, որ այնքան անագորույն է մարդկանց նկատմամբ և չի հավատում Աստծուն՝ պետք է կոչել բռնավոր և ոչ թե թագավոր: Թագավորի սիրտը Աստծու ձեռքին է, իսկ բռնավորինը՝ ամենևին ոչ»: Հուլիանոսն ասաց. «Կյանքից ձեռք քաշած հանդուգն, համարձակվեցիր արքային բռնավոր կոչել»: Թեոդորիտոսն ասաց. «Ով այսպես է հրաման տալիս և այնպես է ինչպես դու ես ասում, ոչ միայն բռնավոր է, այլև ամբարիշտ քան բոլոր մարդիկ»:

Հուլիանոսը ցասումով լցվեց և հիշելով մոլորությունը՝ հրաման տվեց այժյամի կճղակներով քերել նրան: Եվ այնքան քերեցին նրան, մինչև երկու կողերից գետնին արյան առուններ էին իջնում, և սակայն նրա երեսը ուրախությունից տխրություն չփոխվեց: Երբ երեք ժամ քերեցին, նրա բերանից ոչինչ դուրս չէր գալիս, և չփոխվեց երեսի գույնը: Հուլիանոսն ասաց. «Գոնե այժմ ճանաչո՞ւմ ես աստվածներին, Թեոդորիտո՞ս, այդպիսի տանջանքի ենթարկվելուց հետո»: Թեոդորիտոսն ասաց. «Ձեռակերտները երբեք Աստված չհամարեցի, չեմ համարում և չեմ համարի: Միայն մեկ ամենակալ Աստծուն եմ ճանաչում և նրա Բան միածին Որդուն: Ինչը որ դու աստված ես համարում, նրանց հետ կլինի քո բաժինը, իսկ ես ժառանգավոր կլինեմ խոստացված բարիքներին մինչև վերջ հավատարիմ նրան, որ երևաց»: Հուլիանոսն ասաց. «Այնպես ես երևում, կարծես բնավ տանջանք չես զգացել»: Թեոդորիտոսն ասաց. «Խաղ էիր համարում և ուզում էիր տանջանքով վախեցնել»:

Դարձյալ զայրացավ Հուլիանոսը և հրամայեց նույն կճղակներով քերել նրան ևս երկու ժամ: Այլևս նրա բերանից ոչինչ դուրս չեկավ, միայն բարձրաձայն արագ աղոթում էր. «Հիսո՛ւս, օգնի՛ր ինձ»: Իսկ Հուլիանոսը սուրբ վկայի մեծ համբերություն վրա գարմացած՝ դահիճներին հրամայեց հանդարտեցնել, ասաց. «Ինձ թվում է արքունիքին կամ ուրիշի պարտք ես և չես կարող հատուցել: Եթե արքունիքին ես պարտք՝ ինքնակալը կբաշխի, իսկ եթե ուրիշի՝ կհրամայեմ

մուրհակը տալ առանց տուգանքի և վնասի»: Բայց կարծես թե ամենևին չլիանք չէր կրել Թեոդորիտոսը, ասաց. «Ձեր արծաթը կորչի ձեզ հետ: Ես ոչ մեկին պարտք չեմ: Եվ միայն Աստծուն եմ ճանաչում, որի համար աղոթում եմ զգուշությամբ պահել և հասնել խոստացված բարիքին»: Հուլիանոսն ասաց. «Ա՛յ խեղճ ու թշվառական, ի՞ջիր հպարտությունից, փրկիր անձդ, որ ազատվես նոր տանջանքներից»: Թեոդորիտոսն ասաց. «Ա՛յ խեղճ ու թշվառական, ապաշխարիր և փրկիր հոգիդ ու մարմինդ»: Դարձյալ զայրացավ Հուլիանոսը և հրամայեց քերել նրան, որից հետո ասաց. «Ինչու այդքան դիմադրելով չես հնազանդվում ինքնակալին և մի խաչված մարդու Աստված ես համարում»: Թեոդորիտոսն ասաց. «Խաչյալը, որին դու մարդ ես համարում, իսկ մենք Աստված, քեզ՝ ամբարիշտ արյունարբու բռնավոր, դատաստանի օրը կհրամայի զցել հրի գեհեհներ»: Հուլիանոսն ասաց. «Առայժմ այստեղ կատանաս հրի փորձությունը», և հրամայեց երկու կանթեղ վառել և այստեղից ու այնտեղից մոտեցնել կողերին: Երբ դահիճները կանթեղները վառեցին, երանելի վկան, աչքերը երկինք հառած, սկսեց աղոթել և ասաց. «Տեր Աստված ամենակալ, որ ստեղծեցիր երկինքն ու երկիրը և ամենը, ինչ որ նրանց մեջ կա, կենարարի և ամբողջ աշխարհի հայր, որ քո հավատացյալներին պատիվ խոստացար, ինձ ևս հասցրու քո ողորմությունը և ամբարիշտներին ցույց տուր իմաստությունդ ու զորությունդ, որ բոլորը իմանան, թե ինչքան է քեզ հուսացողների և անհավատ ամբարիշտների հեռավորությունը»: Եվ վերջացրեց աղոթքը և վերառաքեց: Հանկարծակի գետին տապալվեցին կանթեղավորները, երբ երանելի շուրջը տեսան չորս հրեշտակների, որ խոսում էին նրա հետ: Երբ Հուլիանոսի կատաղությունը մեծացավ, եկան այլ զինվորներ, բարձրացրին դահիճներին և հրամայեցին նորից մոտեցնել կանթեղները: Կանթեղավորներն ասացին. «Քո քաջությունը թող ուրիշների հրամայի մոտեցնել, քանի որ մենք տեսանք չորս հրեշտակ, որ խոսում են պատվարժանի հետ, և չենք համարձակվում մոտենալ, որովհետև հաստատ իմա-

ցանք՝ քրիստոնյաների Աստվածը մեծ և հզոր Աստված է»։ Հուլիանոսը դարձյալ կատաղեց, հրամայեց իսկույն դահիճներին տանել, ծովը գցել։

Երբ նրանց վերցրին և գնացին, սուրբը և առավել սուրբ վկան ձայն էր տալիս նրանց. «Շտապեցեք, եղբայրներ, ահա ես ևս հասնելու եմ ձեզ։ Եվ հակառակորդի դեմ հաղթության նշան կանգնեցնելով և պարգև ստանալով կհասնեմ [ձեր] ետևից՝ իբրև խրախույս Աստծու ծառաների»։ Երբ գինվորներն առան, գնացին, Հուլիանոսն ասաց. «Ո՞վ է քո հակառակորդը»։ Սուրբն ասաց. «Հակառակորդը սատանան է, որ քո միջոցով այժմ չար գործ է կատարում, իսկ հաղթությունն ու պարգևը տալիս է Հիսուս Քրիստոս՝ մարդկանց փրկիչը, ամբողջ աշխարհի արարիչը՝ միածին Որդին, Նրան փառք հավիտյանս. ամեն»։

Եվ երբ ժողովրդից և ամբոխից շատերը աղոթեցին, արագ շուրջը նայեց Հուլիանոսը, որ թերևս նրանցից որևէ մեկին կարողանա ճանաչել, և ասես միտքը ցնորեց, խավար եկավ աչքերին և ասաց. «Ա՛յ խեղճ ու թշվառական Թեոդորիտոս, նրան բոլորը գիտեն, որ հարյուր կամ փոքր-ինչ պակաս կամ ավելի տարի առաջ ծնվեց կնոջից, իսկ դու ասում ես, թե աշխարհը Նա ստեղծեց»։ Թեոդորիտոսն ասաց. «Դու պիղծ և անսուրբ, նույնիսկ արժանի չես այնպիսի գաղափարը սովորելու, բայց որպեսզի Աստծու ծառաները չկարծեն, թե ամեն կողմից շրջապատված եմ կամ չեմ կարող քո խոսքերին պատասխան տալ, հասկացիր ինչպես նախապես ասացի քեզ՝ Աստված, որ [երկիրն] ամեն ինչով ստեղծեց, ողորմեց մարդկային ցեղին, որ երկրպագում էին անսուրբ և պիղծ դևերին, առաքեց իր Բան միածին Որդուն, որ մարդկային մարմին հագնի և չարչարակցությամբ մարդկանց մոտեցնի Աստծուն, քանի որ մարդկանցից ոչ ոք չէր կարող տեսնել Նրա հայտնի գորությունը, ինչպես եզրված է. «Ոչ մի մարդ չի կարող տեսնել իմ երեսը, և ապրել» (Ել. ԼԳ. 20)։ Եվ հիմա, նույն ինքը՝ Բանը մարմնացավ անարատ կույսից, հագավ և երևաց մարդկանց, մարմնով երևում էր և ամեն մեծություններ գոր-

ծում, որին ականատես լինելու արժանացան աշակերտները, գորացան և հավատացին, որոնք և մեզ ավանդեցին Նրա անպատում գորության հավատը։ Նրան ճանաչիր և դու՝ գոնե ուշացումով, որ կարենաս փրկվել»։

Հուլիանոսն ասաց. «Լավ ես երկարացնում ճոռոմաբանությունդ, համառոտ լսիր ինձնից. եթե հանձն չառնես պաշտել աստվածներին՝ ըստ թագավորի կամքի, կհրամայեմ սրով սպանել քեզ, քանի որ տեսնում եմ՝ դիմադրում ես և տանջանքդ արհամարհում»։ Թեոդորիտոսն ասաց. «Դու ջանում ես նմանվել քո հայր սատանային, իսկ ես աղոթում եմ, որպեսզի անարգել ու անխափան ավարտեմ իմ ընթացքը։ Բայց դու հիշիր, որ այդ ամբողջ հանդգնությանդ համար Աստծուց քեզ մեծ բարկություն կգա՝ ինչ որ արեցիր և ինչ անելու ես։ Դրա համար բռնակալը քեզնից շնորհակալ չի լինի»։ Մինչդեռ նա այս էր խոսում, Հուլիանոսն ասաց. «Ինչ ուզում ես ասել, ասա՛, բայց կտեսնենք, թե կլինի ասածդ»։ Թեոդորիտոսը պատասխանեց և ասաց. «Դու չարաչար հիվանդությամբ մահիճ կընկնես, դու ինքդ կերակուր կլինես և որդերից քայքայված կելնես աշխարհից։ Իսկ քո բռնավորը մարտում, ուր հույս ունի արիություն ցուցաբերել՝ չի ստանա ոչինչ և այլազգիների ձեռքով կմեռնի՝ բնավ չիմանալով ումից կխոցվի, և այստեղից չի դառնա Հռոմայեցոց աշխարհը»։ Եվ Հուլիանոսը վախեցավ, թե գուցե նաև ուրիշ մեծամեծ ու անվայել բաներ կխոսի, հրամայեց տանել նրան և սպանել սրով։ Սուրբը և առավել սուրբը գնում էր ցնծալով և բոլորին՝ մեծերին ու փոքրերին, պատվականներին ու անարգներին հանձնում Աստծուն։ Իսկ Հուլիանոսը, քանի որ ուշ գնաց ատյանից, օրվա մնացորդը և ամբողջ գիշերը տրտմությամբ անցկացրեց թագավորական ապարանքում։

Երբ առավոտը բացվեց, շտապ ելավ, մտավ կայսեր պալատը, և երբ երկրպագեց, թագավորը նրան հրամայեց նստել։ Եվ նա նրան ցույց տվեց սուրբ սպասքի ցուցակը, որ առել էր սուրբ եկեղեցուց, ասաց նրան. «Թեպետև ուշացած բերի սպասքի ցանկը, բայց ստույգ և մանրամասն գրեցի բոլորը,

որպեսզի ձեր աստվածները գիտենան, թե այնտեղից ինչքան գանձ բերվեց: Այն ևս իմացիր, որ խանգարիչ Թեոդորիտոսին, որին փնտրում էիր եկեղեցու ունեցվածքի համար, հազիվ բռնեցի, սաստիկ տանջանքով չարչարեցի և սպանեցի սրով»: Երբ կայսրը լսեց, հանկարծակի բարձրաձայն աղաղակեց և ասաց. «Իմ կամքը է՛ր այն, որ արեցիր: Ես շատ ջանացի պատճառ գտնել քանդելու քրիստոնեից կրոնը, բայց ոչ մեկին չսպանել սրով: Դու չարիք գործեցիր, որ պատճառ տվիր ժանտ գալիլիացիներին՝ իմ մասին բազում չար բաներ գրելու, ինչպես և արեցին առաջին թագավորներին. տեսակ-տեսակ պատճառներ հնարեցին չարագործների համար, որ կոտորեցին, որոնց և վկա են անվանում, ուստի և դու պարտավոր ես խնայել և ոչ թե բոլոր գալիլիացիների աչքի առաջ սպանել մեկին, և բոլոր ուրիշներին պատվիրել նույնը անել»: Երբ այս ասաց, նայեց քեռուն և տեսավ, որ ամաչեց և երեսի գույնը թռավ, ամբողջ մարմինը մեռածի պես եղավ: Ուզեց նրան արձակել, ասաց. «Գնանք աստվածներին զոհ մատուցենք, կատարենք աստվածպաշտություն, որ կարողանաս քեզ մաքրել և փրկվել ժանտերի ապականությունից»:

Իսկ Հուլիանոսը, թեպետ մեծ տրտմություն մեջ էր, բայց ելավ, ակամա գնաց կայսեր հետ, և երբ կատարեցին անարժան գործը, զոհեր մատուցեցին դեերին, հանեցին լյարդը մի հավքի, որ ինչպես ժանտագործներն են ասում Հնդկաստանից էր, նա ամոթից և ակամա առավ, ճաշակեց և հեռացավ կայսրից: Եվ երբ գնաց իր հազարապետության տեղը, ո՛չ ուտել և ո՛չ ըմպել կամեցավ, զղջալով գործած չարիքների համար: Առավոտյան որովայնում ինչ-որ ցավեր եղան, որ չարաչար տանջում էին նրան, որովհետև լյարդը, որ կուռքի զոհից ճաշակեց, իջավ, նստեց նրա լյարդի վրա, մանր կտրատում էր և տագնապեցնում: Երբ այգը բացվեց՝ իր լյարդից վերև, բերանն էր գալիս, և նա ծամում էր, կեսը թքում, իսկ կեսը նորից կուլ տալիս: Եվ բազում օրեր, բազում անգամ եղավ դա: Այնուհետև երբ է՛ր կարողանում դիմանալ տանջանքին, դիմեց կայսրը և աղաչեց բանալ եկեղեցին: Եվ

նա ասաց. «Փակեցիր՝ դու ինքդ բաց»: Եվ դարձյալ ասաց. «Քեզ համար, արքա՛, չարաչար տանջվում եմ և կորչում»: Եվ կայսրը պատասխանեց. «Թերահավատ եղար աստվածների նկատմամբ և այդ պատճառով չարչարվում ես այդպիսի տանջանքով»: Խեղճ ու թշվառական Հուլիանոսը անկարող էր այլ կերակուր ճաշակել, միակ կերակուրը իր լյարդն էր՝ ըստ վկայի և երանելիի մարգարեություն: Ու նաև որդերով լցվեց, որոնք ուտում էին նրա մարմինը: Եվ ապա, վերջապես հանեց դառնացած հոգին: Երբ անօրեն թագավորը լսեց, ասաց. «Կասկածեց աստվածներին և չհավատաց, դրա համար կրեց այդ [պատիժը]»: Եվ երբ թաղեցին, գետինը չընդունեց նրան, բազում անգամ ծածկում էին, և երբ գալիս էին, դուրս ելած էին գտնում, մինչև որ թռչունների ու գազանների կեր դարձավ:

Քիչ օրեր անց բռնավորը գնաց Պարսկաստան պատերազմի: Երբ կովեց ու հաղթեց համարում էր, թե ինչ որ հերոսություն է կատարել. հանկարծակի նրան երևաց հրեշտակների զորքը: Իր զորքերին հրամայեց զինավառվել և ուզեց գնալ որպես մարդկանց՝ նրանց հետ մարտնչել: Եվ խեղճ թշվառականը չգիտեր, որ երկնքից բարկություն էր եկել-հասել իրեն: Հանկարծակի օդից մի նետ եկավ և հարվածեց նրան կրծքի տակ, և սաստիկ արյուն թափվեց նրանից, այնուհետև տագնապի մեջ էր ցավերից: Եվ նրան այնպես էր թվում, թե Քրիստոս եկել կանգնել է իր հանդեպ և կպատուհասի իրեն: Խեղճն ու թշվառականը կարծում էր՝ նրան մոտ էր, և չգիտեր, որ կարող է երկնքում լինել և երկրում մոտիկ երևալ. արյունից վերցրեց և օդն ի վեր ցանեց, և աղաղակեց ու ասաց. «Արդեն բավ է, Քրիստո՛ս, բավական է, հաղթեցիր», և հանեց դառնացած հոգին:

Երբ բոլոր մարգարեությունները կատարվեցին՝ որ մարգարեացավ սուրբ վկա Թեոդորիտոսը, մենք, որ պալատում էինք և տեղյակ էինք գործին և ամեն ինչում հետևում էինք Աստծու ծառային, հաստատ իմանալով գրեցինք և ուղարկեցինք բոլոր եղբայրներին, ովքեր ճշմարտություն հետևում

եք մեր Կենդանարարին, որպեսզի ամեն ինչ հավաստի գիտե-  
նաք: Եվ սուրբ վկայի ծննդյան օրը, որ ապրիլի չորս կա-  
ղանդներից առաջ է, այսինքն արեգ ամսին, երբ ուրախու-  
թյամբ փառավորում ենք Աստծուն, ուրախությամբ փառա-  
վորեք Աստծուն և կատարեք նրա հիշատակը և աղոթեք մեզ  
համար, որ գրեցինք: Եվ օրհնություն ու գովություն առաքե-  
ցեք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և հավիտ-  
յանս հավիտենից. ամեն:



## ՔՐԻՍՏՈՍԻ ԶԻՆՎՈՐ ՍՈՒՐԲ ԹԵՈԴՈՐՈՍԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաքսիմիանոսի և Մաքսենտոսի թագավորության  
ժամանակ մեծ հալածանք կար քրիստոնյաների դեմ՝  
[ստրպելով] կա՛մ դառնալ կռապաշտության. կա՛մ մատնվել  
տանջանքի ու մահվան: Այդ ժամանակ բռնվեց Թեոդորոսը և  
տարան, հարկադրում էին հրաժարվել Քրիստոսից: Իսկ նա,  
Սուրբ Հոգով լցված, կանգնեց զորքի մեջ ու ասաց. «Ես քրիս-  
տոնյա եմ և պիղծերին զոհ մատուցել պարտավորված չեմ»:

Բրինկաս դատավոր սենեկապետն ասաց. «Դու բեր բոլոր  
զինվորներդ և զոհ մատուցիր աստվածներին, հնազանդվե-  
լով անհաղթ թագավորներին»: Թեոդորոսն ասաց. «Իմ թա-  
գավորին եմ զինվորագրվել և ուրիշի զինվորագրվել չեմ կա-  
մենում»: Սենեկապետն ասաց. «Սրանք բոլորը, որ քեզ հետ  
են՝ Քրիստոսի՞ն են զինվորագրված»: Թեոդորոսն ասաց.  
«Յուրաքանչյուրը գիտե՛ ում զինվորագրվի, բայց ես իմ երկ-  
նային Տիրոջն ու թագավորին եմ զինվորագրված»: Պոսիդո-  
նոս Դուկենառիոսը մոտենալով ասաց. «Քո Աստվածն ինչո՞ւ  
Որդի ունի»: Թեոդորոսն ասաց. «Այո՛, ունի Որդի՝ ճշմարտու-  
թյան Բանը, որով ամեն ինչ ստեղծեց»: Սենեկապետն ասաց.  
«Եթե ճանաչենք Նրան՝ կարո՞ղ ենք թողնել մեր թագավորին  
և մոտենալ Նրան»: Թեոդորոսն ասաց. «Ոչինչ չի խանգա-  
րի ձեզ թողնելու խավարն ու ժամանակավոր թագավորնե-  
րին և մոտենալու հավիտենից թագավորին և զինվորագրվե-  
լու Նրան, ինչպես ես»: Սենեկապետն ասաց. «Սակավ օրեր  
թողնենք դրան, որպեսզի ինքը խրատվելով հանգի օգտակա-  
րին», - և սուրբը ներումն ստացավ: Իսկ դատավորը մոլեգնեց  
տանջանքով ու գանահարությամբ խոշտանգելու նրանց, ում  
երանելին ասում էր՝ «Մի՛ ուրանաք անմահ թագավորին»:

Եվ հարմար ժամանակ գտնելով՝ այրեց աստվածուհու  
տաճարը: Իսկ մեկը տեսնելով՝ ամբաստանեց սուրբ Թեոդո-

րոսին. հրամայեցին տանել դատավորի ատյանը: Երբ տարան, դատավորն ասաց. «Ո՛վ թշվառական, ինչո՞ւ փոխանակ զոհ և կնդրուկ մատուցելու աստվածուհուն, այրեցիր»:  
Թեոդորոսն ասաց. «Ինչ որ արեցի՝ չեմ ուրանում, միգուցե խափանվի աստվածուհու պաշտամունքը, որով դեևերը ձեզ մոլորեցրել են»:  
Այնժամ [դատավորը] հրամայեց գանահարել երանելիին և ասաց. «Մեղմ խոսքերը քեզ ավելի համարձակ և հանդուգն դարձրին, այնքան որ հանդգնեցիր մոտենալ աստվածուհու տաճարին: Այսուհետև քեզ դժնդակ տանջանքով կիրատես և կլուծես աստվածուհու վրեժը, և կհնազանդվես թագավորի հրամանին»:  
Երանելի Թեոդորոսը պատասխանեց. «Քո խոսքի մեջ ճշմարտություն չկա, քանի որ քո պատճառած տանջանքը այնքան չի գորանա, որ հատի հանդերձյալ կյանքի հույսը, և իմ համբերանքը, որ ինձ կզա վերին գորությունից, թեկուզ բյուր տեսակ-տեսակ տանջանք տաս»:  
Դատավորն ասաց. «Խոստովանիր, զոհ մատուցիր աստվածներին, և կփրկվես տանջանքներից»:  
Թեոդորոսն ասաց. «Ոչինչ են այս տանջանքները, քանի որ ինձ գորություն իջավ իմ Տիրոջից, որ ամենակարող է»:  
Այս որ ասաց, դատավորը հրամայեց բանտ նետել և դռները կնքել ու քառասուն օր սոված պահել, մինչև կմահանա: Եվ այն գիշեր Տերը նրան երևաց ու ասաց. «Քաջալերվի՛ր, քանի որ Ես քեզ հետ եմ ամեն ինչում և քո կյանքը անվնաս կպահեմ»:  
Իսկ երանելին երբ այս լսեց, սկսեց ցնծալով օրհնել ու սաղմոսել. «Տեր, լույս իմ և կյանք իմ, ես ումի՞ց կզոզամ այսուհետև»:  
Երանելին լսում էր սաղմոսող բազմություն ձայնը: Եվ բանտապետը լսեց ձայնը, զարհուրած գնաց գիշերով, պատմեց դատավորին: Դատավորը զենքով ու բազում զինվորներով եկավ, որովհետև կարծում էր, թե զորք է եկել նրան բանտից հանելու: Բայց եկան, դռները կնքած գտան, և շատերին լսելի էր սաղմոսների ձայնը: Բացին և բանտում ոչ մեկին չգտան, բացի երանելիից՝ կոճղին ամրացված. և բոլորին սարսափ պատեց: Հրամայեց առավոտյան [երանելիին] տանել ատյան: Եվ սկսեց աղաչական ձայնով խոսել ու

ասաց. «Լսիր ինձ և զոհ մատուցիր աստվածներին: Երգվում եմ աստվածներով, կզրեմ ինքնակալ տերերին, քեզ իսկույն քահանայապետ կկարգեն, և պատիվ կստանաս ու մեզ աթոռակից կլինես, և կմեծարվես բոլորից»:  
Իսկ երանելի Թեոդորոսը խոստովանեց արհամարհելով ասաց. «Քո պատիվներն ու պարգևները քեզ լինեն ի կորուստ. Աստուծու ծառայիս չես խաբի, այլ քո տանջանքներով չես վախեցնի. իմ Աստուծուն փառք կտամ և ոչ դեևերին. ինչ ուզում ես՝ արա իսկույն»:  
Այնժամ բռնավորը բարկացավ, հրամայեց կախել նրան և քերել երկաթե քերիչներով, որ մերկացնելով ամբողջ մարմինը՝ գետնին գցեն: Իսկ երանելին սաղմոսում էր. «Կօրհնեմ Տիրոջը ամեն ժամ, ամեն ժամ նրա օրհնությունն իմ բերանում է» (Սաղմ. 149. 2): Եվ [դատավորը] զարմացավ սրբի համբերությունը, թե ինչպես է դիմանում այդպիսի դառն տանջանքներին: Իսկ երանելին լի էր ուժով և ասաց բռնավորին. «Նախապես քեզ չասացի՞, թե Քրիստոսն է ինձ օգնում, որ ուժ և հաղթություն է տալիս ինձ դիմակայելու քո բոլոր հնարներին, սատանայի որդի և թշնամի ամեն արդարություն, որ չճանաչեցիր Աստուծուն»:  
Բռնավորն ասաց. «Ի՞նչ ունես կամ ինչ ես մտածում՝ մեզ հետ լինել ու մնա՞լ, թե՛ քո Քրիստոսի հետ, և մահանալ»:  
Սուրբ Թեոդորոսը մեծ խնդությունք ասաց բռնավորին. «Իմ Քրիստոսի հետ էի, եմ և կլինեմ»:  
Իսկ երբ բռնավորը տեսավ իր պարտվելը նահատակից՝ հրամայեց այրել երանելիին: Եվ երբ տարան այրելու տեղը և չար սպասավորները շտապ պատրաստեցին կրակը, երանելին նայեց երկինք, ինքնիրեն կնքեց խաչի սուրբ նշանով և ասաց այսպես. «Տեր Աստված, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, որով ճանաչեցինք ճշմարտությունը, որ առաքվեց Քեզնից մարդկային ցեղի փրկության համար. մարմնացավ, խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ ու համբարձվեց Հոր մոտ՝ երկինք, որ մեզ հավաքի ավետարանական քարոզությունք հավատալու Ամենասուրբ Երրորդությունը: Եվ ովքեր մեր Տեր և փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհով ու մարդասիրությունք արդարացան, նրանք փառավոր եղան: Այժմ

## ՍՈՒՐԲ ԹԵՈԴՈՐՈՍ ԿԵՍԱՐԱՅՈՒՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ընդունիր ինձ, այս հրի միջոցով ավարտեմ իմ ընթացքը և ինձ արժանավորիր սիրելի և ճշմարիտ վկաների հետ ժառանգել աշխարհի սկզբից Քո սրբերի համար պատրաստված արքայությունը և նրանց հետ փառք մատուցել ամենասուրբ Երրորդությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և հավիտյանս. ամեն»:

Եվ նայեց, բազմություն մեջ տեսավ Կղենիկոսին, որ իր զինակիցն էր և արտասվում էր: Աղաղակեց զեպի նա. «Հետևելի ինձ երկնավոր Թագավորի մոտ գնալու, որ ինչպես ժամանակավոր կյանքում մնացինք միասին, մնանք նաև Հոգու սիրով և հավիտենական միասին վայելենք ի փառս Աստուծո: Եվ դրանից հետո ասաց, Քրիստոս, հույս և ապավեն Քեզ հուսացողների, ողորմության շնորհ տուր նրանց, որ բռնվեցին ինձ հետ, ընտրված՝ պահելու ճշմարտության հավատը, որ ծանուցվեց Քեզնից, և իմ ընթացքը ավարտել բարի խոստովանությունը և արժանավորել երկնքի արքայությունը»:

Իսկ աստվածուհու սպասավորները վրեժխնդրության համար կապեցին երանելի Թեոդորոսին և գցեցին պատրաստած հնոցը, որովհետև Թագավորի հրամանը սաստկանում էր, և հնոցը բորբոքվում էր առավել: Երբ սուրբը հնոցի մեջ էր, ավելի լուսավոր քան կրակի լույսն էր, լսեց ձայն, որ ասում էր. «Տեր Հիսուս, ընդունիր իմ հոգին անուշ հոտերի մեջ»: Եվ ովքեր արժանի էին տեսնելու՝ տեսան՝ ինչպես լույս հնոցից վերև՝ երկինք բարձրացավ սրբի հոգին, և բոլորին ահ պատեց, և օրհնում էին Աստծուն:

Մի բարեպաշտուհի՝ Բարի անունով, լցված բարեպաշտությամբ՝ վերցրեց երանելի Թեոդորոսի մարմինը, յուզերով և անուշ խոնկերով պատեց, դրեց տապանի մեջ, տարավ Եվխայիզա կոչվող գյուղը, Ամասիա քաղաքի մոտ, և մեծ պատվով ու զգուշությամբ գերեզման դրեց: Եվ սուրբ Թեոդորոսի հիշատակը կատարում են ի փառս ամենասուրբ Երրորդության՝ Հոր և Որդու և Սուրբ Հոգու. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Սուրբ Հոգու քրիստոսածիր և առատաբուխ ողորմության շնորհները, որ միշտ և հանապազ, ամեն ժամանակ առատաձեռնությամբ տնօրինում է իր եկեղեցիների մեջ, որ հաստատեց հավատի առաքելական վեմի վրա և կանգնեցրեց անհողողոզ յոթ սյուներով և երբեք չի նվազեցնում կամ պակասեցնում իր ստեղծածներից, մանավանդ նրանցից, որոնք սկզբից ևեթ Նրա կամքին հաճոյացան ու եղան Նրա խորհուրդները կատարող, հաստատապես նշաններ ու սքանչելիքներ է կատարում օրերում, դարերում և բոլոր ժամանակներում, որով և արեց սկզբնապես և անելու է մինչև իր տերության գալուստը, ինչպես և ցույց տվեց դարից դար, դրանք գրված և պատկերված են աստվածային գրքում: Արդ, Բան Աստծու գալստյան և մեզ վրա արդարության Արեգակի ծագման ժամանակ, որից հետո մեզ Թագավորեց մեր Տեր Հիսուս Քրիստոսը, երբ անմարմին Աստվածը Թանձրացավ մարմնի մեջ և ինքնահոգար կամքով մեր բնությունը էր կենցաղավարում, ըստ մարգարեին՝ զատ և հեռու մեղքերից: Նրա չարչարանքներից, աշխարհ ապրեցնող հարությունից և նորահրաշ համբարձումից հետո վախճանվելով սրբերի և իր անվան սիրելիների և իր մարմին առած տնօրինության վկաների առկայությամբ, որոնք արի հոգարության վերցրին Սաչյալի խաչերը և ընթացան կանչող ձայնի հետքով, խաչակից եղան Որդի Աստծուն: Քանի որ դրսից դիտելով՝ տեսան Բանի փառքը և անհատնում բարքերի խոստացված բարեբաստությունը, անասելի գեղեցկությունը, անծերանալի կյանքը, անտրտում ուրախությունը, անթառամ պսակը և նմանները, որ բանականներից ոչ ոք չի կարող գննել, կամ խոսքով թվարկել վկաների քանակը, որոնք կամավոր և առաքինաջան նահատակությամբ հասան Հոր ավետիսին,

երանելի Հուլիսի ակնկալությամբ, իրենք իրենց խաչ հանեցին կարիքով և ցանկությամբ հանդերձ, իրենց մեջ կրելով ըստ առաքյալի բազմազան և բազմաթիվ չարչարանքի կրքեր, համբերելով նեղությունների ու լլկանքի, քաղցի ու ծարավի, ցրտի ու մերկության, գելարանների ու կապանքի, ստանալով հավիտենական կյանք, պսակվելով Լուսի Հորից և ժառանգելով անտրտում ուրախություն:

Արդ, այս ժամանակ և այս կյանքի շրջապտույտի նվազմանը, այս հետնյալ օրերին, վերջին ժամանակներս, մեր մեջ եղան այս նշաններն ու սքանչելիքները, որ Աստուծո նախախնամությունը կամեցավ պսակել սուրբ եկեղեցին և զվարճացնել Նոր Սիոնի մանուկներին և բարձրացնել սուրբ եկեղեցու եղջյուրը: Այդ տեսնելով Քրիստոսի հոտի վհատածներն ու երկյուղածները կզարթնեն մահահանգիստ քնից, կզղջան և կհանգեն ճշմարտության գիտության, ավետարանական դավանամամբ կհաստատվեն սուրբ հավատքի և սուրբ Երրորդության խոստովանության մեջ: Եվ այս՝ արդարների և Աստուծու ընտրյալների վերանալով, և տեսակ-տեսակ չարիքների սերումով ու բազմանալով երկրի վրա, որ ցանեց չար որոմի սերմանողը՝ կորստյան որդին և անօրինության մշակը:

Տաճկաստանի մեծ արքա Սուլիման Շահ Սուլտան Ռուզնատնի բռնակալության ժամանակ էր, որը իր օրերին քաջության բազում հանդեսներ և հաղթական պատերազմներ վարեց՝ շատերի աչքում մեծարվելով և սարսափի մատնելով տիեզերքի բոլոր թագավորներին: Սա որդին էր մեծ ու հաղթող ինքնակալ իլիճ Ասլան Սուլտանի: Սա իր տերության իշխանության տակ գրավեց հյուսիսային կողմերը՝ սկսած Կեսարիա մայրաքաղաքից մինչև մեծն Բյուզանդիոն, որ այժմ կոչվում է Կոստանդնուպոլիս, իշխանության տակ ունենալով Պոնտոսն ու Սեբաստիան և ամբողջ Ջեմենտացոց և Տրապիզոնցոց տերությունը, հասավ մինչև մեծ ու հուշակավոր Թեոդուպոլիս, որ կոչվում է Կարնո քաղաք, [իր] գավազանի տակ նվաճեց Եկեղյաց և Դարանաղյաց [գավառները, իր] ձեռքի տակ վերցրեց Ծոփաց իշխանին, հասավ մինչև

Մելիտենի լայնանիստ քաղաքը, Եդեսացոց սահմանին մոտ. կհամարձակվեմ ասել՝ և ամբողջ աշխարհը, տիրելով [նաև] իր ամբողջ հայրենական աշխարհին: Սրանք ուրեմն այսպես եղան: Սրա օրերին, նրա տերության երկրորդ տարում հայտնվեց Քրիստոսի մեծ և սքանչելի, պանծալի և հուշակավոր վկան՝ երանյալ նահատակ սուրբ Թեոդորոսը:

Սա ծնվել էր Գամրաց գավառում՝ Կապադովկիա աշխարհում, Կեսարիա քաղաքում, որ հայրապետական և թագավորական աթոռ է և գահերեց հունաց բոլոր քաղաքների, իր մեջ ունենալով շատ արեգակներ՝ սուրբ վկաների հույներ, որոնք ջահաբորբոք լույսով պայծառացնում են քրիստոնեական եկեղեցին: Մերկյուրիոսն էմ ասում և Գորգիոսը, և մեծ Բասիլիոսը, որոնց մեջ տեսանելի է և Քրիստոսի բազմիցս երանելի վկա սուրբ Թեոդորոսը: Արդ, մեր Քրիստոս Աստուծուց օրհնված է նախասացյալ Կեսարիա քաղաքը, որ այսպիսի ջահեր և արեգակներ էր աճեցնում:

Բայց գանք այս քաջ և հաղթող վկայի մեծագործության պատմությանը և դրվատական խոսքերով ցույց տանք նրա պանծալի ընթացքը, իսկ դուք մաքրեցեք լսելիքներդ՝ ունկնդրելու սուրբ նահատակի համբերությունը: Արդ, սա, որ այսքան երանությունների արժանացավ, մանուկ հասակից և մայրական խանձարուրից հրահանգվել և կրթվել է օրենքներով ու մարգարեներով, սնվել ավետարանական կաթով՝ ըստ սուրբ ավագանի շնորհների, ըստ աճման հասակի զարգանալով մինչև երիտասարդական արբունքի հասնելը, հետևելով Տիրոջ օրենքին և գիշեր ու ցերեկ խոկալով Նրա պատվիրանների շուրջը: Ապա մեր բնության սովորությամբ զուգավորվում է պարկեշտ ամուսնությամբ, զբաղվելով արհեստով, այդպես հոգալով իրենց կյանքի կարիքները, ըստ մարգարեի, թե. «Կուտես քո ձեռքի վաստակները» (Սաղմ. ՃԻԷ. 20): Ապա երանելին մտածում էր, թե ինչպես կամ ինչ ձևով կարող է մարմնի աղքատությունից ազատվել, ըստ մեր բնության սովորության մտորելով ապագայի մասին: Բայց կա աղքատություն, որ իր մեջ բազմազան ճոխություն է պարունակում: Եվ

կա ճոխութիւն, որ իր մեջ ունի դրա հակառակը: Թվում է՝ սա այն աղքատացածներից մեկն էր, որին աշխարհակեցույց քարոզութեան աստվածային Բանը արժանացրեց ասելով. «Երանի հոգով աղքատներին» (Մատթ. Ե. 3, Ղուկ. Զ. 20):

Սա գնաց քաղաքացիներից մեկի մոտ և ասաց. «Ինձ փոխ տուր ոսկու և արծաթե դահեկաններ, օգնելով իմ թշվառութեանը»: Իսկ նա հոժարութեամբ տվեց նրան՝ ինչքան խնդրեց իրենից: Եվ նա առավ, գնաց և անմիջապես վատնեց, ինչպես ինձ է թվում, անցավորը վաճառեց արքայութեանը՝ շահելով երանութիւն, դրախտի վայելչութիւն, Աբրահամ հայրապետի գոգի գրկանքներ: Ո՛վ հրաշք. ոսկին դեպի հողն էր խոնարհվում, իսկ անմահական գանձը բարձրացել էր նրա մոտ, որ գոյութեամբ ապականացու էր: Ու երբ եկավ հատուցման ժամանակը, նա չէր կարող հատուցել, իսկ պարտատերը նեղում և կեղում էր վերադարձնելու պարտքը, և նա չէր կարող: Ապա [պարտատերը] տարավ քաղաքի դատավորի մոտ, որ արքունական հրամանով կարգված էր բոլոր գավառների դատող և իրավարար: Եվ երբ ճանապարհ ընկան գնացին, [պարտատերը] դատավորին գործը պատմեց ճիշտ հակառակ ձևով: Իսկ նա հրամայեց այնտեղ ամբողջապես հատուցել պարտքը: Եվ երբ ելան դատավորի մոտից, չարի ծառայակիցը բռնեց նրան և նեղում էր խեղդելով, իսկ Թեոդորոսը ազատվեց նրա ձեռքից ու նորից ընկավ դատավորի պալատը: Այնտեղ ուրացավ քրիստոնեական հավատը, որ ուներ և ժամանակավորապես փախչելով ազատվեց այն մարդուց, որ նեղում էր իրեն: Այնուհետև գնաց իր տունը և անմիջապես ուշքի գալով հիշեց տերունական խոսքը, որ ասում է. «Ով ինձ ուրանա մարդկանց առաջ, կուրանամ և Ես նրան իմ Հոր և սուրբ հրեշտակների առաջ» (Մատթ. Ժ. 33, Ղուկ. ԺԲ. 9): Այս առթիվ լավ մտածելով՝ իրապես երկմտեց և հաստատապես զղջաց, ընկավ երեսնիվայր գետնին, լալիս էր դառնապես և արտասվում ողորմաբար, ապաշխարելով իր կորուստը, և զարհուրեց, չքեղացավ նրա դեմքը, ինչպես Քրիստոսի քաջ և երանյալ վկա Հակովիկը, որ արյամբ վախճանվեց ի փառս Աստծու:

Այնուհետև ելավ խուսափեց այնտեղից, ճանապարհ ընկավ, գնաց մի փոքրիկ քաղաք, որ Հունաց սահմաններին մոտ էր և հայկական անսայթաք լեզվով կոչվում է Շնորհավոր, իսկ ըստ իսմայելյան խախտալուր լեզվի՝ Խիր-Շահր: Այնտեղ բնակվեց ծածկաբար՝ ունենալով հայրենատուր և անբիծ հավատը առ Քրիստոս: Այնտեղ մնալով՝ մեծ զղջմամբ ապաշխարում էր: Այնժամ չարի սաղրանքով և հակառակութեամբ չար կամքի բանասարկուի, որ հանապազ մարտնչում է մարդկանց որդիների հետ, նրա վրա փորձութիւններ էր հարուցում: Կեսարիա քաղաքից մի մարդ, անօրենների դասից գնալով վերոհիշյալ այն քաղաքը պատահմամբ հանդիպեց Աստծու մեծ ու ցանկալի այրին, և տեսնելով ճանաչեց նրան, բռնեց Քրիստոսի ամենաերջանիկ վկային և ասաց. «Դու այն չե՞ս, որ ուրացար քո Քրիստոսին և հրաժարվեցիր Նրա ճշմարտութիւնից, եղար ուրացող և մեր օրենքի հավատացյալ: Այժմ տեսնում եմ քեզ, որ առաջին հավատն ունես և քրիստոնյաների կարգերը, Նրան պատվում ես հոժարութեամբ՝ ուրանալով մեր կրոնը և արհամարհելով հավատքը, որ սկսել էիր»: Որովհետև լսել էին սրբի դարձը և չգիտեին որտեղ է, որ բռնեին և սպանեին նրան: Իսկ Քրիստոսի անպարտելի վկան աներկյուղ համարձակութեամբ խոստովանեց ճշմարտութիւնը և չուրացավ, բացահայտ ասելով. «Այո՛, ես եմ, որ չարի խաբեութեամբ պարտվեցի և հանցավոր եղա իմ Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ, որ երկնքի ու երկրի, երևելիների ու աներևույթների արարիչն է, միակը, որ ունի անմահութիւն՝ բնակվելով անմատուց լույսի մեջ: Ինչո՞ւ էի ուրանում Նրան, որ ճանաչում էի իմ մոր որովայնից: Նրան եմ միայն պաշտում և Նրան երկրպագեցի իմ մանկութիւնից: Բայց այժմ զղջալով ճանաչեցի ճշմարտութիւնը և դարձա իմ հավատին»: Այնժամ սրտմտութեամբ և բարկութեամբ զայրացավ այն մարդը, չուզեց թողնել նրան, այլ բռնեց, պարսավելով տարավ քաղաքի գորագլխի մոտ, որ արքունական հրամանով ստանձնել էր քաղաքի վերակացութիւնը, և պատմեց նրան ամեն ինչ: Երբ այս լսեց քաղաքապետը, բարկանալով

հրամայեց ծաղրուծանակ անել նրան, արհամարհանքով ու անարգանքով շրջեցնել քաղաքի փողոցներում՝ ի տես բոլոր ուսմիկներին: Իսկ Քրիստոսի սուրբ վկան այն ամենը իրեն փառք ու պատիվ համարելով տանում էր համբերությամբ: Այնժամ բռնավորը բարկացավ, հրամայեց սրբին բանտ նետել մի քանի օրով:

Օրեր անց երանելիին հանել տվեց և տանջել դահիճների ձեռքով: Չարչարելուց հետո հրամայեց կապանքով և դառն նեղությամբ տեղափոխել Կեսարիա քաղաքը, մեծ արքայի մոտ: Եվ տանելով քաղաք՝ իսկույն երանելիին բանտ նետեցին: Մյուս օրը՝ արևածագին գնացին պատմեցին արքային սուրբ վկայի մասին: Իսկ նա՝ երբ լսեց, հրամայեց շտապ բերել իր առջև: Եվ երբ սուրբը մտավ, արքան մեծ ցասումով նայեց նրան և ասաց. «Ա՛յր դու, ճի՞շտ են ասում, որ տաճիկ ես եղել և այժմ հետ դարձել, ունես քրիստոնյաների կարգն ու աղանդը, պատվում ես Նազովրեցու օրենքը, պաշտում ոմն Աստծու, որին Հիսուս են անվանում, և որն իր ազգից չարչարվելով և խաչվելով մեռել է չարագործի մահով: Եվ մեր հավատը արհամարհանքով թողել ես: Արդ, հրամայում եմ քեզ, առանց այլևայլության ընդունել մեր սահմանած կրոնը և թողնել քրիստոնյաների սնոտի և ընդունայն կարգը»:

Այնժամ Քրիստոսի անպարտելի վկան բացեց շնորհալից բերանը, ասելով. «Ես, ո՛վ թագավոր, քրիստոնյա եմ, և Քրիստոսի ծառա, այլև քրիստոնյաների զավակ և երբեք չեմ լսել, թե իմ տոհմի մեջ եղել է դրանից, որ դու ես ասում, ես ևս չեմ լինի հավիտյան, այլ միայն իմ միակ Աստված Հիսուս Քրիստոսինը, որ մեռավ մեզ համար և իր մահվամբ կենդանացրեց մարդկային ցեղը: Սկզբից ևեթ Նրան ենք հավատացել, և ազգեազգ Նա է մեր փրկիչն ու կեցուցիչը, Նրան է պետք ծառայել և միայն Նրան լինել հպատակ: Երբեք չեմ ուրանա իմ Տիրոջը և ճշմարիտ Աստծուն, որ կյանքի և մահվան Տերն է»:

Արքան դարձյալ կրկնեց և ասաց սրբին. «Այգպես մի՛ մնա նույն համառությանը և մի՛ ընդդիմացիր իմ հրամանին, եթե ոչ՝ կհրամայեմ քեզ քարկոծել և զրկել քաղցր

կյանքից»:

Աստծու սուրբը պատասխանեց և ասաց. «Այսուհետև գիտեցիր, ո՛վ արքա, որ ես մտքիս չեմ դրել վախենալ քո սպառնալիքներից և կամքս միտք ու առաջարկություն չունի ուրանալու իմ Քրիստոսին և պաշտելու սուտ ու պատիր և խաբեբա ձեր կրոնը: Պատրաստ եմ հոժար կամքով չարչարանք և նեղություններ հանձն առնել հանուն մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որ ինձ համար խաչի և մահու չարչարանքներ ստացավ: Այժմ մի՛ հապաղիր, այլ իսկույն արա՛, ինչ անելու ես»:

Արքան մոնչալով հրամայեց բռունցքով հարվածել սուրբ վկայի բերանին այնքան, մինչև ատամները լնդերից թափվեն, և ուղարկեց նրան դատավորի մոտ, ասելով. «Ինչպես ուզում ես քննիր դրան՝ թե ինչ ազգից է, և վարվիր նրա հետ քո ցանկությամբ»:

Իսկ նրան ըստ ինքնակալի հրամանի տարան, և երբ նա մտնում էր դատավորի մոտ՝ [վերջինս] իսկույն ճանաչեց սրբին և ասաց. «Դու չէ՞իր, որ մի ժամանակ եկար ինձ մոտ և ուրացար քո Քրիստոսին և հայրենի հավատդ և դրանով ազատվեցիր այն մարդու ձեռքից, որին պարտք էիր: Եվ ես քեզ ընդունեցի իբրև հարազատ որդու և սիրելի եղբոր, պատվելով մեծարեցի և արձակեցի քեզ: Արդ, ո՞րտեղից ես գալիս և ինչ է, որ լսում եմ քո մասին, ճշմարիտ են, թե սուտ: Ասա անմիջապես, քանի որ ուզում եմ քեզնից իմանալ եղելությունը»:

Իսկ Աստծու սքանչելի այրը և Քրիստոսի մեծ վկան բարձր ձայնով բազմամբոխ հրապարակի և ուսմիկների հոժ խմբի առաջ սկսեց համարձակորեն և արտասուքով լի, բոլորին լսելի ասել. «Քրիստոնյա եմ՝ ըստ ավագանի շնորհի և խաչյալ Աստծու ծառա: Եվ այժմ ես չեմ ուրանա Նրան, այլ խոստովանում եմ Աստված և Տեր և Թագավոր, Իշխան և Փրկիչ, և հանձն եմ առնում տանջանքի բոլոր հարվածները Նրա ամենասուրբ անվան համար, այլև խնդությամբ կմեռնեմ, որ Նրա առջև մնամ զվարթ երեսով, որովհետև թեպետ ավելի առաջ քո ատյանում մեղք գործեցի իմ Տիրոջ հանդեպ, բայց հույս ունեմ և ակնկալում եմ Նրանից գտնել և ստանալ հանցանքի թողություն՝ իմ ար-

յան հեղմամբ: Ահա լսեցիր ինձնից, ո՛վ դատավոր, ամեն ինչ ճշմարտությամբ»:

Եվ դատավորն ասաց. «Որդյակ իմ, մի՛ ընդդիմացիր իմ խրատին, հիշիր ուխտի դաշինքը, որ հաստատեցիր իմ ատյանի առջև. ես վերստին կընդունեմ քեզ և կտամ ոսկու և արծաթի գանձեր ի բավարարություն քո կյանքի կարիքների, և պատվով կմեծարվես մեր բոլորից՝ մեծամեծներից ու փոքրերից, երևելի կլինես արքունի պալատում, որովհետև քեզ ընծայեցիր միակ աստծուն և քո կամքով ուրացար քրիստոնեությունը՝ հետևելով մեր կրոնին: Արդ, որդյա՛կ, մի՛ խենթանա, փախչելով բարի խորհրդից, քո դեռատի հասակը մատնելով կորստյան»: Դատավորը այս և այսպիսի խաբեական խոսքեր ասաց սուրբ վկային, կարծելով համոզել նրան: Իսկ ամենագուց սուրբը խցել էր ականջները, ամենևին չէր ընդունում նրա ասածները, այլ միայն համարձակ ձայնով ասում էր. «Ո՛վ դատավոր, ինձ խոստանալով ոսկի ու արծաթ, մեծարանք և պատիվ արքունիքից, ուզում ես ինձ հավանեցնել քո կորստական և խաբեպատիր խոսքերին, ինձ ստիպում ես թողնել ուղիղ ճանապարհը, որ հավիտենական կյանք է տանում, ուր գանձն անապական է, իսկ արքայությունը՝ անվախճան: [Ստիպում ես] լսել քո մոլար խրատին, որի համար ես լալիս եմ ձեր անձանց կորուստը և ձեր իմանալի աչքերի կուրություն խավարը, որտեղից մնում և պահվում են ձեզ համար անչե՞ջ հուրը և անքուն որդերը, ինչպես ասաց Տերը» (Հմմտ. Եսայ. 42. 24):

Այնժամ վկան դարձյալ ուժ ստացավ Սուրբ Հոգուց, կամեցավ հաստատել խոսքը և ասաց. «Երգվում եմ երկնքով և երկրով և նրանց արարչով ու հաստիչով, որ ինչպես հնարավոր է, որ նրանք ելնեն իրենց կարգի սահմանից, նմանապես և ես չեմ փոխվի իմ բարի խորհրդածություններից: Այժմ ինչ որ անելու ես՝ արա՛ իսկույն՝ ես պատրաստ եմ մեռնելու, ինչպես ասացի»:

Եվ ամբարիշտ դատավորը ցասումով լցված տվեց չարազև դահիճների ձեռքը՝ երկար ձեծելու և տանջելու նրան:

Իսկ չարի սպասավորները քարով գանահարեցին նրա կզակը, մինչև ջախջախվելով խորտակվեց նրա բերանը, որից վարդագույն արյունը կայլակելով հոսեց, ոռոգեց երկիրը, և նրանց առջև մեռելի պես ընկած էր [սուրբը]: Իսկ նրանք հանեցին նրա զգեստները և փաթաթելով կտավի մեջ տարան բանտ և պահում էին զգուշությամբ: Իսկ Քրիստոսի երանելի վկան, մտնելով բանտ, ամբողջ գիշերը լուսացնում էր Աստծուն աղոթելով, բերկրալից սրտով և անտրտում ուրախությամբ գոհանում Աստծու անպատում պարգևներից, որ արժանի արեց չարչարվել Իր համար, ցնծում և օրհնում էր Աստծուն: Այդպես մնում էր բազում չարչարանքով խավարչտին բանտում, և երբ այդ եղավ, սրբին կապանքներով բերին դատավորի առաջ նրա ապարանքում: Երբ դատավորը տեսավ Քրիստոսի բարեհաղթ վկային սկսեց խոսել և հարցրեց նրան. «Իմաստնացա՞ր, որդյա՛կ իմ Թեոդորոս, այժմ գիտեմ, որ հրաժարվել ես չար խորհուրդներից, որ ունեիր անցյալ օրը: Ահա տեսնում ես, թե ինչքան դժվարին են մարմնի նեղություններն ու մահվան երկյուղը, որի համար ես ևս ապաշխարում եմ և երեկվա օրը, որ բարկություն ու զայրույթով մեզ գործեցի քո դեմ, այժմ ամաչում եմ քեզնից և աղաչելով խնդրում եմ թողնել ալեհեր [ձերուկիս] հայրական տանջանքները, որ քեզ պատճառեցի, և սրտիս ցասումից պարտված չկարողացա համբերել քո տխմար և մանկական բարքին և երիտասարդական համարձակությունդ: Արի՛, այժմ մի կողմ դիր տմարդի և անօգուտ կամքը, որ ստացար քրիստոնյաների խրատից: Քանի որ ես գիտեմ՝ նրանք ամեն ինչով հրապուրեցին քեզ հակառակվելու մեր կրոնին: Արդ, լսիր և դարձիր վերստին, և կվայելես բազում բարություններ այս աշխարհի կյանքում և ոչ միայն այս, այլ արքունի պալատում կլինես բոլորի աչքին հաճոյացած և սիրելի: Ահա քեզ ասացի ամեն ինչ մեղմորեն, բայց քո օգուտը ինքդ ես ընտրելու»:

Քրիստոսի երանելի վկան պատասխանեց դատավորին. «Լսեցի քո խոսքերը անօգտակար և անախտան [բաների մասին], որ ժամանակավոր են և շուտով կչքանան: Դու ինձ-

նից չլսեցի՞ր՝ քո և ամբողջ ատյանիդ առաջ երեկ, անցյալ օրը ինչպես երգվեցի իմ Աստծով՝ չփոխվել իմ հաստատուն հույսից, որ ունեմ մանկությունից ի վեր Քրիստոսի հանդեպ: Իսկ եթե մոռացել ես, դարձյալ կրկնեմ և երրորդեմ և սա՛ իմ անդանդաղ և հոժարական կամքով. իմ հավատը և հույսը, որ ունեմ իմ Տիրոջ նկատմամբ անխախտ և հաստատուն են: Որովհետև դյուրին է շարժել կամ փոփոխել բարձրանալիք լեռները, որ մեր հանդեպ են, քան թե իմ միտքը փոխել կամ հեռանալ հավատիցս և Քրիստոսի հույսից: Արդ, դու ինչպես ուզում ես արագորեն կատարիր քո կամքը իմ հանդեպ»: Եվ նույն պահին Քրիստոսի փառավոր և սքանչելի վկան բարձր ձայնով գոչեց ի լուր ամենքի և ասաց. «Քրիստո՛ս, Աստծու Որդի, որ Հայրական ծոցից խոնարհվեցիր դեպի մարդկային ցեղը և մարմին առար սուրբ Կույսից, ծնվեցիր անճառապես և առանց արատի և մարգարենների կանխատեսությունը կատարելով եկար Հորդանան, Գառն Աստուծո, որ վերացնես աշխարհի մեղքերը և նույն ժամին տեսար Քո մեծ Կարապետի՝ երկինքը ճեղքելը, և Աստծու Հոգին, որ իջնում էր Քո՝ Իր փառակցի վրա, որ մեզ համար ամեն ինչ հանձն առար, բացի մեղքից, և խաչով ու արյամբ մեզ ազատեցիր մեղքի ծառայությունից: Խոստովանում եմ Քեզ Աստված կատարյալ, Երրորդությունիցդ մեկը, համագոյակից և փառակից, պատվակից և իշխանակից Հորը և Սուրբ Հոգուդ: Խոստովանիր և ինձ, Տեր, Քո Հոր և սուրբ հրեշտակների առջև, ինչպես խոստացար: Մի՛ նայիր իմ անարժանությունը, այլ զթա ինձ, մի՛ անտեսիր Քո ծառային և իմ ընթացքը ավարտիր Քո բարեսեր կամքի համաձայն, քանի որ միայն Դու ես փառքի ու պատվի արժանի և Քեզ փառք. հավիտյանս. ամեն»:

Իսկ անօրեն դատավորը առավել ևս լցվեց զայրույթով ու բարկությունով, անօրինություն սպասավորներին հրամայեց հարձակվել սրբի վրա: Անտանելի տանջանքով չարչարում էին Քրիստոսի ամենաերջանիկ նահատակին, մինչև բոլորն ասացին, թե մեռավ: Եվ քարչ տալով քաղաքի փողոցով՝ գլխի մագերից բռնած, տարան նրան գցեցին բանտ, ուր մնաց երեք

օր: Իսկ երանյալ վկան կանչեց մի ճշմարտախոս, իրավախոհ, բարեպաշտ և Աստծու երկյուղած քահանայի, որի անունը Գեորգեոս էր, որ երբ լսեց, հոժարակամ եկավ նրա մոտ, և սուրբն ասաց. «Ո՛հ, տեր իմ Գեորգեոս, ել գնա մեր հայրապետի վանքը, գտիր եպիսկոպոսապետ և իմ տեր Անանիասին, պատմիր նրան բոլոր աղետներին մասին, աղաչիր նրան աղոթել ինձ համար, թերևս արժանի լինեմ մարտիրոսական նահատակություն ստանձնելու»: Հրաժեշտ տալով՝ ուղարկեց քահանային և ինքը նորից սկսեց աղոթել: Իսկ հիշյալ քահանան շտապ եկավ Հայոց կաթողիկոսի մոտ և ամեն ինչ պատմեց ստուգունքով: Իսկ նա իր բնածին բարքի համաձայն և առաքինասեր կամքով, որ ուներ որբերի, այրիների, և անայցելուների հանդեպ, ևս առավել նրանց, որ հավատի համար նահատակվում էին, ինչպեսև տեսնում ենք սուրբ վկայիս օրինակով, երբ լսեց քահանայի ասածը սրբի մասին, իսկույն ելավ, մտավ իր սենյակը սուրբ եպիսկոպոսների և վարդապետների և ամբողջ եկեղեցական ուխտի հետ և երեսնիվայր գետնին ընկած Աստծու առջև աղոթում էին ջերմեռանդ արտասուքով հանդերձ, աչքերը երկինք համբարձած. Նահատակադիրին օգնության էին կանչում՝ փրկելու իր սուրբ ծառա Թեոդորոսին, միաձայն ինչ-որ երգեր ասելով սաղմոսից. «Աստված, ինձ նայիր օգնելու» (Սաղմ. ԻԱ. 20, ԼԹ. 14, ԿԹ. 2) և «Տե՛ր, փութա ինձ ընկերանալու» (Սաղմ. ԿԹ. 2): Եվ դարձյալ. «Իմ ձայնով ես Տիրոջը դիմեցի» (Սաղմ. Գ. 5), նաև՝ «Տե՛ր, լսի՛ր իմ աղոթքը» (Սաղմ. ԼԸ. 13), ու դարձյալ. «Բազում նեղություններ կան արդարներին, ամեն ինչից փրկիր նրանց, Տե՛ր» (Սաղմ. ԼԳ. 20):

Այնտեղ մնալով մոտ երեք ժամ, դարձյալ Գեորգիոս քահանային ուղարկեց բանտ՝ քաջամարտիկ վկայի մոտ և՛ բազում մխիթարական բաներ նրա հետ: Եվ նա ելավ-գնաց, պատմեց սուրբ հայրապետի ասած բոլոր հորդորական բաները և համբերություն օրինակը, որ սուրբ վկան լսեց և առավել հաստատովեց ի Քրիստոս անշարժ հույսի հավատի մեջ: Եվ քահանան երկրպագեց սրբին, վերադարձավ քահանայա-

պետի մոտ: Իսկ կաթողիկոսը նույն քահանային հրամայեց կերակուր վերցնել երանելիի մարմնական կարիքի համար և տանել բանտ: Մտնելով բանտ՝ տվեց նրան ուտելու, որ առավ կերավ նրա ներկայութեամբ, ապա երկուսով միաբան սկսեցին աղոթել, իրենց կնքեցին խաչի Նշանով ու նստեցին: Եվ աստվածուսույց քահանան սկսեց կրկնել նրան ինչ որ գրված է աստվածային գրքում, Աստծու բազմաչարչար վկաների նահատակութունները, արդարների նեղութունները, սրբերի համբերատար ժուժկալութունները, Քրիստոսի ընտրյալ նախամարտիկ այրերի հանդեսները, լլկանքները, ծաղրը, խաչը, եղեգնը, նաև քարոզում էր նրան Հին և Նոր կտակարաններից: Իսկ սուրբն ու ամենասուրբը ունկնդրում էր նրան և զվարթութեամբ ուրախանում, ցանկանում և փափագում էր հասնել երանավետ կոչմանն ու անթառամ պսակներին: Քահանան համբուրեց սրբին, նրան հանձնեց Աստված Հոր ամրածածուկ աջին և ինքը վերստին դարձավ եպիսկոպոսապետի մոտ: Իսկ կաթողիկոսը վեց օր այսպես նախախնամված հոգաբարձութեամբ քահանային առաքում էր միշտ նրա մոտ, ինչպես ցույց տվինք նախապես:

Ապա վեց օրից հետո դատավորը [մարդ] ուղարկեց բանտ իր պատվավորներից և մեծամեծ ավագանիից, գիտուններից ու իրենց առասպելաբան ուսմունքի ընթերցողներից, նրա հետ խոսելու խաբեպատիր բաներ, թերևս կարողանային ընտիր նահատակին հավանութեան բերել: Եվ ամբարիչտները մտան բանտ նրա մոտ, մահացու ողջույն տալով նստեցին նրա հանդեպ, սկսեցին խոսել և ասացին նրան. «Ինչո՞ւ կաս և մնում ես այդ համառութեանը և նստում ես այդ խավարչտին տեղում՝ անձդ մատնելով ի մահ, անտեսելով քո կյանքը: Ո՞ւմ համար ես դա անում և կամ ո՞ր հույսի համար ես համբերում այդպիսի լլկանքի ու անտանելի չարչարանքների: Լսի՛ր մեզ և քեզնից վանիր քո կամքի դատարկ խորհուրդները և ել ուղեկից եղիր մեզ, որ գնանք մեր օրենքի գլխավորի մոտ, նրանից և մեր բոլորից ընդունես բազում ընծաներ ու պարգևներ և ազատվես տանջանքներիցդ, որոնց մեջ ես»:

Այսպիսի բազում հրապուրական խոսքեր էին ասում սուրբ վկային՝ կամենալով նրան շեղել առաջադիր ճանապարհից: Բայց նա, քանի որ սիրո աստվածային հրով էր բորբոքված, ամենևին այլ պատասխան չէր տալիս իր մոտ եկածներին, միայն այս ասելով. «Քրիստոնյա եմ և Քրիստոսի ծառա՝ ըստ վերստին ծննդյան ավագանի, և Քրիստոսի Աստվածութեան ճշմարիտ խոստովանող եմ»: Եվ երբ չհաջողվեց շարժել և խախտել նրա հավատի հաստատուն կարծրութունը և չկարողացան վանել նրա ամրութունը, այնուհետև ելան, ամոթահար գնացին այնտեղից:

Իսկ մյուս օրը դատավորը խորհրդակցելով սրբի մոտ է ուղարկում ունևոր և մեծատուն իշխաններից ոմանց, որ իրենց հետ բերելով ոսկի և արծաթ, ազնիվ ու մեծագին հանդերձանք, մտան այդ ամենը դրին սրբի ոտքերի մոտ և նախորդների նման խոսեցին նրա հետ: Այնժամ ամենայն երանութունների արժանավոր վկան Քրիստոսի հոգու իմանալի աչքով տեսնում էր բանասարկուի հարվածներն ու փորձութունները, որ հարուցում էր իր դեմ անօրենի չար սպասավորների միջոցով, արհամարհելով նրանց ցրում և մերժում էր պարգևներն ու ընծաները, որ բերել էին իրեն և թքով արհամարհում, դեպի նրանց մղելով կորստական նվերները: Եվ միայն այս էր աղաղակում. «Քրիստոնյա եմ, քրիստոնյա. ձեր ինչքն ու պարգևների խոստումները ձեզ հետ լինեն հավիտենից կորստի ժամանակ»:

Եվ երբ տեսան նրա հավատի անսասանելի պնդութունը, նրանք ևս ամոթահար դեմքով գնացին առաջինների նման: Ապա տասնութ օր անց հոգնեցին ու պարտվեցին չար սպառազենները՝ մարտնչելով սուրբ վկայի դեմ: Այլև այսչափ անտանելի չար և դառն տանջանքներից հետո, որ անօրենները պատճառեցին երանելիի սուրբ մարմնին, նրան մահվան վճիռ հատեցին այսպես. «Թեոդորոսին՝ ժանդ և ապերասան մարդուն, ազգով, տոհմով և կենցաղով Գամիրք գավառից, կերպարանքով ու ձևով աղքատ, չքավորութեան պատճառով հեռացած հայրենատուր հավատից, որ այժմ վերադար-

ձած պաշտում է ինչ-որ խաչված Աստծու, որին Հիսուս են անվանում, ոչ մի բանով չկարողացանք նրա միտքը շրջել կամ շարժել ետ առաջադիր ճանապարհից, ո՛չ աշխարհի ամբողջ մեծությունը և ո՛չ ամեն տեսակի տանջանքներով, որ ենթարկեցինք նրան: Այսուհետև մեր դատողական ատյանը հրամայում է՝ կապանքներով կախել նրան մահապարտների փայտից և ամբողջ բազմությունը քարկոծել նրա չարաբաստ մարմինը»:

Այնժամ անօրեն դահիճները դատավորի հրամանով եկան բանտ՝ սրբի մոտ, սկսեցին համոզման խոսքեր ասել երանելիին. «Տե՛ս, ահա քո մահվան վճիռը կայացվել է: Այժմ ինչ որ ուզում ես և ինչ անելու ես՝ շտապով ասա մեզ»: Իսկ Քրիստոսի սուրբ վկան ասում է նրանց. «Ինչ որ նախապես ասացի ձեզ, դարձյալ նույնն եմ ասում, թե ձեր խոսքերին ես բնավ չեմ հետևելու, քանի որ այս գիշեր երազում տեսնում էի իմ Տեր Քրիստոսին, որ ձեռքին ուներ թագավորական թագ և արքունական պսակ: Ձայն եղավ և ասաց ինձ՝ «Թեոդորոս, ե՛կ, վերցրու կյանքի բարբիտը Պսակադրիս ձեռքից»: Արդ, ես տեսել եմ այդ ամենը, ըզձալի տենչանքով շտապում եմ գնալ Նրա մոտ՝ ստանալու իմ վաստակների վարձը: Աղաչում եմ ձեզ, մի՛ խափանեք իմ ընթացքը իմ ցանկալի մոտ գնալիս և մի՛ հակադրվեք ճանապարհիս, որ տանում է դեպի անապական կյանք»: Իսկ նրանք սրբին հանեցին արգելաբանից, ձեռքերը հետ կապած տանում էին նահատակության ասպարեզի տեղը: Եվ Կեսարիա քաղաքի ամբողջ բազմությունը գնում էր սրբի ետևից: Երբ նրան հանում էին քաղաքի դռնից, ճանապարհին նրան պատահեց արքայի երկրորդը և ասաց նրան. «Ա՛յր դու, ինչո՞ւ ես մեռնում իզուր և անիմաստ: Այժմ որե՛կ հայհոյության բան ասա և անցիր գնա՝ պաշտելով ինչ որ ուզում ես»: Իսկ Քրիստոսի քաջամարտիկ և անպարտելի զինվորը նրան ամենևին չպատասխանեց, այլ բարձրաձայն աղաղակեց ասելով. «Քրիստո՛ս, Աստծու Որդի, որ բնակվում ես բարձունքում, և Քո անքուն աչքը զննելով տեսնում է մարդկանց որդիների սրտերը, Դու քննում

ես բոլորի խոր գաղտնիքները, խնդրում եմ Քեզ և աղաչում, անքնին և ինքնագոր ամեն ինչում, նայիր իմ մարմնի նվաստությունը և Սուրբ Հոգուդ աներևույթ գորությունը օգնության առաքիր իմ տառապյալ անձին և արժանավորիր իմ անարժանությունը այն անսահման մեծությունը հասնելու և գրվելու վկաների խմբում, որոնք հրավիրված են անմահ Փեսայիդ ընթրիքին. և իմ արյան հեղմամբ թողություն շնորհիր իմ հանցանքներին, և քեզ փառք հավիտյանս. ամեն»:

Մինչդեռ սուրբ վկան այս աղոթքն էր մատուցում Աստծուն, հանկարծակի դահիճը հարվածեց սրբին, հրում էր՝ շտապեցնելով նահատակության վայրը: Եվ սուրբը դարձյալ սկսեց աղոթել. «Աստծու Որդի և ամենակալ Տեր, ամեն ինչում փառավորված և հզոր, անսահման և անքնին մեծություն, որ ոչ արարածների բնությունն է տանում և ոչ հրեղենների ոգիներն են նկատում Քո Աստվածություն անակնարկելի կամքը, և չկա սահման Քո գթությունն ու ողորմությունը, քանի որ Դու ես Տերը, որ բարձունքին ես և խորություններում. քանի որ Քո հրամանով են կառավարվում արարածները և Քո ակնարկությամբ են խնամարկվում և առկայանում իրենց կայաններում: Արդ, ես՝ անարժան ծառաս, հույսս չեմ կտրել իմ փրկությունից, և չի հուսահատվում իմ սիրտը Քո ամենագութ ողորմությունից, քանի որ բոլոր կենցաղական իրերի փոխարեն Քեզ սիրեցի, Քեզ ընտրեցի, Քո կողմը հակվեցի և ամբողջ փափագով և բաղձանքով հոժարեցի հասնել Քո անմահ բարությունը: Արդ, որովհետև ոտքի կանգնեցրիր ընկածիս և բարձրացրիր անմահ կյանքի և ինձ բերիր այս ասպարեզի վկայության հանդեսի, այժմ մի՛ խնայիր Քո ողորմությունը և ապականիչ գայլին թույլ մի՛ տուր մտնել Քո անդաստանը, քանի որ միայն Դու ես արժանի փառքի և պատվի, և Քեզ փառք հավիտյանս. ամեն»:

Մինչդեռ սուրբն այս աղոթքն էր մատուցում Աստծուն, անօրինություն սպասավորները հախուռն հարձակումով ելան նրա դեմ, բռնեցին նրան, տարան կատարման տեղը, մահվան փայտի մոտ, որ կանգնեցրել էին գողերին և ավազակներին

սպանելու համար, բազմամբոխ հրապարակի մեջ, ուր հավաքվել էին տարբեր կողմերից, հավատացյալ և անհավատ, այրեր ու կանայք, իբրև սյուլքախառն օղի բերած մանրամաղ փոշի՝ դիտելու սրբի նահատակության տեսարանը:

Զվարթունների ցանկալին այն հանդեսում ուրախությամբ ցնծում էր, կաքավելով հրճվում էր և մարտի ելած հոգով մաքառում էր դեռահաս երիտասարդը և լուսերամների փափագելին: Այնժամ սպասավորները ուժգին քարշ տալով փայտի մոտ բերին քրիստոսազգյաց նահատակին և ոտքից մինչև լանջը նրան ամրացրին փայտին: Իսկ անօրեն դահիճը մոտեցավ սրբին, ասաց. «Հայհոյության խոսքեր ասա, որ փրկվես մահից, այնուհետև գնա՝ արա ինչ կամենում ես»: Իսկ ճշմարտության ջատագույնը, Քրիստոսի սուրբ վկան իր բերանը լցրեց թքով ու թքեց անօրենի երեսին: Իսկ նա դարձյալ անամոթաբար նույն բանը խոսեց և ասաց. «Երգվում եմ արքայի կյանքով, եթե չլսես իմ խրատին՝ իսկույն կյանքից կզրկեմ քեզ»: Սուրբն ասաց նրան. «Կդառնանա քո արքայի աչքը քեզ վրա, եթե արագորեն չկատարես քո չարության կամքը իմ նկատմամբ»: Այնժամ երիցս անիծյալ և թշվառական դահիճը տապարով ուժգին հարվածեց սրբի գագաթին՝ նույն ժամին շեշտակի ճեղքելով հասավ մինչև նրա ալիանջները: Մեկ ուրիշը քարով հարվածեց նրա աչքի բիբին և աչքը կախվեց նրա դեմքից: Իսկ Քրիստոսի մեծ վկան՝ սուրբ Թեոդորոսը, ձայն բարձրացնելով ասաց նրանց. «Ինձ թույլ տվեք մի փոքր»: Եվ նրանք անսացին նրան, մտածելով թե զղջաց սաստիկ հարվածների պատճառով: Սուրբն ասաց. «Երգվեցնում եմ ձեզ ձեր արքայի կյանքով, որ խնայելով թույլ տաք՝ մնա մյուս աչքս, որպեսզի տեսնեմ իմ մարմնի հոշոտումն ու չարաչար ձողկումը, և դրանով ցնծալով ուրախ կլինեմ իմ փրկության համար, որ ինձ տրվեց Տեր Աստուծոց»: Իսկ ամբարիշտ դահիճները անարգեցին երանելիին, ասելով. «Մենք կարծում էինք, թե զղջալով կդառնաս քո համառությունից, դրա համար թույլ տվինք քեզ»: Եվ այդ պահին դահիճը հարվածեց երանելիի ճակատին և գլխից հանեց սկավառակը: Եվ

բարձրաձայն աղաղակեց սուրբ վկան և ասաց. «Տեր իմ և Աստված, Հիսուս Քրիստոս, ընդունիր ինձ, որ Քո անվան համար մեռնում եմ»: Նույն պահին կապանքներով հանդերձ փայտը շրջվեց դեպի արևելք՝ քանի որ հարավ էր նայում: Հիացած զարմանում էին բոլորը եղած սքանչելիքից:

Եվ երբ դեպի արևելք դարձավ, ամենագույն սուրբն սկսեց աղոթել այսպես. «Գոհանում եմ Քեզնից, Տեր Հիսուս Քրիստոս, փրկիչ և ստեղծիչ աշխարհի, որ բանական բնությանս դատապարտության համար Հայրական ծոցից առաքվեցիր մեզ՝ մոլորյալներիս փնտրելու և ինքնագոր սաստվածությունդ խոնարհեցիր մահվան լծի տակ, Քո աշխարհակեցույց բազուկները տարածեցիր կենդանարմատ փայտի վրա և տեգի՝ հարվածից չդարձրիր Քո թիկունքը և ոչ Հոր կերպարանքը՝ թքից ու ապտակից, խմեցիր և քացախը՝ խառնած լեղիով և աստվածային արյանդ կողահոս աղբյուրը բացիր, լվանալով Ադամի վերքերը և խաչի վրա պատռեցիր բոլոր մարդկանց պարտքերի մուրհակները և աշխարհ ապրեցնող մահվամբդ փրկեցիր մեզ մեղքի մեռելությունից: Եվ եթե անսահման և անքանակ աստվածությունդ այս ամենը կրեց մեզ համար, որչափ և առավել հողեղեն և մեղքի տապ ապրածներս. պարտավոր ենք հեղելու մեր արյունը աստվածային արյանդ համար, առավել ևս իմ նվաստությունը, որ եթե բյուր և զանազան վշտեր ու չարչարանք էր կրում իմ մարմնում, առավել ևս պետք է ինձ ցույց տված անբավ բարերարությանդ համար: Դարձյալ եթե բոլոր երկնային խմբերի բարբառը լիներ իմ բերանում, ի՛նչպես կարող էի պատմել Քո անճառ տնօրինությունը, կամ Քո ամենօրհնյալ աստվածությանը օրհնություն և գոհություն վերառաքել»:



## ՍՈՒՐԲ ԹԵՈՂՈՐՈՍ ԶՈՐԱՎԱՐԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մըրարչի մեծահարաչ սքանչելիքների անքնին և զարմանալի երկնածիր պարգևները և հանդեսների համբերատար գործադրությունը, զանազան առաքինությունների պատմությունները հնարավոր չէ ասել մեզ նմաններին, կամ արդարապես գիտենալ նրանց բազմաբողբոջ պսակների գերապայծառությունը, և կամ ցույց տալ թե որքան վայելուչ տեսքով անթառամ պսակ հյուսեցին բազմակորով մարտիրոսությունը, Հոգու ամրափակ վահանով պարսպելով իրենց մարմինները, ինչպես ոսկին հրափորձություն ընկնելով՝ անցան այս կյանքի չարություն բազմավրդով ծածուկ ծովից, հաղթեցին բանսարկուին մարտում: Նրանց բոլոր արիությունների հիշատակը մարմնականներից ոչ ոք չի կարող արժանավորապես բացահայտել, որովհետև միայն աստվածային Հոգու կարողությունն է պատմելը: Թեպետև մարդկանց անհասանելի է ամփոփել նրանց պատմությունը, սակայն ամենևին հարկ չկա լռելու: Ըստ աստվածային շնորհի բաշխման՝ Հոգուն է կարողությունը ճանաչելի դարձնել աստվածասեր անձանց, որովհետև Քրիստոսի արիական և հոգեղեն գորականների հիշատակի միջոցով պիտի զարթնեն եկեղեցու մանուկները և թևակոխեն մտնելու այն երանավետ կոչման առաջատար, սպառազինված Աստծու գինվորությունը, որպեսզի հալածանքի և փորձությունների ժամանակ, որ գալու են՝ կարողանան բաժնեկից լինել նրանց, ովքեր խաչակից եղան Քրիստոսին:

Այսուհետև սկսում ենք պատմել Քրիստոսի գերապայծառ սուրբ վկա Թեոդորոսի հիշատակը, թեպետև անկարող ենք պատմել քաջություն ընկնող արիությունները, բայց շատից մի փոքր կճառենք, թե ով էր, որտեղից և ինչպես եղավ նրա սկիզբն ու վկայի վախճանը և կպատմենք նրա հալածանքների ժամանակը: Սա Տյուրիոն Թեոդորոսը չէ, որի հիշատակը

կատարվում է Քառասնորդաց պահապան առաջին շաբաթը, այլ լինելով նրա քեռորդին, սա ստրատելատական իշխանություն պատիվ ստացավ թագավորներից: Նա վկայեց Մաքսիմիանոս թագավորի ժամանակ Կապադովկիայի գավառի Ամասիա քաղաքում: [Այս երկուսը] ժամանակով և ազգակցություններ իրարից հեռու չէին:

Արդ, անօրեն և ամբարիշտ Լիկիանոս թագավորի ժամանակ, երբ նրանից տարածվում էր դառնություն հրաբորբոք մրրիկ ի հալածումն Աստծու եկեղեցու Հոռոմայեցոց տերություն ընդ կողմերում ամենուրեք կարկառած կային բազիլիկների դիվանդույլ արձաններ: Եվ ամեն տեղ, բոլոր քաղաքներում ու գյուղերում խիստ սաստկություն տարածվում էր ուրացություն գիրը՝ այնպիսի հրամաններով, որպեսզի երկրպագեն մարդկանց ձեռքով կերտված քարերին ու փայտերին և ողջակեզ ու զոհ մատուցեն աստված կոչվածներին, և պիղծ կերակուրները ճաշակեն բոլորը, և այդպիսի հրամանի հնազանդվողները պարգևներ և պատիվներ ստանային թագավորից, իսկ ովքեր չախորժեին այդ անել՝ հարկադրանքի, գանուտանջանքի, սրի պատուհասների և հրի մեջ գցվեին: Բոլորին պատում էր խավարի անհնարին մեզ և խռովություն, քանի որ հավատացյալներից շատերին բռնած մատնում էին դատավորների ձեռքը, որպեսզի գցեին դառն տանջանքների խավարչտին տեղերը, և բազում հարվածներից հետո [վկայեցրը] սրի պատուհասով մահվան վճիռ ստանային:

Այդ ժամանակ ծագեց պայծառափայլ աստղը և ճառագայթարձակ լուսատուն, որ փարատեց կռապաշտություն խավարի մեզը, հաղթող լինելով ամեն ինչում, քաջ և նախամարտիկ զորականը անհաղթ Թագավոր Քրիստոսի՝ սուրբ Թեոդորոսը: Երբ ելավ այս ամբարիշտ թագավոր Լիկիանոսի հրամանը, որպեսզի բոլորին, ովքեր Քրիստոսի հավատացյալներ էին, բռնելով բանտ նետեն՝ կապանքի, անհնարին նեղություններ ու տանջանքի, այդ ժամանակ Քրիստոսի երանելի և մեծանուն վկա Թեոդորոսը ծնվել էր քրիստոնյա և բարեպաշտ ծնողներից Եվխայտիա գյուղում, մեծացել և վարժ-

վել քրիստոսական բոլոր բարեկարգություններով, զարգացել հասակով և իմաստություններ, կրթվել աստվածաշտություն հրահանգներով, երիտասարդություն շրջանում ծաղկել էր հասակով և գեղեցիկ դեմքով, լցվել ամենիմաստ հանճարով, և սիրելի ու ծանոթ եղել այն ժամանակվա թագավորներին ու իշխաններին, որովհետև բարբարոսների պատերազմներում անպարտելի և հաղթող է հանդիսացել ամենագով սուրբը, որի համար և ստացել էր զորավարի առավելագույն պատիվ՝ մեծարվում էր մեծաշուք պատվով և իշխանություններ:

Արդ, բանասարկուի չարասեր արբանյակները մոտենալով թագավորի ականջին հայտնում են սրբի մասին, թե՛ «Քրիստոնյա է, ոչ միայն ինքը, այլև ամբողջ աշխարհն ու քաղաքը, որ նրա ձեռքի տակ են, զորքով հանդերձ հրապուրվել են նրանից, դարձել կուռքերի երկրպագությունից, անհավան լինելով ձեր հրամաններին, չեն կատարում աստվածների մեծախորհուրդ տոները և չեն ճաշակում նրանց նվիրական զոհերի [մսից]»: Երբ թագավորն այս լսեց՝ հիմարացավ և ապչեց, ցատկով լի՝ վարանեց իր մտքում, թե ինչպես կկարողանա բռնել այնպիսի երևելի հերոսին մահվան ակնատի մեջ. գրել և իր մոտ կանչելը անպատշաճ էր համարում, որ նենգություն գաղտնիքը չիմացվի և զարհուրելով ընդդիմանա հրամանին: Մտքում խորհում էր, թե պատերազմական պատրվակով գնա այն կողմերը և այն քաղաքում բռնի երանելիին: Այս էր անօրենի մտքում, և կամեցավ պատվավորներից ոմանց զորքով ուղարկել Կապադովկիայի Արակլիա քաղաքը, ուր բնակվում էր երանելին: Նրան նամակ գրեց մեծարանքով և պատվով. «Եթե հաճո թվա քո կամքին գալ տեսնել մեզ և երկրպագություն մատուցել մեր աստվածներին՝ Նիկոմիդիա քաղաքում, արի բազում ճոխություններ և երևելի փառքով, իսկ եթե ինչ-որ պատճառ լինի կամ արգելք, պետք է որ մենք գանք տեսնելու այդ կողմերը և քաղաքը, որտեղ բնակվում ես, որովհետև շատ ցանկացել ենք տեսնել և վայելել քո սերը»: Եվ երբ զորալուսները հասան նրա մոտ և մատուցեցին հրովարտակի գիրը, վերցրեց, կարդաց, ուրախացավ և գոհացավ Աստծուց, որ ինչ

որ ավելի առաջ իր սրտում խորհում էր՝ հայտնել աստվածապաշտուկները և Քրիստոսի վկա լինելը՝ արագորեն կատարում էին աստվածահաճո կամքը: Այնժամ մեծաշուք պատվով ընդունեց եկողներին, պարգևներ շնորհեց նրանց և իր՝ թագավորի մոտ չգնալը պատճառաբանեց [իր] աշխարհի կարիքներով: Աղաչում էր նրանց նվերներ խոստանալով, որ գնան, հորդորեն արքային՝ իր աստվածների բազմությամբ հանդերձ գալու Արակլիա քաղաքը, որպեսզի այդ ամենը տեսնելով քաղաքիս և գավառիս բազմությունը ուրախությամբ ցնծան, մեծ տոն կատարեն զոհերով ու երկրպագությամբ: Իսկ նրանք եկան թագավորի մոտ, մատուցեցին հրովարտակի պատասխանը, որ արքան վերցրեց ընթերցեց և մի անմիտ մանկան նման խաբված՝ կամեցավ գնալ այն կողմերը: Անօրենը համարում էր, թե իր բոլոր մտածածները կատարվեցին: Այնուհետև վերցնելով իր հեծելազորի բազմությունը եկավ հասավ Արակլիա: Սուրբ Թեոդորոսը, լսելով թագավորի գալուստը, մեծաշուք պատվով ու ճոխությամբ ընդառաջ գնաց նրան: Եվ այն գիշեր, մինչդեռ երանելին ննջում էր իր տանը, երազ տեսավ, որ տան ձեղունը վերացավ, և կրակի կայծերը փայլատակելով իջնում էին իր վրա: Եվ ձայն լսելի եղավ, որ ասում էր նրան. «Զորացի՛ր և քաջալերվիր, Թեոդորո՛ս, որովհետև ես քեզ հետ եմ»: Եվ սուրբն արթնացավ, մերձականերին պատմեց երազը և ասաց. «Աստված հաճեցավ, որ այստեղ հեղվի իմ արյունը Քրիստոսի անվան համար»: Ելավ, ծունր դրեց և աղոթեց, ու երբ վերջացրեց աղոթքը, արտասուքով հանդերձ գոհացավ Տիրոջից:

Ելավ, լվաց իր երեսի պայծառ գեղեցկությունը, հագավ թանկարժեք բեհեզյա զգեստները, հրամայեց պատրաստել իր ոսկենախշ երիվարները և հեծավ իր գորքով հանդերձ, գնաց թագավորին ընդառաջ: Արքային տեսնելով՝ երկրպագեց նրան, արքայավայել ողջունյա մատուցեց նրան, ասելով. «Ողջունյա քեզ, հզոր և ինքնակալ թագավոր՝ առաքված Աստուծոց»: Երբ թագավորն այդ լսեց և տեսավ սրբի մեծահոգությունը, իսկույն գրկեց նրան մեծ գորովանքով և սիրով, համբուրեց ու

ասաց. «Ողջունյա քեզ, արեգակնակերպ թագազուլուխ, որովհետև պետք է որ դու թագավորես ինձ հետ»: Եվ միասին մտան քաղաք՝ հանդերձ բազմությամբ, որ ընդառաջ էր ելել թագավորին: Իջևանեց արքունական ապարանքում՝ պատրաստված պալատի օրենքներով, թագավորի գահույքով ու աթոռներով: Այդ տեսնելով թագավորը շատ ուրախացավ, գովեց քաղաքն ու քաղաքացիներին, Թեոդորոսին հրամայեց նստել և ասաց. «Ահա քո գրած աղաչանքի համաձայն, ո՛վ Թեոդորոս, հյուրաբար մեծարանք ստանալով եկա տեսնելու քեզ և քո քաղաքը, ինձ հետ բերելով մեր աստվածներից պատվականագույն և փառավորագույններին, որպեսզի երկրպագեք և զոհ մատուցեք նրանց»: Պատասխանեց սուրբ Թեոդորոսն ու ասաց. «Ո՛վ հաղթող և մեծ թագավոր, լավ է, որ կատարել ես քո ծառայի խնդրանքը, մեզ ուրախացնելով քո գալստյամբ: Առավել ևս պատվեցիր մեզ աստվածներ բերելով, որպեսզի նրանց տեսնելով բոլորը հաստատեն աստվածապաշտուկյան հրամանները: Արդ, աղաչում եմ քո մեծությանը, որ մի փոքր հանգստանաս ճանապարհի հոգնությունից, ինձ տաս բոլոր փառավորագույն աստվածները, որ տանեմ իմ տունը և օժեմ անուշ յուղերով և կնդրուկ մատուցելով խնկեմ նրանց, երկրպագելով զոհ մատուցեմ իմ տանը առանձնակի: Դրանից հետո բերեմ հրապարակ բոլորի աչքի առաջ զոհ մատուցեմ, որ նայելով և տեսնելով՝ բոլորը հետևեն բարեպաշտության նույն նախանձին»: Թագավորն այս լսեց, սրբի խոսքը շատ հաճո թվաց և հավատաց նրա ասածներին: Հրամայեց բերել և նրան տալ բոլոր ոսկեղեն և արծաթեղեն կուռքերը, որոնք սուրբը վերցրեց, տարավ իր ապարանքը՝ այնտեղ դնելու: Եվ այն գիշեր ելնելով՝ խորտակեց, մանրեց բոլոր աստվածների [արձանները] և հանեց, բաժանեց աղքատներին ու կարոտյալներին:

Երեք օր անց արքան հրամայեց իր մոտ կանչել մեծն Թեոդորոսին և ասաց նրան. «Ո՛վ ազնվականդ և փառավորյալդ թագավորներից, որ ինձնից առաջ էին, առավել մեծարվեցիր և պատվի արժանացար իմ մեծության կողմից: Այժմ ցույց տուր քո հոժարական սերը մեր աստվածների և մեր

նկատմամբ. մոտեցիր ամբողջ ժողովրդի առջև զոհ մատուցիր նրանց, որ սրանք բոլորը քեզ տեսնելով մեծ հոժարությամբ կատարեն մեր հրամանը: Ու մինչդեռ սուրբն ուզում էր պատասխանել թագավորին, առաջ եկավ իշխաններից մեկը, որի անունը Մաքսենտենես էր, և ասաց. «Ո՛վ քաջ արքա, չիմացա՞ր ամբարիշտ ստրատելատի դավաճանությունը, թե ինչպես ստելով խաբեց քո մեծությունը բարեհաղթ աստվածների հարցում: Երեկ չէ՞ առաջին գիշերը ես ելա իմ ապարանքից, տեսա մի աղքատի, որ գալիս էր ուրախացած և ձեռքին ունեւր մեր մեծ աստվածուհի Արտեմիդեսի ոսկեկուռ գլուխը»:

Երբ թագավորն այս լսեց՝ խիստ զարմանքից ապշեց և չէր հավատում նրա ասածին: Հարցրեց սրբին. «Ճի՞շտ են այս ասածները»: Սուրբը պատասխանեց. «Այո՛, ճշմարիտ և արդար են, չեմ ուրանում, քանի որ ինչ արել եմ՝ արդար եմ արել: Արդ, եթե քո աստվածներն իրենց օգնել չկարողացան, քեզ ինչպես կարող են օգնել»: Այնժամ թագավորի դեմքը այլազունեց բարկությունից և ցասումով լցված ասաց. «Վա՛յ ինձ, որ խաբվեցի իբրև երեխա, ծաղրի առարկա դարձա բոլորի աչքին: Հիմա ի՞նչ անեմ, կամ ինչ գործեմ՝ չգիտեմ: Ես լինելով թագավոր և իշխան այնքան գործի և աշխարհների՝ իմ ամբողջ գործով հանդերձ եկա այս անօրենի ոտքը, նախատինք եղա գավառիս ու քաղաքիս, կորցնելով բոլոր բարեհաղթ աստվածներին»: Սուրբ թեոդորոսը տեսավ թագավորին այդպիսի հիմարությունը լցված, իր մտքում ծիծաղեց և ասաց. «Ո՛վ անմիտ դե՛ լցված ամենայն անօրինությունը, նախապես դա չէ՞իր մտածում, թե ես քրիստոնյա և Քրիստոսի ծառա լինելով՝ ի՞նչպես պիտի խաբվեի քո մոլորեցնող և կորստական հրամաններից: Որպեսզի խաբվելով իբրև միամիտ մանուկ հասկանաս՝ դրա համար քեզ ցույց տվի քո աստվածների տկարությունը, ամոթի մատնեցի քո ամբարշտությունը: Հպարտացել ես սնոտի և անցավոր մեծությունը և չունես անանց մեծություն և մշտնջենական կյանքի հույս ու ակնկալություն, չես ճանաչում Նրան, որ քեզ տվել է ժամանակավոր այդ մեծությունը, այլ ունայնացել ես բանսարկուի

խաբեությունը և խավարել՝ Աստծու միածին Որդու փառքի լույսից, չարի ազդեցությունը ամբարտավանացած՝ չգիտես ինչ ես խոսում: Իսկ ես բոլոր արարածների այս փառքը, որ օտարացնում է Աստծուց, համարում եմ սնոտի, որպեսզի ժառանգեմ հավիտենական կյանք, որ աչքը չի տեսել և ականջը չի լսել, որ Աստված պատրաստեց իր սիրելիներին (Ա. Կորնթ. Բ. 9): Իսկ ձեզ և ձեր աստվածներին պատրաստ պահում է սատանայի և նրա զորքերի հավիտենական հուրը»:

Թագավորն ասաց. «Ո՛վ հպարտ և ամենաչար ամբարտավան թեոդորոս, եթե ինձ անարգես՝ կհամբերեմ, որ ինձ անսալով լավության դառնաս: Բայց աստվածներին ինչո՞ւ անարգեցիր»: Պատասխանեց սուրբը ասելով. «Հենց դա է քո անմտությունը նշանը: Տեսնելով քո դիվաճույլ արձանների ոչնչությունը՝ դարձյալ հանդգնում ես աստված անվանել դրանց, որ ձիու և ջորիի նման են և չունեն իմաստություն: Դուք առավել անմիտ եք, քան աստված կոչվածները, որ չարաղև մտքերի ստեղծած են, կոփված ճարտարների ձեռքերով»: Բարկությունը լցվելով թագավորն ասաց. «Այսուհետև չեմ հանդուրժի քեզ, կմատնեմ չարաչար տանջանքի»: Եվ դահիճներին հրամայեց մերկացնել սրբին և ձեռքերը կապելով քառակողմ պրկումով՝ դալար արջառաջիկերով անխնա հարվածել նրա թիկունքին, լանջին ու որովայնին: Եվ այնքան հարվածեցին երանելիին, մինչև անաստված տանջողները տկարացան: Իսկ սրբի մարմինը չարաչար հարվածներից բզկտվել էր, և արյունը հորդ հոսում էր նրանից: Ապա [թագավորը] հրամայեց կապարե մուրճերով անխնա ձեռք սրբի պարանոցը: Մինչդեռ հարվածում էին՝ հրամայեց, որ սուրբ վկայի մնացած ամբողջ մարմինը երկաթե ձողերով քրքրեն, ապա կրակ մոտեցնելով՝ այրեն մարմնի բոլոր վերքերը: Թագավորի հրամանի համաձայն այրեցին և խորովեցին ամբողջ մարմինը: Իսկ սուրբ վկան ավելի ու ավելի էր համբերում անհնարին նեղություններին և գոհանում էր Աստծուց, որ իր ցանկությունները կատարվեցին: Ոչինչ համարելով այդպիսի անասելի տանջանքները՝ ասաց թագավորին. «Ո՛վ սպասավոր

և արբանյակ սատանայի և ամեն մի արդարության թշնամի, չե՞ս տեսնում, որ քո տանջիչները տկարացան, և քո հանդուգն ամբարտավանությունը տապալվեց, քո բռնությունը պարտվեց, քո հայր բանսարկու սատանան ամոթահար եղավ: Իսկ իմ արտաքին մարդը որքան ապականվի քո [պատճառած] տանջանքներից, այնքան իմ ներքին մարդը կնորոգվի հավիտենական կյանքի համար»:

Եվ թագավորը խիստ զայրացավ, զինվորներին հրամայեց՝ բանտ տանել երանելիին, մինչև մտածեն, թե ինչպիսի մահով սպանեն նրան: [Սրբին] տարան բանտ, իսկ օրեր անց հրամայեց բերել իր առջև, բազում խոսքերով հարցաքննեց, չկարողացավ համոզել երանելիին: Ապա հրամայեց նրան խաչ հանել և զորքի ամբողջ բազմությամբ նետահարել: Իսկ Քրիստոսի վկան մեծ ցնծությամբ գնում էր զինվորների ետևից: Հասան, խաչին կապեցին նրա ձեռքերն ու ոտքերը և հանելով կապեցին խաչափայտին: Եվ զորքի բազմությունը նետահարում էին սրբի երեսն ու աչքերը: Իսկ Քրիստոսի նահատակը համբերությամբ գոհանում էր Աստծուց և նեղություն [պատճառած] բոլոր վշտերը ոչինչ էր համարում: Այնուհետև մոտենալով կտրեցին սեռական անդամը, և բազմությունը, որ հավաքված էր շուրջը, միասնաբար լալիս էր:

Ես՝ Աբգարոսս, լինելով սրբի ծառան և դպիրը, հրաման էի ստացել մեկ առ մեկ գրելու բոլորը, երբ տեսա անչափ նեղությունները՝ մի կողմ գցեցի իմ ձեռքից մագաղաթը, դառնապես լալով՝ գնացի, ընկա նրա ոտքերը, և սուրբը տեսնելով իմ արցունքները՝ նվազ և տկար ձայնով ասաց ինձ. «Ո՛վ Աբգարոս, մի՛ տրտմիր և մի՛ ծուլանա քո գործում, այլ սկսածդ ավարտիր և սպասիր մի փոքր, որ տեսնելով իմ վախճանը՝ գրես»: Այս ասելուց հետո՝ աչքերը բարձրացրեց երկինք և ասաց. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, Աստված իմ, որ Քո անճառելի բարերարությամբ խնամում ես բոլորին, որ Քո միածին Որդու և ճշմարիտ Սուրբ Հոգուդ միջոցով ինձ համբերություն պարգևեցիր, դու՛ Տեր, նախապես խոստացար ինձ, ասելով՝ «Զեմ թողնի քեզ, այլ ամեն ժամ կլինես

քեզ հետ և կփրկեմ քեզ»: Այժմ ինչո՞ւ ինձ թողիր, Տե՛ր իմ, և հեռացրիր Քո գթությունը ինձանից, երբ վայրենաբարո գազանները գիշատեցին իմ մարմինը Քո անվան սիրո պատճառով, իմ աչքերի բեբերը ինձնից դուրս ելան, իմ մարմինը հալեց կրակից, իմ մատները փշրվեցին, իմ երեսը այլագունեց՝ ելնելով մարդկային բնությունից, իմ անձը սասանելով դողաց խաչի չարչարանքի երկյուղից: Տե՛ր իմ և Աստված իմ, Քեզ համար համբերեցի այս ամենին, կրեցի սրի և հրի բազում նեղություններ: Ուստի աղաչում եմ Քեզ. ընդունի՛ր իմ հոգին անմիջապես և հասցրու ըստ Քո կամքի, քանի որ Դու կարող ես ամեն ինչում»:

Այս ասելով լուեց, քանի որ վկայի մարմնի բոլոր մասերը հյուծվել էին, հոշոտված, տրորված էր նրա որովայնի խորշը քերանքից և ձաղկելուց: Անօրեն և ամբարիշտ Լիկիանոսը, կարծելով թե սուրբը մեռել է, հրամայեց պահապաններ կարգել, որ ամբողջ օր ու գիշեր մարմինը մնա խաչի վրա: Իսկ գիշերվա առաջին պահին Աստված հրեշտակ առաքեց, որ իջեցրեց խաչից, առողջացրեց նրա ամբողջ մարմինը և ասաց. «Ուրա՛խ եղիր և գորացիր, որովհետև Տերը քեզ հետ էր, է և կլինի հավիտյան: Եվ ինչո՞ւ ասացիր՝ «Հեռացար ինձանից»,- որի համար ավարտեց քո ճգնությունը ընթացքը, և դու կգնաս Հիսուս փրկչի մոտ և արդարների արքայությունից մեջ կընդունես անապական պսակը»: Այս ասելով [հրեշտակը] բարձրացավ երկինք: Իսկ սուրբ Թեոդորոսը, տեսնելով իր մարմինը վերքերից ամբողջապես բուժված, ձեռքը երկինք պարզեց, գոհացավ Տիրոջից և ասաց. «Բարձրացնում եմ Քեզ, Տե՛ր իմ և Թագավոր իմ և հավիտյան օրհնում եմ Քո անունը, հավիտյանս հավիտենից»,- և վերառաքեց բազում ժամեր աղոթելով:

Առավոտյան այգաբացին թագավորը պատվավորներին երկու հոգու կանչեց և ասաց. «Զորականների հետ գնացեք, խաչից իջեցրեք այն խաբողի չարամեռ մարմինը և բերեք իմ առաջ, որ հրամայեմ դնել կապարե տապանի մեջ և զցել ծովի խորքը, որպեսզի քրիստոնյաները չհափշտակեն և պատվեն

իրենց սովորութեան համաձայն: Զորագլուխները գնացին և հեռվից տեսան, որ խաչը սրբի մարմնից զերծ է: Եվ հիացած ապշեցին: Եվ Անտիոքոսը Պատրիկիոսին ասաց. «Թերևս ճշմարիտ է, որ քրիստոնյաներն ասում են, թե Քրիստոս երեք օր հետո հարութից և անուշահամ մեղրահամ լիցավորվեց: որովհետև այժմ տեսնում ենք նրանց խոսքի ճշտությունը»: Իսկ Պատրիկիոսը մոտեցավ, տեսավ սուրբ վկա Թեոդորոսին նստած խաչի մոտ՝ ամբողջովին առողջ մարմնով, և հավաքված բազմությունը պատմում էր Աստծու սքանչելիքները, որ եղան իրեն: Երկու [զորավարները] բարձրաձայն աղաղակելով ասացին. «Մեծ է Աստվածը քրիստոնյաների, և չկա այլ Աստված բացի նրանից»: Եվ իրենց հետ եղած ութսուներկու զինվորներով հանդերձ գնացին, ընկան սրբի ոտքերը և ասում էին՝ «Մենք քրիստոնյա ենք և Քրիստոսի ծառա, խնդրում ենք քեզ, մեզ՝ ճշմարտության ճանապարհից տգիտացածներին, ընդունիր և աղաչիր Արարիչ Աստծուն, որ մեզ ևս արժանացնի իր ողորմության շնորհներին»: Այս լսելով թագավորը հույժ բարկացավ, հրամայեց Կեստովն անունով բռնելին, որ գործից վերցնի երեք հարյուր հոգի, և գնան կոտորեն նրանց: Եվ երբ գնացին, Աստծու աջողովով տեսան Աստծու սքանչելիքը, նրանք ևս հավատացին Քրիստոսին, և համախմբված բազմությունը բարձրաձայն աղաղակում էր. «Մեծ է քրիստոնյաների Աստվածը, Այն, որ այսպիսի սքանչելիքներ արեց, միայն նա է Աստված: Արդ, եկեք քարկոծենք անօրեն Լիկիանեսին, որովհետև մեր Թագավորն Աստվածն է, որին քարոզեց Թեոդորոսը»: Եվ ռամիկները մեջ մեծ իրարանցում և խառնիճաղանջ արյունահեղություն ընկավ: Իսկ անօրեններից մեկը, որի անունը Լեանդրոս էր, հանեց իր սուսերը և գնաց սուրբ Թեոդորոսի վրա, որ սպանի նրան: Այս տեսնելով՝ բռնվեց ձեռք ձեռք և փախցրեց սրբին նրանից և սպանեց անօրեն Լեանդրոսին: Իսկ մեկ ուրիշը, որի անունն էր Մերպաս, մտնելով ամբոխի մեջ՝ հարձակվեց բռնելի վրա, սրով հարվածեց և սպանեց նրան: Իսկ երանելին, երբ տեսավ բազմության խռովությունը, մտավ նրանց մեջ և աղաչելով

խաղաղեցնում էր ամբոխին: Բազմությունը վերցրեց սրբին, և մեծ ուրախությամբ վերադարձան քաղաք: Մինչդեռ անցնում էին և մոտ էին բանտի դռանը, որտեղ բոլոր կալանավորներն էին, ամենքը աղաղակեցին բանտում և ասում էին. «Ողորմի՛ր մեզ, բարձրյալ Աստծու ծառա»: Երբ ժողովուրդը լսեց, աղաղակեց. «Մեզ հրամայիր, որ իսկույն խորտակենք բանտի դռները և ազատենք նրա մեջ եղած բանտարկյալներին»: Իսկ սուրբը ետ պահեց նրանց այդ մտքից, ինքը մոտեցավ դռներին, աղոթեց Աստծուն և կնքեց խաչի նշանով. [դուռը] ինքնիրեն բացվեց, քանդվեցին կապանքներն արգելվածների, և դուրս ելան նրանք, ընկան վկայի ոտքերը, գոհանալով Աստծուց և սրբից: Իսկ նա դիմեց նրանց. «Գնացեք խաղաղությամբ ամենքդ ձեր տեղը»: Աստված նրա միջոցով նաև բազում այլ սքանչելիքներ էր կատարում, և հիվանդները, ախտաժետները և դիվահարները բուժվում էին նրա աղոթքով:

Անօրեն Լիկիանեսը տեսավ, որ ամբողջ հելլեն ժողովուրդը ուրանալով հրաժարվեց աստվածների պաշտամունքից և հավատաց Քրիստոսին, խիստ զայրացավ և բանակից զորականներ ուղարկեց, որ ամբոխից գաղտնի գնան և կտրեն սրբի գլուխը: Նրանք եկան, իսկույն կատարեցին հրամանը՝ սուսերով հատելով երանելիի գլուխը: Այսպես ի փառս Աստծու վկայեց Քրիստոսի հաղթող և մեծ նահատակ սուրբ Թեոդորոսը, օգոստոս ամսի քսանվեցին:

Սրբի վկայությունից հետո նրա հրամանով, ինչպես նախապես պատվիրել էր՝ իր ծառա Աբգարիոսը վերցրեց սրբի մարմինը, և պատեցին սուրբ կտավով ու անուշահամ խոնկերով, դրին տապանի մեջ ու տարան, դրին նրա հայրենի Եվխայտիա գյուղում: Եվ Առակլեա քաղաքի ժողովրդի բազմությունը գնաց սրբի նշխարների հետևից, վառած մոմերով, անուշահամ խնկերով և հոգևոր երգերով՝ ըստ քրիստոնյաների սովորության, և դրին իր հանգստարանը: Եվ Աստված բազում սքանչելիքներ կատարեց սրբի նշխարների գերեզմանի միջոցով, որ լինում է մինչև այսօր՝ ով հավատով մերձե-

նա նրան: Վկայի հիշատակի օրը ամեն ազգի բազմություն է հավաքվում. նրանք մեծ պատվով և ընծաներով կատարում են սրբի հիշատակը, որովհետև Աստված փառավորում է իր փառավորիչներին (Ա. Թագ. Բ. 30): Քանի որ այս սուրբը ավելի պայծառ էր քան արեգակը՝ աննվազելի փայլմամբ փայլեցրեց իր առաքինության վարքը անբիծ և ուղիղ հավատով, հերքելով անօրեն իշխանին իր գործակիցներով հանդերձ: Նա հաստատուն պահեց աներեր Հուլյսի խոստովանությունը և իր կյանքում փառավորեց կենդանի Աստծուն: Նա խաչակից և մահակից կամավոր վկա եղավ Տիրոջ չարչարանքին և մահվանը, նա փոխանակեց իր մահը, անուշահոտ պատարագ մատուցելով ի հաճույս Նրա, քանի որ նրա ճշմարիտ մահը հրեշտակների և մարդկանց հաշտություն եղավ, անեծքների վերացում և ընտանություն Աստծուն: Նա իր արյան հեղումով ջնջելով մարեց կռապաշտության մոլորությունը և հավատո հիմք եղավ, կնիք եկեղեցու, դուռ՝ երկինք մտնողներին: Նա պատվվում է մեզնից հիշատակով և պայծառակերպության տոներով: Նրա նահատակության պատմությունը գրեցի և ավանդեցի գալիք ազգերին, որ լինենք վկայածների վկաներ՝ մինչև բոլորս հասնենք հանդիսադիր Քրիստոսի մոտ: Նա մեզ համար միշտ բարեխոս է բարեգութ Աստծու առջև, որպեսզի և մեզ բացվի ողորմության դուռը, նրա հետ վայելելու անսպառ բարիքը: Արդ, ովքեր հավատով, երկյուղով և մեծ հոգարությամբ կատարում են Քրիստոսի այս վկայի հիշատակը՝ ինչ և հայցեն Տիրոջից, կլինի նրանց, և գործերի մասնակից ու վարձակից կդառնան բոլոր սրբերի հետ՝ ի Քրիստոս Հիսուս Տեր մեր, որին փառք և զորություն, հավիտյանս. ամեն:



## ՍՈՒՐԲ ԹԵՈՊՈՆԹՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԵՎ ԹԵՈՎՆԱՍ ԿԱԽԱՐԴԻ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դիոկղետիանոս թագավորի տասնիններորդ և հալածանքների առաջին տարում, սա ստեղծեց յոթանասուն ոսկե արձան, և արուներից մեծ աստված կոչեց Ապոդոնին, իսկ էգերից՝ Աստղիկին: Եվ իր թագավորության մեջ հրաման տվեց, թե՛ «Նրանք են աստվածները, որ ստեղծեցին երկինքն ու երկիրը, և ով սրանց հնազանդվի՝ կապրի և բազում պարզեմներ կստանա, իսկ ով չհնազանդվի Աստծուն զոհ մատուցել և երկրպագել՝ կտանջվի չարաչար տանջանքով, որովհետև արհամարհում է իմ հրամանը»:

Այնժամ Դիոկղետիանոսը կուռքերը տվեց չորս առավել պատվավոր զինվորների, որ ուներ արքունիքում: Նրանց անուններն են Բասոս, Եվսեբիոս, Եվտիքոս, Բասիլիոս: Սրանց տվեց, որ պահեն: Եվ սրանք տարան Բասիլիոսի տունը՝ պահելու, և այնտեղ էին երեք ամիս: Երբ անաստված Դիոկղետիանոսը կամենում էր [աստվածներին] զոհ մատուցել և երկրպագել քուրմերին, հրամայում էր կուռքերը բերել հրապարակ: Քուրմերը բերում էին դրանք, սրբում վրայի փոշիները, մաքրում և շողացնում էին և այլ պես-պես պաճուճանքներ անում, քարոզ էին կարդում, ասելով. «Սրանք են աստվածները, որ ապրեցնում են ամբողջ աշխարհը»: Եվ բոլոր ազգերին մեծ սարսափ էին պատճառում: Եվ երբ թագավորը տեսնում է կուռքերը՝ արագ ընկնելով երկրպագում է նրանց, ծիրանին դնելով նրանց ոտքերի տակ՝ զոհ մատուցում և ասում. «Սրանք են աստվածները, որ ապրեցնում են մեզ»:

Երբ սա այսպես եղավ, հանկարծակի մոտեցավ եպիսկոպոսը, որի անունը Թեոպոնիոս էր, որ առաջ կրել էր հալածանքներ, ասաց Դիոկղետիանոս թագավորին. «Իմացի՛ր, թագավո՛ր, որ դրանք աստված չեն, այլ ոսկի և արծաթ, փայտ և

քար, մարդկանց ձեռքի գործ. ունեն աչք, և չեն տեսնում, ունեն ականջներ և չեն լսում, ունեն ձեռքեր և չեն շոշափում, ունեն ոտքեր և չեն ընթանում: Ձեռքի գործեր մարդկանց՝ Նյուսնի, ոսկերչի, արձանագործի, և չեն կարող որևէ մեկին չարիք կամ բարիք պատճառել: Այլ է կենդանի և ճշմարիտ Աստված՝ երկնքի, երկրի և ծովի և դրանց մեջ եղած [ամեն ինչի] արարիչ, աներևույթ և անհաս, որ մնում է հավիտյան հավիտենից: Նա երկիրն ու երկիրն ստեղծեց իր Խոսքով, Նա մեզ շնորհեց կենդանություն շունչ. Նրան պետք է երկրպագել և երկյուղ կրել Նրանից, [ինչպես] իր միածին Որդուց՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսից, որով ստեղծեց արարածներին. Նա է ճշմարիտ Աստված: Քանի որ հոգ տանելով մարդկանց փրկության մասին, իր միածին Որդի և մեր Տեր Հիսուս Քրիստոսին առաքեց, որ մեզ ազատի աշխարհիս մոլորությունից, և Նա եկավ մեզ փրկեց, ինքնիրեն մատնեց մեզ համար՝ ներողամիտ և բազումողորմ: Արդ, պարտավոր ենք Նրան ճանաչել և գոհանալ, գիտենալով Նրա համբերատարությունը, քանզի Նա է Աստված: Իսկ սրանք, որ դուք աստված եք կոչում, սին են, որովհետև հալչում են հրով և ապականվում, և եթե ինձ իշխանություն տաս սրանց վրա՝ կտեսնես դրանց ոչնչությունը»:

Թագավորը բարկանալով ասաց նրան. «Ի՞նչ դիրքի ես, որ հանդգնում ես այդպես խոսել»: Երանելին պատասխանելով ասաց. «Քրիստոնյա եմ և Աստծու երկյուղած»: Թագավորն ասաց. «Քրիստոնյա՞ ես, թե նաև եպիսկոպոս»: Երանելին պատասխանեց. «Քրիստոնյա եմ և եպիսկոպոս և այժմ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, հավիտենականի և անապականի լավագույն եպիսկոպոսությունից ցանկացող: Որովհետև այս աշխարհիս եպիսկոպոսությունը ժամանակավոր է, իսկ որին հույս ենք տածում՝ անանց է: Եվ երանելի է այն մարդը, որ իր կյանքը անբիծ է վարել այս աշխարհում և եպիսկոպոսության պարծանք կստանա հանդերձյալ աշխարհում»:

Թագավորն ասաց նրան. «Դու կանչված ես, ոչ թե հակաճառելու, այլ հավանություն համար, զոհ մատուցելու Աստծուն, մանավանդ մեծն Ապոդոնին, որ կարող է քեզ փրկու-

թյուն շնորհել: Այժմ իմացիր՝ եթե այդ անես ինձնից նվերներ ու պարգևներ կստանաս, քանի որ ինչպես կարող եմ մեծապես պատվել իմ պատվիրաններին հետևողներին, նույնպես տանջել ընդդիմացողներին: Այժմ խնայիր քեզ, ազատվիր տանջանքներից, զոհ մատուցելով, իսկ եթե ոչ՝ խիստ ընդդիմանաս, ինձ կստիպես վճիռ կայացնել քո դեմ»:

Եպիսկոպոսն ասաց. «Իմացիր, թագավոր, որ այս աստվածներին չեմ պաշտի և զոհ չեմ մատուցի, քանի որ աստվածներ չեն և քո տանջանքների, խոշտանգումների և կտտանքի համար բնավ չեմ հոգ տանի հանուն իմ Տիրոջ սիրու, քանի որ գրված է. «Մի՛ վախեցեք մարմինն սպանողներից, որ չեն կարող սպանել հոգին» (Մատթ. Ժ. 28): Արդ, իմ մարմնի վրա իշխանություն ունես՝ ինչպես ուզում ես վարվիր դրա հետ, քանի որ պատրաստ եմ համբերել ամեն տանջանքի, որ կտաս ինձ, մինչև որ խափանեմ քո հայր սատանայի բոլոր խորհուրդները, խոստովանելով իմ Տեր Հիսուս Քրիստոսի անուներ: Եվ ես կլինեմ այժմյան հալածանքների առաջին վկան, և իմ արիության համբերությունը կհամոզի նրանց, ովքեր կամենան ինձ հետ պատերազմել այս հավատի համար և հոժարություն կվկայեն իրենց փրկությունը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Որի համար եթե ուզում ես ինձ տանջել մի ամբողջ ամիս կամ ամբողջ տարի՝ պատրաստ եմ քո բոլոր տանջանքները հանձն առնել, որ ամեն օր կպատճառես ինձ, և չեմ վախենա այս հավատքի համար պատերազմելուց, այլ Աստծու զորությունը կհաղթահարեմ քեզ և տանջանքները»:

Այնժամ բարկացավ Դիոկղետիանոս թագավորը և հրամայեց հնոցի մեջ գցել նրան: Իսկ անօրեն զորականները այգաբացից մինչև ժամը ինը պատրաստեցին հնոցը: Եվ հնոցը առավել խիստ բորբոքվեց: Մինչև հնոցը գցելը երանելի եպիսկոպոսն ասաց զորականներին. «Այժմ կտեսնեք իմ Քրիստոսի զորությունը, որովհետև սա ինձ պատճառվում է Նրա անվան համար»: Այս ասելով իրեն նետեց հնոցի մեջ՝ բոլոր զորականների և ամբողջ բազմությունից առաջ և հնոցի մեջ փառավորում էր Աստծուն: Իսկ զորականները նրան մեռած համարելով գնացին:

Կեսգիշերին մոտ երանելին կանգնեց հնոցի մեջ, աղոթեց և ասաց. «Հա՛յր մեր Տեր Հիսուս Քրիստոսի, այս տանջանքը հանձն եմ առնում Քո անվան համար. որպեսզի բոլորը, որ կուզեն վկայել ինձ հետ, զորանան նշանների երևալով: Այո՛, Աստված իմ, նաև ցույց տուր այս անօրենին, որ ոչինչ չի կարող անել»:

Երանելի եպիսկոպոսն այս ասաց հնոցի մեջ, և ահա լույս երևաց և առաջնորդում էր նրան, տանելով այնտեղ, ուր թագավորը քնած էր: Կանգնելով դռան առաջ՝ բացեց, միաժամանակ բացվեցին և մյուս դռները. լույսը նրան առաջնորդում էր, տարավ մինչև թագավորի սենյակը, արթնացրեց նրան և ասաց. «Թագավոր՛ը, ճանաչո՞ւմ ես ինձ, ես Աստծու մարդ թեոպոնթոսն եմ, չմեռա, այլ կամ»: Այնժամ թագավորը լսեց, խիստ վրդովվեց: Երբ լույսը բացվեց, թագավորը հրամայեց բերել զորականներին և ասաց նրանց. «Ինչո՞ւ ինձնից դատապարտված քրիստոնյային չզցեցիք հնոցը. արհամարհո՞ւմ եք իմ հրամանը»: Զորականները պատասխանեցին ասելով. «Թագավոր՛ը, հավիտյան կաց. այն մարդը երեկ բոլորախարչ սատկեց»:

Այնժամ մոլեգնած թագավորը եկավ հնոցի մոտ, մոտեցավ՝ լսում էին նրա օրհնությունը, հնոցի մեջ նրա օրհնելը Աստծուն: Եվ երբ երանելի եպիսկոպոսը տեսավ թագավորին ու զորականներին, ելավ հնոցից, կանգնեց թագավորի առջև և ասաց. «Ահավասիկ ես եմ, մարդն Աստծու, չմեռա, այլ կամ, որպեսզի իմ Աստծու զորությունը հայտնվի ինձնով»:

Դիոկղետիանոս թագավորը լսեց և ավելի վրդովվեց, ասաց. «Տեսնո՞ւմ եք քրիստոնյաների կախարդությունը զորությունը. լսում եմ, թե կախարդության գործը Քրիստոսի անվամբ են կատարում, դրա համար և հաջողվում է նրանց»: Ցանկանալով իմանալ զարմանալի եղելությունների զորությունը՝ հրամայեց շուն բռնել և գցել հնոցը. շունն անմիջապես այրվեց, այն դեպքում, որ հնոցը բորբոքելու երկրորդ օրն էր:

Թագավորը տեսավ, զարմացավ և ասաց նրան. «Այսուհետև քեզ ճանաչեցինք կախարդ, քեզ հետ կվարվենք իբ-

րև անօրենի: Նրան հանձնեց չորս զինվորների, որոնց մոտ էին պահված աստվածները, հրամայեց նրան գցել մի տուն, արգելափակել և հաց ու ջուր չտալ, մինչև ինքը կհրամայի նրան բերել իր առջև: Այնժամ երանելի եպիսկոպոսը քսաներկու օր փակված մնաց, որևէ բան չճաշակեց, իսկ քսաներեքերորդ օրը գիշերով ելավ, աղոթեց և ասաց. «Լսիր ինձ, Տեր, որ մշտապես լսում ես նեղությունների մեջ Քեզ զինվորներին, նկատող աչք, որ իմանում ես բոլորի սրտերը, ովքեր փնտրում են Քեզ ամբողջ սրտով. կյանքի աղբյուր, որ արբեցնում ես բոլոր ծարավներին, ովքեր խնդրում են Քեզ. ճանապարհդ արդարություն, որ լուսավորեցիր շատ շատերին, որը մարդկանցից ոմանք չիմացան: Հայր մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որի համար կրում եմ այս նեղությունները, լուսավորիր ինձ, Տեր, քաղցր զորություն, որին ձգտում եմ ամբողջ իմ սրտով, աղաչում եմ, որ յուրաքանչյուրը, ով կլսի իմ խոսքը՝ զորանա պատերազմելու այս հավատքի համար»: Երբ երանելին այս ասաց, կեսգիշերին տան հիմքերը սասանվեցին, և ամբողջ տունը լուսավորվեց, քանի որ Տեր Հիսուս Քրիստոսը շնորհներով լի գեղեցիկ մանկան նմանվելով երևաց նրան և ասաց. «Խնդրություն քեզ, թեոպոնթոս, մի՛ երկնչիր, քանի որ քեզ հետ եմ և կգորացնեմ քեզ մինչև ավարտես քեզ համար սահմանվածը»: Եվ բոլորը, որ տան մեջ էին, հուզվեցին մեծ երկյուղից, երբ այդ բացվեց, հիշեցին եղած մեծ սքանչելիքը և ասացին. «Արդյոք ի՛նչ է սրա այս մեծ ազդը»: Եվ քսաներեքերորդ օրը թագավորն ուզեց իմանալ՝ կենդանի է քրիստոնյան, թե մեռած:

Այնժամ բացին դռները, գտան նրան իբրև մարդու՝ առատ գինուց ուրախացած շնորհներով, որ նրան ղեկավարում էին: Նրան բռնեցին, տարան թագավորի մոտ: Երբ թագավորը տեսավ նրան, զարմանքից ապշեց, բռնեց իր հանդերձը, պատուեց և ասաց. «Տեսնո՞ւմ եք քրիստոնյաների կախարդության զորությունը»: Երանելի եպիսկոպոսը պատասխանելով նրան ասաց. «Մինչև ե՛րբ պիտի խավարեցնես քո սիրտը, չուզելով իմանալ իմ Աստծու սքանչելիքը, որի համար այսպես

չարչարվում եմ. Նա է, որ ինձ զորություն է տալիս, և բոլորին, որ ուղիղ սիրտ ունեն շիսուս Քրիստոսի անվան հանդեպ, հաղթելու քեզ, քո [պատճառած] տանջանքներին և քո հայր սատանային»: Այնժամ անօրեն Դիոկղետիանոսը մոլեգնելով ասաց նրան. «Ո՞վ է շիսուս: Ուզո՞ւմ ես չարաչար մեռնել. իմացիր, որ շիսուսը չի կարող քեզ փրկել, թեպետ կախարդությունը նրանով ես անում: Բայց եթե զոհ մատուցես մեծ աստված Ապոլոնին՝ կարող է քեզ փրկել»: Եվ երանելի եպիսկոպոսը պատասխանեց. «Ձեմ զոհի, քանի որ քո կոչած Ապոլոն անունը կորուստ է, դրա համար ամենքը, որ հավատան նրան՝ հավիտյան կկորչեն»: Թագավորը բարկանալով հրամայեց փորել նրա աջ աչքը և դնել աջ ձեռքի մեջ և դրանից հետո բանտ նետել: Երբ մտավ բանտ, դարձյալ սովորության համաձայն կեսգիշերին աղոթեց և ասաց. «Լսի՛ր ինձ, Տե՛ր շիսուս, Քո գթությամբ ներողամիտ եղիր իմ նկատմամբ, Տեր իմ, որ բազում անձինք հավատան Քեզ՝ իմ նկատմամբ կատարվող Քո զորություններով: Քանի որ ես այժմյան հալածանքների առաջին վկան եմ, և այս նշանները կխոսեն ամբողջ երկրում, լուսավորելով բազում մարդկանց Քո զորությամբ»:

Երբ այս աղոթքը արեց, բանտում մեծ լույս ծագեց, վերցրեց նրա փորված աչքը և անմիջապես ողջացրեց մյուսի նման:

Երբ այգը բացվեց, թագավորը հրամայեց առաջ բերել նրան: Եվ տեսավ նրան երկու աչքով՝ առողջ, խիստ բարկացավ և երգվելով ասաց. «Հռոմայեցոց իշխանությամբ և իմ փրկությամբ, որ մեծ աստված Ապոլոնն է, չեմ դադարի քեզ կոչելուց կախարդ, մինչև քեզնից լավ մի կախարդ կանչեմ, որ վերացնի քո կախարդությունը»: Այս ասելով հրամայեց նրան բանտ նետել: Նա բարկացած հրամայեց բերել հարյուր քսան լիտր ոսկի և հրամայեց գրել իր ամբողջ թագավորության մեջ և կուսակալներին՝ երզմամբ հաստատելով այս. «Եթե, ինձ մոտ գա մի կախարդ, որ կարող է խափանել այս քրիստոնյայի կախարդությունը՝ հարյուր քսան լիտր ոսկի

կտամ նրան, նաև այլ բազում պարգևներ կստանա ինձնից»: Մի մեծ կախարդ, որի անունն էր Թեովնաս, լսելով՝ մոտեցավ թագավորին և ասաց նրան. «Թագավոր, դու հավիտյան կենաս, ես կխափանեմ քրիստոնյայի կախարդությունը, քանզի անհնարին ոչինչ չկա»: Թագավորն ուրախացավ, զնաց բաղնիք, հրամայեց, որ նա լողանա և իր հետ ճաշի: Եվ ճաշելիս ասաց նրան. «Ձանձրացանք քրիստոնյաներից, առավել ևս այս մարդուց, որ այժմ բանտում է. մեր քաղաքում հռչակավոր եղավ իր կախարդության զորությամբ: Արդ, եթե խափանես նրա հնարքները՝ ընծաներ և պարգևներ կստանաս ինձնից»: Թեովնաս կախարդը պատասխանեց. «Թագավոր, մի՞թե կարող է բան անել իմ առջև. ահա հիմա քո աչքի առաջ կխափանեմ նրա բոլոր կախարդությունները»: Թագավորն ուրախանալով ասաց նրան. «Ուզում եմ հիմա քեզնից մի նշան տեսնել»: Թեովնասն ասաց. «Մի կենդանի թող բերեն», և բերին: Ելավ Թեովնասը, խոսեց կենդանու ականջին և իսկույն կենդանին կիսվեց մեջտեղից: Այնժամ զարմացած թագավորն ասաց նրան. «Եղած նշանիցդ գիտեմ, որ արդարև կարող ես խափանել այս քրիստոնյայի կախարդանքը»: Թեովնասը պատասխանեց. «Սպասիր և կտեսնես ևս մի սքանչելիք»: Եվ հրամայեց բերել կշեռք: Կշռեց կենդանուն և երկու կեսերը հավասար գտան:

Թագավորը զարմացավ դրանից, հրամայեց առաջ բերել երանելի եպիսկոպոսին: Երբ եկավ սուրբը, կանգնեցրեց կախարդի առջև և ասաց. «Գիտեմ և համոզվել եմ, որ կախարդ ես և մոլոր: Դրա համար բերել եմ այս կախարդին. կամ դու կխափանես նրա կախարդությունը, կամ նա կխափանի քոնը, կամ դու կսատկեցնես դրան, եթե ոչ՝ նա կսատկեցնի քեզ, որ իմանանք, թե ձեզնից ով է ավելի ճարտար»: Երանելի եպիսկոպոսն ասաց նրան. «Աստծու ամեն մարդ կախարդանքով ոչինչ չի անում, և ոչ մեկին չար չի կամենում, այլ նաև թշնամիների համար աղոթում է անդադար: Եվ ովքեր ատում են նրան, ես ևս նրա համար աղոթում եմ իմ Տեր Աստծուն, որ [սա] թողնելով իր սովորությունը՝ գա ճշմարիտ իմաստու-

թյան, քանի որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը ոչինչ չի ցանկանում, բացի միայն մարդկանց փրկությունից, մանավանդ ուրբեր ամբողջ սրտով են խնդրում: Ով գիտե, թե այսպիսի օրս ինչ բարիք կլինի սրան, մոլորություն ճանապարհը թողնելով կճանաչի միայն արդարություն ճանապարհը»:

Թեովնասը դիմում է թագավորին. «Երկու նշան է, որ ցույց եմ տալու, եթե դրանցով ինձ հաղթի, կհավատամ դրա Աստծուն»: Երանելի եպիսկոպոսն ասաց. «Տեսնում եմ, որ որոշ չափով քեզ հասնում է Աստծու շնորհը, որդյա՛կ: Արդ, արա՛ քո նշանները, որոնցով կարծում ես ինձ հաղթել, որ քեզ ցույց տամ իմ Տեր Հիսուս Քրիստոսի առավել մեծությունը, որով պարծենում ես համարձակվում եմ»: Այնժամ Թեովնասն իր կախարհությունը կերակուրներ պատրաստեց և տվեց նրան ասելով. «Եթե դա ուտելով կենդանի մնաս, կգարմանամ քո հավատքի վրա»: Իսկ սուրբ Թեոպոնթոսն ասաց հեգնելով. «Քո զորությունն ա՞յս է. այժմ քեզ ցույց կտամ իմ փրկիչ Հիսուս Քրիստոսի զորությունը»: Եվ վերցրեց կերակուր և աչքի առաջ և իրեն ոչինչ չեղավ, քանի որ թուլյնը նրա բերանում դարձավ քաղցր մեղր:

Այնժամ զարմացած Թեովնասն ասաց. «Եվս մի նշան եմ ուզում ցույց տալ, ու եթե ըմպես ու քեզ վնաս չլինի՝ կհավատամ քո Աստծուն»: Եվ վերցրեց բաժակը, իր կախարհությունը խառնեց ևս մի թուլյն, նրա վրա կանչելով ինչ-որ դեղերի անուններ՝ իր կարծիքով մեծ, որպեսզի դեղը կարողանա վնասել սրբին: Եվ մատուցեց նրան: Երանելին տեսնելով ծիծաղեց ու ասաց նրան. «Ա՞յս է քո մեծ զորությունը. ես քեզ ցույց կտամ զորությունն Աստծու, որով պարծենում եմ և չեմ վնասվում և ուզում եմ, որ բոլոր մարդիկ քաջությունը պարծենան Նրանով»: Եվ վերցրեց բաժակը, խաչակնքեց Քրիստոսի անունով և ըմպեց. և բնավ չվնասվեց:

Երբ այս այսպես եղավ Թեովնաս կախարհըն ընկավ սրբի ոտքերը թագավորի ներկայությունը, խոստովանելով ասաց. «Արդարև չկա այլ Աստված, չկա այլ համարձակություն, չկա այլ պարծանք, բայց միայն Հիսուս Քրիստոս: Այժմ ու-

զում եմ ապաշխարել իմ մեղքերի համար և այնպես հավատալ քո Աստծուն»: Իսկ երանելի եպիսկոպոսը պատասխանեց նրան. «Տե՛ս, ո՛վ մարդ, միայն բերանով ես խոստովանում, առանց մտքի, քանի որ Աստված չի խաբվի, Նա քննում է բոլոր մտքերը և խորհուրդները»: Թեովնասը պատասխանեց. «Իմ սիրտն ուղիղ է Տիրոջ հանդեպ, և բնավ երկմտություն չկա, և գործով կիմանաս իմ միտքը և կհասկանաս իմ անփոփոխ որոշումը»:

Եպիսկոպոսն ասաց նրան. «Եղբա՛յր, նախանձ չկա, դու ևս արի ի գիտություն ճշմարտության, քանի որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը հոգում է մարդկանց ապաշխարություն և փրկություն մասին: Դրա համար և իրեն չխնայեց, այլ իրեն մատնեց աշխարհիս մոլորության պատճառով: Իսկ մարդիկ երբեք այնպես չարեցին իրենց չարչարակիցների համար, ինչպես Նա, որ Աստվածն էր, ցույց տվեց մեզ, իր բարերարությունն ու մեծությունը»: Երբ կախարհ Թեովնասը այս լսեց՝ լցվեց Սուրբ Հոգով, հանկարծակի մոտեցավ թագավորին և ասաց նրան. «Քրիստոնյա եմ և ծառա ճշմարիտ Աստված Հիսուս Քրիստոսի»: Թագավորը լսելով վրդովվեց և գոչելով ասաց. «Ինչքան ծաղկեց քրիստոնյաների կախարհությունը. տեսնո՞ւմ եք ում վրա են կատարում իրենց կախարհությունը»: Եվ հրամայեց երկուսին տանել բանտ:

Իսկ երանելի եպիսկոպոսը խրատեց Թեովնասին, խրատելուց հետո մկրտեց նրան հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու:

Առավոտյան թագավորը հրամայեց առաջ բերել Թեոպոնտոսին և ասաց. «Ուրա՛խ եղիր, բոլո՛ր կախարհների ուսուցիչ, քեզ չի փրկի իմ ձեռքից այն զորությունը, որ հուսացիր»: Եվ կանչելով իր մոտ նրան՝ զաղտնի ասում է. «Քեզ խրատ եմ տալիս, լսի՛ր ինձ, և կարող եմ քեզ ազատել»: Իսկ սուրբ եպիսկոպոսը հուսավառված և հավատացած Քրիստոսի զորությունը՝ բարձրաձայն գոչեց ասելով. «Ո՛վ բոլոր մարդկանցից անզգամ, մինչև ե՞րբ ես ուզում ինձ զրկել հավիտենական եպիսկոպոսությունից, որով ուզում եմ հավիտենապես մնալ»:

Թագավորը բարկանալով հրամայեց իրարից հեռու ցցեր խփել և երանելիի որովայնը պրկել, կապել ոտքերը և ձեռքերը ցցերին և երեսը [այնպես], որ նայի արևի ճառագայթներին: Եվ ասաց նրան. «Վիճում եմ քեզ հետ, ինչպես բոլորը, մինչև իմանամ քո կախարդութայն գորությունը»,– և հրամայեց մի մեծ սալաքար բերել, դնել նրա որովայնին: Եվ ութ մարդ բերին, դրին նրա վրա: Իսկ քաջ Թեոպոնթոսը ասաց նրան. «Քո գորությունն ա՞յս է, անամո՛թ բռնավոր. ես քեզ ցույց կտամ իմ Աստծու գորությունը,– այս ասելով բարձրաձայն գոչեց այսպես,– Տեր Հիսուս Քրիստոս, այստեղ ևս ցույց տուր Քո շնորհը Քեզ հուսացող ծառայիդ և հայտնիր այս անօրենին գորությունդ»:

Նա այս ասաց և ինքնիրեն շարժեց, վեճը թավալվեց նրանից մոտ տասնհինգ կանգուն հեռու: Այդ տեսնելով թագավորը զարմացավ և ասաց նրան. «Իսկապես բոլոր կախարդների մեջ քեզնից լավը չկա»: Երանելին պատասխանեց. «Ես կախարդ չեմ, այլ Աստծուց երկյուղած մարդ, և Աստված լսում է ամեն երկյուղածի՝ նեղութայն և վշտի ժամանակ»:

Այնժամ անօրենը հրամայեց նրան գլխիվայր կախել սյունից և ասաց նրան. «Վիճում եմ քեզ հետ, ինչպես բոլորը քո կախարդութայն պատճառով»: Եվ այգաբացից նրան կախած թողեց մինչև երրորդ ժամը: Դրանից հետո հրամայեց կտրել պարանները, որոնցով կապված էին նրա ոտքերն ու ձեռքերը, որ գլխիվայր ընկնելով խորտակվի: Իսկ ամեն գովեստի արժանին Տեր Հիսուս Քրիստոսի գորությամբ չընկավ գլխիվայր, այլ՝ ուղիղ ոտքերի վրա: Այդ առթիվ անաստված թագավորը բարկացավ և ասաց. «Ուզո՞ւմ ես իմանալ, թե քո Աստվածը կարող է քեզ փրկել իմ ձեռքից: Մեծ աստված Ապողոնը քեզ կարող էր պարեցնել և փրկություն տալ, բայց վատությանդ և համառ սրտիդ պատճառով քեզ [մահվան] վճիռ եմ տվել»:

Եվ հրամայեց գլխատել նրան: Այդ իմանալով երանելի Թեոպոնթոսը բարձրաձայն կանչեց ասելով. «Ապրեցրիր ինձ այսօր, քանի որ իմ օրերում անթերի կատարեցի եպիսկոպոսությունս, խոստովանելով իմ Տեր Հիսուս Քրիստոսին»: Այս

ասելով օրհնեց Աստծուն, գոհացավ եղածով և խաղաղությամբ կատարեց իր վկայությունը սուրբ Թեոպոնթոսը:

Նույն օրը թագավորը կանչեց Թեոպոնթոսին, որ մի ժամանակ կախարդ էր, և ասաց նրան. «Ձոհ մատուցիր մեծ և անհաղթ Ապողոնին»: Պատասխանելով Թեոպոնթոսն ասաց. «Չլինի թողնեմ երիցս երանյալ եպիսկոպոսի բարի խրատը ու հեռանամ իմ Քրիստոսի գորությունից»: Եվ բարկացած թագավորն ասաց նրան. «Ինչպես որ չկարողացավ նրան փրկել նրա Աստվածը իմ ձեռքից, իմացիր, որ քեզ ևս չի փրկի: Ես ուզում էի քեզ շատ ոսկի և բազում նվերներ պարգևել, իսկ դու ցնորվում ես և անզգամի բաներ ես անում: Արդ, քեզ կվերացնեմ քո անզգամութայն պատճառով»: Եվ Թեոպոնթոսն ասաց. «Գոհանում եմ իմ Աստծուց, որ կապրեցնի ինձ և կշնորհի ժառանգորդ լինել իր սրբերի հետ»:

Եվ թագավորը հույժ բարկացավ, հրամայեց մեծ խորխորատ փորել, նրան գցել մեջը և թաղել, որ ոտնակոխ լինի ձիերի սմաբակների տակ: Իսկ առաքինի նահատակը համբերեց այդպիսի տանջանքներին, արձակեց հոգին, բարի վկայությունը վկայելով խաղաղությամբ ի Տեր մեր Հիսուս Քրիստոս, որին փառք և գորություն՝ շնորով և ամենասուրբ Հոգով հանդերձ հավիտյանս հավիտենից. ամեն:



ՍՈՒՐԲ ԹԵՈՓԻԼՈՍԻ, ՆՐԱ ԿԻՆ  
ՊԱՏՐՈՆԻԿԵՒԻ ԵՎ ՆՐԱ ՈՐԴԻ ԴԱՄԱՂԻԱՅԻ  
ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եվրոպի Ասավերիոս բղեշխը հագած սատանայի զենքը և ինքը մոլորված կռապաշտությամբ, բոլորին հարկադրում էր նույնը կատարել. և մի օր, մինչդեռ բոլոր հեթանոսները հավաքված էին, կռուքի պաշտամունքի, Կեսարիոս քրմապետն ասաց բղեշխին. «Թող ձեր քաջությունը հրամայի, մոլորեցուցիչներին և աստվածներին օտար քրիստոնյաներին բերել պաշտամունքի, որ զոհ մատուցեն: Եթե չհավանեն՝ անհավատների պատիժ կրեն»:

Բղեշխը հրամայեց, բազում զորականներ գնացին, մտան եկեղեցի՝ գայլի նման, Քրիստոսի հոտից պարարտ հավատով, հաստատուն խորհրդով, արթուն մտքով մի ոչխար հափշտակեցին, որի անունը Թեոփիլոս էր, և բերին իշխանի մոտ: Իսկ սուրբը ցնծությունք էր գալիս՝ ասես թագավորական ճաշի, և ասում էր. «Տե՛ր, Քո ճանապարհները ծանոթ դարձրու ինձ և սովորեցրու Քո շավիղները, առաջնորդիր դեպի քո ճշմարտությունը»:

Երբ բերին, բղեշխը նրան ասաց. «Ի՞նչ ազգ ես»: Թեոփիլոսը պատասխանեց. «Բարձրյալ Աստծու անպիտան ծառա, իսկ ըստ մարմնականի՝ ազատ»:

Բղեշխն ասաց. «Տեսնում եմ քո ցածր վարքը և պատվում երեսիդ գեղեցկությունը, խղճում եմ երիտասարդ հասակդ, որի համար խորհուրդ եմ տալիս քեզ զոհ մատուցել, որ սիրելի լինես թագավորին և տիրանաս հարստության»:

Թեոփիլոսն ասաց. «Քո համոզվեր խոսքերով չես կարող ինձ հավանեցնել և ոչ քո թակարդ լարելով կհամոզես, որովհետև ունեմ մարգարեներ և առաքյալներ, որ հրամայում են արդարությունք ծառայել կենդանի Աստծուն: Համբերին՝ սուտ աստվածներ անունով են կոչում»:

Բղեշխն ասաց. «Կախեցեք և տանջեցեք»:

Մինչդեռ քերում էին, սուրբը բարձրաձայն ասում էր. «Քրիստո՛ս, որ խաչվեցիր փայտի վրա,

որ մահով խափանեցիր մահը և խավարյալներին լուսավորեցիր, որ անօրեններից երեսիդ թուք առար և Քո սուրբ թքով լույս շնորհեցիր, բայց ինձ դուռն արքայության, որ այնտեղով մտնեմ և խոստովանեմ Քո սուրբ անվանը, քանի որ Դու ես, որ փրկում ես Քեզ հուսացողներին»:

Մինչդեռ նա այս ասում էր, մուսուլմանները աղաղակում էր դահիճներին՝ ավելացնել տանջանքը, մինչև որ քերվեց, մերկացան նրա բոլոր ոսկորները: Սուրբը առ ոչինչ համարելով ցավերը ասաց. «Ծանոթ ես Հրեաստանում, Աստված, Քո բազում գլխով լսիր ինձ և Քո փրկության ճշմարտությամբ ապրեցրու ինձ»: Եվ բռնեց ինձ ասաց. «Շատ կախարդների տանջեցի և սպանեցի, բայց այդպիսի համբերողի ո՛չ ես և ո՛չ մյուս իշխանները չտեսանք:՝ Սրբին ասաց,՝ [Երգվում եմ] աստվածներով տանջանքների միջոցով ավելի կգեղեցկացնեմ քեզ: Արդ, արի՛ զոհ մատուցիր, որ հաշտվես նրանց հետ»: Թեոփիլոսն ասաց. «Ո՞ր աստվածներին»: Բռնեց ինձ ասաց. «Արամազդին, Ապոդոնին և մեծ Դիոնոսին»: «Եվ դրանցից ո՞ր մեկը, որ դու աստված ես կարծում, կարող է մեկին չարիք կամ բարիք պատճառել»: Բռնեց ինձ ասաց. «Բոլորը»: Թեոփիլոսն ասաց. «Խաբվում ես, ո՛վ բռնեցի, դրանք համր և կույր կուռք են և չեն կարող որևէ մեկին բարի բան անել: Դրա համար պետք է փախչել նրանցից, քանի որ կենդանի և մշտնջենական Աստվածն ասաց. «Նրանց նման կլինեն իրենց հուսացողները»: Բռնեց ինձ ասաց. «Մի՛ հայհոյիր, մտիր և զոհ մատուցիր»: Թեոփիլոսն ասաց. «Աստծուն չեմ հայհոյում, այլ՝ աղտեղի կուռքերին ու դեերին, քանի որ քրիստոնյա եմ՝ չեմ զոհի, որ չմեռնեմ»: Եվ բռնեց ինձ հրամայեց կրակ վառել և նրան գցել մեջը: Եվ երբ սրբին գցեցին, հրի մեջ կանգնած ասաց. «Անհաղթ Թագավոր, անբաժին Գանձ, սուրբ Օրինադիր, մարդասեր Փրկիչ, իմ Տեր Հիսուս Քրիստոս, որ Սուրբ Հոգուդ գորությունը առաքեցիր հնոցի մեջ երեք մանուկներին, որոնք Քո փառքը խոստովանեցին մարդկանց առջև, Քո քաջալերությունը շնորհեցիր նրանց և հնոցի բոցը սառեցրիր, գլխով լուսնների Աստված, մխիթարություն Աստված, հայրերի

Աստված, նույն կերպ այս ժամին օգնություն առաքիր հրեշտակին և ցրիր այս բոցը: Աստված, կենդանի է Քո անունը հավիտյան»: Երբ այս ասաց, բոցը ցրվեց, և նա հնոցի մեջ էր ու փառավորում էր Աստծուն: Եվ բռնեց ինձ բարկացավ, հրամայեց նրան տանել բանտ և զիչեր ու ցերեկ պահել զգուշությունով, որպեսզի սովով և ծարավով մեռնի: Եվ [վկան] ներքին բանտում փառավորում էր Աստծուն:

Իսկ նրա կին Պատրոնիկեն բանտի դռանն էր և զրկել էր փոքրիկ մանկիկին ու խնդրում էր բանտապետին, որ թույլ տա իրեն մտնել սրբի մոտ: Եվ բանտապետը հայտնեց բռնեց խին կնոջ մասին, թե փոքրիկ մանկիկ ունի և ուզում է տեսնել երանելիին: Բռնեց ինձ հրամայեց թույլ տալ, որ թերևս [հեթանոսություն] դառնա, տեսնելով՝ մեջը գուլթ արթնանա: Եվ կինը ներս մտավ, տեսավ նրան, երեխան դրեց նրա առաջ և ասաց. «Աստծո՛ւց վախեցիր, տե՛ր իմ, և փառավորիր իմ անձը, կաց և մնա այդ խոստովանությունդ: Հիչիր արդար այրերին, որոնք հանուն Քրիստոսի կապվեցին և արժանացան անկողողատելի գանձերին: Հիչիր այն, որ ասաց. «Ով թողնի իր հորն ու մորը կամ կնոջը ինձ համար, ժառանգորդ կլինի երկնի արքայություն» (Եփես. Ե. 31): Հաստատուն մնա նահատակությունդ, որ ես կոչվեմ ամուսնասեր և ծանոթ լինեմ քրիստոսասերներին: Արհամարհիր ժամանակավորը՝ առաջիկա հավիտենական անվան համար. խորքից ընթացիր դեպի բարձրը, ընտրիր երկնավորը և Քրիստոսին սիրելի դարձիր: Չեմ կոչվի այրի, քո զինվորվելով Քրիստոսի գնդին, և երկնքի Թագավորին քո [որդե]գրվելով ինձ ոչ ոք չի արհամարհի»: Այս ասելով վերցրեց մանկիկը, մոտեցավ, հրաժեշտ տվեց, հավեց նրա ծնկին և ասաց. «Որոշ ժամանակ է քո այս կյանքը, տեր իմ, իսկ աներևույթը՝ հավիտենական»: Եվ երանելին ասաց. «Օրհնյալ է Աստված, որ փառավորեց քեզ, և քո խորհուրդները թող խաղաղություն բերի»: Եվ կինը՝ փառավորելով իր Աստծուն գնաց տուն: Իսկ բանտապետը փակեց դուռը:

Եկան ամեն ինչ պատմեցին բռնեց ինձ, և նա հարցրեց, թե կերակուր բերե՞լ էր նրան. իմացավ որ չէր բերել, պատվիրեց

մեծ զգուշութեամբ պահել սրբին: Եվ հինգ օր հետո հրամայեց նրան բերել իր առջև: Ու երբ սուրբը եկավ, ասաց. «Տիրոջ աջը գորութիւն գործեց, Տիրոջ աջը բարձրացրեց ինձ. չեմ մեռնի, այլ կապրեմ: Տերն է իմ օգնականը, և ես կտեսնեմ իմ թշնամիներին»: Նրա ետեւից գնում էր Պատրոնիկեն և ասում. «Զորացի՛ր, տե՛ր իմ, սատանայի վրա, քո ընթացքը ավարտիր, քանի պատրաստ է ասպարեզդ, իբրև ամուսնասեր կմնամ ես, երբ ընթացքդ կատարես: Մեր ցանկալի որդեկան հանձնիր Քրիստոսին, քանի որ ես ևս պատրաստվել եմ պատարագվել Աստծուն՝ հետևելով քեզ, քանի որ ավելի լավ է քեզ հետ կյանք ժառանգել, քան մնալ այս աշխարհի թշվառութեան մեջ»: Երբ սրբին բերին, բղբալի ասաց. «Զո՛հ մատուցիր Դիոնոսին»: Թեոփիլոսն ասաց. «Չե՛մ մատուցի, քանի որ քրիստոնյա եմ»: Բղբալի ասաց. «Քրիստոնյա չես, այլ կախարդ, որի համար քեզ կկորցնեմ իբրև նրանցից մեկը»: Եվ հրամայեց գազաններ բերել ասպարեզը ու երանելիին մտցնել այնտեղ: Իսկ նրա կինը աղաղակեց ամբոխի մեջ և ասաց. «Թեոփիլոս, նահատակ Քրիստոսի, հիշիր Դանիելին, և վայրի գազանները կխաղաղվեն քեզ հետ»: Ամբոխը լսեց ձայնը, բոլորը նրան երանի տվին: Եվ [երանելիի] վրա արձակեցին մի մեծ առյուծ, որ գնաց մռնչալով կանգնեց նրա մոտ: Սուրբն ասաց. «Քրիստո՛ս, որ քավիչն ես մեղավորների, որ խափանեցիր սատանայի վնասակարութիւնը, որ Քո աստվածութեան գանձը ցույց տվիր Քո սրբերին, ցույց տուր և ինձ՝ տառապալիս, Քո փառքը, որ հասնեմ՝ ինչին ցանկանում եմ»: Երբ նա այս ասաց, առյուծը վազեց և խփեց նրան և այդպես ավանդեց հոգին ի Տեր:

Երանելի Պատրոնիկեն վերցրեց նրա սուրբ մարմինը, դրեց տապանի մեջ և ասաց նրան. «Հանուն Հիսուսի Քրիստոսի ընդունիր և ինձ խաղաղութեամբ, քանի որ շտապում եմ տեսնել Քրիստոսին, որ քեզ պսակեց»: Եվ բղբալի լսեց այն, հրամայեց նրան ևս բերել: Եվ երբ բերին, ասաց նրան. «Տեսար քո ամուսնու ինքնահաճ համառութիւնը և իմացար, որ չհավանելով իմ հրամանին մեռավ: Այժմ դու ոչ իբրև կին,

այլ իբրև այր մարդ ինձ ցույց տուր քո քաջութիւնը, զոհ մատուցիր աստվածներին, որ չարաչար չմեռնես»: Եվ սուրբն ասաց. «Թեպետ մարմնովս կին եմ, այլ խորհրդովս կանգնած եմ քո առաջ իբրև այր. պատրաստ եմ հաղթելու քո հնարներին՝ առաքինի վաստակով, հանուն Աստծու»: Լսելով այդ՝ բղբալի հրամայեց ասպարեզ նետել նրան և նրա վրա արձակել մի մատակ առյուծ: Եվ նա ներս մտավ, գրկին ունենալով մանկիկը, երկինք նայեց և ասաց. «Օրհնյալ ես, Տե՛ր Աստված, որ ընդունեցիր Աբրահամի պատարագը, որ օրհնեցիր Իսահակին, փառավորեցիր Հակոբին, նրանց օրհնութիւնը բազմացրիր և պսակեցիր Մարիամին. նայիր ինձ, Տե՛ր, քո անարժան աղախնին, և պահիր խաղաղութեամբ: Քո սուրբ ծառա Թեոփիլոսի համար քեզ լինի ընդունելի և հաճոյական պատարագ և այս մանկիկս»: Իսկ մատակ առյուծը եկավ կանգնեց նրանց մոտ, և մանուկը տեսավ գազանին, [Պատրոնիկեն] ժպտաց և ասաց. «Ամեն երկնքում, ամեն Հորը, ամեն Որդուն, ամեն Սուրբ Հոգուն, ամեն, ալելուիա»: Եվ այսպես գազանի կողմից վախճանվեց սուրբ և երանելի Պատրոնիկեն՝ մանկան հետ. հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, որին փառք և գորութիւն հավիտյանս. ամեն:



## ՑԱՆԿ

Սուրբ Դեմետրիոսի վկայաբանությունը .....	5
Սուրբ Դիոմիդես բժշկապետի վկայաբանությունը.....	23
Սուրբ Երենիոս եպիսկոպոսի վկայաբանությունը .....	29
Սուրբ Երմոնիոս կույսի վկայաբանությունը .....	33
Վկայաբանությունը Եվգինիա կույսի, նրա հայր Փիլիպոսի, նրա մոր և եղբայրների, որ նրա հետ էին .....	43
Սուրբ մարտիրոսներ և փառավոր վկաներ Եվգինեոսի, Վա- ղերիևոսի, Կանտիտոսի, Ակյուղասի, Մակարիոսի վկայա- բանությունը.....	61
Սուրբ Եվդոքսիայի և Ռոմելոսի, Նունի և Մակարի վկայա- բանությունը.....	83
Սուրբ Եվստաթեոսի, նրա կնոջ և որդիների վկայաբա- նությունը.....	93
Եվստոռատիոս, Եվգինիոս, Օգսենտիոս, Մարդարիոս և Ուլ- րեստոս սուրբ վկաների վկայաբանությունը.....	105
Վկայաբանությունն սուրբ Եփիմիա կույսի և Քրիստոսի քառասունինը վկաների.....	143
Յոթ սուրբ մանկանց վկայաբանությունը.....	155
Սուրբ Թադդոսի վկայաբանությունը .....	167
Սուրբ Թեկդի վարքի պատմությունը .....	175
Սուրբ Թեդորիտոս քահանայի վկայաբանությունը .....	191
Քրիստոսի զինվոր սուրբ Թեոդորոսի վկայաբանությունը.....	203
Սուրբ Թեոդորոս Կեսարացու վկայաբանությունը .....	207
Սուրբ Թեոդորոս զորավարի վկայաբանությունը .....	225
Սուրբ Թեոպոլեոս եպիսկոպոսի և Թեովևաս կախարդի վկայաբանությունը.....	237
Սուրբ Թեոփիլոսի, նրա կին Պատրոնիկեի և նրա որդի Դամադիայի վկայաբանությունը .....	249

# ՎԱՐՔ ՍՐԲՈՑ - Բ

ՂԵՄԵՏՐԻՈՍ - ԹԵՈՓԻԼՈՍ

Նրադարակչության փնտրեն՝ Եզնիկ Արթուրյանի Պեպրոյան  
Թարգմանությունը գրադարից՝ Արշակ Մադոյանի  
Էջադրումը՝ Նովիաննես սրկ. Ազնավորյանի

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ – 2009

Չափսը՝ 60x84 1/16, ծավալը՝ 16 տպ. մամուլ,  
տեքստը՝ երկու գույն, կազմը կոշտ, չորս գույն  
տպաքանակը՝ 1000:



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան